ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՂԹԱԽՄԲԱՏՈՒՄ ԱՐՔՈՒՐ

ԵՒ

ԱՂՕԹՔ

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ



4/444
28

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1838 ԹՎՈՅ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿՍԴԵՄԻՍՈՒ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ 'ի գորովոյ ծնեալսէր հօր արձանագիր երբէք աւանդեցաւ որդւոյ զիւրական առաքինութիւնն 'ի նոսա կենդանագրել և աստուածպաշտութեան կրօնից լինել ուղեցոյց, այս մատեան է անշուշտ աւանդ պատուական աստուածարեալ հօր մերոյ լուսաբաշխ աջոյն տպաւորեալ. զոր յետ արտաքերական բանից նորա արձանագրելոց յերանելւոյն Գաթանղեղեայ հրատարակեմք իբրու զգանձարան բազմարդիւն քրտանց հօրս մերոյ, որ զամբարեալն յինքեան զարգասիս սերմանց անարատ կրօնից գանձեալ 'ի սմա պարգևեաց սիրողապէս նորածնեալ որդւոցն փոխանակ մեհենական սնոտեաց։

Վանզի սկիզբն արարեալ նորա յաստուածածանութիւնէ և 'ի մարդասէր ինամոց արարչին առ արարածս, անցանէ ապա առ ամենայն ազգս ուղղութեանց, խրատս քաղցունս և բանս ամոք և դիւրագործս ուղղեալ առ ամենայն հասակ և պայման. և հակառակայն յանդիմանութեամբ ահ արկեալ, քան երկիւղալից սպառնալեօքն՝ յորդորագոյնս առնէ զլսողն զառաքինութեամբ գալ և ինդամիտ նուաճել ընդ քաղցր լծոյն Քրիստոսի։ Եւ 'ի վերայ այսորիկ առ որս միակեցական վարուց տենչանօքն բերիցին, կանոնս հրաշալիս ըստ հոգետես հարցն հանձարոյ սահմանեալ նոցա,

խրախոյս կարդայ յանարատութեան զմի-
մեամբ եւանել և զարտաքին կարգաւորութիւնն
անվրէպ 'ի գլուխ տարեալ, բորբոքեալ սիրով մա-
գունդ զվերնայնոցն նկարագիրս յերկրի յանձնիս իւ-
րեանց Հոգւոյն։

Պատեան այսպիսի՝ հնութեամբն և պատուակա-
նութեամբն պատկառելի լեալ յամենայն ժամանակի
'ի հանուր ազգիս, չգիտեմ յո՞ր արկածից բաղդին
մատնեալ 'ի ձեռս առն անընչանի խանգարեալ ծայր 'ի
ծայր 'ի յստակ գարձուածոյ բանից հայեցի ոչոյ, և
'ի հատուածոց ինչ յապաւեալ և եկամոտք կցկցեալ,
եւ և երևեցաւ 'ի միջի։

Այն են արդարեւ 'ի խորախոս բանս երանելւոյս ինչ
ինչ ասասուածաբանից ևեթ իմանալի, որ ներհունքն
իցեն ոչոյ նախնի հարց սրբոց, և որք բազմաբիրտն
տարժանմամբ վաստակեն լուսաբանել գնոսա պէսպէս
խելամտութեամբ ըստ ողջամիտ վարդապետութեան
կաթողիկէ եկեղեցւոյ և վկայութեամբ նոցնաձայն
բանից յայլոց սրբազանից։ Այլ գնոցն բանն պատկա-
ռելիս իբրև զիաղալիկ մի մանկտւոյ պլլալել անմիտ
մաքք, մերութիւն իցէ անուերելի։

Այրդ մերոյ հաւատարիմ տպագրիս օրինակ գրեալ
էր 'ի ԹՎԻԻ գաղափարեալ 'ի հին երկաթագիր օրինա-
կէ գրելոյ 'ի Թուխս ՅՀԸ. որ պահէր յարկեղս գրոց 'ի
Սիս քաղաքի, որպէս ազգ առնէ յիշատակարանն. և
քննեալ մեր մանրախուզիս զգաղափարն վկայեմք եր-
կիւղածութեամբ գրչին յամենայնի անայլայլակ առեալ
զհաւասարն ըստ ամենայն նշանախեցեալ հնագիր օրի-
նակին, մինչև զմիոյ կամ՝ զերկուց տառիցն անգամ՝որ
'ի հնութենէ խանգարեալ եէին 'ի հինն՝ դատարկ թո-
ղուլ զտեղին։ Այլ հնութեան դարձեալ քանզի
թուղթք անկեալ եէին 'ի սկզբանէ, անտի սկիզբն առնէ
օրինակս մեր, ուր մեք ազգ արարեալ եմք 'ի մերում
տպագրութեան յէջն ԺՕ. և գնախին պակասորդն յա-
ջողեցաւ մեզ յայլմէ օրինակէ լրացուցանել. որ թե-

գ2գ

պէտ և նորագիր 'ի ՌՀԴ, այլ հարազատութեամբն ոչ ինչ նուազ քան զգաղափար երկաթագիր օրինակին։

Իսկ զվաստակ մեր 'ի սոյն, թէպէտ և դուշնաքեայ, նուիրեմք աւասիկ 'ի նորին երանելւոյ Հօր քաղցր յիշատակ և յորդւոց նորա 'ի փրկաւէտն վայելս. և և այս մեզ միակ տրիտուր փոխարինի և յառաջիկայսն խրախոյս քաջալերութեան։

ՑԱՆԿ

Ա. Յաղագս ամենասուրբ Երրորդութեան։
Բ. Վասն առանձնաւորութեան Երրորդութեան։
Գ. Վասն մեծաց Հաւատոյ։
Դ. Վասն յանդիմանութեան մերաբնոյց և ընծայութիւն սատանայապաշտութեան։
Ե. Վասն հոգատարութեան Ճշմարտութեան և առաջնորդութեան կենաց խրատու։
Զ. Վասն յանդիմանութեան Ծաղկութիւց իրաց, որ զաներևոյթն յերևելիս ածէ։
Է. Վասն յոբնտուածոց սրբոյնոց։
Ը. Վասն յանդիմանութեան զմեղսակ վարուց և ընծայութիւն առաքինութեան հանդիսից։
Թ. Վասն ամենաբուեռա կատարեալ պահոց։
Ժ. Վասն երանաւորութեան անպեղծ բարերաբ կամացն, և յորդորումն ի լաւն և յառաւելն քան Ճշմարիտ առաքինութեան։
ԺԱ. Վասն վարուց առաքինութեան որ հանդիսիւք լաւութեան պսակեալ երանին։
ԺԲ. Վասն ինամոց պարարին և նշանաբերութիւն անշնչանդ սատանայութեանն և առաջնորդութիւն բարութեան բարուցն լաւութեան։
ԺԳ. Վասն լաւութեան յիշատակաց ի պէտս օգտից, զանեալեսցին յերևելիս ցուցանելով ի զարթ առաքինութեան փոխեալ ի յոյս կենացն։
ԺԴ. Վասն մարդկութեան որ Աստուծոյ ինամք տեղութեան կան։
ԺԵ. Վասն հոգւոյ մարդկան բացայայտութիւն։
ԺԶ. Վասն մարմրոսայ վարդապետաւորութիւն ուսմանց։
ԺԷ. Զգուշութիւն զգաստութեան ընդ մտերիմն և ընդ զմեղսակս պատիս և պատիժս։
ԺԸ. Վասն գոյութեան Աստուծոյ երանութեանն հանդիսիւք մարմրոսայ քաջայայտ։
ԺԹ. Վասն յորդորմանն ապաշխարութեան։
Ի. Վասն խորագիտութեան և մարտից։
ԻԱ. Վասն տրոյ խնամատարութեան որ ի Հոգւոյն սրբոյ պարգևեցաւ։
ԻԲ. Վասն անփոփոխ ինքնութեան Էութեան Աստուծոյ։
ԻԳ. Վասն խրատու Ճշմարտոյց յառաքինութիւնս յորդորումն ի Քրիստոս Յիսուս։

Նորին Աղօթք։

ՍՐԲՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ

ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԱՍՏԱՑԵԱԼ.

ՇԱՐԱԽԱՊԱՏՈՒՄՆ

ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ
ՅԱՂԱԳՍ ՕԳՏԻ ԼՍՈՂԱՑ

Ա

Ա՛ի է բնութիւն և գոյութի ամենասուրբ Երրորդութիւն. և իւր է ինքնութիւն և ոչ յայլմէ գոյութէ։ Զանակզբանոյն ունի զպատճառսն Հայր զՈրդւոյ և զՀոգւոյ։ Խակութի անծին և էութիւն անսկիզբն, միանձնաւորութի անսահման և Ճշմարտութի անփոփոխելի, կեանք և կեցուցիչ ամ կենդանեաց։ Հայր է Որդւոյ, և բղխումն Հոգւոյ. ամ է և արարիչ արարածոց երևելեաց և աներևութից։ Պատճառ ասի ծննդեամբ Որդւոյ, և բղխումն Հոգւոյն արբոյ։ Խակ ինքն անծին զին անսկիզբն ծնեալ. միանձն ջնաւորին անսահմանի զՃշմարտութիւնն անփոփոխ ծնեալ. կենացն կենարարաց զկեանսն կենաստու ծնեալ. լուսոյն կենդանեաց զկենդանի լոյսն ծնեալ. բարիոյն զբարերարն ծնեալ. արարչին զարարիչն ծնեալ ամ արարածոց երևելեաց և աներևութից։ Երկնից հաստիչ և երկնային զօրութեանցն, երկրի և որ 'ի սմա են արարածք։ Ա՛ի է և կատարեալ և զամ յամի ընու, ինքն ոչ թերանայ. որ ոչ նորոգի և ոչ հնանայ, ոչ ընու և ոչ պակասէ. որ նոյն կայ միշտ 'ի լիութի իւ-

բում և յանքաւութիւն։ Եւ չիք ուստեք եկամուտ կամ յաւելուած յանքաւ և յանհման և յանսահման և յամենակատար բնութիւնն։ Որում ոչ հասու լինին միտք. նա և ոչ հրեշտակաց իմանի, թէպէտ և երագունք են որպէս զմիտս մարդկան. այլ ուր անկարելին կամք արարչին, յայտնոսիկ սպասաւորութիւնս առնեն յերկնաւորս և յերկրաւորս։ Զի որպէս երկինք և ամ՝ զարդք նոցա հաստատեալ կան Բանիւ այ և Հոգւով ամ՝ զօրութիւք, նոյնպէս և երկիր ընդամբք և գաչտովք, ծովով և գետովք և աղբերբք և անտառախիտ ծառովք։

Այլ չիք այլ արարիչ, բայց միայն սուրբ Երրորդութիւն, ամենազօր տերութիւն, յստակ և պարզ ամենակալ զօրութիւն. որ ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան։ Որ նստի յերկինս երկնից և իմանի զարարածս ամենայն. որ կանուխ գիտութիւն և անբաւ իմաստութիւն մատակարարէ զերկնաւորս և զերկրաւորս. և ամենեցուն կենդանի է և կեցուցիչ, և յամենայնի անբաւ է և անհաս և անՀաս։ Սէր է՝ կենդանի երանութիւք լցեալ. լոյս անմատոյց, ահեղ և զարմանալի։ Գիտութիւն և իմաստութիւն ի նմանէ են ստուգեալ. կենդանի և կենդանարար. զոզրմած և բարերար ինքոչՀք. երկայնամիտ է և դարմանիչ։ Ինքն սրբութիւն սրբոց մերձեցելոց ի նա սրբութիւն և արդարութիւն, լուսաւորիչ քանական բնութեանս միշտ. և ամենայնիւ ՀՀմարտութիւն է՝ յանդիմանելոյն զմեզ և խրատելոյն զմեզուցեալսն, զի սպրեսցին ի բարկութենէն՝ որ գալոցն է ի վերայ ամբարչացս։ Այլ և խոստմամբք բարեաց յորդորէ, զի արժանաւորք լիցուք սպասկաց և փառացն յաւիտենից ամենաշնորհութեանցն։ Զի նաւաՀանգիստ է Հանգստարար ՀՀնամն սուրբ սիրոյ իւրոյ. որ յանՀաւասարութիւն վայելեցուցանէ զառաքինացեալսն Հոգւով։ Զի մեծութիւնք անքննիկք են, անսկիզբն Էութիւնք՝ իվերք քան զմտանալիս յանսահմանութիւնն և յանբաւութիւնն. և իմանալիք տեսչութիւնք ընաւ զամենայն արարածս։ Որ գիտէ զԲարՀուրդս սրտից և զինչ զերկիր կամենս, և առաքէորգէ օրինաք Հոգւոյն կենդանա-

բար անմահից յանմոռաց ուրախութիւն, յանդադար խնդութիւն, յանՀաւ և յանպատում բարութիւն, ժառանգելով զարքայութիւն ՀՕ։

Բ. Զդ այս ամենայն արհեստք ինքնաբոյսք անսահմանելի միտնջենաւորին՝ դարմանիչք են յարարածս ըստ բարերարութեան արարչութեան իւրոյ. զի կեցուցիչ է 'ի խնամս իւր, որ անբաւ և անքննելի է։ Որում ոչ բաւէ իմաստութիւն հոգևորացն հասու լինել, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այլ 'ի գործոց իւրոց և յերախտեաց իմանի և Հանապազ անմարմնոց և մարմնաւորաց մի ՀԱԾՈՒԹԻՆ, ամենազօր տէրութիւն։ Զի որպէս արև և լոյս և ջեր՝ միոյ արեգական ասի և ոչ այլոց, և որպէս աղբեւր և ջուր և գետ 'ի միոյ 'ի բնութէ լսին, սոյնպէս և միտք և բան և հոգի իմանի 'ի մարդում, նոյնպէս և աստ միոյ բնութեն և ՀԱԾՈՒԹԵՆ է իմանալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Զի ոչ է արեգակն առանց լուսոյ և ջերմութէ, և ոչ աղբեւր առանց ջրոյ և բղխման, և ոչ միտք առանց բանի և հոգւոյ։ Այսպէս և ոչ էր Հայր առանց Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՃԱՌԵԱԼ ՃԱՌՍ ՑԵՃԱԽԱՊԱՏՈՒՄՍ Ի ՍՈՒՐԲ ԵՐԵՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ԱՌԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

Բ

ԱՌԱՐԵԱԼ է Հայր անձամբ և զօրութիւն, գիտութիւն և իմաստութիւն, արարչութիւն և բարերարութիւն. և զնմա իւր անձին իսկութիւնն ունի։ Կատարեալ է Որդի անձամբ և զօրութեամբ, գիտութիւն և իմաստութիւն, արարչութիւն և բարերարութիւն. որ և զամենայն անսկիզբն էութիւն ունի։ Կատարեալ է և սուրբ Հոգին անձամբ և զօրութիւն, գիտութիւն և իմաստութիւն, արարչութիւն և բարերարութիւն. և զամենայն անսկիզբն էութիւն ունի։ Մի է բնութիւն ածութիւնն և անփոփոխ իսկութեն. մի արարչութիւն և մի բարերարութիւն. մի տերութիւն և մի զօրութիւն. և չիք ուստեք եկամուտ և յաւելուած փառաց յանսկիզբն Երրորդութիւն։ Զի նա է աղբիւր ամ՛բարեաց, և 'ի նմանէ բաշխին ամ՛ պարգևք արարչութիւն յարարածս ամ՛։ Որ յօրինէ և դարմանէ և մուցանէ բարերարութիւն իւրով զերևելիս և զանտեսանելիսն հոգւով և Ճշմարիտ վարդապետութիւն, և առաքնորդէ յիւր արքայութիւն և 'ի փառս, որք հաւատան 'ի նա և կատարեսցեն զարքութիւնս ահիւն ՝ի սուրբ սրտի և յանկեղծաւոր հաւատոց, որպէս և գրեալ է։

Լ. Այսպէս ընկալաք զհաւատոցն բան։ և դուք այսպէս հաւատացէք յամենասուրբ Երրորդութիւն, յարարիչն ածի և 'ի հաստիչն ՝որ և 'ի կենստաւոր Հոգին։

Որ կենդանարար լուսոյն և սուրբ սիրոյն ժառանգորդս առնէ իւր անձառ արքայութեան. և լինի յորդորիչ յիշումն խոստացեալ անպատումն պարգևացն, որ կայ և պահի յուսացելոցն 'ի նա հաւատով և սիրով։ Վասն զի սէր արարչութեան ստիպեաց արարչին առնել զարարածս ամ, որ երևին և որ ոչն երևին. ոչ 'ի պէտս իւրոյ ածութեան արարեալ, այլ զի երևեսցին նորա փառքն, որ արարածովքս իմացեալ տեսանիւր անմարմնոց և մարմնաւորաց։ Որպէս ոչ առնու ինչ 'ի կենդանեաց, այլ տայ նոցա զկենդանութիս, որպէս ոչ լոյս յաչաց՝ այլ 'ի լուսոյ լուսաւորի և տեսանէ զինքն, այսպէս և ՝որ կեցուցանէ և լուսաւորէ զարարածս իւր, զմտաւորս և զբնաւորս. և բաժանէ 'ի նոսա շնորհս որպէս և կամի։ Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ ՝ած նոյն է՝ որ յաջողէ զամ յամենայնի։ Եւ տուեալ պատիւ հրեշտակաց և մարդկան՝ իշխանական կամն, զի փառաւորեսցեն զբարեգործն ՝ած, որ յոչընչէ 'ի լինելութիւն էած, և զհանգամանս բարեպաշտութեան ուսոյց գրովք սրբովք. զի կարասցեն խոյս տալ 'ի չարէն և առնել զբարին, և դարձեալ նորոգել փառաց 'ի փառս։

Յայսոսիկ երևի Աստուծոյ սէրն 'ի մեզ, զի վասն մեր արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք են. և այսու իմանալ ցուցեալ զբարերարութիւն սիրոյ իւրոյ։ Սոյնպէս և արարածք ՝ձմարտեալ սիրով մերձեսցին առ ՝ած հաւատով և յուսով և պատուիրանապահութիւն. և լինի պարգևատու։ Զի յամի գոհանալով զբարերարութեան խնամոյ, և խոստովանողք և դաւանողք առ ՝ձմարտութիւն լիցուք, և կացցուք 'ի հնազանդութիւն հանդիսիցն՝ որ առ հա՝ձոյս տերութեն լիցէ. 'ի նեղութիւն և յանդորրու անքակ մնալ՝ 'ի սէրն որ առ ՝ած է՝ ամ սրբութիւն, հոգւով և մարմնով ասեմ միշտ։ Եւ ոչ զանուն արարչին՝ արարածոց կոչել, և ոչ զ՝ձմարտութիւն մոլորեցուցանել 'ի սուտս։ Այլ առողջ անբիծ անարատ երախտեաց սիրոյն կալ 'ի մտերմութիւն միշտ։ Եւ այս ամ յօրինուածք իրաւանց և արդարութիւն կայ և մնայ արարչին առ արարածս միշտ։

Ոչ ասն այսորիկ լուսեսցուք ի դատարկ և ի վայրապար՝ քննութեամբ, և զհետ երթիցուք խրատուց գրոց սրբոց հնոց և նորոցս։ Եւ զիք այլ ոք՝ որ պատմէ զիւրաւունս։ զի նոքա կեսամբ և շարժիմբ և եմք։ Դմա լուիցուք և ի նա յուսասցուք, որ փրկեաց զմեզ յամ վանգից, և փոխէ յերկինս արքայութիւն։ «Արդ եկայք, որդեակք իմ, և լուարուք ինձ. և զերկիւղն ուսուցից ձեզ»։ ասէ ի սաղմոսերգութիւն. որ կոչէ զամ՝ ի հնազանդութիւն հոգւոյ օրինացն։ Եւ զի «Որ պահէ զպատուիրանս իմ, ասէ նորն, նա է որ սիրէն զիս. և որ սիրէն զիս, սիրեսցի ի Հօրէ իմմէ. և առնա եկեսցուք և օթևանս առնումս արասցուք»։ Որպիսի անձնա սիրով պատուեալք եղալք։

Արդ մի խոսան գոցուք Աստուծոյ, զի մի անկցուք յերանելի կենացն՝ զոր խոստացաւ սրբոցն։ Զի արդարք ժառանգեսցեն զարքիսն, և մեղաւորք կրեն զպատիժսն։ «Որք Հոգւոյն Աստուծոյ, ասէ, վարին, նոքա են որդիք Աստուծոյ։ իակ որ ըստ մարմնոյ կեան, հաճոյ ոչ կարեն լինել»։ Զի Հոգւոյ վարուք այսու կենաւք վայելեսցուք յամ բարութիւնն յերկնաւորս։ Որքան է մեծութի անմահն և անհամեմատ և անկշիռ այնր անսխալնան կենացն։ զի անպատուամ է. ի Հոգւոյն սրբոյ ի սիրոյ արարչին պատրաստեալ, որ ոչ լսի և ոչ իմանի, զոր տայ սիրողացն զնա։ զի նորա կենաւքար սիրովն վայելեսցեն ի բարութիւնն՝ որ ի վերջ է քան զամ միտս և զիսորհուրդս և քան զսօրաց երկնաւորաց։ զի հանգուցանել յանմահ կարգս։ Որոյ և ընտրութիւնք լինին յօթևանսն ըստ արժանաւորութեանն, անքննին վայելչութեան։

Օ՛ի որպէս հոգւոյ մեռաւորք կենդանի են և անմահք, և չուտնին զպայման հասակին և զանհամնս գնացից, զի թեպէտ և քան զերկինս ի վերջ բարձրանան և քան զծով անդր երանեն յիշատակօք գիտութեան իմաստութեան՝ որ յառաջնորդութեան գրոց սրբոց, այլ որպէս յայան թօթափել անդրէն ամփոփին ի կայանս մարմնոյն կենաց, այսպէս և մարմինք ի յարութիւնն անդր՝ փոփոխին յանՀառ և յանսպառում կեանսն, ի բիւրսակերպեան Հառագայթսն և ի կեն-

գանի լոյսն և 'ի փառսն. լուցանին հրով Հոգւոյն յանշիջանելի լոյսն։ Եւ որպէս անարգ և տխուր է տեսիլ մարմնոյս քան զՀոգւոց կենդանեացն զանմահից, այսպէս ամ նշոյլք և Ճառագայթք ամ երևելի արարածոցս է՝ լուսաւորացս որ շիջանելոց է. զի ոչ համեմատի և ոչ մնայ. այլ կենդանի և անանց Ճառագայթս արեգականն արդարութեան փառաց զոր զգենլոց են սուրբք յանմահական կեանսն հասարակ հոգւոց և մարմնոց. որպէս զգեցեալ ոք զարեգականն զլոյսն բաւականայ տեսանել յարևելից յարևմուտս, որ շիջանելի լոյս է ըստ բանին ՝ն. « Արեգակն և լուսին խաւարեսցին, ասէ, և աստեղք ծածկեսցին, և արդարք փայլեսցեն իբրև զարեգակն յարքայութեան ՝այ »։ « Զի յորժամ Քո յայտնեսցի՝ կեանքն ձեր, ասէ Առաքեալ, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք » Լուցեալք ՝ածային հրոփն 'ի լոյսն անշիջանելի և սուրբ։ Եւ յորժամ իւրով լուսոփն անշիջանելեաւն զգենուցու զլոյսն արեգականն արդարութեն և վայելէ 'ի պայծառութի սրբոցն, կայ մնայ միշտ կենդանի և լուսաւորեալ։ Ի ՝ոբ սիրոյն երանաւետեալքն և փառօք փառաւորեալ՝ի չափս և յանչափս կատարմանն Քոի, զի ոչ կարէ ասել ոք զայս. զի եղիցի ՝ած ամ յամի։ Լի է բարեօք անմահիւք ըստ բանին ՝ն, որ խնդրէ 'ի Հօրէ. զի « Որպէս դու և ես մի եմք, այսպէս հաւատացեալք և սուրբք 'ի մեզ իցեն»։ Զի այսպէս սիրեաց ՝ած զմարդիկ, որ և զ՝ածութեն զպատիւ և զփառս շնորհեաց մեզ։ Արար ՝ած զաշխարհս զայս վասն մարդկան 'ի ծնունդ և 'ի սնունդ և 'ի կեանս իրաւանց և արդարութե. և առաքինութե հանդիսիւք պատուիրանապահութք զայն զանմահ և զանուշակ զ՝ածեղէն փառսն շնորհէ, փոփոխելով յանանց բարին և յանսպառ ուրախութինն։

Եւ զայս զոր ասացաք, սուղ ինչ 'ի բիւրաւորացն բարեացն։ Որպէս տղայք յորովայնի մորցն ոչ գիտեն յորպիսի հասակս փոփոխելոց են և տեսանել զարարածս՝այ և վայելել, սոյնպէս և ոչ մեզ է իմանալ։ Այլ ըստ բանի Առաքելոյն որ ասէ. « Փոքր 'ի շատէ գիտեմք և փոքր 'ի շատէ մարգարէանամք. այլ

յորժամ Եկեսցէ կատարումն, փոքրիշատէս խափանեսցի։։ Զի առաւելեալ է յնմի և անձառ, և ոչ անմարմնոց է խմանալի, թող թէ մարմնաւորացս զմտաւ ածել և ասել զոր կարասցէ։ Զի որպէս խաւարի լուսոյ փախչի, այսպէս և երկրաւորքս յերկնաւորացն և յանմահից կենացն։ Վասն այսր բարութեաց զնմա բարութեան ջանս ի մեզ ունելով, և կալ ՝ծալ ի մշակութեան հաճոյիցն Աստուծոյ՝ որ աւետեաց բարեաց լինացեալ է։ Եւ փախիցուք յաղտեղի և ի գարշ ցանկութեց և ի չարեաց, որ վշտագին սպառնալեաց է պատուհասն։ և զհետ երթիցուք հանդիսի վերնոցն մաքուր վարուք։ Մինել երախտաւոր եղբարց սիրով յնմ ի պէտս կենաց։ մշակել զաբի զաւանդս ի փրկանս հոգւոց և մարմնոց։ զի հրաւիրեալք և կոչեցեալք իցեմք յորդեգրութեան Հօրէս։ Զի բարիս անկեալ ի մեզ Աստուծոյ, այլ և զիշխանական կամս, եթէ կամեսցուք միշտ զարին առնել։ Զի հոգևոր օրէնքն հաստատեսցի ի սիրոս մեր, յոյս, սէր, հաւատ, այլոյքն հանդերձ յանձնիշխանական կամս հրեշտակաց և մարդկան։ Որպէս զի ժառանգորդք լիցուք փառաւորեալ կենացն, և սպասուեալ յարարչէն երանութիւնն՝ որ անձառելին է։

Լաւ ետ անձնիշխան արարածոցս երկուս դասս՝ արարակս որպէս որդւոյ, զսպառնալիս և զաւետիս, երկնչել ի սպառնալեացն և փախչել ի պատասխանացն, և ցանկալ աւետաւոր բարեացն և երթալ զհետ արդարութեան։ Ի ձեռն Ճշմարիտ սուրբ գրոց խրատուց իրաւանց և իշխանութեան հնազանդել յաղագս բարեձեւութեան։ Զի վասն այսորիկ ետ ըստմարդարէս և զառաքեալսն և զհայրապետսն վարդապետս և ուսուցիչս, զի տեղեակ և հմուտ և հասու առնիցին բարի կամացն Աստուծոյ զմեզ։ որ զնմ՝ մարդ կամի՝ զի կեցցին և ՝ի գիտութեան Ճշմարտութեան Եկեսցեն, և երախտաւոր լեալ գործովք արդարութեան Հօրն երկնաւորի և Որդւոյն միածնի և Հոգւոյն սրբոյ։ որ տայ զկենդանութեան արարածոց իւրոց գործակից լինել նոցա բարերար կամացն Աստուծոյ։ Այսու իրաւամբք և արդարութիւք կած

եմոյծ 'ի ժառանգութիւն ածութենն իւրոյ ըստ Առաքելոյ բանին. «Ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի» ասէ։ Եթէ նմանակիցս Քրիստոսի լինուք, և փառացն կցորդ։ Ապա մի հեղգասցուք 'ի կեանս մերայլ ուշ եդեալ 'ի կէտ կոչմանն անվեհեր փութով ուսուցանել և առնել զկամն նորա. զի մեծ կոչեսցի յարքայութենն այ։

Եւ այսու վարդապետեալս, որ արար և ուսոյց ընտրելոց իւրոց 'ի տնօրէնութիւն իւրում, զի հայեցեալք յելս գնացից փրկչին մերոյ՝ նմանողք լինուք։ Եւ մարդարէութիւք և առաքելական քարոզութիւք և հայրապետութիւքն ծանիցուք զՀայրն ամենակալ և զՈրդին համաշնչ և զՀոգին համագործ։ Եւ ծանիցեն և գիտասցեն և ընդանեսցին հաճոյից արարողին ուղղափառ հաւատովք. անքակ մնալ 'ի սիրոյ արարչին 'ի նեղութիւն և յանդորրու. և արդարացեալք երախտաւորք կամաք բարերարին։ Զվաստակս Ճգանցն վկայս առնել առ ած, և մտերմութիւք օրհնել զնոր զտուողն այմ բարեաց, և գոհանալով փառաւորել զնա։ Այլ և նոր ինքնին զիւր երախտիքն վկայ ունի իւր սիրոյն և բարերարութեանցն, զընտրեալսն և զկատարեալսն՝ որ 'ի նոսա զեղուն շնորհքն այ։ Այլ և առ երախտացեալսն հոգւով ըզդարձելոցն յապաշխարութի խոստովանութիւք՝ ներէ և խնամէ և բժշկէ ողորմութիւք, և թողու զմեղս ըստ բազումդթութենէ իւրոյ։ Իսկ զամբարիշտս և զանիրաւս ամբարտաւանեալս չարութիւք, որոց խաւարեալ են միտք և օտարացեալք 'ի կենաց սրբոց և արդարոց, և առ նոսա երկայնամտէ, զի դարձցին 'ի զղջումն։ Ապա թէ ոչ այսպէս, բարկութի և սրտմտութի կայ և մնայ 'ի վերայ նոցա յամենեցունց արարչէն ըստ բանի Առաքելոյն։

Այսպէս են արուեստք կենաց կենարարին և ստացողին. և դարմանօք սիրոյն իւրոյ խնամէ զարատածս երևելեօք և աներևութիւքն հանապազ։ Եւ յօրինէ բարերարութիւնն իւրով 'ի սնուցանել և 'ի դարմանել պէսպէս շնորհօք իւրովք գիտութիւք և իմաստութիւք, զի խելամուտս և հնարարուեստս արաս-

ցէ պահպանութիւն պատուիրանի իւրոյ։ Եւ զբարութիւն իւրով կարող և հաստատուն պահէ. զի զբարացեալք ընդդէմ կացցեն հնարից սատանայի, և անշարժ և հաստատուն կացցեն առ Ճշմարտութիւն սիրով. յորդորել յառաքինութիւնն լաւութիւն և ի գործս պիտանութիւն, որ ի փառս պտղի։ Եւ այսպէս վայելեալքս ի բարին։ Զի վասն կենդանի աւետեաց երանութիւնն առնուն զառհաւատչէայն Ճշմարիտ հաւատով և յուսով զհանդերձեալն Ճշակաւք սիրոյն կենդանութիւն, որ անբաւն է և անքննին. զի նոքա ի նորա երանութիւնն վայելեսցեն, և ընտնորա ինգութիւն ի նորա ուրախութիւնն յանձառս։ Զի գթութիւն իւրով խնամէ ի սէտ հոգւոյ և մարմնոյ ըստ մեծի ողորմութեն իւրոյ։ Զի զբարացեալք ի հնոցացն և յաճատուր պարգևացն յառողջութիւն և ի խաղաղութիւն վայելեսցեն։

Լաւ այսպէս յերկայնամտութեան առ նորոգումն բարւոյն ՅՅ վերաբերեալ, յառաջադէմն նկերբոլ յերբեւելիս և յամենեւայնս. և սրբեալ յաղտոյ ի սրբոյն ՅՅ, ազատանայ և լուսաւորի ի փառս տիրակալն ազատութիւնն, և անհպելի լինի թշնամւոյն. և զերծեալ ի մահաւանէ մեռելոց յաւուր յարութիւնն լուսաւորեալ կայ մնայ անբիծ և սուրբ։ Եւ բարձրանայ խոնարհութիւն փառաւք, որովք ամբարտաւանութիւն կործանի՝ տեառն յարգանաւք։ Զի խոնարհքն և հնազանդքն և հեզք բարձրանան, և ամբարտաւանքն և խիստք և անհաւատք կործանեսցին առաքի աչի տեառն։ Եւ Ճշմարտալքն ամենայն ուղղութիւն պահեսցին և փառաւորեսցին յարքնէն յարքայութիւնն արգարոց։ Զի ամենայն բարեբաւք աւետեաց զհաւատացեալս և զլաւս և զառաքինիս ի գրունս Ճշմարտութեան հրաւիրեն ի նորա յարգանսն և ի նորա պտղոյն փառաց վայելեն։ Զի ողորմութիւն և գթութիւն ինամք, որք և կատարեալ ապաշխարութիւն ըզթողութիւն ի միազբոր տերութիւնն առնուն։

Լաւ[1] բարբառաւք ահաւոր սպառնալեացն զմբա-

[1] Սկիզբն ընտիր օրինակին։

բիշտս և զանառակս և զցանկասէրս և զանհնազանդս զանարգելսն 'ի մեզ՝ հրաւիրեն 'ի տանջանսն յաւիտենից և յանմահ սատակումն և 'ի դժոխս։ Զի արհամարհեցին զգութս և զխնամս արարչին, և հեռացեալ օտարացան 'ի ստոյգ ապաշխարութենէն՝ որ սրբէր զնոսա և արդարացուցանէր և մերձաւորս առնէր կենացն անմահից։ Եւ վասն այսորիկ ընկալցին զամօթն և զանշէջ հուրն զոր պատրաստեալ է սատանայի և դիւաց նորա։

Այս ամենայն 'ի բարերար կամացն ՅԻ են կարգեալ 'ի պէտս և 'ի խնամս։ Սուրբ և բարի կողմանն՝ խոստմունք աւետեացն որ 'ի տեառնէ։ Իսկ չար և անհնազանդ կողմանն՝ զսպառնալիս բարկութենն և սրտմտութե 'ի ձեռն հրեշտակի չարի զվրէժս ընկալցին։ Զի թէ կամեցեալք էին, կարող էին զնիւթեալ բարկութենն շինջուցանել, և 'ի բաց ջնջել ուղիղ ապաշխարութիւն ըստ մեծի ողորմութե արարչին։ Եւ այսպէս խոստմամբք բարւոյն և սպառնալեօք մատակարարէ առ 'ի յուղղութի. զի զամենեսեան կամի՝ զի կեցցեն և արքայութենն հասցեն։ Այլ զի որ ընտիրքն իցեն 'ի մեզ՝ երևեսցին, ըստ արդարութե օրինացն կենցաղավարեալք։ Զի այն որ բարին է բնութիւն և իսկութիւն յառաջ քան զյաւիտեանս, յորում չիք եկամուտ առ կատարեալ բարերարութենն, այլ կայ մնայ միշտ բարի։

Այլ որ ասի զայ ցասումն կամ բարկութի կամ սպառնալիք, զօրինացն զիրաւունսն ասէ. զի զանիրաւսն և զանզգամսն ածէ յուղղութի սպառնալեօքն՝ որ լինն է բարկութիւն։ Զի չիք արատ կամ բիծ առ կատարեալ բարերարութենն և քաղցրութենն. ոչ 'ի նմանէ բուսանի, և ոչ եկամուտ ուստեք լինի 'ի նմա չար. զի որ նորայն է, իսկութիւն բարի է. և չիք 'ի նմա նրշխարք չարութե։ Զի մեղքն մեր ցասուցանեն զնա. և նա խրատէ զմեզ պատժովք, և 'ի բարկութե զողորմութի յիշելով. զի խրատեալք՝ գտցուք զայցելութի յարարչէն։ Զի արժան է մեզ ատել զմեղս, և սիրել զարդարութի և զսրբութի և զՀշմարտութի, որ ուրախ առնէ զարարիչն հանդերձ երկնային զօրօքն։

Այս այս իսկ է սիրոյ նորա ցոյցք. որ խնդայ ընդ մարդկան ուղղութիւն և իրաւունս, որք գտանին 'ի չար վարուցն։ Զի ինքն կենաւք է և կեցուցիչ և սեր ամենայնից պարգևաւք իւրովք. զի ոչ ոք կարէ ասել զարժանն զնորա զամենազօր մեծութիւնն. ոչ ոք 'ի բիւրաւորս զօրացն երկնաւոր բանակացն, և ոչ 'ի մարդկանէ, յորոց հաճեցաւ օրհնութիւն առնուլ և երկրպագութիւն։ Զի ամենայն հայհոյութիւնք դիւաց և հեթանոսաց և ամբարշտաց և մեռաւորաց ոչ հպին յանհպելի լոյս ՝ՀՀՀ։ Եւ ամենայն բանակք բիւրաւորք հրեշտակաց, որ կան յանդադար փառաբանութիւն, և ընտրեալ 'ի տեառնէ յորդւոց մարդկանէ՝ ոչ կարեն զարժանաւորն օրհնել զՀՀՀ։ Զի ՀՀՀութիւնն ոչ յարդի յումեքէ և ոչ անպատուի, զի ոչ փոխի յիւրմէ անտի փառացն. զի կենաւք է և լոյս անփոփոխելի, որ ոչ անցանէ։

Այլ զարմանալի այս է, զի վասն առաւել սիրոյն իւրոյ անանուն յանուն գայ. զի ոչ զք երբ ընդ անակղանն՝ որ կոչեր զանուն. այլ ինքն վասն բարերարութիւնն իւրոյ և բարերար կամաց իւրոց արարիչ աւրարածոց անուանի։ Զի արարիչ և բարերար և լոյս և կենաւք 'ի խնամս արարածոց զանուանս ունի. այլ զիւր անուն ինքն միայն գիտէ։ Զի 'ի լուսոյ լոյս է անշիջանելի, և 'ի կենդանեաց կենաւք, և հաւր անեղութիւն, և նիւթական հրոյ արարող։ Այլ օրպէս երն և է և կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ. այլ սիրոյն իւրոյ յայտնեցաւ արարածոց, և խնամովք իւրովք ծանուցեալ եղև։

Այլ և զարարածս կոչեաց յիւր բարերարութիւնն յաշակերտութիւն զազգ մարդկան. «Գնա զառաքեալս», ասէ Պաւղոս, ասա զմարգարէս, ասա զվարդապետս» և որ զինի այսորիկ։ Յորս բաժանեէ Հոգին սուրբ զշնորհս 'ի գործ կոչմանն որ հրաւիրեացն յարքայութիւն։ Յայտնեաց զնեսամն տեսչութիւնն իւրոյ սիրոյն. զի լիցուք արդարացեալք 'ի Հաւատոց անտի, որով մնանիցեմք 'ի փառաւորեալ ժառանգութիւնն Քրիստոսի։ Զի այսպէս իւր անուանեեաց զՀաւատացեալսս. մէկ զՀայրն երկնաւոր. այլ և զառաքեալսն մէկս,

որով սրբին և ժողովին 'ի հնծանան յաւիտենից։ Որ յառաջին ժամէն մինչև ցվերջին ժամն գործեցին, և ըստ յօժար կամացն զառաջնոցն առին զվարձս 'ի գիտողէն։ Զի որ ոչ նմանեցին ՝այ սիրոյն՝ որ ծագէ զարեգակնն չարեաց և բարեաց, այլ խանտացան [1], ոչ որպէս զորդիս ՝այ առին զվարձս։ Այլ սուրբքամենայն գործեցին զարդարութի և զհոգևոր մշակութին, և հասին աւետեացն՝ որ 'ի Քս Յս՝ Ճշմարիտ քարոզութէն, որ 'ի փառս ամենասուրբ Երրորդութ։ Եւ լցին զտիեզերս կենաց բանիւն, և ջրոնին և Հոգւովն վերստին նորոգեցին զհաւատացեալս։ Այլ և խոստովանութիւ և ապաշխարութիւ զիրկութի քարոզեցին 'ի ձեռն շնորհաց Որդւոյն ՝այ։

Օ՛ի Հայր է բնութեամբ միածնի Որդւոյ իւրոյ. և 'ի կենաց կեանք, և 'ի լուսոյ լոյս, և 'ի բարւոյ բարի։ Այլ և մեզ ըստ շնորհի հայր անուանեալ, և լոյս՝ որ լուսաւորէ զմեզ հաւատովն, և կեանք՝ որ կենագործէ զմեզ։ Որպէս առ մարդիկ այս յօրինակ Ճշմարտութենն երևի. ոմանց բնութիւ, և կիսոց խնամածութիւ որբոց հայր։ Այսպէս զմեզ մերձաւորս առնէ, այլ և նմանողս արարչական խնամածութենն, զմոլորեալս դարձուցանել յաստգիտութի շնորհօք բարերարի հօրն։ Այլ և բարերարութեցն նման նման գթասիրութիւն լինել։ Առ մեղուցեալսն ուսուցանէ, զի մի խսպառ կորիցեն. այլ խորագիտութիւ ածել յուղղութի ՝ածային օրինաւն, առ ուսանել գիտել Ճանաչել զիմաստութի և զխրատ, և ուղղել զթիւրեալսն նշանաւք և արուեստիւք։ Զաշակերտեալսն հաստատել 'ի հաւատս, և անշարժ մնալ 'ի Ճշմարտութենն համբերութիւ բազմաւյամենայն փորձուիս։ Եւ ըստ օրինակի տեառն սիրոյն յորդորել 'ի նորա կոչման սէր. գթութիւ խնամ ածել և դարմանել. բառնալ զբեռնիս և զկարիս բազմաց, և կոչել առ շնորհս աւազանին և ապաշխարութիւ։ Եւ երկայնամտութիւ և հանձարով զամենեսեան որսալ հոգևոր ուռկանաւ առ բարեպաշտութենն։ Եւ լուսաւորել ըզ-

[1] Միւս օրինակն Էոամացան։

խաւարեալն մեղաք և անիրաւութիւն. սրբել մաքրել և ազատել 'ի ծառայութենէ սատանայի, և նորոգել զխնդն՝ որ ըստ ոյն է՝ լուսաւորութեան արդարութիւն և Ճշմարտութեան, և մերկանալ զկին մարդն զործովքն իւրովք յաբեաք. որպէս զի արժանի լինիցին պսակացն և փառացն։

Օ այս արաւեստ 'ի Հօրէ և յՈրդւոյ և 'ի Հոգւոյն սրբոյ ուսեաք, որ միշտ զործակից առնէ իւր բարեբար կամացն ըստ Ճշմարտութեան առանդից. որ զժողովուրդս հաւատով անվրէպ մերձ կացուցանել յօթեւանս սրբոց։ Եւ այսպէս աշակերտեալք յընտրուեն օրինացն 'ի հաւատս և 'ի լոյս և 'ի սէր արդարութեան ըստ հանդիսից առաքինեացն և Ճշմարիտ առաքելոյն և մարգարէից և ուղղափառ վարդապետացն, և որք 'ի նոցանէ ուսան վկայք զՀամբերութեն 'ի տանջանս։ խոստովանողք զժուժկալութիւն, Ճգնաւորք կուսանք զսրբութեան և զառաքինութեան, ապաշխարողք զթողութեան։ Եւ այսու ամենայնիւ ընտրեաց 'ի մարդկանէ իւր ժողովուրդ ՅԾ նախանձաւոր լինել 'ի գործս բարութեան, և առնուլ զպսակս անեղծութեան յիւրմէ բարերարութենէն։ Զի սիրեցին զարարչն և սիրեցան 'ի նմանէ. և ՅՈՐՀՈՔ իւրովք փառաւորս և անուանիս արար յերկրի և յերկինս. որ կայ մինչ միշտ։

Օ ի թէ ոչ էր լեալ ընտրութիւնք 'ի տեառնէ ըստ արդարութեան օրինացն, ոչ երևելի լինէր առաքինութեանն մտերմութիւնք և քաջութիւնք, և խափանեալ լինէր հանդէսք նահատակացն՝ որ յերանելի կեանսն տանի, և զրկեալք 'ի կենդանի երանութենէն ժառանգութենէն սուրբք, նա և զրքք հոգեղինացն որք կային 'ի սէրն այ։ Զի որք յարարչն խնամոյն վրիպեցան, ընդունին զպատիժս յահեղ դատաւորէն՝ որ ըստ արժանացս հատուցանէ. զի երթիցեն արդարքն 'ի կեանսն յաւիտենից, և մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենից։ Երկաքանչիւրոցն ՅԾ ոյն բանն յայտ առնէ. «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք զարքայութիւն այ»։ և «Երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա»։ Զի նախ յար-

դարձ և կոչէ 'ի բարի գործս. «Եկայք, ասէ, առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն զհեզութիւն և զխոնարհութիւն, և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։ Եւ Աբաքեալ ասէ. «Նմանեցէք ՚ի որպէս որդիք սիրելիք, և գնացէք սիրով. որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ, և զանձն իւր մատնեաց վասն ձեր պատարագ ՚ի»։

Զի Որդին ՚ի զորդիս մարդկան իւր ժառանգորդս արար, և սիրեաց 'ի մեզ զՀնորհս Հոգւոյն սրբոյ առատաբար։ Զի բարեբար բարբառովն կոչեաց յապաշխարութիւն զմեղաւորս խոստովանութիւնք, և 'ի հնազանդութիւն աւետարանին կենաց. զի նորոգեսցէ զհաւատացեալսն լուսաւոր աւազանաւն յորդեգրութիւն իւրում Հօրն։ Որ բնութիւնք է Որդի, զի հնորհօք արար զմեզ եղբարս իւր։ Եւ զարատ և զբիծ մեղացն լուծանէ զնորածնելոցս աւազանաւն 'ի Հոգւոյն, և ազատէ 'ի ծառայութենէ չարին։ Զի որք 'ի Քրիստոս մկրտեցան, զՔրիստոս զգեցան, արու և էգ. եթէ հրեայ իցէ և եթէ հեթանոս, եթէ ծառայ իցէ և եթէ ազատ, ամենեքեան մի են հնորհօք որդիք ՚ի և ժառանգակիցք Քրիստի։ Որք ի՞նչ յարգանդ հոգևոր աւազանին պարգևօք ամենասուրբ Երրորդութեան. օրհնութիւնք և քահանայական խորհրդածութիւնք, օծմամբ և Հոգւով 'ի Քրիստոս լուսաւորեալ՝ ըստ բանին տեառն, առէք զՀոգին սուրբ՝ յորդեգրութիւն Հօրն Քրիստի։ Զի նովաւ ունին իշխանութիւն քահանայք կապելոյ և արձակելոյ. զի զմկրտեալսն հրաժարեցուցանեն 'ի սատանայէ և մեռանել զմեղացն մահ, զի մի՛ և այլ մեղօք կեցցեն յերկրի։ Զի որպէս մեռեալն լռէ յամենայն արուեստից, նոյնպէս և մկրտեալն եղիցի մեռեալ մեղաց և կենդանի արդարութեան. զի զկերպարանս Քրիստի 'ի հնորհաց սուրբ Երրորդութեան առնու. յայնմ հետէ զվերինն խորհել ըստ Հնմարտութեան աւետարանին քարոզուէ, և հաճոյից անմահ թագաւորին. արդար և Հնմարիտ և սուրբ վարիւք հասանել յօթևանս կենացն անմահից որ 'ի Քրիստոս։ Զի այսպէս է վերատին ծնունդ հոգևոր աւա-

զանին, որ զախտաւոր ծնունդն վերսին ստանայ առանց ախտի շնորհօք և մարդասիրութիւն ամենասուրբ Երրորդութեան։ Ոյք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց առն, այլ յայ ծնան առ հաւատչեայ 'ի ժառանգութիւն փեի։ Զի այսպէս ծնանին որդիք այ 'ի կերպարանս Որդւոյն այ, և լինին քարոզք Աշմարտութեան 'ի նեղութիւն և յանդգնութիւն. և անսասանելի կան 'ի սէրն այ ուղիղ սրտիւ և ուղղափառ խոստովանութիւն. և որդիք կենաբար Հօրն ընծային երկնաւորին անՃառ շնորհօք։ Եւ յայնմ հետէ զգործ այ գործեն և զկամն նորա արասցեն ըստ երախտեաց բարերարին, և կցորդակից լինին զօրաց երկնաւորաց առ սպասաւորութիւն մարդկան շնորհօք արարչին, այնոցիկ՝ որ ժառանգելոց են ըզփրկութիւն յաւիտենից, որ 'ի փա։

Եւ որպէս Որդին այ եղև որդի մարդոյ և զգեցաւ զմեր բնութիւս և կատարեաց զարդարութիւս ամենայն հոգւով և մարմնով, այսպէս և մեք զգեցցուք զուղղութիւն և կատարեսցուք զամենայն արդարութիւս 'ի փա. զի որդիք այ լիցուք, և ածք սիրով։ Զի մարմնացաւ Որդին այ կամօք, և յանձն էառ զամենայն կարիս մարդկային բնութեաս մերոյ բայց 'ի մեղաց։ Սոյնպէս և մեզ լիցի ածեղէն զօրութիւն ընդ ամենայն կիրս անցանել առանց յանցման. զի կարող լիցուք հասանել 'ի չափ հասակի կատարմանն փեի. և այնպէս Աշմարտեալ 'ի կերպարանս այ, ժառանգեսցուք զարքայութիւն փեի։ Եւ պիտոյ է միշտ դաստիարակութիւն աւետարանին, որ հրահանգէ զմեզ 'ի լաւութիւն կարգս. զի յանձանձեալ 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ Աշմարտութիւն աՃեցուսցուք զվաստակս արդարութիւն սուրբ սրտիւ և ուղղափառ հաւատով յածծ։ Եւ 'ի տեսչութենէ նախախնամական սիրոյն այ արթունք և զուարթունք եղիցուք 'ի պատրանաց բանսարկուին միշտ. և հաստատուն յուսով և առաքինութիւն, սուրբ վարուք, մաքուր հոգւով և մարմնով հասանել 'ի նաւահանգիստն խաղաղութիւն յաւիտենական կեանսն, յանպատում կայեանսն, որ պատրաստեցաւ սրբոյն յանՃառ սիրոյն այ։ Եւ որպէս արեգակնս այս որ լուսաւորէ զերկիր և որ 'ի սմանէն

արարածք՝ որ երևելիք են ծովու և ցամաքի, այսպէս հաւատոյ ճշմարտութեն բան և սրբութի լուսաւորէ զմիտս ցանկացողաց ՝այ։ Եւ անճնիշխան կամաք երկնաւորք և երկրաւորք, մարդիկ և հրեշտակք, ճշմարտութեն վարդապետք եղեն 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն՝ ստոյգ գիտութիք և անմոլար իմաստութիք ըստ արդարութեան օրինացն։ Եւ այնպէս առաջնորդեալ լուսով երրորդութեն ստոյգ պատմութիք արարչական էութիքք՝ լցին զերկինս և զերկիր Հառագայթիւք որպէս զարեգականս լոյս 'ի կեանս և 'ի փառս երկնաւորաց և երկրաւորացս։ Իսկ սատանայ որ ՝ածանալն կամեցաւ, տեսեալ զինքն 'ի պայծառութեն, և ամպարհաւաճեալ՝ որպէս կարծէր՝ վրիպեցաւ 'ի փառացն, և 'ի վայր կործանեցաւ 'ի պատուոյն, և զմարդիկ որսաց 'ի կորուստ, և մնոտի յուսո

Երրորդութիւն. և գտեալք զիմաստութիւն լուսաւորաւ-
զանաւն և մաքրմամբ և արեամբն Քրիստոսի, ընդունելութիւն
Հոգւոյն սրբոյ՝ որ աղբիւրաբաղխ բաշխեաց զշնորհս
յարարածս։ Զի արդարացեալք 'ի հաւատոց ամենի,
զխաղաղութիւն կալցուք առ ած 'ի Տեառն Յիսուսի Քրիստոսի առ-
հաւատչեայ ժառանգութեանն. զի նորոգեսցի փառս
անեղծութեան կամաւոր խաչելութիւն իւրով։ Եւ մա-
հուամբ երկոյծ զմահ, և յարութիւնն իւրով զմեզ 'ի
մեռելութենէ մեղացն յարոյց. զի մեք 'ի նորոգումն
կենաց կացցուք և մնասցուք յուսով յարութեանն 'ի
փառս ամենասուրբ Երրորդութենն այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԻՏՔ ՀԱՒԱՏՈՅ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Գ.

Ն՛ՀՄԱՐՏՈՒԹԻՒՆ հաւատոյ լոյս է աչաց մտացն, շարժմանցն խորհրդոց յիշատակացն, զդացեալ ըզլոյսն զիտութիւնն և զիմաստութիւնն շնորհաց Հոգւոյն սրբոյ։ Որ զառաջնորդական միտսն լուսաւորէ, և զրովք սրբովք յանդիման կացուցանէ զաներևոյթսն, որպէս տեսիլս աչաց զարեգական լոյս և զայլ ևս լոյս. այսպէս երևութանայ ՚ի ծայրին տերութիւնցն մեծութիւնք անքննիք։ Զի աննման և անհամեմատ է, անպատում և անսահման, անհաս և անբաւ. այլ հաւատով տեսանի և իմանի և օրհնի յարարածոց անեղկաց հաւատով ՚ի նեղութիւն և յանդորրու. և զօրացեալ հաւատովք որ ՚ի սուրբ Երրորդութիւնն, կայ և մնայ անսասանելի առ մարտակից հաւատոցն։ Զի լուսաւորեալք ուղիղ հաւատովք յանսկիզբն էուն, ՚ի մշտնջենաւոր լոյսն, ՚ի կենդանարար կենդանութիւնն, յանփոփոխ Աշմարտութիւնն, մի և ս խոտորեսցուք յունայնաբանութիս՝ որ ՚ի Հայր և յՈրդի և ՚ի սուրբ Հոգին հայհոյութիւք։

Ա՛յլ զդրաւական աւետեացն շնորհաց մի իւիք թողցուք, զի հասցուք խոստացեալ երանութեանցն և անմահութեաց և անեղծութեաց։ Եւ զդարմանս սիրոյ բարեբարութիւնն միշտ ընկալցուք զտերութիւնն. և զարքայութիւնն յոյսն ՚ի սիրտս մեր հանապազ ունել, և զկենդանարար շնորհացն զպարգևսն ոչ մոռանալ որ ՚ի տեառնէ. և զմնամակալութիւնն՝ մերոյ անգիտութեան և տկարութեան օգնական ունել ընդդէմ հնարից սատանայի, որ յամենայն ժամէ թշնամի։ Եւ զօրացեալ ՚ի կենաց առաջնորդէն ՚ի խրատուց, ըստ առաքման հաւատոց ՚ի կատարումն առաքինութիւն եկեսցուք

ցուք։ Եւ յամենայն վարս զԽրատ սրբոցն 'ի միտս ունել յերևելիս և յաներևոյթս. և այնպէս ծանիցես զՃշմարտութիւն։ Վասն զի ոչ 'ի քէն բաւեսս հասու լինել ճշմարտին մեծութեանէ փառացն, նա և ոչ հոգեղինացն գունդք հրեշտակաց, սերոբէիցն և քերոբէիցն. և ամենայն երկնաւոր զուարթունքն անհաս էին ճշմարտին փառացն։

Մովսէս մտերիմ ծառայն այ զէութիւնն քարոզեաց մեզ, ոչ յինքեանէ, այլ 'ինոյն իսկ յայ։ «Ես եմ, ասէ, ճշ՝ որ էն»։ Եւ այսպէս սփռեաց յարարածս զլոյս ճշմարտին էութեանն. զի անմոլար գիտութիւնն խոստովանեսցին զանբաւ մեծութեի փառացն, զանծին իսկութինն և զանսկիզբն էութեանն Ճշմարտութիւն, զանփոփոխ մշտնջենաւորութինն և զանհաս և զանվրէպ զիմաստութինն, զորս քարոզեցին օրէնսդիրք և օրինապահք ըստ իւրաքանչիւր շնորհի։ Զի զդժընդակ և զաղտեղի և զփնասակար ապերախտիսն խըլեսցէ, և զլուսաւոր և զշահաւոր և զօգտակար զերախտիսն յորդորեսցէ մինչև 'ի վախճան ժամանակաց։ Եւ այնու փառաւորեցան և պատուեցան արքանեակք բարերարին։ Զի յորժամ առաքէր ճշ զՄովսէս առ ապերախտ ժողովուրդն, ասացոյց զինամոց իւրոց զքաղցրութեի. զի ասէ. «Գթած եմ ես և ողորմած, երկայնամիտ և բազումողորմ, և զողջանամ 'ի վերայ արարածոց»։ Զի այսպէս ուղղեսցէ զվրիպեալսն 'ի շնորհէն, և նորոգեսցէ վերստին ամենակալ զօրութիւնն և ամենառատ պարգևատու սիրո

Ամրդ հաւատովք ճշմարտութեամբ և առաքինութեամբ հանդիսիւքն, արդարութեամբ և սրբութեամբ լիցուք հաստատեալք յաներևոյթ մեծութենն 'ի փառսն՝ որ անքննին է և անպատում ըստ աւետեացն անսպառ և անճառ փառաւորութենն։ Եւ անզեղջ սրտիւ և ճշմարիտ խոստովանութեամբ օրհնել զանքննին արարիչն, և անշարժ մնալ 'ի յոյսն կենդանի և հանգստարար հանգիստն որպէս երևմամբք լինել. զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց ած սիրելեաց իւրոց։ Զի անճառ է բարութիւնն զոր վայելեն սուրբքն բորբոքմամբ խնամոց և կենդանարար սիրոյն այ։

Ի վերայ այսր ամենայնի գոհանալ պարտիմք միշտ զարարչական խնամոցն, որ արժանիս առնէ այնքան բարեաց երևելեօք և աներևութիւք։ Եւ օրհնելով օրհնեացուք զանմահ տերութենն 'ի տուէ և 'ի գիշերի անմեղկելի սիրով, մտերիմ կամօք և անարատ սրբութեամբ. անմոռաց յիշատակօք զինամն սրբութենն 'ի մտի ունել 'ի գովեստ փառացն այ՝ վկայութեամբ հաճոյից նորա։ Զի որպէս ճառագայթք արեգական յառաջ ընթանան և զկնի ծաւալին, այսպէս յառաջ ճշմարտութիւն էութենն, անփոփոխ իսկութենն, որ անհաս է քան զմիտս և զխորհուրդս. որ պատմի նախ քան զարարածս և յետոյ քան զյաւիտեանս յաւիտենից. որ 'ի վերոյ քան զերկինս երկնից և 'ի խոնարհ քան զանդունդս ծովու. որ յանբաւութիւն կայ և մնայ։ Զմիոյ անակիզեն էութիւն բարերար կամացն ունին զայցելութիւն յարարչէն արարածք. զի այնպէս անսահման է և անկշիռ, անբաւ և յստակ աղբիւր, և ամենազօր և ամենակալ։ Կեանք է և կեցուցիչ, լոյս մշտնջենաւոր, ահեղ, հզօր, ամենիմաստ և յառաջագէտ, բարերար և տուողք բարեաց, գթած և ողորմած, ներող և երկայնամիտ, սուրբ սրբոց և մաքրութիւն ամենայն արարածոց։ Զի եթէ բիւրաւոր ղօրք անմարմնոցն և լուսաւորք երկնից և որ երևինս և որ ոչն երևին և որդիք մարդկան և որ 'ի յերկրի են և 'ի ծովու անբաւ կենդանիք և որ այլ ևս 'ի նոսա անշունչք արարածք 'ի լեզուս գայցեն, քան գովութիւն

ոչ բաւէն ըստ նորա մեծութեան փառացն գովութեի մատուցանել զարժանն իւր։

Լաւդ որ այնքան անհունն է մեծութիւն փառաց, և բարձրագոյն քան զամենայն իմանալիս և տեսանելիս, այլ խոնարհի յարարածս, և իմանի և տեսանի ըստ մերում զօրութեան և իմացմոյ իւրոյ։ Եւ հրեշտակք որ քան զմիտս մարդկան սրագոյնք էին, ոչ բաւէն հաստատել մասին, զիարդ կարացուք մեք երկրաւորքս հասու լինել փառացն։ «Զի ոչ որ գիտէ, ասէ, զՀայրն, բայց Որդի. և ոչ զՈրդի և զՀոգի, եթէ ոչ Հայր»։

Իսկ խնամք բարերար կամաց սիրոյն՝ այլ բազմաբուեստ դարմանաւք, որ յանակիզն էութենէն և յանփոփոխ մշանջենաւորութենէն, մնօրինեալ յարարածս 'ի հովուել և 'ի խնամել, ամենասուրբ Երրորդութենն՝ որ լոյն է ամենարաւեստ բարուք։ Զի բազմանատ շնորհօք իւրովք և կենարար առաքինի ընտրեալ առաքինութիւն ներանելի հանգիստն ժողովի և փառաւոր պարկէ 'ի մշանջենաւոր և յանուշակ պարգևսն։ Զի վասն այսորիկ ստեղծ արարչն զզօրս հրեշտակաց և զմարդիկ յանձնիլիսան կամս, զի ընտրութիւ հոգեւոր օրինացն փոփոխումն առցեն. 'ի փոքրութեի ըզմեծութեի, յանարգութեի զպատիւ, յապականութեի զանապականութիւն, 'ի մահկանացուս՝ զանմահութեի ՝ն՝ մեծութենն՝ որ 'ի Քրիստոս։ Ուր չիք փոփոխումն ժամանակաց և հանումն բարեաց տուելոց յարքայութենն՝ այլ Մինչ 'ի մշանջենաւոր երանութեան վայելել 'ի փառս ամենասուրբ Երրորդութենն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Ցերկսին սրինական 'ի մանրագրեալս։

ՑԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՄՈԼՈՐ ՄՏԱՑ ԵՒ ԸՆԴԱՑՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Դ

Օ՜ի անհամեմատ ամենակալ[1] ամենասուրբ երրորդութիւն է. և յանսկիզբն էութիւն և 'ի միջին ջնջաւորութիւն հաստատեցան ամ արարածք երևելիք և աներևոյթք։ Երկինք և երկիր և ամ որ 'ի նոսա, 'ի միոյ արարչէն արարան ամենակարող զօրութիւն, ամենալոյս լուսո

մարմին, մեծամեծք և փոքունք, քաղցունք և դառինք, շարեկանք և անշահք։ Սմանապես 'ի տուն կին և 'ի բոյս որ 'ի պէտս արարան մարդկան, և ոչ արարչին։ Ա-բար և ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ, և պատուա-կան քարինք և անարգք 'ի պէտս մարդկան 'ի վկայու-թիւն մեծին այ արարան։ Եւ 'ի յորից նիւթոց զերե-ւելիսս եցոյց. խոնաւ և ցամաք, ցուրտ և ջերմ յայ կազմեցան։

Լոյս 'ի նոցն նիւթոց արարեալ զմարդն, և հնդեաց 'ի նա հոգի կենդանի և անմահ, մտաւոր և բանաւոր։ Եւ խառնեաց զհոգևորն ընդ մարմնաւորն. զի զհան-գէս իւրոյ մտերմութեան ցուցցէ առ արարիչն. ժուժ-կալեալ հոգևոր սիրով պահիցէ զպատուիրանն ահիւ տեառն. զի հաճոյացեալ այ՝ ժառանգորդ լիցի անա-վախճան երանութեան. զի «Ա-բար, ասէ, զմարդն 'ի պատկեր իւր, և տեր ամի կացոյց զնա, և բան պատ-կերի իւրոյ արար զնա»։ որ բան Քրիստոս մարմնանալոյն է խմանալ։ Եւ անձնիշխան կամաք մեծարեաց զմար-դիկ որպէս զՀրեշտակս, և ելից իմաստութիւն և գիտու-թիւն, և տեղեակ ամ հանգամանց և խրատու հոգևո-րաց առ 'ի հաճոյս տերութեան իւրոյ. զի լիցի տե-սուչ արարչին արարածոց ըստ պատուիրանի նորա։ Եւ զայ տարերս 'ի գործ արկցէ արուեստիս. հանձնարոյն մարդոյ առ 'ի շնութեան աշխարհի ըստ գաւառաց և քաղաքաց։ Եալ և կանս և կազմուածս և անօթս ըստ արուեստիցն կազմեցէ առ 'ի պէտս վարուց աշխար-հիս, որով պէտք անօրինին։

Լոյս հնչաւորաց անանունց և գազանաց և թռչնոց եւ բարս և ուշ առ 'ի պէտս։ Որոց ուշն զբարսն շար-ժէ առ 'ի ներքոգործութիւն. և բարուց նոցա վարդա-պետ զմիտս մարդկան առ 'ի պէտս իւրաքանչիւրոցն և 'ի մերոյ սպասաւորութեան։ Եւ 'ի նոսին են մա-նունք և մեծամեծք, անարգք և շարեկանք, պիտանիք և անպիտանք, զարկիք և գեղեցիկք. զի երևեսցի լաւն 'ի վատն աբեն և անարգն 'ի պատուականն։ Որպէս 'ի խաւարի լոյս երևի, և 'ի գազանաց զգօնն, և 'ի թիւնաւորաց անմեղանչականն, և յանշարեկա-նեն շարեկանն, սոյնպէս է և 'ի տունկս և 'ի բոյսս, այ-

լաղոյք՝ և հոտովք և համովք, քաղցր և դառն, ա-
նոյշ և անհամ. զի երևեսցի լաւն 'ի վատթարէն, որ
առ դարմանս և առ բժշկութիւնս կարգեցան ըստ
ներդործութեանն այ։ Եւ են որ անծանօթք են, և են
որ ծանուցեալք ըստ տեղեաց տեղեաց։ Ի ինչ և 'ի
սողունս՝ իրաց ինչ 'ի պէտս. որպէս յօձիցն ասէ ըզ-
թերակէն։

Զ այսպէս յօրինեալ արարչին զնախախնամութի
յարարածս իւր, որ երևին և որ ոչն երևին, այսր ամի
որ և իշխան և ժառանգաւոր արար զմարդն երևե-
լեացս արուեստաւոր մտօք։ Զի յոչընչէ արար զամե-
նայնս և թագաւոր կացոյց զմարդն և մեծարեաց. զի
նովաւ ծանիցի արարողն և փառաւոր լիցի միշտ. և
մարդն ծանիցէ զինքեան զպատիւն որ յանպատու-
ութէ 'ի պատիւ վերաբերեաց յամ արարածոց։ Որ
արուեստաւոր խելամտութիւն որ յարարչէն՝ կարասցէ
'ի գործ արկանել զշնչաւորս և զանշունչս. զի երև-
եսցի գործ իմաստութեան ըստ ամի որք ընդ հնազան-
դութիւն անկեալք 'ի տեառնէ 'ի գործ պիտոյից, և
կամ առ շինութի և 'ի զարդ, կամ առ այլ ինչ փար-
թամութիս։ Յայսոսիկ վայելելով իշխանական Ճոխու-
թիւն՝ փառաւորեսցէ միշտ զբարեգործողն։ Զի այս-
քան պատիւ տուաւ մարմնաւորացս որպէս և հոգե-
զինացն և անմարմնոցն և անմահիցն. և արար ընտ-
րողս և գովողս արարչութեան, որ միշտ օրհնեսցեն
զնա 'ի ձեռն օրինաց եդելոց. զի իւրեանց իշխանա-
կան կամաքն հաստատեսցին 'ի հաւատս Ճշմարտու-
թեանն, և ընտրեսցեն զարարիչն և զարարածս 'ի մի-
մեանց, զդարմանիչն և զդարմանաւորսն, զկեցուցիչն
ամ կենդանեաց. որով ընդ զպէտս պիտոյից ամ արա-
րածոց։

Եւ զի արժան է յամ ժամ կարդալ առ նա, և
խնդրել զայցելութիւն հոգեւորաց և մարմնաւորաց,
և գործակից լինել բարերար կամաց նորա, և անվը-
նաս մնալ առ երախտաւորն ած։ Եւ այսու օրինակաւ
փոխել 'ի վատթարէն 'ի լաւն, յանարգանացն 'ի պա-

1 Այդպէս յերկոսին օրինակն։

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՆ

տիս, ՝ի ծառայութիւն Որդւոյն ՝այ, և յընդանութիւն Ճշմարիտ Հաւատոցն՝ որ ՝ի Հայր և յՈրդի և ՝ի Հոգին սուրբ. Ժառանգաւոր լինել երկնից արքայութեան և անվախճան երանութեան։ Զի նաև արարիչ ՝ամի, որ արար զպաշտօնեայս իւր Հոգիս և ՝ի բոց հրոյ, զվերին զօրսն։ Եւ զմարդիկ յերկրէ ստեղծեալ, անստուին և զկեանս ունի դարմանաւք։ Որք և ՝ի հրեշտակաց դաստիարակին ՝ի Հոգեղինացն վարս ըստ նախախնամութեան ՝այ, որ զօրէնսն յօգնականութիւն ետ, որ ՝ի հրեշտակաց քարոզեցաւ։

Բ. Յ և ՝ի մարդկանէ հաճեցաւ ՝ած քարոզ լինել Ճշմարիտ աւանդիցն. որք հաւատարիմ գտան առ պատուիրանս նորա և հաճոյացան ՝այ, և զբաղումն ՝ի մարդկանէ դարձուցին յանծդիտութիւն և յանդգնութիւն ըստ կամաց արարողին կենաց։ Եւ որք արհամարհողք գտանին ՝այ և նախատացեալ ՝ի խորհուրդս իւրեանց և խաւարեալ անմտութեամբ սիրաք նոցա, որպէս ասաց Աւաքեալ, զրկեցան յամենառատ բարերարութենէն։ Զի ոչ միայն զնիւթական արարչին արգելին իւրեանց անհնազանդ բարուքն և յեսարնդդէմ գնացիւքն, այլ և զարկութիւն ՝այ յինքեանս շարժեցին յարդար և ՝ի մարդասէր դատաւորէն։ Որ անկան ՝ի փառաց և ՝ի պատուոյ, ՝ի նախախնամութիւ բարերարամտոյ, և ՝ի հրեշտակաց դաստիարակութիւ՝ որ զօրավիգն էին։

Բ. Յ որք մեծամեծ կացին մեացին համբերութիւ՝ յամ՝ նեղութիւս, ՝ի նորին ինամին վայելեն ասա և ՝ի հանդերձելումն։ Եւ որք մոլորեցան ՝ի Ճշմարտութիւ՝ անտի, բարկութիւն ՝այ կայ մեաց ՝ի վերայ նոցա։ Զի զարարեալս ՝ամ՝ աստուածաց արարին, զնչաւորս և զանշունչս, զջուր և զկաւ։ Զի ջուրն ՝ի պէտս կենդանեաց արարան յայ, որ արբուցանէն զերկիր. և դարձեալ ապականին նեխելով և նուազելով։ Եւ հաւ առ ՝ի պէտս մեր արարաւ, որ դարմանաւք վառի և սպասաւորէ մեզ. և ՝ի պակասել կերոյն՝, շիջանի և ապականի։ Նոյնպէս և հողմք և ամպք ՝ի պէտս ևս այլ

1 Միւս օրինակին Վերաբերյալ։

արարածոց արարան, և ոչ ինքեանք եղեն. և ապականացուք են յորդելով և պակասելով օգտել և վնասել, զիւրեանց տկարութիւն ցուցանելով։ Եւ երկինք և երկիր ոչ ինքնին եղեալք, և որ 'ի նոսա զեռունք իցեն և անշունչք, այլ յայ արարան, և ապականացուք են։ Երկինք լուսաւորօք և երկիր կենդանեօք և բուսովք և անկովք, և ամ ձեռագէտ արուեստից, որ ստեղծանեն պատկերս յարարածոց այ աստուածս, սուտ են և ապականին. որպէս իմաստնոց է քաջայայտ։ Ցա և ոսկի և արծաթ և ականք պատուականք և պղինձ և երկաթ 'ի մարդկանէ Ճարտարաց 'ի պէտս ինչիրաց կազմեցին, և կամ 'ի զարդ ինչ նիւթոյ հասարակաց արարչին առնելոյ իմաստութեն այ նախանամեալ։ Զի երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա յայ արարան յոչընչէ. և չեն աստուածք տարերքս ամ, այլ արարածք հասարակաց արարողին։

Արարածք են այ և լուսաւորք՝ արեգակն և լուսին և աստեղք ամ, որք իւրեանց փոփոխմամբն ցուցանեն զիւրեանց սպասաւորութիւն ըստ սահմանելոյն այլ և ս արարածոց։ Եւ յայտ առնեն մեզ եթէ արարածք են օգտելով և վնասելով, ամարանի ջերմամբքն և ցրտութիւք ձմերանոյ, մանրապատումիմն շահիւք և վնասակարութիւք, որպէս իմանալի է։ Զի որպէս մարդիկ ոչ կացին 'ի պատուիրանապահութեն այ և ըստ հրամանի դարմանողին յօգտակարսն վայելեցին՝ այլ նանրացան, այնպէս և դարմանիչ արարածք փոփոխեցան յօգտակարացն[1] 'ի վնասակարս։ Որպէս ձմեռն ոչ միայն զովացուցանէ, այլ և սպանանէ. և ամառն ոչ միայն ջեռուցանէ, այլ և խորշակահար առնէ. և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտսն ընու, այլ այրէ և ապականէ. և ջուր ոչ միայն արբուցանէ զերկիր, այլ և ողողէ և վնաս առնէ։ Այնպէս և ամ դարմանքն. որպէս իւղ և մեղր և գինի և այլն ամ ըստ նմին օրինակի։ Եւ չափոնն ինամք են դարմանոցն, և անչափն տանջանք և մահ. զի սանձեսցէ զժպիրհ և զյանդուգն կամն ազահութեն և զանձնիշխան կամացն զհո-

1 Միւսն յաւելու 'ի վերնոյն Ե։

սումն և ի վայր ցնդումն անառակութեան և անմնայ
ջութեան, որ ի Ճանապարհ անդարձ՝, որ տանի ի կո-
ծուտս։ Եւ նեղ և նուրբ Ճանապարհ և սիրոյ և արդ-
արութեան օրինացն, որ տանի ի կենսն յաղագս սրբու-
թեան և Հշմարտութեան, որ ընթացուցանեն զՃանապարհ
հոգոյն ի գուռն կենաց և փրկութեան։

Օ ի այսպէս երեւելեաւքս և աներևութիւնքս ա-
հիւն՝ այ սանձահարեալ զանձն ի զգաստութիւն, և
զդժոխութեան և գայրատութեան անձնիշխան կամացն
լուծանել ի չարն և ի բարին շարժել և յարդարել
ըստ օրինացն։ Կշռել և խորհել, ասել և առնել որ ի
Հաճոյս այ աւարտն Հշմարիտ վկայութիւնքս սուրբ գրոց։
Եւ մի մեկնել ի բաղմախոյզ խնդիրս՝ որ վրիպե-
ցուցանեն ի ստոյգ Հաւատոց։ Զի Հշմարիտ գիտու-
թիւն իմաստիկ կենարար շահիւքն լցուցանել միշտ։ և
ամենայնով պահպանութիւնքն պատուիրանին ի հոգեւոր
վարդապետութենն կայ մնայ անսասանելի։ Եւ յլ և
զամենս նոմ՝ քակէ զկեպարտացեալս ի վերայ գի-
տութենն այ, և ածէ ի հաւանութիւն հաւատոցն։

Օ ի մինչ մարդն հնազանդէր օրինացն այ, և գա-
զանիք թանաւորքն հնազանդեին մարդոյն որպէս
սեռան և թագաւորի։ Որպէս Դանիելին՝ որ եկաց
ի պատուիրանին, և որպէս երեք մանկուանքն ի հնա-
ցին, և որպէս Ծոլն՝ Պետրոսի։ Նոյ և նոմ սրբոց ա-
բարածք հնազանդեցան ի կամաց այ։ Եւ որք ա-
պրեցամիքք են ի պատուիրանէն այ, և նոմ արա-
բածք հնազանդ և անշունչք հակառակ յառնեն։
Երկիրս նոմ մանվաքն և բուսովք յապարհանութի-
գառնան։ «Ուրաբ, ասէ, զերկիրն պտղաբեր՝ յաղ-
տաղտուկ վասն չարութեան բնակչացոյ։ Եւ որքան ջանք
և հնարք եղեն սրբոցն զմարդիկ ածել յանդգնութեան ա-
ղիսիքն և աւետարանաւն Քրիստ, այնպէս և մարդկան
ըստ այ հնարէին հնարիւք ածել ի հնազանդութեան ըզ-
գազանս և զանասունս և զթռչունս սրբանեկիկ զոլ-
ացոյն, և զերկիրն ի գործ արկանել ի սիրտ։ Եւ առ-
հաւ և առ ջուր և հողմ հնարիւք սպասաւորս առ-

1 Մեկն անդ։

նել մեզ՝ իմաստութեան այս առաջնորդեալ։ Եւ նա-
խախնամութի արարչին անհերևութաբար ներդործէ 'ի
մեր հնազանդութի գազանաց և անասնոց և թռչնոց և
սողնոց և զեռնոց, որ 'ի ծովու և որ 'ի ցամաքի են։ Զի
եթէ ոչ էր ահ նոցա 'ի վերայ, ամենեքեան զմեզ սատա-
կէին։ Եւ ուր ուրեք փնտռիցեն զմեզ, յերկիւղ այս շար-
ժեն. զի վերաբերեալ 'ի հեղգութի՝ յառաջնութենն
վարս փութասցուք միշտ։ Զի և գազանք ոչ եթէ, բնութ
եղեն չարք, որպէս ընդելութիւն ցուցանեն առ թո-
վիչսն. և առիւծ և խոյ և արջ հնազանդին մարդ-
կան, որպէս եզն և շուն և այլ նմա՝ որք ընդ լծով
անկանին և շաղաքորթեն, և առ անընդելսն գազա-
նանան, և մահ գործեն անծանօթիցն և վերս։

Եւ որպէս 'ի պատճառէ իմաստի կատաղութի 'ի
խելսն անկանի և հանէ 'ի դարմանոց, և յընտանու-
թի 'ի վարագութի՝ մոլորեցուցանէ և 'ի կորուստ
ինքեան և այլոց ևս, նոյնպէս և առ ուսմունս մոլո-
ղութի 'ի խելս մտացն անկանի և ցնորեցուցանէ որ-
պէս զկատաղին, անծանօթս առնէ 'ի Ճշմարտու-
թենն ամբարիշտ և այլանդակ վարուք. որք ելանեն
ընդ սահմանս բնութեանն, քայց թէ բժշկի ուրեք
որպէս կատաղի։ Զսոյն այսորիկ պիտոյ է յոյժ զգու-
շութի՝ պահելով զլսելիս և զմիտս յայնպիսեաց ան-
սի փնտռուց, և խորհել յօրէնս նոցա 'ի տուէ և 'ի գի-
շերի, որ փրկութիւն լի է և կենաց։ Զի և մարդն մը-
տաւոր և բանաւոր՝ շնորհիւ այս անշարժ կացցէ 'ի
լաւութի մտերիմ հաւատով և անարատ վարուք։
Փոփոխել 'ի փնտռակարացն 'ի լաւագոյնսն. արժա-
նաւոր լինել հոգևոր առաջնութի և ամբիծ սրբութի
երախտեաց Ճշմարիտ սիրոյն այս. և ընդունել շը-
նորհս առաքելութի, մարգարէութի, վարդապե-
տութի, քահանայութի շնորհի հաւանական կամաց
արժանի լինել, և լուսաւորել զնմա խորհուրդս մտաց
լուսով գիտութի և իմաստութի. արժանաւոր երախ-
տաւոր վարուք հասանել 'ի նաւահանգիստն կենաց։

Եւ յաղագս անձնիշխանական կամաց ունի զո-

1 Այդպէս յերկոսին օրինակսն։

բութիւն մնալ ՝ի մտերմութեանէ սուրբ սիրոյն ՝ի նոր, և կամ յանհնազանդութեանէ հոգեւոր օրէնացն և ՝ի բարեացն ՝ի վայր կործանել ՝ի խորս չարեաց, և զանարգանաց անուն ժառանգել և զանառակութեանէ և զամբարշտութեանէ զանօրէն և զչար և զպիղծ։ Որպէս և անմարմին զօրացն է իշխանական կամքն կալ ՝ի հրամանի արարչին, և կամ սատանայանել նոցա։ Որպէս իսմանալի է, հոգեղէնացն կալ մնալ ՝ի սէրն այ միշտ յանդադար փառաբանութեանէ արարչին իւրեանց, Աստուծոյ և ապրստամբան ՝ի նոցանէ իսկ արար զատանայ. և որք ընդ նովաւ զօրք՝ այսք պիղծք և չարաբարք անուանին։ Աստ այսպէս յանուանին ունին ըստ հանգամանս բնութեանցն բարւոյ և չարի, յայտնել մեզ զչարն և զանարգն։ Եւ զիւրաքանչիւրոցն ծանուցեալ զպատիւ և զանարգանս, զհետ երթիցուք բարւոյն և ասենացուք զչարն. զիւրաքանչիւրոցն երանելի որ ասէ. «Աստիւ, Ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև սակաւուգ հաւատարիմ եղեր, ՝ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութեան տեառն քո»։

Եւ որք հիւանդքն են և ասդդ ապաշխարեսցին, և նոքա փրկութեան հասանիցեն՝ որ ՝ի Քրիստոս։ Զի ոչ է պարտ հիւանդացն ՝ի դարմանս արգարոց վայելել, և վատացն առ քաջն, և մեղաւորացն ընդ անմեղսն, և անարդոցն ընդ սուրբս հաւասարել։ Աստ մնալ միաբանչիւրք կարգի ուսման, սին ուսուցանել և սին ուսանել։ Զի այսու հարիւրիւ հրաւիրանք կոչեաց զամենեսեան յիւր արքայութիւն. և կանուխ գիտութիւն ընտրեաց զառաքեալն ՝ի սպաս պաշտաման Աշխարհիս քարոզութիւն հաստատեաց արարչին։ Եւ նոքաք ած զրաւսին ՝ի Ժառանգութիւն ածգիտութեան։ Եւ վասն այսորիկ բարերար կոչի և թագաւոր թագաւորաց և տէր տերանց. որ միայն ունի գնահատանութեան ՝ի վերայ մտերիմ Ծառայից առաքիչեանց ՝ի նեղութեան և յանդորրու. զի ցուցանէ զգնութեան յայտնութեան իւր։ Զի գաւառաւոր արքայ է ՝ի վերայ օրէնացն՝, և բժիշկ հիւանդաց՝ որք

1 Միեան անօրինաց։

ախտացան 'ի զանազան ախտս և 'ի ցաւս, յորժամ գաւնան յապաշխարութեան խոստովանութիւն։ Աղլ և գարմանք հոգևորք պատրաստեալ կան, խրատք առողջութեան 'ի սուրբ գիրս և աւետիք թողութեան և հանդերձեալ երանութիւնն՝ որք կամիցին։ Զի որպէս ամպ երբեմն կարկտիւ և հրով շրջի և երբեմն քաղցրը անձրևով, այսպէս հրաման ոն շարժի 'ի վերայ անարժանիցն բարկութիւն և արժանաւորացն քաղցրութիւն ըստ արդար դատաւորութեանն։

Եւ արարիչն ոն և հաստիչն որ 'ի գործոց անտի իւրոց ունի զփառաւորութիւն և զկեցուցիչ անուանն զերախտեաց իւրոց, զբարերարն և զողորմածն և զգթածն, զսուրբն, զերկայնամիտն, զատոյգն, զճշմարիտն, զանեղևոյթ զգօրութիւնն երևելեօք 'ի հանդիսի կացուցեալ 'ի խրատ և յառաջնորդութիւն անեղևոյթ զօրաց հոգեղինացն և երևելի որդւոց մարդկան ըստ ընտրութեան լաւութեան առաքինութեան գործոցն սրբութեան։ Եւ փառաւորեալք են արարչին կենարար արուեստիւք, որ գործակիցն է իւրովք շնորհօք։ Եւ զնոցն անուանս ստանայ արարածն զարարչին իւրոյ. և նոքիմբք մեծարեալ մնանէ 'ի ժառանգութեան Որդւոյն ոյ և մարդասիրի, և 'ի բարութիս վայելէ յանվախճան և յանապատ երանութիւնն ընդ անմահ արքային յաւիտեանս միշտ։

Շնորհալից մտաց և հաւատացելոց սակաւ բանք խրատուց բաւական են յուղղութի. իսկ անհաւատիցն և անշնորհիցն և յոլովից բանք խրատուց ոչ ինչ օգուտ գործեն, որոց խաւարեալ են միտք իւրեանց և օտարացեալք 'ի շնորհաց անտի։ Աղդ յուշ լիցի ամենեցուն ոն ծնեղէն խրատն, որովք լուսաւորիմք իմանալի լուսովն որ անատուերն է, և չիք 'ի նմա խաւարի մնան։ Արար զմեզ բանաւորս և մտաւոր, զի ծանիցուք զարարիչն և արասցուք զհաճոյս նորա. որ յոչընչէ 'ի լինելութիւն էած և 'ի չգոյէ 'ի գոյ։ Եւ մատակարարեալ 'ի մարմնի վերափոխէ զկացեալսն 'ի պատուիրանին պահպանութիւն յոն ծնեղէն փառն Քրիստի։ Զի որք ասեն եթէ ընդէր այսպէս արար զմեզ ապականացուս և ոչ անապականս, միթէ ասիցէ՞ ստեղծուա-

ծրն ընդ ստեղծիչն իւր թէ ընդէր այդպէս արարեր զիս։ Զի ուսցուք զմեզ ինքեանս ըստ իշխանական կամս մեղուցեալս և ապականեալս, և անմեղս և անապականս։ Որոց իւրաքանչիւրոցն է պատրաստեալ։ մեղուցելոցն մահ, և անմեղացն կեանք յետ աստեացս վճարելոց. որոց կենաց և մահու փոփոխումն չկաք։ Որ անփոփոխն է կենդանի երանութիւն ի սիրոյն այ կազմեալ. «Զոր ակն ոչ եսես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց ած սիրելեաց իւրոց», ասէ ծածային Առաքեալն։

Բայց յայնժամ ի կատարածի յայսմի ի յայտնութեան աւուրն և ի յարութեան, յորժամ լինիցի ահաւոր ատեանն յերևել փառաց Որդւոյն այ. զի երկինք և երկիր անցցեն, և նա կայ միայ անմահ և մշտնջենաւոր և անսպառ յաւիտեանս յաւիտենից։ Զի անհնազանդից և անհաւատից, ամբարշտաց և մեղաւորաց կազմեցան տանջանքն անվախճանք, որպէս սատանայի և գիւաց նոցա։ Զի յերկրի որպէս ի ծոց վտ ծփեցան հոմանգեալ և մրրկեալ մեղօք։ Բայց հաւատարիմքն և լուսաւորեալքն շնորհօք անսասանելի մնացին ի պատուիրանի արարչոյն. զի լուսաւորեցան վարք նոցա. և որք տեսին զդրախտն բարիս, փառաւորեցին զՀայրն որ յերկինսն է ըստ քանի աւետարանին։ Բայց արարչին բոլորից և ամենեցուն տեառնն ոչ որ կարէ հասու լինել և բաւական յասել զամենաբաց զբարութիւնն նորա զմեծութիւն և զիմաստութիւն։ Բայց ըստ իւրում բարեբարութիւն եթաց զդրուն կենաց արարածոց իւրոց հաւատացելոց ի ձեռն Հոգի Քրիստի և սրբոց իւրոց։ Որոց աշակերտեալք ի նոյնսրն գնացուք հաւատով և սիրով և յուսով. զի ընդ նոսին ժառանգէսցուք զանսպառ բարութիւնն ի Քրիստն։ Զոր մեք. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՐԱՐ ԽՐԱՏՈՒՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՍԱՑԵԱԼ.

Ե

Յաստնի է իմաստնոց սրբոց որ ունին զգիտութիւն 'ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց, թէ մի է բնութիւն ամենասուրբ Երրորդութեան զօրութիւն և փառաւոր և մշանջենաւորութիւն։ Անսահման էութիւն, անսկիզբն իսկութիւն, անփոփոխ ճշմարտութիւն, կեանք և կեցուցիչ կենդանեաց։ Հայր է հայրն միածնի Որդւոյ, և բխումն Հոգւոյն սրբոյ. պատճառնոցունց իսկութեանցն 'ի նոյն բնութիւն։ Երրորդութիւն կատարեալ և մի ածութիւն, փառաւորեալ միշտ 'ի զօրաց երկնաւորաց և 'ի մարդկանէ որպէս զածն և զարարիչ գոլով։ Զի յոչընչէ արար զսոսա և զամենայնս որ երևին և որ ոչն երևին և յերկինս և յերկրի։ Եւ հոգեղինայն և բանաւորացս տուեալ զիշխանական կամն, որով երևեսցին պատուեալք, և ցուցցեն զլաւութիւն մտերմութեանն առ արարիչն, փառաւորելով զնորն փառաց և առնել զհաճոյս նորա, և արուեստից նորա տեղեակ և աշակերտ լինել անապատութիւն և սրբութիւն։ Եւ երախտաւոր լինել առ գարմանս որդւոց մարդկան. հովուել և բժշկել և առաջնորդել յերևելի և յաներևոյթ պէտս ըստ ամենայն օգտից գործակցութիւն Հոգւոյն ըստ օրինացն։ Բարի կամաք և բարի խորհրդով և բարի գործովք ցուցեալ զգործ պիտանութեան։ Զի եղեալք և հաստատեալքս 'ի բարի՝ 'ի նոյնս կացցուք։ Զի աղբիւր է ամ բարեաց և կենդանատու սուրբ խրատուց. որ զամենեցուն միտս լուսաւորէ 'ի գործակցութիւն կամաց իւրոց բարեսիրաց խելամտութիւն գործոց սրբոց՝ մտանել 'ի ժառանգութիւն արքայութեանն, որ առ ան-

վախճան կենցն տանի։ Այս է բարերարութեն նո-
ցա հանդէսք, աննախանձ և առատաձեռ արարածս
իւր. զի զամենեսեան կոչէ յիւր փառն և յերանու-
թիւն գործակցութիւնք ըստ իւր բարերար կամացն։

Եւ զի արարածոց կամք հաղորդեալ էցեն ընդ
նորա բարի կամացն 'ի ձեռն օրինացն եդելոց, և լի-
ցին աշակերտք բանին կենաց։ Զի նախ նորա միոյ-
նոյ ամենակալ զօրութեանն և բարերար կամացն և
ամենագիւտ սիրոյն գործ երևեցաւ, զի յոչընչէ
արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք
լիցեն, որ երևին և որ ոչն երևին։ Երկրորդ լաւու-
թիւնք մտաւորացն և բանաւորացն և որք 'ի նոցանէ ըզ-
գործս մտերմութիւն և հնազանդութիւն և սիրոյ ցուցա-
նեն, յայլ պատիւ փոխեսցին յանուն և 'ի փառս հրեշ-
տակաց և հրեշտակապետաց, սերովբէից և քերովբէից
և զուարթնոց և ամ երկնաւոր զօրացն՝ որք փառա-
ւորին։ Իսկ երկրաւորացս տուեալ շնորհս առաքելու-
թեան, մարգարէութիւն, քահանայութիւն, աւետարա-
նութեան, ճշմարիտ վարդապետութիւն, մարտիրոսու-
թիւն, կուսութիւն, սրբութիւն, կատարեալ ապաշխարու-
թիւն։ Զի երկոքին կողմանքն միոյ բարերար կամացն
արբանեակք են և աշակերտք, վերին զօրք և մար-
դիկ։ Զի մի է ամ Հայր, յորմէ ամենայնն. և մի տէր
Յս Քս, որով ամենայնքս. և մի սուրբ Հոգի նորոգող.
երրորդութիւն սուրբ։ Զի Բանիւ ամն երկինք և եր-
կիր հաստատեցաւ, և Հոգւով բերանոյ նորա ամ
զօրութիւնք նորա, որպէս ասացաւ 'ի մարգարէէն. որ
միշտ օրհնի յարարածոյ։

Լ. զանազանութիւն կարգաց և պատուիրանաց յայ
'ի Հրեշտակս և 'ի մարդիկ ըստ իւրաքանչիւրոց յօ-
ժարութիւն և սիրոյն որ առ ամ։ Զի յանուանցն ու-
սուցանեն մեզ երկնաւորք և երկրաւորք կալ 'ի մը-
տերմութիւն և 'ի բարիխորհրդութիւն 'ի բարի գործս.
յորդորել և զայլս 'ի բարին և 'ի հաճոյն ամենազօր
տէրութիւնն, և խափանումն առնել աղտեղի բարուց
շարժմանց։ Զվերինսն խորհել զհրեշտակացն, զի ըզ-
նոյն փառս և զպատիւ առցուք, և լինել սպասա-
ւոր բանին կենաց և արարչին կամաց ճշմարիտ քա-
րոզութիւնք. զանմոլար գիտութիւն սփռել 'ի լսելիս մարդ-

կան, զարթուցանել 'ի գործ բարեաց, և ունել զերա-
սանակս անձնիշխան կամաց 'ի պահպանութիւն պա-
տուիրանին և յիրաւունս ոտն։ Ով զայս արասցէ,
քերովբէի նմանի, և զնոյն պատիւ առցէ յարար-
չէն։ Եւ որ զհակառակասէրս և զդժնդակ վարս ուղ-
ղէ 'ի հնազանդութիւն և 'ի հեզութիւն և յանարատ
սրբութիւն, խլելով 'ի մտաց և 'ի մարմնոյ զանիրաւ
բոյսս որոման չարութիւն, ապիրատութիւն, խորաման-
կութիւն, խարդախութիւն և ամ ինասակարաց, և ցան-
կացողս առնէ ուծային օրինացն արդարութիւն, զսերով-
բէի զկարգ ունի և զպատիւ։

Իսկ որ արթունն կայ 'ի հանդէս առաքինութիւն
սուրբ և անարատ, և ոչ պղերգանայցէ յօգտակա-
բացն, 'ի հոգևորացն կամ 'ի մարմնականացն, ըզ-
զուարթնոցն զկարգ ունի, զփառս և զերանութիւս։

Իսկ որ զկորուսեալն գտանէ և զգտեալն պահէ,
և զամբոխեալն բարկութիւն և ամբարտաւանութիւն՝
զիջուցանէ 'ի խաղաղութիւն և 'ի խոնարհութիւն և 'ի
հաշտութիւն, նմանեալ լինի Որդւոյն ուայ և ժառան-
գակից ըստ իւրում բանին. «Երանի խաղաղարա-
բաց, զի նոքա որդիք ուայ կոչեսցին»։

Իսկ որ զօտարսն ընդանեցուցանէ, և զգլորեալսն
'ի մեզս՝ կանգնէ, և զչիւանդացեալսն անհաւատու-
թիւն և երկմտութիւն՝ բժշկէ ուղղափառ հաւատով և
բարի գործովք, և զաղտեղիսն հոգւով և մարմնով
ախտացեալս սրբէ ստոյգ խոստովանութիւն ըստ ա-
ւազանին շնորհի, և զայ յապաշխարութիւն, գործա-
կից լինի Հոգւոյն սրբոյ, և նորին բնակարան, ըստ
բանին. «Դուք տաճար ուայ շինեալ իրաւամբք և սըր-
բութիւն. և Հոգի ուայ, ասէ, բնակեալ է 'ի ձեզ» իւ-
րովք ուծային փառօքն 'ի սրբեալսն։

Իսկ որ զանյոյսսն յուսով նորոգէ 'ի յոյս կենացն
յաւիտենից, և զչարթուցեալս և զչեռացեալսն հան-
դարտեցուցանէ և զետեղէ երկայնմտութիւն 'ի համ-
բերութիւն, և զթաց խնամովք յանձանձէ, և շնոր-
հօք ողորմութիւն ուղղէ 'ի լաւագոյնսն 'ի լուսաւորու-
թիւն ուծգիտութեան և մաքուր վարուց, ժառանգորդ
լինել Քրիստի և արքայութիւն երկնից։ Որ նմանեցաւ նո-
րին մարդասիրութիւն ըստ ուամի, և 'ի խնամս սուրբ

Երբորդութեան վայելեսցէ յերանելի կենանն։ Զի այ երախտեաքն ի փոքուն հաւատարիմ եղև հոգեւոր գործմանքն և մարմնաւոր։ զի «Քաղցեայ, ասէ, և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և արբուցէք զիս» և որ այնպէս էս։ Զի որովհետև արարքք միում ի փոքրիկոց, ինձ արարէք, ասաց։ Զի այսպէս են խընամք սիրոյն ի մեզ։

Իսկ որ ծուլանան առ բարի գործսն, և արհամարհանօք արհամարհեն զօրէնսդիրն, և որոշեն զանձինս ի տեառնէ հպարտութիւն և անհաւատութիւն, ապստամբեալ ի բանէն կենաց, ամբարտաւանեալ ընդդէմ նեղոյ տէրութեան ամենակալ զօրութեան, և լինին յոլովից կորստեան պատճառք, վրիպեալք յաւիտեանսն բարեաց և յերանելի յուսոյն, սատանայի են նմանեալ և զնոյն պատիժս տայցեն յաւիտենից տանջանացն։ Որք ասէն են գրաւեալք ի ներքոյ ահաւոր սպառնալեաց արդար դատաստանին յաղագս ապախտաւորս և անառակ գործոց չարեաց։

Իսկ որ ստահակեն և մոլին ի չարիս, և նենգելով լինին քանսարկու ի մոլորեցուցանել յուղիղ հաւատոց և ի սուրբ վարուց, և նախանձին ընդ բարեգործս, և լինին խռովարարք և բարկացողք և պղտորիչ պարգամտաց [1], զգիւաց զկամս ունին, և նոցին լինին ժառանգաւորք ի յաւիտենից տանջանսն. եթէ յանմարմնոց իցէ և եթէ ի մարմնաւոր հոգեղինացս։

Իսկ որ անխորին է յաղտեղութիւս, լկտեալ յանառակութեան և վարեալ ի պէսպէս ցանկութիւս պատիր պատճառաւ, բազմանայ անօրէնութիւնքն ի գոռանալ, ի սուտ, յերդմնուլ, և բազմարմատ դժբնդակութիւնքն պատճառք լինի բազմաց ի կորուստ, այնպիսին զպիղծ և զաղտեղի անուն ժառանգէ. հրաժարեալ ի կենդանի լուսոյն և ի սրբութեան փառացն ելանէ ի խաւարն արտաքին հրախառն. որ որդն նոցա ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի, և լինի ի տեսիլ համ մարգկան։

Իսկ որ անխնայ են ի չարութեան և լի են անիրա-

1 Միւսն պարզիցոյ։

սութիւն յերեւելիս և յանտեսանելիս, յանառակութիւն և յանդգնամութիւն, ի հարկանել և ի զրկել, ի նեղել, ի սպանանել և ի կորուսանել, այնպիսին զանօրրսմ չարագործացն պատուհաս ընդունի. զի չարք չարաւ կորիցեն։

Իսկայսր ըստ իւրաքանչիւրոց խորհրդոց և գործոց զհատուցցուն արդարոյն կշռօքն։ Զի եդաւ պատուիրան մարդկան՝ կալ հաստատուն յանպատ սրբութիւն, և գործել զարժանին և զվրաւն, և կալ մնալ անշարժ ի լաւագոյնսն, որպէս ասացաւ։ Զի այսպէս կարէն ընդունակ լինել շնորհաց մարգարէութեան, և խորհրդակից լինին բարեբար կամաց տերութիւնն Ճշմարիտ քարոզութիւնն, և զարթուցանել զնմա միտս ի ընդլայնելոյն յիւրոցն, սպասել կենդանի աւետեանն խոստացելոց, և ժառանգաւոր լինել անքնին փառացն՝ որ արդարոցն է։

Լաւ որք հրաժարեն ի պատիր խաբէութեէ մարմնաւոր վարուցս՝ լուսացեալ զմտս ի խղճէ չարեաց հնորհօք սոցայ զզմամբ ապաշխարութիւն արտասուօք, ատել զչարն և սիրել զբարին, խափան լինել մոլար խաբէութեէ ուսման, և ընձայաբեր լինել Ճշմարիտ հաւատով ամենասուրբ Երրորդութեանն, որք այսմ արժանի լինին, առնուն զանուն առաքելութեան աւետեաց նորոց կտակարանաց, և ժառանգաւոր լինին արքայութեանն երկնից։ Եւ որք նախ զառնելն ընձայեցուցանեն ըստ ուղիղ քարոզութեան. զի որոյ գործք իւր վկայեն քարոզութեան, ապա և լսողացն ընդունելի են առ ի խափանումն սուտ և պատիր խաբէութեէ մտացն շարժմանց։ «Զի որ քրիստոսեանքն են, ասէ Պաւղոս, զմարմին իւրեանց ի խաչ հանին կարեօք և ցանկութիւքք հանդերձ»։ Եւ այնպիսիքն են բնակարան ածութեանն, և վկայք Ճշմարտութեան ամ հաւատացելոց։

Իսկ որ միամտութիւն սրբութիւն ընդգրին սրբեալ ըստ միտս և զմարմինս յամ խղճէ չարէ յերեւելեաց և յանտեսանելեաց, արժանի՝ սիրոյ Հոգւոյն կոչմանն՝ առաքինեալք որպէս զքաջ նահատակս, անարատ սրբ-

1 Մինչ սրբեանն յաւելու՝ ի լուսանցս ԼԱՆՆ։

բութիւն յանդիմանել զմարմնաւոր բարուցն միշտ ըղ-
շաժամանս, և քակել զկիրս մարմնաւորս և չխնել
զհոգևորսն, զամբծութիւն և զնմա արդարութիւն փա-
փսխանար և անմեղկելի՛ի շահաւոր գիւտս և՝ ի փրր-
կութիւն մեղաւորին և հեռաւորին։ Զի որք այսպի-
սի վարուք հանդիսանան, նոքա են արժանի հոգւոյն
սրբոյ օծման, և քահանայանալ այ և ընծայել Ժողո-
վուրդ տն նախանձաւորս գործոց բարեաց և պաշտօ-
նեայ սուրբ Երրորդութեան՝ ի ձեռն հնարհաց սուրբ
աւազանին և մարմնոյ և արեանն Փրկչի կցորդ ըստ օր-
դեգրութեան։ և՝ ի բաց ընկենուլ զհին մարդն, և ըղ-
գենուլ զնորն որ ըստ պատկերին այ է, արդար և
սուրբ, մեկնեալ՝ ի չարեացս։ Իսկ որք կամին զանց առ-
նել զանցաւորքս, և առնուլ զիմանալիս։ որոնք՝ ի
ժամանակութեան, ասեսցին զվարս մարմնաւորս, և սի-
բեսցին զվարս հոգևորս, նահատակեալք բազում
առաքինութիւն։ զի առցին զանուն խոստովանողաց և
վկայից սուրբ մարտիրոսաց, որ երանութիւն պսակին։
Իսկ որ զգեցեալ են զանարատ սրբութիւն կուսու-
թեան, և զմիամտութիւն բարեբար կամաց հաճոյիցն, և
ըստ արդարութեան օրինացն և կրօնից սուրբ հարցն,
նոքա են որ մնանեն յառաջասան լուսոյ և վայելեն
՝ի փառս անմահ թագաւորին։ Իսկ որք անկեալ են
՝ի փորձանս մեղաց ազատեղութեան և դժնդակութիւն՝ ի
խաբս սատանայի, և յիշեսցին զանմեղ կենդանի որ
ասէ, «Դարձարուք առ իս՝ ի մեղաց, և խոստովան
լերուք և ապաշխարեցէք։ և ես դառնամ առ ձեզ
յողորմութիւն հարհՀաք՝ ի բժշկել՝ ի փրկել՝ ի կեցու-
ցանել», զի զօրացեալ՝ ի նոսա՝ յաղթեսցէ սովորա-
կան ցանկութեանցն և չարին խարեութեաց՝ որ ըստ հո-
գւոյ և մարմնոյ է մարան բռնացեալ։ Եւ հանդիսաց-
ցեալ յառաքինութեան մրցմանս, յաղթեսցէ և յա-
մենի արասցէ զիշխանն մեղաց առհաւատեալ յու-
սոյն և աւետարար յարութեան։ Զի՝ ի ձեռն մարմնոյ
և արեանն տն ազատեալք լիցուք՝ ի տանջանացն, և
լիցուք ժառանգորդ արքայութեան։ Զի «Փառք և
պատիւ և խաղաղութիւն, ասէ, որ գործէ զբարի։ և
բարկութիւն և նեղութիւն և տանջանք, որ գործէ ըղ-
չարս։ Տեսանես, դեռ այնչափ ընդարձակեցն և քննու-

թեց ոչ գառնայ յողորմութեէ 'ի խնամել զարարածս իւր. այլ զմոլորեալս դարձուցանել, զանկեալն յարուցանել, զգլորեալն կանգնել, զբեկեալն պատել, զհիւանդս բժշկել, զաղտեղեալսն մաքրել արտասուօք, զերկմիտսն հաստատել 'ի հաւատս, և զամենեսեան լուսաւորել։

Արդ ոմ բաւական է բարեաց բարեբարին գոհութեի մատուցանել, որ յամ կողմանց փոյթ է կեցուցանել զարարածս իւր։ Զսպառնալիսն որպէս հուր վառէ 'ի վերայ ամբարշտաց և մեղաւորաց, անսրբոց և պղծոց, զի դարձցին 'ի չարեաց և ապրեսցին 'ի բարկութենէն որ գալոցն է։ Եւ զաւետիսն որպէս ըզլոյս ծաւալեցուցանէ. զի զարթուցեալ և սթափեալ որպէս 'ի քնոյ 'ի բարիսն ժամանեսցեն, և զկենդանի բարութիս ժառանգեսցեն յարարչէն։ Իսկ որք ոչն գառնան և ապաշխարեն, պատրաստեցաւ նոցա տանջանք 'ի ներսէ ըստ իւրաքանչիւրոցն։ Զի որպէս գթած է անուանն 'ի խնամել և ողորմած է շնորհացն և երկայնամիտ 'ի ներելն և սուրբ առ 'ի սրբելն և լոյս առ 'ի լուսաւորելն, այսպէս և Ճշմարիտ անուն է նորա սրդար դատաւոր. որ ըստ իւրեանց օրինացն հատուցանէ ըստ բարեաց գործոց և չարեաց։ Արդ զորոյ զգործն ունի և զկամն, և զանուն և զփառն ժառանգէ, կամ զանարգանս՝ ըստ չարեացն զպատիժս յարդար դատաւորէն։ Զի որպէս զերկրաւոր դատաւորս իրաւարարս ասեմք, որ զչարագործս և ըզպիղծս և զանիրաւս 'ի բանդս և 'ի կապանս և 'ի տանջանս և 'ի սատակումն մարմնոյ մատնեն, զի խաղաղութեի առցէ աշխարհս, և ինքն փառաւորեսցի, այսպէս իմանամք և զայս դատաստանն։

Եւ մի՞ որ երկմտիցէ թէ ո՞վ գիտէ զայս՝ եթէ են պատիժք մեղաւորաց 'ի մարդասիրէն այ պատրաստեալ։ Ի սոյն յիշեսցէ զսատակումն՝ որ 'ի Ջուրցն հեղեղէ. ամ շունչ կենդանի ապականեալ կորեաւ, բայց 'ի տապանէն՝ որ ցուցաւն յայ։ Ապա թէ այսմ անհաւատ լիցիս, երթ 'ի Սոդոմ և 'ի Գոմոր ընդ հինգ թագաւորացն տունս, և զանցսն տեսցես զաղետիցն ըստ պատմութենն. որ տեղեաց ներ 'ի ներսէ հուր և ծծումբ յերկնից, և այրեաց զմարդ և զանասուն, զթռչունս երկնից և զձկունս ծովու, զքար և զհող և զջուր և զանտառս։

Լու եթէ զայս հեռի համարեսցիս, արդեւ խակ ընդ ժամանակս ժամանակս զսով և զսուր և զգերութիւն և զմահս տարաժամս և զմահս անամոց, այլ և զհարուածս և զցաւս և զհիւանդութիւնս չարաչարս, այլ և խռովութիւն հօր առ որդի, և որդւոց անհաւատութիւն, և եղբարց և սիրելեաց առ միմեանս ատելութիւն, և դառն հարուածք և մահ. վասն մեզոց զայսոսիկ բացայայտեն ոճային գիրքս մեզ. Զի գիտութիւն ճշմարտութիւն և իմաստութիւն և խնամք արուեստից ըստ բարուց չարժեալ յամենակալ Հօրէն և յարարչէն և ի փրկիչ Թագաւորէն՝ մատակարարի յարարածս նմա։ Զի նա է աղբիւր կենաց և առիւբարեաց և վարդապետ և շինիչ երևելեաց և անեբեւութից։ Եւ իմաստք ի մարդիկ ի նմանէ յառաջագոյն պէսպէս արուեստից և հնարագիտից։ Զի նախ ի միտսն գանձին հնարք արուեստիցն, և ապա յիւրաքանչիւր իրացն վարդապետին ի զգայութիւնսն։ Ճշմարիտ տեղեկութեամբ ստացեալ ի հնարէաց տուողին. օրպէս և Բեսելիելին և Նոքին ընկերացն առ շինութիւն խորանին. զի Հոգին սուրբ ազդէր ի նոսա զազգի ազգի հանգամանս արուեստից։ Զի նախ նոքա եղեն Ճարտարագործք արուեստից ի պարգևաց Հոգւոյն, և ապա այլք ի նոցանէ աշակերտեալք մինչև ցայսօր ժամանակի։

Օ՛ի որ զդարբնութիւն ուսեալ կամ զսակերչութիւն կամ զայլ արուեստս՝ ի մոի ունել զհանգամանս իրացն և զկախումն զկազմն, և Հոգայ միշտ զի կարասցէ զեղեցկագոյն յօրինել զենս կամ զարդս և կամ այլ ինչ յօրինուածս՝ որ ըստ աշխարհին է իմացեալ։ Նոյնպէս և բժիշկք որ երակաբն իմանան զցաւս, և զեղովքն զառաջնութիւն հնարշէն՝ ի հնարէացն այ։ Աղ և հանգերձաբարք և շինողք և հոգագործք և խոշակարարք, և որ այլ ևս արուեստք ի պէտս մարդկան բնաւորեցան, ոչ ապաքէն յայ հնարէացն ունին գմտաւութիւն. որ գովութիւն և պատուի արժանի են և վարձուց, որք առնուն։ Իսկ որք ծուլութիւն և արհամարհանօք յանցանեն ըստ հնարագիտութիւն արուեստիցն, անսպիտանս վնասս առնեն. ապա և զուշս ի յիշատակաց արուեստիցն ատանդեցուցանեն ի ծուլու-

թէն, և տգեղութիւն և խանգարումն երևութանայ, որ պէս անհանձարից. և արուեստքն անկանին 'ի հնարագիտութիւն իմաստից[1], և գործն անարգի և անպիտան լինի, և արուեստագէտքն անգոսնին և ամօթալից լինին, և անկանին 'ի տոյժս և 'ի տուգանս և 'ի տանջանս՝ անարգեալք յամենայնէ։

Այնպէս և կարգ քրիստոնէութիւն և ՅԾգպաշտութիւն է զգուշալի. զի ՅՄ իմաստութիւն և հնարագիտութիւն ուղղեսցէ զբարսն և զզգայարանսն 'ի լաւագոյնսն վարդապետութիւն հոգևոր օրինացն և ըստ հաՀոյից բարեբար կամաց արարչին։ Զտիւ և զգիշեր 'ի կամս տեառնէն խորհել, և յուշ առնել մտացն և զգայութեանցն զերկիւղն ՅՄ. զի առ ՅՄ պէտս բարի գործոց պատրաստ իցեն միտքն խորհել և առնել զբարիսն առաջնորդութիւն վերնատուողին. և 'ի հնարս մտեալ առ 'ի գրաւել 'ի յինքն զյիշատակս ՅԾգիտութեան։ ՅՄամ ժամ 'ի կամս տեառն նայել, 'ի նորա սէրն և յերկիւղն կալ միշտ. զի կարող է զանգոյն 'ի գոյ ածել, և զանարգսն պատուականս առնել, և զմեղսն լուծանել ստոյգ խոստովանութիւն և ապաշխարութիւն, և իմաստութիւն առաջնորդել ըստ արուեստից արդարութեանն։ Հանապազ կալ 'ի մշակութի հաՀոյից ամենակալ տերութեանն անշարժ հաւատով և ամրիծ վարուք։ Ակնկալութիւն յուսոյն կենաց զամենայն անդր գանձել, ուր ոչ ցեց ուտէ և ոչ ժանգ ապականէ և ոչ գողք ական հատանեն յԾՅին պահպանութենէն։

Այս քաղցր յիշատակօք սուրբ սիրոյն անքակ կալ 'ի նմանէ անարատ սրբութիւն։ Ամլ և երախտաւոր լինել առ հեռաւորս և մերձաւորս, 'ի նեղութիւն և յանդորրու կալ միշտ 'ի Ճշմարտութենէն։ Խլել 'ի մտաց և 'ի զգայութեանց զսուտ և զպատիր խաբէութեանց զշարժմունս զեկամուտս նենգաւոր չարին ազատելի ցանկութիւն և խիստ ամբարտաւանութիւն։ Եւ զդիմամբ և ապաշխարութիւն լուացեալ զսիրտս 'ի խղձէ չարեաց, և ստացեալ կամն բարիս առ ՅՄ մարդ։ Եւ փութալ և պահել զպատուիրանսն, և ընդ ՅՄ սիրոյն կապիլ միշտ. և անդ զմիտսն ամբառնալ, և զնորա գութն 'ի մեզ

[1] Միւսն արուեստից։

ձգել կենդանի մնացեալ իւրովք։ Եւ աչիւ նորա զգուշանալ, և զգաստանալ մտերիմ սիրով և հաստատով, և արթնունս և պատրաստս լինել, և յամ երկաւորեալ ի բաց կալ, որ խափանիչ և վրդովիչ է շահաւոր օգտութեանցն։ Ոչ խօսել զմեսակարսն զոր չէ արժան. այլ խօսել զճշմարիտն և զօգտակարն։ Եւ ոչ լսել ըզլուրն խարդախութեան. այլ որ յԾածայինսն յորդորել ի սուրբ գրոց ՝այ։ Եւ ոչ նայել ուր չէ արժան՝ ի շնայնս մարմնոյ զբօսանաց ախտ։ Եւ ազատամիտ լինել յաղահութեան, և առատանախանձ բարերար առ ամենեսեան, և օգտակար տարաց հոգևորականաց և մարմնականաց։ Եւ ոչ է արժան զաղանդն խուզել, և ի նոսա գեղեցել ի կորուստս։ Եւ զգուշանալ յամենայն անիրաւութեէ, ՝ի բարկութեէ, ՝ի հարկանելոյ, ՝ի զրկելոյ, ՝ի թշնամանաց, յերդմանէ, ՝ի սուտեանէ, յոխակալութեէ, ՝ի չարախօսութեէ, ՝ի նենգութեէ, ՝ի յանշահ չարէ. զի մի բարկացի տեր և կորուսցէ՝ ոչք այսպիսիս ունիցին վարս։

Իսկ որք ընդդէմ այսոցիկ զառաքինութիւնս բերիցեն, մեծարանք և պատիւք և պարգևք ՝ի տեառնէ, և զերանութիւնսն յաւիտենից ժառանգեսցեն։ Զի զայմ [1] շարժմունս արուեստիցն որ ՝ի մարդիկ ՝ի կամայն շարժին ՝ի լաւսն կամ ՝ի վատթարսն, զի իշխանակարսն ունի զերկաքանչիւրոցն զկամս բարւոյն և չարին։ Բազմադիմի են սերմանք բարւոյն ՝ի մարդիկ. զի աներևելէն սերմն ՝այ երևելի ցուցցէ զարմտիս բարւոյն։ Եւ առաւելեալ բարեաք փառաւորեսցի ՝ի պարծանս սրբոցն, և վայելեսցէ կենաց աւետաւորն։ Խակ դմտգակ վարուց և աղտեղի՝ որ ՝ի սերմանէ չարին որոմն բուսանի, յայտնի է ըստ իցին՝ աներևութիցն յերևելիս գոլով, ոչ ընկալեալ զսերմն բարւոյն ըստ ընդդրութեան օրինացն։ որք զՀատուցումն ընկալցին ՝ի տեառնէ զանչէջ Տուրն անմահ որդամբքն. զի ատեցին զբարին և սիրեցին զչարն. զի ընդդրութիք են յայ բարւոյն և չարին ըստ իրաւանցն։ Զի որոց կամքն շարժին զգայութիքքն ՝ի բարի կամ ՝ի չար, մնոյն և հատուցումն ընդունիցին։

[1] Ա. յդպէս յերկոսին օրինական։

Սիրոփ՝ այ սրբութի՛ հաստատի. բարեխորհրդութի՛, ուղղահաւատութի՛, բարեգործութի՛, արդարութի՛, ճշմարտութի՛, եղբայրսիրութի՛, հեզութի՛, խոնարհութի՛, հնազանդութի՛, գործասիրութի՛, միամտութի՛, և որ այլ ևս են առաքինութի՛ շահաւոր օգտիւք պահպանեալ երևելեաք և աներևութիւք։ Զգըթութի՛ բարի կամաք սիրել, զողորմութի՛ քաղցր հնորհաք, զերկայնմտութի՛ զուարթ յոժարութի՛ անձանձրոյթ յոժարութի՛ յաղօթս, պահովք պնդեալ։ Զայս սիրել, զայս պահել, յայսոսիկ զփոյթն ունել միշտ, և յայսոսիկ բարուք ցուցանել զհանդէս մտերմութե՛ սիրոյն՝ որ առ Հայրն երկնաւոր և Որդին միածին և Հոգին սուրբ համաշնորհ տերութե՛ն։

Այլ որ սոցա հակառակ է, ատել զդժնդակն, զչարեացն զցանկութի՛ն և զչար խորհրդածութի՛ս և զչար գործս անօրէնութե՛, զխաբեբայ մոլորութի՛ և զպիւղծ[1] անառակութի՛, զսուտ պատիր նենգութե՛ երդմունք, զանհամբոյր բարս անհաւանս, զսրտմտութի՛'ի բարկութե՛[2] շարժեալ, զստահակութի՛ն'ի թըշնամանս, զանհնազանդութի՛ յամառ, զծուլութի՛ և զմեղկութի՛, զյայրատութիւն և զխեղկատակութի՛, զկիտութի՛ և զանառակութի՛, զոխակալութի՛ և զնախանձ, զորովանամոլութի՛ և զարբեցութի՛, և զփառասիրութի՛ և զամբարհաւաճութի՛ հանդերձ ամ բծիւք և անխնայ չարեաք և անխտիր աղտեղութի՛ք, որ անարգանաք լի է։

Այսոքիկ են դժնդակ վարք և փնասակար որոմանս սերմանք. զի առանձինն բնութեամբ՝ չարն չար ոչ է, և ոչ բարին բարի. այլ'ի միտն ունի բարի և չար լինել. զի սիրոփ՝ այ սիրել զբարին և ատել զչարն՝ բարի հաստատի. և ատել զբարին և սիրել զչարն՝ չար է. նախանձել ընդ բարին և լինել բարի՝ բարի է, և ընդ չարն՝ չար է. և նախանձն նոյն է։ Բարւոյն ցանկալ բարի է, և չարին չար. և ցանկութի՛ նոյն է։ Սոյնպէս և առ ամենայն բարիս և չարիս է իմանալ զնախանձ և զցանկութի՛։ Զի ամենատեառն բարեբարի զբարին սերմանեալ'ի մարդիկ, և յիշխանական կամն

1 Միւսն պղծուրդ անառակուրդ։ 2 Միւսն'ի բարկուրդ։

թողեալ՝ որք կամիցին վարել՝ի բարի և՝ի չար։ Արու-թիւն՝ի Հանդէս բարեպաշտութենն, և հեշտութիւն՝ի չարն հակամիտ միտ։ Եւ կառավար բարուցն բա-բութեաց ՝ոմն ծանրութենն է և եղբայրսիրութենն. զի սեր ոչ խորհի զչար։ Իսկ չարեացն է անանձութենն և անձ-նասիրութիւն կառավար. ըստ Աստուածային բանի օտարաս-նան յայր և առնել զկամս մարմնոյ և զմտաց. և լինել որդի բարկութեան։ Եւ դարձեալ ասէ. «Կենդանի եմ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս». այսինքն հաճոյքն Քրիստոսի. արդարութեան, սրբութեան, ճշմարտութեան։ Եւ դար-ձեալ ասէ. «Լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, և զկատարածն կորուստ. որք զերկրաւորս ետեղ խորհին և խօսին և առնեն զչար, զլցեալսն ամ՝ անիրաւու-թիւք և դժնդակ չարեօք»։ Իսկ ընդդէմ չարեացն զբարիսն գործել՝ պտակաց և փառաց պատուոյ աստ-ծոյն է ընդ սուրբս։

Իսկ որ զնոյն սիրել ասէ՝ և ատել զեղբարս, այնպէս է, որ գտանի և կորուստեան է, որ ինչ և հեղու-զի յնամ ժամ զբարեաց զհետ երթիցուք, և ընդ-դէմ կացցուք չարեացն մարտից։ Որ առեալ լինի չա-բին, զփոխարէնս չարեաց առցէ. Նոյնպէս և բարեացն առեալ՝ բարի ընդունի յանենակալ՝ տնէն և ժառանգի զերանութիւն։ Զի խափանիչք բարւոյ և չարաբերք՝ յանչիշ հուր գեհենին ընդ գէս պարտաւորեալ տանջին։ Եւ յերկուցունց վերայ ասասէն իսկ անսուտ բանն Քրիստոսի զգաստավիճան առնէ. «Երթիցեն արդարքն՝ի կեանսն յաւիտենից, և մեղաւորքն՝ի տանջանսն յաւիտենից։ զոր պատրաստեալ է ստատնայի և հրեշ-տակացն նորա»։ Զի ասացեալ է վասն Կեսարին «Մարդն անօրէնութեան, որդին կորստեան հակառա-կորդն, որ հոգւով բերանոյ իւրոյ սատակէ զչարն՝ Քրիստոս։ Նոյն պատիժք որ զնոյնս առնեն, զդժնդակ վարս և զզազիր գործս։ Զորս սպանանել հրամայէ Քրիստոս՝ զմեղացն անդամս, զցանկութիւս չարեաց ամի, որպէս ասէ. որ է մեղաց մարդ և կորստեան որդի և ժառանգ յաւիտենից տանջանացն։ Իսկ ստացեալ զվարս սուրբս և զանարատս ըստ պատուիրանին այ, մարդ կոչի արդար և սուրբ և Աշխարհիս ամ՝ առաքինութիւքք կատա-րեալ՝ի Քրիստոս, ժառանգաւոր լինել երկնից արքայու-թեան և անանց բարեացն։

Ա.ՐԴ զայսպիսի խրատ միշտ 'ի մտի ունել և չթողուլ 'ի մտաց. որպէս անգեղեայ [1], որ զցաւս ոգւոց և մարմնոց բժշկէ, և առողջութիւն շնորհէ հակառակացն՝ որք փնասեն զերևելիս և զանտերևոյթս յուղղութիւն։ Ա.ՐԴ զգոյշ լեր այսոցիկ յուսուցանել, 'ի լսել և 'ի յառնել միշտ զխրատս կենաց, որ մաշիչ է ամբարշտութիւն և անօրէնութիւն և աղտեղութեան մարդկան. և կանգնէ զգլորեալն 'ի մեղս, և զարդարսն պահէ միշտ։ Զի որ զպտուղ իւր 'ի ժամուտայ, եղև նա որպէս ծառ, որ տնկեալ է 'ի գնացս ջուրց՝ 'ի հոգևոր խրատս. և զամ ինչ զոր առնէ, աջողեսցի նմա, ասէ։ Եւ լսիցէ 'ի Քէ. ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, մուտ յուրախութիւն տն քո, որ պատրաստեցաւ քեզ ըստ վաստակոց քոց։ Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ հոգևոր խրատուցս շնորհօքն այ 'ի Քս Յս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Յերկրորդն օրինական անգէնայ։

ՑԱՆԳԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԾԱՆԿՈՒԹԻՒՆ ԻՐԱՑ
ՈՐ ԶԱՆԵՐԵՒՈՑԹՍՆ ՑԵՐԵՒԵԼԻՍ ԱՆԻ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Զ

Զի ոչ է Հայր ծնեալ ուստեք, այլ Որդի ծնեալ 'ի Հօրէ և ոչ արարեալ. և ոչ Հոգին սուրբ ստացեալ, այլ բղխեալ։ Մշանջենաւորք, միաբան իսկութիւք ընդ Հօր և առ Հօր և 'ի Հօրէ։ Որպէս բոց և ջերմութիւն 'ի հուր. որպէս լոյս և տապ յարեգակն. որպէս ջուր և բղխումն յաղբիւրէ. որպէս բան և հոգի 'ի մտաց։ Շարժեալ առանձնաւորութիւնքն, այլ միաբանութիւն մի է բնութենն, և ոչ եկամուտ յանձնաւորութիւնն միտ։

Այս առակք Հնմարիտ երրորդութիւն։ Խակութիւն անսկիզբն, կենարար կեցուցիչ, ամենագիւտ սէր և ամենակալ զօրութիւն, Հայր և Որդի և Հոգի սուրբ։ Երեք անձինք և մի բնութիւն և կամք. արարիչն և բարերարն և հաստիչն։ Աստուած էր և է. էր անսկիզբն յիւրում փառաս, և մշանջենաւոր անվախճան առիւծան արարածոց։ Եւ Հնմարտութիւնն էր և է. էր յիւրում անփոփոխմանն, և է հաստատութիւն արարածոց։ Անվրեպ ամենաշահ գիտութիւն էր, և է յիւրում անբաւութիւնն և առ լուսաւորութիւն արարածոց։ Անհաս իմաստութիւնն իրաւունք էր, և է յիւրում անձառութիւն նախախնամութիւնն յարարածս։ Կենդանարար ամենագիւտ ամենաշահ խրատիւք յանփոփոխ հաւատարմութիւք իւրոյ էութիւնն էր, և է յաւէժ փրկական ՀՈՐՀՕՐՆ յազգս մարդկան առ մերձաւորութիւն հաղորդութիւն կենդանական սիրոյն։ Ամենակարող զօրութիւնն էր յիւրում գոյութիւնն, և է առ 'ի զօրացուցանել զանզօրս 'ի մարտս հոգեւոր պատերազմս յերեւելիս և անտեսանելս լիեալ։ Կենդանի էութիւն սիրոյն այ էր, և է բորբոքմամբ բարեաց

'ի խնամել և 'ի պահել զարդարս, և 'ի զղջումն ա-
ծել զմեղաւորս։ Լուսաւորեալ և փառաւորեալ
սրբութիւնն էր, և է 'ի պայծառացուցանել 'ի փա-
ռաւորել 'ի նորոգել զարարածս բազմանշոյլ շնոր-
հօք և լուսաւոր աւազանաւն։ Գթութիւնն խնամքն
էր, և է անպատում բարերարութիւն առ խնամածու-
թի արարածոց երևելի և աներևոյթ. զի հասցէն
'ի նաւահանգիստն բարեաց, աւետեացն խոստացե-
լոց երկնաւոր կոչմանն, որ լին է կենդանի երանու-
թիւն 'ի կեանս։ Ողորմութիւն շնորհքն էր, և է իւր
անպատում բարութիւնքն և ամենառատ պարգևօք 'ի
տալ և 'ի ցուցանել զարդիւնս մարդասիրութեն և
զկոչումն ընծայութիւն յորդեգրութեն շնորհս։ Եր-
կայնամիտ և նեղող էր, և է քաղցրութիւն և բարե-
բար կամօք անյիշաչար երևեալ, և ոչ աստէն զամսեան
պատժէ. զի դարձեալ 'ի մեղաց՝ կեցցեն։ Ամենա-
սուրբ Երրորդութեն բարերարութիւնքն դարմանօք իւ-
րովք էր և առ արարածս իւր, և է յանպակաս լիու-
թիւն, որ ոչ պակասի, ոչ կշռի և ոչ պարփակի երևե-
լեօք և աներևութիւք առ ողոքանս և խոշտանկանս
ըստ հնարագէտ մատակարարութեն։ Զի զշահա-
ւորն և զօգտակարն ստասցին արարածք իւր. և զե-
կամուտն 'ի բանաւորս և 'ի մտաւորս ածցէ 'ի լա-
ւագոյնս ամենիմաստ էութեն իւրոյ և 'ի ժառան-
գութի կենացն, քաջաւէտք առաքինութիւքք պսա-
կեալ յարքայութեն երկնից։

Ա. Յսպիսի յուսով հաւանել և հնազանդել՝ որոց
աշակերտ եղև ՅԾային վարդապետութեն, որ բարին
է և հաճոյն և կատարեալն. զի մշտնջենաւոր և ան-
եղծ կենացն հասցէ, որ էն և է և կայ յանբաւութեն
իւրում. և բարւոք բարերարութիւնքն իւրով խնամէ
զարարածս ամ. որ անսուաղն է և անբաւ և անսահ-
ման. որ 'ի վեր է քան զարարածս ամենայն անքննին
մեծութիւքք և փառօք. որ կենաց և փառաց և լու-
սոյ է տուող ամենաշահ կենարար երանութիւքն։
Ինքն յինքենէ բաւական առ ամենեսեան. որ ար-
դարացուցանէ և լուսաւորէ և փառաւոր առնէ։ Որ
է Հայր միածնի Որդւոյ և բղխումն Հոգւոյն սրբոյ։
Եւ նոցա բարերար կամքն և ամենաշահ սիրոքն ժա-

ուանգաւորս առնէ զմարդին անմարմնոյն դասուց և աբքայութեան երկնից և անսպառ բարեացն։

Իսկ պատիր խաբէութիւն ստութիւնն, ուստի կորուստ ոչ էր ի սկզբանն մինչ ոչ էր մոլորութիւն յառաջագայիլ և վերիպեցուցանել ի չարն։ Եւ այժմ ոչ զօրէ ատելեացն զչար, որ լսէ աւետարանս զաւորս քարոզութիւնն և հաւատայ, և վերստին ծնանի ի Ջրոյ և ի Հոգւոյ, և այլ ոչ ևս դառնայ յապականութիւն և յապաշխարելոյ պէտս։ Մահ ոչ էր, մինչ մեղք ոչ էին։ և այժմ լուծեալ է լուսաւոր Քրիստոսութիւնն, և անարգի ի սրբոցն ՅՍ։ Ամենապատիր խաբէութիւն և խորամանկ կեղծաւորութիւնն և ամբարտաւանութիւն ոչ էր նախկին, մինչ ոչ էր բանսարկեալ սատանայի։ և այժմ տկար է և ոչ է յերեւել Ճշմարտութիւն։ Անհաւատութիւն և ցանկութիւն չարեաց ոչ էր ի սկզբանն, մինչ ոչ էր հակառակաբեր ծածմարան ի վայր կործանեալ։ և այժմ ոչ է յերեւել հաւատոցն և օրինացն ընդդրեալ և ածանիրութեանն ցուցումն։ Անհնազանդութիւն և ստահակութիւն ոչ էր նախ, մինչ ոչ էր անհաւանեալ ՅՍ սատանայ և մարգն։ և այժմ ոչ է ի հնազանդել Քրիստ մերոյ, և ուղղել զմեզ ի նոցնս։ Խաբէութիւն և նենգութիւն ոչ էր նախ, մինչ ոչ էր խորամանգեալ չարն։ և այժմ ոչ է ի Քրիստ Ճշմարտեալ։ Դարմանած և քէնս ոչ էր, մինչ ոչ էր մախացեալ չարն և ի քէնս մտեալ։ և այժմ ոչ է ըստ Քրիստ քաղցր և անմախանձ կամացն ի մեզ շնորհացն։ Աստելութիւն և բարկութիւն ոչ էր, մինչ ոչ էր ի չարէն և ի մէնդ լինեալ։ և այժմ ոչ է ըստ բազում սիրոյն հեզոյն և մարդասիրի փրկչին։ Անմարտաւանութիւն և անձնասիրութիւն ոչ էր, յորժամ ոչ էր հպարտացեալ չարն և պարտաւորեալ զմեզ։ և այժմ ոչ է յերեւել խոնարհին և զմեզ սիրողին, յասէին, «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։ և գտջիք հանգիստս։ Ցասումն և թշնամանք ոչ էրնախ։ և այժմ ոչ է, յորժամ գուքք ողորմութեան շարժի ի խնամս։ Անյագութիւն որովայնամոլութիւն և ագահութիւն ոչ էր։ և այժմ ոչ է պարկեշտից սրբոց և արհամարհողաց զերկրաւորս։ Աժամայ ազատութիւք ոչ էին, մինչ ոչ էր մաքրութիւն

լուծեալ. իսկ յորժամ ծագեցին սրբութիւք սրբութեց ՝ածային շնորհացն, լուծաւ գարշութի ախտի։

Այլ՝ եմ մեղք և անխնայ չարութիւք երևելիք և աներևոյթք ոչ էին գործակցաւն իւրեանց սատանայիւ՝ ի սկզբանց անտի. այսոքիկ յետոյ՝ ի ներքս մտին՝ ի հակառակորդէն՝ որ՝ ի նոցայն զմեղ ընկեաց. և այժմ ոչ է յորժամ կենարար գառնն նուիրեցաւ պատարագ՝ ի վերայ խաչին վասն քաւութե մեղաց և հաշտութեան Հօր ընդ արարածս. և վերստին ծննդեամբ աւազանին և փրկական խորհրդո

ընթանալ 'ի կէտ վերին կոչմանն։ և լիցուք կատա-
ռելք, որպէս և Հայրն մեր երկնաւոր կատարեալ է։

Որ խնամք բարերարութեան իւրոյ ընծ զմեզ ա-
բարածս, և յորդորէ զմեզ միտս 'ի գործակցութիւն
բարերար կամացն։ Որ յերկնից յերկիր խօսեր զա-
ւերարութիւն՝ զդարձ ապաշխարութեան մեզ ասօրաց.
խոստովանելով զյանցանսն, և զզղջանալով վասն որոց
գործեցին, և պատուս արժանի ապաշխարութեան առ-
նել։ որ զզօրս հրեշտակացն ուրախացուցանէ ըստ բա-
նին տեռն։ Զի եթէ վասն միոյ մեղաւորի որ դառնայ
յապաշխարութիւն, ուրախութիւն է հրեշտակաց 'ի յեր-
կինս, զինչ պարտ է վասն արդարոցն ասել, առա-
քելոց և մարգարէից և մօրսիրոսաց և վարդապե-
տաց և Ոգնաւորս՝ կուսանաց և պարկեշտ ամուսնաց
ցելոց։ որ ոչ ունին զաղտեղի շարժմունս և զինա-
սակարս ոգւոց, և զամբարտաւանութիւն և զբարկու-
թիւն, զատելութիւն և զնախանձ և զորոմայնամոլու-
թիւն. և մշակել 'ի ջանս բարեպաշտութեան և խել
'ի միջոյ զչար սովորութիւն յորդորմամբ սուրբ սիրոյն
որ սիրեցին զմեզ։

Զի սատանայութիւն ոչ էր, մինչ ոչ էր հակառա-
կեալ չարն բաւոյն։ Զի յետ վեց աւուրք՝ մինչ ոչ էր
ստացեալ զամբարշտութիւն զմիտս, վկայի 'ի տեառնէ՝
թէ զմեզ զոր պրպռ ՝ն՝ ՝ն՝, բարի ենք յոյժ։ զի թէ 'ի
ընէ չար էր, ոչ զբարւոյ վկայէր ՝ն՝ն՝ ամենակալ։
եւ յաւետարանսն 'ի տեռնէ առ աշակերտսն ասի. «Ոչ՝
ես ընտրեցի զձեզ երկոտասան. և մինգ 'ի ձէնջ
սատանայ է»։ Զի ոչ զրպարտեաց զնա արդար գա-
տաւորն նախ, մինչև եղև երևոյթի չարին և չար կա-
մաց շարժեալ 'ի չար անդր. և ապա զատանայ ա-
նուն առնու և քակի 'ի սուրբ պաշտամանէն, և 'ի
կենդանաբար սիրոյն որոշի, և անյոյս լիեալ՝ 'ի մահ
զինքն ձգէ, որպէս գևքն 'ի ծովին խողիքն, որք
ասեին «Զի կայ մեր և քս, Որդի՝ ՝ն՝։ յառաջ քան
զժամանակն եկիր կորուսանել զմեզ, սուրբդ ՝ն՝։ Դի-
տեն և նոքա զժամանակս դատաստանին իւրեանց և
մեր, և ըստ արժանեաց զՀատուցումն անօրինաց և

1 Մինին ՝ն՝գնաւորաց։

անհնազանդից, անսրբոց և պղծոց։ Զի սատանայ ոչ էր, մինչ ոչ էր ամբարշտեալ. և այժմ անզօր է ըստ ասելոյն տեառն՝ թէ «Իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է, և ընկեսցի արտաքս»։ Զի խաւար ոչ էր և ոչ է. զի ստուեր է տարերց և ոչ բնութիւն ինչ։ Զի ածուղ սեաւ է քան զստուեր և որ այլ ինչ սեւութիւնք իցեն. և 'ի ծագել արեգական և լուսաւորացն նոյնպէս կան սեւութիւնքն։ Բայց ստուեր որ է խաւար, 'ի գալ լուսոյն լուծանի և ոչ ևս կայ ընդդէմ։ Եւ մահ ոչ էր, մինչ ոչ էր պարտական լիեալ մեղաց. և այժմ ոչ է 'ի յայտնել կենաց և յարութեն որ 'ի մեռելոց. և երկոքին հրաժեշտ առին մահ և խաւար 'ի ծագել լուսոյ և 'ի գալ կենացն։

Եւ այս ամ յօրինուածք իրաց և օրինաց 'ի տեառնէ են։ Եւ յաղագս այսորիկ որ քաջքն և պիտանիքն իցեն, պսակին ըստ լաւութեանն առաքինութեանն, և թագ 'ի գլուխս մացեն 'ի հանգիստն լուսոյ և կենացն յաւիտենից։ Եւ որ վատքն իցեն և ծոյլք և արհամարհոտք այ պատուիրանին, ընկալցին զպատուհասիցն պատիժս յանչէջ հուր գեհենին՝ որ կազմեցաւ նոցա։ Զի առանց եպերանաց է արդար դատաւորին իրաւունք, որ առաջի Ճշմարտութեանն փակեալ կան երկոքին կողմանքն լաւացն և վատթարացն, որ փառացն է յոյս՝ և որթշուառութեանն և տանջանացն ակնկալութիւն։ Եւ երկաքանչիւրովքն իրատէ. քարեաւն յորդորէ և ահիւն զկծեցուցանէ, զի մի՝ զրկեսցի յաւիտեանցն խոստացելոց։ Զի զերկոսին կողմանսն սիրովն խնամէ. զքաջսըն՝ զի մի՝ յերկուասցին 'ի յուսոյն կենաց, և զվատսըն՝ զի ահիւ տեառն ժամանեսցեն ապաշխարութիւն յանկարօտ լիութեան շնորհացն ընդ այնոսիկ՝ որ պարծանօք 'ի փառսն վայելեն։ Զի երևեսցին շնորհքն տեառն 'ի վերայ սիրողացն, զոր ծառայեցին տեառն ահիւ և սիրով. զի ընկալեալք 'ի տեառնէ ընդ մեծարեալսն և ընդ փառաւորեալսն, որդեգրութեան արժանաւորեալք, յանսպառ բարիսն Քրիստի վայելեսցեն ընդ ամ սուրբս։ Զի ամենակալ ամենասուրբ երրորդութեանն բարերարութիւն խնամէ զարարածս ամենագիւտ սիրովն իւրով և ամենաշահ երախտեաքն իւրովք և անփոփոխ Ճշմարտութեամբն՝ որ յերևելիս և որ

յանձերևոյթս ուղղէ, և ոչ թողու քայքայել որ ի մեզ բարին մատակարարի ի մխիթարութիւնս։ Զի անեղծ է և անապական։ ոչ ինքն փոփոխի, այլ զայլսն փոփոխէ ի լաւն։ և զկենդանութիւն ստեղծուածոց զարմանալի յօրինուածովք իւրովք՝ և զբոյն ի գոյ երևուելի ածէ, և զանարգսն առնէ պատուականս իւրովք յարդանաւք և հանդիսիւք լաւութիւն ի գործ անդր։ և զանցարմարսն յարմարէ պէսպէս յօրինուածովք ի բարին։ և զվրիպեալսն յերկմտութիւն՝ փոխէ ի հաւատարմութիւն իւր։ և զստուերն և զերդնահարութիւն զմեղանչեալս ջարին ածէ ի ստուգութիւն։

Լուտեան կազմեաց ածային խրատուց սուրբ գրովք ի լուսաւորութիւն ամանձին։ հնարագիտութեամբ կենդանարար և կատարեալ իմաստիւք բարւոյ մասինն հաղորդել։ Եւ զեկամուտ քաղն չար կամացն և չար խորհրդոցն և չար գործոյն խլել խոսոսովանութիւն։ Եւ զեսպանացեալ միտսն ի ծուլութիւն և յարհամարհանս՝ ուղղել և ի գործ ածել բարւոյ և զգուշանալ և զգաստանալ։ Եւ զկամակորութիւն մտացն և մարմնոցն ածել ի հնազանդութիւն հոգևորկարգաց և կրօնից։ խլել և ի միջոյ ի բաց բառնալ զչար սովորութիւն ահիւ և սիրով։ Եւ զնմա շարժմունսն յանձայինսն բերելով, և ի շահ եղարցն ածաւ Ն՛ամիք և վաստակաք մշակել յառաքինութիւնս։ և ցուցանել զհանդէս մտերմութիւնն ի կանուխս և անագանս, որպէս զի երևեսցի պատուի բարի։ Որպէս լոյս ոչ փոխի ի խաւար՝ այլ զնաւարն լուսաւորէ, և ոչ կենաք ի մնայ այլ զմահացեալսն կենդանագործէ ի տեր, այսպէս զանարգսն թողուլ և զլաւն մեծարել շնորհաբ ամենակալին, երևեալք որպէս լուսաւորք յաշխարհի՝ զանն կենաց ունելով յանձինս և յառաքինութիւն բազմայ՝ և կեալ անբիծ։

Ի հանդէս բարեպաշտութեան ցուցանել զայս ևս ժամանակս ըստ արդարութեան կարգացն, անարատ սուրբ և Ն՛շմարիտ վարս ստացեալ գործակցութիւն բարերար կամաք արարչին։ Մտերիմ և քաջասիրտ հաւատով զանարժան իրս հալածել և արժանաւոր օգտիւք զշահն ժողովել, ուստի անուն քաջութեան և պարծանայ յերկրի թողուլ։ և յերկինս ամբարել ըստ

յաւիտենականն՝ ուր փառք և անսպառ բարիքն պատրաստեալ կան յուսացեալոցն։

Որք զաստիս արհամարհեցին, կենդանարար սիրոյն և անձառ երանութիւնքն յուսով որ 'ի տէր՝ և վայելուչ ազատութիւն թագաւորեալք 'ի փառս բարձրեալոյն, և առ բեկումն թշնամւոյն և 'ի բարձրանալ ընդրեալոցն։ Որք հաւատով պարտեցին աստէն զհանապազորդ թշնամին, և անդ զուարճացեալ բերկրին անանց ուրախութիւնքն և անձառ բարութիւնք որ են 'ի Հայր և յՈրդին և 'ի Հոգին սուրբ։ Ուստի մերժեալ են տրտմականք ամ, և բղխեալ են պէսպէս բարիքն՝ որ կան և մնան 'ի վայելումն կենացն անվախճանից ամ սրբոց այ ըստ երանութեան սիրոյն սրբոյ, 'ի կոչումն հրաւիրանաց ուրախութիւն հարսանեացն։ Որք ըստ կամաց երկնաւոր Հօրն պատրաստեցին զանձինս, որք և պսակին լուսաւոր պսակօք 'ի գովեստ փառացն այ յանվախճան խնդութիւնն։ Ասա առեալ զառհաւատչեայ յուսոյն կենաց, և անդ կարգեալք ընդ երախտաւորսն 'ի ժառանգութիւն արքայութիւնն երկնից։ Ասա ազատեալք յամենայն անարգանաց, և անդ 'ի վշտաց սպառնալեաց արդար դատաստանին 'ի պատուհասիցն տուժից և տուգանաց դառն տանջանացն։ Եւ գգուեալ արդար անուամբ սուրբ և Ճշմարիտ պարգևօքն մեծացեալ, և յարգանօք և պատուով փառաւորեալ պարծանօքն, և այնպէս զերծեալք 'ի սպառնալեաց գեհենին և տանջանացն. հաւատացեալ 'ի բանն՝ որ 'ի վերայ ամբարշտաց և մեղաւորաց ասացաւ 'ի տեառնէ. «Երթայք, ասէ, անիծեալք յանշէջ հուրն յաւիտենից, ուր լալ աչաց է և կրճել ատամանց. որ պատրաստեալ է սատանայի և արբանեկացն նորա»։ Եւ առ հաւատարիմսն ասէ. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ յարքայութիւս, որով 'ի սակաւուդ հաւատարիմ եղէք, 'ի վերայ բազմին կացուցից զձեզ. մտէք յուրախութիւն տեառն»։ 'Ի մշտընջենաւոր կեանսն ընդ սուրբ հրեշտակս առ թագաւորն փառաց, որ ասացն. «Ուր են եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ Որ կենդանի ուրախութիւնն ուրախ առնէ զսիրելիս իւր ըստ իւրաքանչիւր վաստակոց։

Օ ի իւրեանց Ղամբք մեծացան ի տեառնէ յանպատուամ յանքնին յամենագիւտ սիրոյն Ժառանգութեան, յանմահն և յանֆանմոտ յանմման և յանկշիռ լուսոյն Ժառանգութեան. զարթուցեալք՝ յերկրաւոր իրաց և ի զբօսանաց մարմնաւորաց. զմտաւածել զհնաբս զամենագիւտս զգուշութիւն և զգաստութիւն, որ ի յերկրի. զտիւ և զգիշեր անհատ խրդրովք ընդ տեառն զարմանալի լուսաւոր գերն պշնուլ ջերմեռանդն սիրով և յիշատակօք խոստացեալ օրդեգրութեան. անձկալ՝ ի նոցա բարիսն փափաքելն և գրաւել և ընդ իւր գկամն շարժմանց մարմնոյն։ Հիւթ առեալ ի տեառն սուրբ օգնականութենէն՝ զի անարատ կայցեն. արտաքոյ լինել քան զամենայն ծուխս մարմնաւորս, և ներքոյ վարադուրին մնալ սուրբ և անարատ՝ ի հոգևոր օրինացն պահպանութեան, ամրացեալ և զգուշացեալ՝ ի կամն տեառն։ Եւ սուրբ գգաստութեամբ զարթուցեալ՝ ի վերին կոչմանն աւետիս, առնուլ զգրաւական սիրոյն զմիթաթուութեան ամարգել սուրբ շարժմամբք։ Եւ բորբոքմամբ սիրոյն յորդեալք՝ ի կեանս անուշակս կենդանարար բանին, հաղորդութեամբ սուրբ խորհրդոյն, յիշատակօք անՀաւիլսն, նայել ընդ գեղ խոստացեալոց աւետեացն։ Որպէս զմեզուացն է իմանալ. որ՝ ի ծաղկանցն գկարևորսն՝ ի մեզուացն բերէն, և նոքօք գործեն գքաղցրութեան զանուշացուցիչ նմ՝ գաժան և գառն Ճաշակաց։ Եւ յայսպէս և՝ ի կենարար խրատսն ժրացեալք, և յայլոցանէ ընկալեալք զօգտակարսն իմաստութեամբ, առաքնորդեալ յամ բարեգործութիւնս առ՝ ի պատարաստութիւն հաւատոց և Հնմարիտ սուրբ վարուց։ քաղցր յուսոմբ ընթանալ զանմոլար Հանապարհն՝ որ տանի՝ ի կեանսն յաւիտենից, և հասանել յօթևանս կենացն՝ ի գուռն փրկութեան։ Մեծաւ ցանկութիւն և սաստիկ ծարաւով Հաշակել զանուշակս քաղցրութենն զարբերարին զնբնամսն, և՝ ի նոսին վայելել միշտ զանՀանսն մեռաւոր իմաստութենն՝ ի Քս, սուրբ խանդաղատանօք՝ ի նորոգութիւն մերձեցեալ։ Ընկալեալ զառՀատատեայ կեանսն, և՝ ի նոսին կալ մնալ անկարօտ յերանութենն

1 Մեռաւ զբաղեալ։

անսպառ միշտ յանձնառուն և յանբաւան լիեալ. անձանձրոյթ զուարթութիւնք յափշտակեսցեն[1] աշխարհիս զբօսանաց, որ շարժէ զմիտսն 'ի մոլորսն, և զմարմինսն 'ի հարուածս ցանկութեանց. որ ամօթոյ և անարգանաց արժանի է 'ի պատիժս։

Պարտ է 'ի յերկրի ուշ ունել և զվերինսն խորհել պատրաստութիւնք հաճոյիցն այս։ Ի վեր ունել զմիտսն առ այն՝ որ 'ի վերս քան զվերինս[2] և զնեղբինս է. որ պատճառք է մեր կենաց և փրկութեան. որ գործակիցս արար զմեզ իւր բարերար կամացն առ 'ի գիւտ կորուսելոցն և առ 'ի պահպանութեան լաւացն։ Եւ առաջնորդել 'ի բարիսն, և մերձաւորս առնել զհեռաւորս, և ընդանեցուցանել զօտարս. խնամոք մարդասիրութիւն հովուել ամենեցուն 'ի փրկութեան և 'ի կեանս հեռաւորաց և մերձաւորաց։ Պատրաստ ունել զկամս սրն առ 'ի սպասաւորութեան եղբարց առ ամ պէտս բարւոյ։ Մերկանալ զցանկութիւնս չարին և զամ ինասակար խարդախութիւնս։ Սուրբ սրտիւ և անբիծ վարուք և ուղիղ հաւատով ըստ ամենայնի յառաջանալ 'ի տէր, և սիրել զնա 'ի բոլոր սրտէ, և անքակ կալ 'ի ծառայութեան նորա սուրբ. և 'ի նորա քարոզութենէն լուսաւորել զամենայն զգայարանս, որպէս երկիր յարեգական ճառագայթից։ Սոյնպէս և յիշատակք նորա փակեալ և ամրացեալ 'ի խնամակալ սիրոյն և նորա ուսմանն կցորդ լինել սրբոց 'ի լաւ անդր յորդորելով։ Օգնական ունելով միշտ զշնորհս բարերարին. և յամենայնի գոհանալով օրհնել միշտ զամենակալն և զտուողն բարեաց ամ, և փառս տալ՝ որ արժանի արար գործակից լինել իւրոյ բարերար կամացն։

Եւ մեք ցուցցուք 'ինեղութեան և յանդորրու զհանդէս մտերմութեան մերոյ առ տէրն. և նա աննուազ զիւր շնորհսն պարգևէ. զի զամցուն կամի զկեալ և ժառանգաւոր լինել անանց փառացն և մեծութենն որ 'ի Քրիստոս 'ի տէր մեր։ Եւ մեք որ նովաւ եղեաք փրկեալք իւրաքանչիւր վաստակօք և առաքինութիւնք և սրբեալք 'ի չար ցանկութեաց, և առիթ լիեալ բազ-

1 Միւսն յոգեպոխեսցեն։ 2 Միւսն վերինս։

մաց փրկութեան, և Հշմարտեալ՝ վարուք փոխել յերկրէ յերինաւոր Հանգիստն յանուշակ յարքայութիւն, միշտ ընդ Քրիստոսի լինեալ և՝ի նորա երանելի բարութեան վայելել։ Եւ որպէս անդամոք կանգնի Հասակ, այսպէս բարի գործովք կանգնին Հաւատք, և Հաւատով ստուգի յոյս, և յուսովն Հանգէսք։ Եւ այսպէս յարգորել յանծային սէրն, ընդունել զէնորՀս Հոգւոյն սրբոյ և՝ի վերագոյնս լինեալ երկնայնոցն, անմահից կենացն լինեալ ժառանգորդ։՝ի բնակարանս սրբոցն՝ի կենարար սէրն ծագկեալ զեղեցկագոյն փառաւք յանՀաւելիսն՝ի մշտնջենաւորսն՝ փառաւորել միշտ զամենասուրբ զերրորդութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Միւսն Հշմարիտ։

ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՍՆ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՅ ԱՐԱՐԱԾՈՅ

Ի

ՅՈՐԴԱՆ բազմացաւ իմաստութիւն յաճու�եալ-փոյ հասակի արարածոց, և եհաս տղայութիւն յայր կատարեալ, զի բաւականասցի լսել բանիցն Աշմարտութիւն, որ պիտոյ եղև քարոզութիւն մարգարէիցն զանմոլար գիտութիւնն սփռել 'ի լսելիս մարդկան. զի հաւատով ընկալցին զանմոլար իմաստութիւնն զխրատսն, և գիտութիւն արարչին և հաճոյիցն տեղեակ լիցին, 'ի ձեռն Աշմարիտ հոգևոր օրինացն և պահպանութիւն պատուիրանացն անվնաս կալ առ դժնդակ վարս, և հանդիսանալ 'ի բարի վարս, և պատճառ օգտից լինել հեռաւորաց և մերձաւորաց 'ի փրկութիւն։

Եւ այս ամ յանհաս իմաստութիւն արարչին մատակարարի յարարածս ամ. որ լուսաւոր Աստուածայիթիւքն զիմանալիսն լուսաւորէ. զի նորոգեսցէ զզգայարանս հոգևոր խրատուն. զի անկորուստ պահպանեսցի ածային կամացն հաճոյութիւն։ Եւ արդարակշիռ իրաւամբք յառաջանալ 'ի հանդէսն բարեաց. վկայ լինել արդարութիւն և Աշմարտութիւն աւանդիցն։ Եւ այս ամ 'ի շինութիւն հոգևոր մասինն ժառանգաւորաց արքայութենն երկնից, և կարգաց աշխարհիս երևելեաց և անտեսանելեաց. և տեղեակ լիեալ ամ լաւութիւն կարգաց, և քնութիւն արարածոց հասու լինել։

Զի կարգեաց ածն զաշխարհս որպէս դպրոց. զի ուսցին արարածք զանամն արարչին յառնելն և 'ի կազմելն, և միշտ նախախնամութիւնք նորա դարմանեալք որ երևին և որ ոչն երևին։ Զի յոչընչէ անտի սկիզբն արար միոյն՝ և ած մինչ 'ի հազարս և 'ի բիւրս զիւրաքանչիւրսն. զի լաւութեան հանդիսիւք առա-

քինասցին։ Եւ ի գլուխ երեսաղ ամ վարքն առաքի-
նութեան, ի վախճանի աշխարհիս պարգևէ զամս-
հուութեան զպարգևսն յանփոփոխելի և յանհամեմատ
յաճեղէն մշանջենաւոր արքայութիւն երկնից ի Քրս։
Զի նախ ի սկզբան զմտացն խնդրէ զուղղութիւն օ-
րինաւոր բանն։ և ապա ի մշակութեան կացուցանէ
առնել զգործս տակարսն, և ի բաց կալ ի վնասուց։

Այս և զքննութիւն արարածոց յօրինեաց որպէս զդիր
դպրութեան և եգ անուանս, զի անուանքն զընտրու-
թիւն տայցեն զգրոյն ի մտեանց զորոշումն։ և զերկն
զբարս անուանն կարգասցէ։ Զի երկուս երկուս յօ-
րինեաց, զի մին միւսոյն քարոզիչ իցէ։ և բնութեցն
երկուս՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնո-
սա ի մտեանց։ և անուանցն՝ բնութիւնքն պիտոյ են,
որ կայսն ունեն զանուանսն։ զի «Երբ, ասէ, տեսլեայցեն
և անպատրաստ երկիր ամիւ»։ Եւ սկիզբն արարեալ՝
բանիւ յօրինել զարարածս, կոչեաց, ասէ, զլոյսն
տիւ, որ յայսմիջ է արարածոց կաղմածոց։ զի զոր
բանն յօրինեսցէ, լոյսն զյօրինուածսն ցուցանիցէ։
զի անեղեալսն և անկազմն ծածկեալ ուներ որպէս
խաւար զերկիր։ Որպէս կոչեաց զլոյսն տիւ, սկիզբն
արար կարգելոյ պատմութեանն, զի ի թիւ անկցին։
Եւ եթէ ոչ էր խաւար, լոյս իւ անուաներ տիւ, և
կամ խաւարն գիշեր։ Դարձեալ քաղցր և դառն ա-
սէ՝ որ համահամ[2] քմացն ճանաչի։ և յանուանեալ
որոշի քաղցրն և դառնն։ և այս ի տեսչութեանն արա-
բողին է հաստեալ։ Եւ լոյսն զմարդիկ յորդորել յամ
պէտս օգտի։ զի ամ գիւաբ աշխարհիս՝ գործոց կամ
արուեստից[3] իւր աշխատութեանն գինք իցեն աշխա-
տութիւք։ եթէ դարբնութեան, եթէ մշակութեան, եթէ
ճանապարհորդութիւն և եթէ այլ ինչ պէտպէս ա-
բուեստք շահից, զոր ետ ած ի պատիւ անձնիշխան
կամացն որպէս որդւոց ի խնամակալութեան։ և զգի-
շերս ետ ի հանգիստ քնոյ՝ գարման աշխատութեան,
զի տկարութիւնն զօրասցի, և նորոգեալ հանգըս-
տեսցին անդրէն ի տիւն դարձցի ի գործն՝ որ օ-

1 Միանգամ։ Է. իւր աշխարհին գիւղ իցեն ի
2 Միանգամ ի համահամ։ լուսանցին գիւղք իցեն։
3 Միանգամ արուեստից աշխարհին

գուտ և շահ ստանայ։ Որպէս քաղցրն և անուշն և դառն և կծուն 'ի պէտս բժշկայ տնօրինին, և որ այլն ևս։ Որպէս զհամեմոցն է գիտել առ զանազան խորտիկսն անուշել. զի սոքա յարգեսցին նոքօք, և նոքա սոքօք։

Ա. Յլ և անուանս ունին. զի որպէս հանգիստ և աշխատութիւն կարօտ են միմեանց, զի աշխատութիւն շահիցն 'ի հանգստեանն վայելեսցէ, այսպէս է իմանալ զնա՛մ խառնուածս արարածոց 'ի միասին։ Որպէս ցուրտ և տօթ, որ մինն զովացուցանէ և միւսն ջեռուցանէ[1]. Երկաքանչիւրոցն պիտոյացեալ գեղեցիկ խառնուածովք ըստ բարեաց արարողին՝ և ոչ 'ի պատիժս ինչ շարժեալ 'ի սահմանէն. զի «Սահման եդ, ասէ, որ ոչ անցանեն»։ Զի մարդ հնարագէտ է 'ի խնամակալութիւն արարչին առ 'ի պէտս իւրոյ փրկութեան և վայելելոյ 'ի բարութիւնսն անձնիշխան կամաւք։ Զի որպէս որդի 'ի հօր խնամս վայելիցէ. և ոչ որպէս ծառայ ընդ հարկաւք, որպէս և այլ արարածք իցեն։

Դարձեալ օգք՝ են որ ցամաքեցուցանեն, և են որ խոնաւեցուցանեն զերկիր և զբոյս. են որ յօգուտ մատակարարին, և են որ 'ի վնաս, ըստ նախախնամութեանն այ 'ի միմեանս խառնեալ. այլ և անուանս ունին։ Սոյնպէս և առողջութիւն և ցաւք. զի առողջութիւն 'ի գործ մշակութեան առաքինութեանն յորդորէ և յարուեստս շահիցն. և ցաւք՝ բժշկայ կարօտին այ և մարդկան։ Ա՛յլ և համբերութեամբ զթողութիւն սխալանացն գտցէ, և վարձս ևս, որպէս և Յովբ. և անուանս ևս ունին։ Սոյնպէս տրտմութիւն և խնդութիւն յորժամ ըստ իրաց աշխարհիս իցէ, մահ և ապականութիւն գործէ. իսկ ըստ այ լինեալ, մխիթարութիւն ընձեռէ, և յուսով զխնդութիւն ըստ խոստացեալ բարեացն. և անուանս ունին։ Սոյնպէս լիութիւն և կարօտութիւն միմեամբք յարգին[2]. զի լիութիւն կարօտութիւնն վայելէ, և կարօտութիւնն զհանդէս ժուժկալութիւնն ցուցանէ, և ժրութիւն մշակութիւնն ամենարուեստ. և միաբանեալք օգուտս ունին և անուանս

1 Միւսն ջեռուցանէ։ Լուսանցիցն համեմատ միւսոյ գրինակին։

2 Մերն յորդորին. եգաւ ըստ

ըստ երևմանցն։ Այսպէս երկիւղ և անհոգութիւն. զի երկիւղ անհոգութիւն ցանկայ, և անհոգութիւն երկեղի. որ զգուշացայնսէ 'ի կամս նոցա, և ոչ թողու յապիրատութիւն։ Եւ 'ի միմեանս խառնեալ ըստ պատուիրանին զգուշակարն 'ի մէջ ամբարին ըստ առնուանն կոչմանն։ Այսպէս փառաւորող և անարգութիւն միմեանց տեղի տալով 'ի սահմանին կան մնան. ապա թէ երանեն ըստ չափոն, ինչպէս առնեն 'ի հոգեւորս և 'ի մարմնաւորս. որպէս և ամենեցուն քաջայայտ է այս։ և յանուանցն ծանիցուք զերան։ Այսպէս և բարիք և պատիժք ոչ են մի, և երկոքին պիտոյանան. մին յորդոր 'ի բարի գործս, և միւսն զհամարձակեալն 'ի մեղս արգելու. և խոշտանգանօք լուծցին զվարսն և գարձցին 'ի լաւն։ Եւ բարեգործք մի մոռացին զարբերարսն և զերանելի ժառանգութիւնսն և զաւետիսն խոստացեալ, որ առաւելու 'ի բարին. և այնպէս զանուանսն առնուն։

Լոյս ազատութիւնքն ազատ են 'ի մէջ մեղաց և փառաւորեալ յանմի. և նկուն մեղքն 'ի մէջ արգաբոց. զի ցանկացեալ արդարութեան, և յիշեսցին զսպառնալիս մեղաւորացն, և փութացցին յայաշխարհն խոստովանութեան, և ապրեսցին 'ի բարկութենէն որ գալոցն է 'ի վերայ անօրինաց և անհնազանդից, անարբաց և պղծոց. և լինեալ յարդարութեան կեցցեն։ Իսկ արդարքն որ ունին զառհաւատչեայ ազատութիւնն որդեգրութեանն 'ի Հնմարտութենէ անտի՝ յաւելցին յարդարութիւնն, զի լիցին կատարեալ որպէս և Հայրն երկնաւոր. և միմեանք զանուն առին։ Եւ անանկութի կարօտ է մեծութեան, որ զերազ 'ի նոսա գլիսութեան. և մեծութեան՝ կամաւոր անանկութեան, որ ամբոխութեան և անարատութեան՝ հասցէ անանց մեծութենն։ Ա՛յլ և արդարակրօրէ մեծութիւնն ոչ զրկի 'ի մշանն ջնեաւոր մեծութենէն. որ միմեանք զանուանսն առին մեծութեան և անանկութեան։

Լոյս տկարութիւն և զօրութիւն ձեռնտու լիեալ միմեանց՝ գոսկեայ արժանի են։ Զի տկարութիւն զիսնարհութիւն և զբաղցրաբարութիւն։ ուսուցանէ, և

1 Մինան տաղտրբանութիւն։

յուսով կալ առ իրաւունս արդար դատաւորին Քրիստոսի։ Իսկ զօրաւորքն Ճշմարտեալք՝ բերդ ամուր լիեալ տկարացն, և օգնական և տուիչ բարեաց, որք ընդունելոց են զանեղծութիւն և զանանց փառսն. որք միմեամբք զանուանսն առնուն և զհատուցումն յաբարչէն։

Եւ յիմարութիւն և իմաստութիւն պիտոյ են յերկրաւոր վարս։ Յիմարն զհաւանութիւն և զհնազանդութիւն առ իմաստունն ունի, զիտել առ 'ի նմանէ զլաւսն. զի իմաստութիւն զառաջնորդական միտս ընտացեալ ունի, որ խրատէ և ուղղէ յարդարութիւն, որ հաւանութիւնք մոցէ յարքայութիւնն. զի յիմարն այ իմաստնագոյն է քան զիմաստունս աշխարհիս։ Իսկ այ իմաստութիւնն նախ զի սուրբ է, և ապա խաղաղարար. լի բարեաւք և արդար պտղովք. որ 'ի վերինն տանի 'ի փառսն, և ոչ ըստ օձին խորամանկեալ և պատժեալ. այլ ըստ անուանցն ծանուցեալք յանմեղութիւն իմաստիւք։

Յաջողութիւն և տխմարութիւն առ միմեանս օգուտս գործեն. միոյն շահս աջողութիւն[1], և միւսոյն կատարումն պիտոյից յոր ինչ ցանկութիւնն է։ Եւ երկոցունցն հարկաւոր է հաւատարմութիւն ըստ գործոց արուեստին և վարձուցն՝ որ 'ի կամն նախախնամողին լիցի, և որ զանուանսն առցէ։

Եւ կեանքն կենդանի են յարդարութիւն կեցեալ. և մեռեալքն մեղաւք և տարակուսանաւք 'ի մահ, որոց տանջանքն մթերեալ կան։ Եւ կենդանիքն որ 'ի սէրն այ և 'ի սրբութեան և 'ի հաւատս Ճշմարտութեան և 'ի յոյսն հաստատեալ կան յառհաւատչեայ կեանսն՝ զնոցայն ոչ մահ, այլ կեանք 'ի գրոց իմանալի է. և քուն, զոր Քրիստոս յարուցանէ բանիւ 'ի ձեռն հրեշտակապետացն փողոց։ Որոց զբարիսն գործեալ են՝ փառք և անմահ կեանք, և որոց զչար արարեալ՝ տանջանք և անմահ մահն որ յաւիտենից։ Եւ այսր ամի աշակերտ արար զմարգն, զի անձնիշխան կամաւք խնդրէ զօգտակարսն և որոշէ 'ի վնասակարացն, և 'ի հարկի կալ առաքինութեանցն՝ յուսով որ 'ի նոր։ Զի

[1] Միւսն առաջնոյն։

առանձին զանուն եղբայրութեան որ 'ի Քս, և վայելեսցին 'ի նոցա բարին, և զերկոսին կողմանս յոգուս կազմեալ։ Զի արգ արակորովքն՝ երանութիւնքն պասկին ըստ առաքելութեան. որ պարծանաք ըստ համբերութեանն զոմին 'ի նոսա, և անվիշտ ունին յաղաղութեանն զհամարձակութիւնն յիրաւանց արդարութեան. և վայելեսցին 'ի բարութիւնսն ըստ արժանաւորութեանն, և երանութիւնք պասկին։

Բարք ոչ զերևելի արարածս զդայականս դարմանիս մարդկան կենաց։ Արդեսն երկինք ամբավք և ցողովք և լուսաւորաբ խնամվ և հասուցանել զպտուղս բուսոց և անկոց։ Որ և հողմոց պետոյանսն ըստ ժամանակի հովուց և ջերմութեց. որ մնուցանել և անվնաս պահել. և ջրով ոռոգանել զերկիրս և արբուցանել զմարդիկ և զանասունս, զդազանս և զբիթաչուհս և զանձնայն զեռունս և զսողունս և որ ուղին չունիս կենդանի։

Այլ եթէ դառնան մարդիկ 'ի ստահակութիւն կամակար մտաց, նովին դարմանաքն որով խնամէր՝ տան. Զի և խրատել անբերութիւնք և բարկութիւնք զանդարձան։ Զի նոքն արարածք որ դարմանիչք անէին ըստ իրաւանց վայելել 'ի բարութիւս, յորժամ յղփանայ և եալեալ, արատաբ քան զասէմնին, օրինադիրին յայնժամ զնոսն գայեակ զարքացուցանել և նոքաք խրատել. զի սովալ և նուազութիւք ամենայնիւ յաղչախտութիւնք ածէ։ Աչալ և ցրտով և ջերմաւ զատանին և զբոյսս ապականել, և զանձրևս 'ի կարկտաւ և 'ի ձիրան զարձուցանել, և զցող եղեմանք մեռանակաբ, և զառաղուութիւն 'ի ցաւս զանազանս, և զիմգուութիւն 'ի զրտմութիւն, և զչիաս յանիրաւութիւն։ Եւ ամենայն յաղոյզուած բարեաց 'ի թշուառութիւն, և զոգտակարսն 'ի վայելել բարեաց՝ 'ի գմոգակս և 'ի վնասագիս՝ նեղութիւս։ Եւ զնոսաղուութիւնն և զշիանութիւնն որ պարսկեալ ունին խնդանմանք, 'ի խաղաղութիւն և 'ի տարակուսանս դարձուցանել և յանհնարին չարիս։ խռովութիւս ընտանեաց և օտարաց, ծանոյից և տեղանց և 'ի պետսկս չար համբաւս. զի այսոքիւք դարձցին 'ի զղջումն։

1 Միան 'ի Վաղարշ։

Ապա եթէ 'ի նոյն յամառեալ կայցեն 'ի չարիսն, և ոչ դառնան խոստովանութիւն, խրատէ մեծամեծ պատժոք արդար դատաւորն։ Որք պղծեն զսրբութիւնս անասուրբ վարուք, և արհամարհեն զօրէնս և զիրաւունս տնտնկաց և զողորմութիւնս կարօտելոց, և զՀնմարտութիւնն անիրաւութիւն ունին, և տնտես առնեն զարտասուս նեղելոց, և ձայնի զբրկելոց ոչ լսեն, և որ այլ ևս իցեն չարիք։ Եւ յաղագս այսորիկ մատնէ արդար դատաւորն 'ի սով և 'ի սուր և 'ի գերութիւն և 'ի կորուստ։ Եւ որպէս ասացաւ նոր 'ի ձեռն օրինաց և մարգարէից դառնալ յամբարշտութենէ և ոչ լուան, և աղաղակեցին առ նոր և ոչ լուաւ 'ի նեղութենէ իւրեանց, որպէս ասացաւ 'ի գրոց սրբոց։ Զի կամք անձնիշխանականք որ ոչ գոն յիրաւունս արդարութենէ և 'ի դարմանս աղքատաց և տնտնկաց՝ պատժին։

Բայց բարեբարն ոմն ըստ բազում սիրոյն իւրոյ որ սիրեաց զմարդիկ, խրատելով խրատէ և 'ի մահ ոչ մատնէ, և ոչ սատակէ և ոչ բառնայ զյիշատակս սատակաց և անզգամաց։ Այլ զի ոչ գիտացին գոհանալ զպարգևացն՝ այ և հնազանդել օրինաց նորա, մատնէ զփառս նոցա և զյզփութենէ 'ի ձեռս թշնամեաց՝ ողբոց և արտասուաց արժանաւորս։ Զի խրատեսցին և Հնմարտեալք սրբեսցին և մոցեն ընդ խնամաքս բարեբարին, գործել միշտ զբարիս առաջի նորա. և 'ի բաց կացցեն 'ի գժնդակ և յանառակ վարուց, և մի զերախտաւոր կարգս յապախտաւորս փոխեսցեն, և զժամանակն խաղաղութենէ և անդորրութենն 'ի դառնութենէ և 'ի հարուածս չարաչար սխտից։ Եթէ փոխեն զգժնդակ վարսն 'ի լաւութիւն, դառնայ և ժամանակն 'ի խաղաղութենէ. զի գործակից եմք տէրութենն խնամոց և համառօտ դատաւորութենն։ «Փառք և պատիւ և խաղաղութենէ գործողացն զբարին, ասէ Աստուածն Երանելի. և բարկութենէ և սրտմտութենէ և նեղութենէ, ասէ, 'ի վերայ ամի՝ որ գործէ զչար»։ Արդ բարեգործքն բարեկեցիկք են 'ի բարութեան նորա, և ժառանգիչք դարմանոց

1 Միւսն ՀԳ-ՐՓԿ-ՀԷՆ։

նորա և խնամց և աւետեացն որ 'ի Քս։ Զի յերկրի 'ի խնամն նորա վայելեն, և յուսով ըստ անսուտ խոստմանցն Ժառանգեն զանսպառ բարիսն ըստ արդարութեան։ Իսկ անհնազանդքն և անառակքն զոր-ծակից են սպառնալեացն նոցա։ որ փոխին զբաղդ ժա-մանակ խնամց նորա 'ի դառն հատուցումն տուժից և տուգանաց և պէսպէս հարուածոց։

Տես արդարք իշխան է մարդն։ զի և զնած 'ի կամս իւր ածէ յառնելին զարին։ Զի «Ոչ կամիմ», ասէ՝ որ մարգարէին։ զմահ մեղաւորին։ որպէս զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն և կեալ։ Զի արդար դատաւոր է ըստ արժանեացն դատի, որ ինչ գոր-ծէ մարդ յաւուրս իւր՝ եթէ բարի և եթէ չար։ Եւ իշխանութեամբ է մեզ փոխել զժամանակն՝ բարի գոր-ծով 'ի բարիս։ Եւ դարձեալ 'ի չար, եթէ մեղսա-սէրք լիցուք։ Զի մեզ է զխորհանգանսն 'ի գգուանս դարձուցանել։ և դարձեալ զնոյն սէր՝ 'ի բարկութիւն։ Զի ոչ 'ի բաց թողուլ 'ի սատահանէն։ այլ նոքա, զի դարձեալ զզղայցին և հնազանդեսցին ընդ ամենագութ խնամց բարերարին ՅԻ։ Զի ասէ։ «Ոչ եկի կոչել զարդարս։ այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ և ոչ է պէտք թէ՛ չի ողջոց, այլ հիւանդաց»։ Եւ դարձեալ մարգարէին ասէ։ «Ապրարութիւն արդարոյն 'ի վերայ նորին եղեցի՝ 'ի կեանս։ և անօրէնութիւն անօրէնին 'ի վերայ նորին եղեցի՝ 'ի մահ, եթէ մնասցէ 'ի նմին»։ Եւ եթէ դարձցի արդարն 'ի մեղս, մահու մեռցի։ և մեղաւորն յարդարութիւն, կեալ կեցցէ։

Լսեա զարդարդատաստան արդարոց և մեղաւորաց 'ի տեառնէ։ Որպէս զիարդ և կամիցք, կարեմք փո-խել զաւետիսն 'ի սպառնալիս և 'ի պատուհաս։ Կա-րող եմք և զկեանսն մեր փոխել 'ի մահ, և զմահն 'ի կեանս։ և զարկեալ սահմանն ՅՍ որպէս կամիցք՝ չորք-ՔԵՄՔ 'ի բարի և 'ի չար։ որ ՅՍ միայն է կարողութիւն։ Ըստ մարգարէին որ ասէ։ «Եթէ անօրէնէքդ և լը-ւիցիք ինձ, զարութիւնս երկրի կերիցիք։ և եթէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ։ զի բերան տեա-ւրն ամենակալն խօսեցաւ զայս»։ Եւ Աբաբեալ ասէ։ «Լամենայն ինչ վասն ձեր է։ եթէ մահ, եթէ կեանք, եթէ աշխարհ, եթէ անաշխարհ, եթէ բաձրութիւն, եթէ խորութիւնք։ զուսք Քսի, ասէ, Քս ՅՍ»։

Բայց զի ասաց՝ ամ ինչ ձեր է, որ 'ի կեանս իւրեանց նորա կենդանի սիրոյն և կամաք յաշխարհի վարին։ Զի որպէս բուրուառն որ անուշահոտ խնկովք ուրախ առնէ զմերձաւորս զմեծամեծս և զփոքունս, այսպէս դաւանութիւնք մերոյ հոտ և մաքրութիւն բուրեսցի առաջի Քրիստոսի հանապազ։ Եւ զի ասէ՝ եթէ մահ, զի մահն մեր որ վասն Քրիստոսի՝ վկայ լիցի սիրոյն նորա. այնպիսի մահուամբ փոխեսցուք յանմահական կեանսն անեղծութիւնն, որ 'ի Քրիստոս։ Զի ոչ միայն այնոցիկ է պատուական մահ, որ զվկայութիւնն աստիճան առին 'ի ժամանակի հալածանաց սրով և հրով և ջրով և կամ այլ՝ ազգ ինչ չարիս, այլ ամենիքեան որ 'ի Քրիստոս մկրտեցան և զՔրիստոս զգեցան, զհին մարդն մերկացան գործովք հանդերձ, և զգեցան զնորն նորոգեալ որ ըստ պատկերի այր է յարդարութեան և 'ի սրբութիւն և 'ի ճշմարտութիւն. որք մեռանն մեղաց, և կենդանի են միշտ արդարութեն։ «Զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառաւք Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջեսցուք» ասաց։ Զի մեռանելն մարմնով և մտաց մարմնաւորաց և կեալ սրբութիւք և անարատ ըստ արդարութիւն օրինաց աւետարանին Քրիստոսի, կարասցէ ասել. կենդանի եմ այսուհետև՝ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս։ Զի եթէ այս աշխարհ՝ որով զհանդէս առաքինութեանս ցուցանեմք, և եթէ հանդերձեալքն, ամ նովաւ և 'ի նորա խնամն և 'ի փառս կատարի, որ զամ յամի ընու 'ի խորութիւն և 'ի բարձրութիւն։

Դարձեալ խորութիւն՝ զտկարութիւն մարմնոյն է իմանալ յերկրի, և Քրիստոս վերանալ 'ի բարին։ Իսկ բարձրութիւն՝ զբարութիւն հոգւոյ ըստ երկնայնոցն և անմահիցն որ 'ի Քրիստոս։ «Ամենայն ինչ, ասէ, Քրիստոս ձեր է. և դուք նորա 'ի փառս Հօր և Հոգւոյն»։ Յորժամ զբանն նորա պահեսցուք և մնասցուք 'ի սէրն նորա և յանարատ վարս, այնուհետև ոչ ես է զմեզ մարմնով իմանալ, այլ հոգւով. զի որ Հոգւոյն այր վարին, նոքա են որդիք այր և ժառանգակիցք Քրիստոս։ Զի եթէ չարչարանացն կցորդիմք յերկրի, և փառացն հաղորդ լինելոց եմք յերկինս, որ կան և մնան։ Զի թէպէտ

1 Միւսն «յլ «ԷԲ» «ԷԲ» ԼՐԲ»։

և գիտեմք յաղագս փրկութեանն և կենաց, այլ արդ ոչ
ևս նոյնպէս գիտեմք։ Աւյ՛ ասծ ասմ յամի անձառելի,
որ սիրոմն խնամէ զարարածս ամ՝, և խոստացեալ է
տալ զարքայութիւն և զանսպառ բարիսն՝ որ 'ի Հայր
և յՈրդի և 'ի Հոգին սուրբ։ Որում փառք յաւիտ-
տեանս։

ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԴԺՆԴԱԿ ՎԱՐՈՒՑ ԵՒ ԸՆԴԱՅՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՒՑ

Ը.

ԴԱՐՄԱՆՔ մարդարէից և առաքելոց քարոզութիւնք յառաւելութի բարեաց զմեզ ընթացուցանեն ըստ լաւ մասինն որ 'ի քեզ։ Եւ գլխաւորելով յառաւելն յորդորեն, որ դրունք են ամ բարութեաց և երանութեաց. և ընդ նոսա մտանեն աւետիք խոստացեալ պարգևացն այ 'ի հոգևոր դարմանսն։ Այլ և 'ի մարմնաւորսն լիութի և առատութի և խաղաղութի այլովքն հանդերձ հարկաւորօք։ Եւ բարուք յուսոյն կենացն յաւիտենից և շնորհք աներևոյթ սիրոյն՝ որ են գանձք գիտութե և իմաստութե, որով գիտէ ընտրել զլաւն 'ի վատթարէն, հաստատեսցի 'ի մեզ որ հոգւով վարեսցուք։ Եւ այս վասն ընտրութիս առնելոյ 'ի միմեանց առաքինեացն հաւատացաւ. և անհաւատիցն լքուին տայ առ 'ի յընտրել զբարի հաւատ ածգիտութե։ Եւ արդարքն մի վրիպեսցեն 'ի փրկութե յուսոյն։ Այլ և զդժնդակ վարսն զամենաչարն և զամենաՀնասն սանձել, որ դրունք են բարկութե և սրտմտութե, սովոյ, սրոյ և գերութե և պէսպէս չարի։ Զի որ աղբիւրն է ամ բարեաց և աբարիչ ամ արարածոց, երկնաւորաց և երկրաւորաց, հոգևորաց և մարմնաւորաց, ամենազօրն ամենակալն երախտաւորն ամ կենաց, ասէ. «Ես եմ տէր ածձեր. զպատուիրանս իմ պահեցէք և կեցջիք». զի զամենեսեան կամի զի կեցցեն և 'ի գիտութի ճշմարտութե եկեսցեն։ Եւ այսպէս զամենեսեան կոչէ 'ի կեանս իւր. որ կենաց տուիչ և դարմանիչ է ամենահնար բարերարութեն։

Պարտ է զնա սիրել յամ անձնէ և 'ի զօրութէ և

'ի մտաց, այլ և զընկերս իբրև զանձն ամ՚ սրբութիւն. զի սպրեսցուք յաշխարհէ ասսի չարէ բստ Հնարհայն այ որ'ի մեզ Եւ սանձահարելզդիմդակի բարսն, և զանհաստատութիւն մտաց 'ի հաստատութիւն յուսոյ 'ի նեղութիւն և յանդգրբու։ Եւ ասել զանատակութիւնս՝ որ զբնութիւն շարժէ և պղտորէ, և 'ի պռանկութիւն և 'ի հնութիւն հակամիտել։ Զի պռանկութիւն ասելբրէ 'ի պէսպէս անարժան հրապոյրս վնասուց։ և վրիպեցուցանէ 'ի հաւատոց և 'ի սուրբ վարուց 'ի պատրանս մեռաց, յանատակութիւս աղտեղիս։

Զդր փախիցուք 'ի պռանկութիւն 'ի մերէն չարեաց, որ յորդորիչ է ամ՚ չարեաց. զի զբաղումն կորոյս ջրով և հրով և այլ և այլ ազգ պատուհասիւք պէսպէս, որպէս ասեն գիրք։ Զի որ ինչ կամ պռանկի, կորուստ անձինն ստանայ։ և 'ի տեառնէ 'ի բաց հեռաւորեալ անձն։ Զի տաձաք են սուրբքն ամ՚ ամենասուրբ Երրորդութենն։ և տաձար գիւաց են պռանկիք և չանար Զի զկոյսս ապականեն և մերժէ 'ի տեառնէ, և զամուսնութիւս քակէ և ընդ բազում չարեաց առնէ։ Զի վասն պռանկութեան զկիսարդս յոգնութեն պղծութեան բստ հրապուրանաց սատանայի առնուն կաշառաւ։ Վասն պռանկութենէ նախանձու զչարն և զզգիր խօսքս հոգոյ աղտեղութենէ միտս ունին։ Վասն պռանկութենէ ոխութիւնք և այլանդակութիւնք 'ի կորուստս արանց և կանանց լինին։ Վասն պռանկութեան դժսկնութիւնք և երդմնահարութիւնք և սուտութիւնք և գողութիւնք։ Վասն պռանկութենէ հեղգութիւն աղօթից և պահոց և պղերգութիւն առ 'ի գործ։ Վասն պռանկութենէ բազմամեսս նենգութիւնք նեւ թիւն և քէնք առ օտարս և ընտանս։ Վասն պռանկութենէ խորամանկութիւնք և պէսպէս մահք յայտնիք և գաղտնիք։ Վասն յորմայնի ՀՄՆԷն և տարաժամանցուցանեն զմանկունս, և կամ գեղովք ապականեն յարմայնի։ և է որ զծնեալսն սպանանեն։ Եւ է զի մեղ տեղն և սեղեին 'ի մեռանց մեռանին, կամ յայտնի մարթու կամ գաղտ իւրք չարիւ։ Եւ է զի Հոմանքն 'ի միմեանց խողխողին 'ի վերայ բազիցն։ Եւ է որ բազքն խաղալ ինչ ուսանին 'ի կախարդաց, զի սպանցեն զարսն վասն Հոմանեաց ցանկասիրաց։

Այս բաղում չարիս ունի ախտիցն ցանկութիւն յարս և 'ի կանայս, զոր ասէին կամ լսէին զաղիր է մաքրեցելոցն[1] մոռաց և սրբեցելոց։ Ա՛յլ զասացեալն և զոր ասելոցս եմ, լուիցեն որք յայսոսիկ 'ի սատանայէ ըմբռնեալ են։ Զի արբեալ է ախտիւ պոռնիկն. վասն որոյ մարգարէն ասէր. «Վայ որ արբեալդ էք 'ի ցանկութիւն և ոչ 'ի գինւոյ»։ Զի ա՛մ չարեաց պատճառ պոռնկութիւն է և մայր մեղաց և գուռն ա՛մ չարեաց նստելոց 'ի մեզս։ Զի վասն այսորիկ գայ բարկութիւն այ 'ի վերայ երկրի, սովոյ և սրոյ և գերութեաց և պէս-պէս ախտից. խռովութեաց ընտանեաց և օտարաց, ծնողաց և ծննդոց, ծառայից և տերանց. յորս կաղք և կուրք և մահք։

Այս ևս չարագոյն քան զասացեալս է ախտիցն գարշութիւնք. որ և քան զանասունս և զգազանս և զսողունս անարգել են յախտս, որ յանասունս և յարուս պղծին. թողեալք զսկետս իգութիւն արուացն և իգացին, բորբոքեցան ցանկութիւնք իւրեանց յանասելի աղտեղութիւնս. զոր և ոչ է տեսանել յայլ 'ի ինչաւորս զգարշութիւն ախտիցն։ Ո՞վ չարեացն և անարգել ախտին. որ արտաքս ելանէ քան զսահմանն, և գլուխ է ա՛մ գժնդակ չարեաց։ Առաջին օրէնքն քարկոծ առնէին և կամ հրով այրէին. և նորս՝ արտաքս ունի յեկեղեցւոյ և 'ի ժողովրդոց. մինչև բաղում լալով 'ի տուէ և 'ի գիշերի 'ի խորդ և 'ի մոխիր պահօք ապաշխարեսցէ, անհատ աղօթիւք և աշխատութեամբ բեկեալ սրտիւ։ Զի թէ տէրն զհայելն 'ի կին պարտաւոր առնէ ինութիւն, վասն այլ գարշութիւն ախտիցն զի՞նչ պարտ է ասել զպատիժն։ Եւ դարձեալ ո՛րքան[2] երանէ զմաքուրսն. քանզի ասէ. «Երանի որ սուրբ են սրտիւք, զի նոքա զա՛ծ տեսցեն հոգւով»։

Ո՞վ բաւական է ասել զսրբոցն զհատուցումն, զա՛ծ տեսանել և յանպատումն վայելել։ Զի եթէ զարեգակն տեսանեմք յետ գիշերային ցրտութիւն 'ի ջերմութեանել 'ի լուսաւորել՝ ինդամբ, որ փոփոխելի և անցաւոր է. իսկ զանձառելի լոյսն զնորա արարչին և

1 Միւսն մաքուր և սուրբ մարդն։ Ա՛յլ։

2 Մերն ո՛ր բան .. 'ի ջերմացուցանել։

զնէր զինչ պարտ է ասել զանհամեմատ բարին ՝ ամ։ Որ լցուցանէ զսրբոցն անձինսն հնորհօք և վայելեցուցանէ յանբաւ բարիսն և յանսխալական երանութենն և յանսպառ ուրախութիւնսն Զի ոչ զնմանութի ինչ կայանիցն և զանձառիցն հնար է ասել. բայց որ սուրբքն էն որտիւք և անարատք անդամք մարմնոց, նոցա երևի ՔՀ անձառապէս։ Բայց եթէ անսուրբք իցեն հոգւով և մարմնով, ապաքէն ի սրբոտէն առնու զհանդամանս գործոց մարմնին. զի ի սրբոտէն, ասէ տէրն, երանեն չար խորհրդոցն չարքն, և մարմնով պղծի։ Եւ զի ասէ, «եթէ ակն քո կամ ձեռն կամ այլ ինչ անդամ գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկէա ի քէն». և այս հրաման ոչ զանդամոցն հատանելն ասէ, այլ զցանկութիւն շարժմանն ախտոցն որ ի նոսա գործէ ի կորուստս անձինն. զի լուցկիկք է պոռնկութիւն անշէջ հրոյն ամ չարեաքն հանդերձ։

Եւ յորժամ փրկիչն զառաքեալսն յաշխարհ առաքէր սերմանել զբանն ճշմարտութեան յանդս մտաց հաւատացելոց, և նովաւ ածել ի կարգ ուղղութիւն, նախ զփուչն խլել զցանկութի բուսոցն հրամայէ, զի կամն մարմնոյ և զմտաց, և հնազանդել աւետարանին. և ապա սերմանել զաւետիս հրաւիրանացն. կոչել խոստովանութիւն յապաշխարութենի և ի հաշտութենի ամենայն արարչին։ Եւ հնազանդեալք ըստ աւետարանին քարոզութեան, արժանաւորիլ սուրբ երախտեացն կենդանի յուսոյն, զի ժամանեսցուք յօթեւանս կենացն յաւիտենից ի ՔՀ ՅԻ։ Եւ ի ժողովս առաքելոցն վասն խնդրոյն այնորիկ Հրէից և Հեթանոսաց նախ զայս աւանդեցին, և ընտրեցին ի բաց կալ ի պոռնկութենէ և ի հեղձուցելոց՝ և յարեանէ։ Որոց արարեալ զայս բարի գործս, ստանան անձանց զարդիս և զապառնին։

Այնզան նախ զպոռնկութենն հատուն առնէ, զի ըստ բաղումս ոստս որ ի նմանէն գնասք՝ խափանէսցին. և զմեռելսսի գործս և զուտել արգելցեն և զարիւն նորին. այլ և որ ի սպանութենի մտաքերեն, այսպէս

1 Մեկն հեղձուցանելոյ։

խափանեսցին։ Զի հնազանդութիւնքն նուաստեալք առ սրբութիւն և պարկեշտութիւն և խոհականութիւն, և ընտանացեալք հաւատով մոցեն յաւետիս խոստացեալ բարեացն։ Եւ զդժնդակութիւնն ամ ատել և 'ի բաց ընկենուլ սպառնալեօք անվախճան տանջանացն, որ պատրաստեալ է 'ի տեառնէ անսրբոց և պղծոց 'ի պոռնկութիւն։ Զի եթէ մեռելոտի ուտել և զարիւն անասնոց ըմպել եղկութիւն և թշուառութիւն առաջի կայ, ո՞րքան պատիժք որ զազգակիցս վտանգեն նեղութիւնքն, զոգիսն և զմարմինս ձ՞նշեն պէսպէս վտանգիւք և դառն տանջանօք և մահուամբ յարդար դատաւորէն պատրաստեալ։ Եւ Առաքեալ ասէ. «Մի՛ խաբիք. ոչ պոռնիկք, ոչ շունք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ սպանողք, և որք զհետ այսոցիկ, զարքայութիւնն ՚այ ոչ ժառանգեն», այլ զանշէջ հուրն. ըստ մարգարէին՝ թէ «Հուրն նոցա ոչ շիջանի, և որդն նոցա ոչ մեռանի»։ Զի պատուական ասէ զամուսնութիւն և զանարատ անկողինս, և նախապատիւ զկուսութիւն. այլ և զպոռնիկս և զշունս դատի ՚ած։ Եւ դարձեալ ասէ. «Դուք տաճար էք ՚այ, և Հոգի ՚այ բնակեալ է 'ի ձեզ»։ Այսինքն անարատ յաղտեղութիւն։ «Զի սուրբ է տաճար քո սքանչելի արդարութիւնքդ» ասէ Դաւիթ։ «Եւ եթէ ոք զտաճար ՚այ ապականէ, ապականեսցէ զնա ՚ած. զի տաճար ՚այ սուրբ է, որ էք դուք 'ի մէջ կամակոր և աղտեղի ազգաց»։

Զի որպէս ջրհեղեղաւն ապականեցաւ երկիր, որ գէջ պղծութիւնքն էին ապականեալք, մեք զիարդ ոչ երկիցուք, որ այսպիսի մեղաց բարկութիւն վկայ ունիմք զհամաշխարհական կորուստն ջրհեղեղին։ Այլ և զՍոդոմ և զԳոմոր հրով և ծծմբով տոչորեալ ըստ ջերմութիւն և զաղիր ախտից, որովք ըմբռնեալ էին՝ սատակեցան հինգ թագաւորացն պղծեալ տունքն հանդերձ լրիւ իւրով երկիրն։ Եւ զայս երկուս հարուածս յաղագս գիջութիւն և պղծութիւն երկուս վկայս կացոյց ահաւոր դատաստանին, որ լինելոց է պատիժս այնպիսի պղծոց յաւուրն այցելութիւն ՚ամ ազգաց։ Զի որպէս էին, ասէ տէրն, յաւուրսն Նոյի, կանայս առնէին և արանց լինէին և յուրախութիւն

վայելէին, մինչև եկն Ջրհեղեղն և կորոյս զամենասեան առ հասարակ. նոյնպէս և յաւուրս Ղովտայ ի փափկութեան և յամուրախութեան վայելէին, այլ և յանառակ ցանկութիւն, մինչև տեր եհան զՂովտ անտի, և զնոսա արբեաց առ հասարակ հրով. բայց դուք լոյս էք ի տէր ի սրբութեան։ Խաւար ասէ զգործսն խաւարի, որ ոչ գոյ ի լոյս։ Իսկ ի խաւարէ մեզայ զերծեալ սուրբ լուսոյն երեւի։ Դարձեալ ասէ, թէ որ մերձենայ ի պտղնիկն՝ մի մարմին է. զի որպէս միով մարմնով մեղքն կատարին. զի հասարակաց է չարն ի գործելն ի խօսելն ի տեսանելն ի լսելն, և այլ ամ խծբիծք չարեաց նոցին։ Եւ որ մերձենայ ի տէր՝ մի հոգի է, ընկալեալ ի կենդանի սրբութեան։ Զի սրբեալ անդամքն մարմնով և հոգւով միաւորի ընդ Քրիստոս ի կեանսն հաւատով և Ճշմարտութիւն, և լինի սուրբ անդամ Քրիստոս հանդերձ ամ առաքինութիւն։ Զի կարասցէ ասել առ մարտ թշնամւոյն. արդ առեալ զանդամս Քրիստոս՝ առնիցեմք անդամ պտղնկի. քաւ լիցի զսրբութիւս մատնել յանմաքրութիւն։

Ո պտղնիկն բաղուս մանդամ վտանգեր Պաւղոս վասն պղծութեան և խրատեր, և մատներ ի ձեռս սատանայի ի սատակումն մարմնոյ։ զի օգին ապրեսցի հանդերձ ստոյգ զղջմամբ։ Ճշնեղով զմարմինն պահովք պնդութեան և աղօթիւք հրահանգել ի սրբութեան, նուաղասցեալս ի նոսա՝ որ յաղագս այնորիկ են հանդերձ։ Զի ի ձեռն պտղնկութեան պէսպէս անօրէնութիւք յաճախին ի յերկրի. զի բազմաչար է պտղնկութիւն և անյագ առ ցանկութիւս անտից։ Վասն այսորիկ Առաքեալ զմեզ ուսուցանէ և խրատէ սպառնալեօք, փախչել յայնպիսի անտից և ի պղծութեն, որոց վասն Ճանն է կրուսա։ Զի ասէ. «Մի պտղնկեսցուք, որպէս ոմանք ի Հրէիցն, և կորեան ի սատակչէ անտի յաղագս պտղնկութեան ի միում աւուր քսան և չորս հազար»։ Զի ոչ եթէ անիրաւ ինչ էր ՃՃ՝ որ էած զարկութիւն ի վերայ նոցա, որ գիտէ զՃՃ։

Վասն այսորիկ զհարուածսն ընդ իշխանութիւնն եմոյծ ի ժողովուրդն. որպէս զի նոքա էին որդիք կրօտեանն պատՃառս ի մեղն, թէպէտ և ի միասին մեղն որ մեղանն։ Զի և մարգարէն ասէ. «Ընձեն որ

մեղիցէ, նոյնն և մեռցի». Թէպէտ ասէ, «Հարքդ ա-
զոխ կերան, և որդւոց ատամունք առին»։ Զի են ո-
մանք որ 'ի մեղս իւրեանց վախճանին առանց ապաշ-
խարութեան, եցոյց եթէ ոչ լինի մոռացումն յիրա-
ւանցն այ. այլ կայ պահի արդարութի աւետեաց սրբ-
բոց, և առ անօրէնութի՝ սպառնալեացն արհաւիրք։
Զի որդիք մեղաւորացն երկիցեն և մի արասցեն ըզ-
մեղս, որպէս և հարքդ իւրեանց. այլ արդարութիւն
իւրեանց ապրեսցին 'ի բարկութէն՝ որ սպառնացաւ
նոցա։ Զի որդի որ ատէ զամբարշտութիս հօր, և ա-
րասցէ իրաւունս, կեալով կեցցէ, ասէ Տէր։ Եւ մի փոր-
ձեսցուք զՏէր և կամ տրտնջեսցուք, որպէս ոմանք 'ի
նոցանէ, և յօձից անտի սատակեցան։ Զի ուսումն
վարդապետութիւն խրատէ յուղղութի, որոշէ զլաւն
'ի վատթարէն, և պահել զսրբութիւն ըստ օրինացն
արդարութիւն և ըստ աւետարանական լուսաւորութէն
խորհրդով և բանիւ և գործով։ Զի ապրեսցուք 'ի
բարկութէն որ գալոցն է 'ի վերայ անօրինաց և պըղ-
ծոց, և կալ առաջի Քրիստոսի սուրբք, և ժառանգել զան-
պատում բարիսն։

Ա.յլ և վերակացուք մի հեղգասցին 'ի պատմել
զսպառնալիս Տեն այ. զի ասէ Մարգարէին. դէտ կա-
ցուցի զքեզ, զի ասասցես՝ մահու մեռցիս եթէ մե-
ղիցես։ Եթէ լուիցէ քեզ, կեցցէ. ապա եթէ ոչ լուի-
ցէ քեզ՝ մեռցի. և դու ապրեցուսցես զանձն քո։ Ա-
պա եթէ ոչ ասասցես զսպառնալիսն որք զայնպի-
սիսն գործեն՝ եթէ սուր գայ և բարկութի, զարիւն
նոցա 'ի ձեռաց քոց խնդրեցից։ Զի կամ ողոքանօք
աւետեաց երանութէնցն յուսով ուղղեսցին, և կամ
սպառնալեօք հարուածոց և վշտաց և նեղութէց՝ որ
յերկրի ասա, և կամ ահեղ աւուրքն մեղաւորաց և
անհնազանդից։ Զի իբրև հրեշտակք են այ հրամանք,
որ առաքին յիշխանութէ ընդ ամենայն արարածս.
ընդ երկնաւորսն առ զօրս հրեշտակաց, և ընդ երկ-
րաւորս առ ազգս մարդկան. առնել զշահաւորն 'ի
մեզ 'ի սիրոյ տէրութէնն 'ինեղութէ և յանդորրու 'ի
պէտս մեր։ Զի անքակ կացցուք 'ի Ճշմարտութէ ա-
ւանդսն մաքուր վարուք մարմնով և հոգւով առ տէ-
րութէն, և երախտաւոր լինել ամենաշահ դարմանօք

առ կենաս և փրկութիւն մեկերաց։ Ալյլ և արուեստ-տիւք Հշմարտից կալ ի միակութեան, և արքանեակ լինել առ Հանոյս բարեբար կամացն ոյ, և ընդհանուր Հոգւոյն վայելել ի կենաս աշխարհիս. զի ազատեալք ի մեղաց, և արդարութենն միշտ պտղաբերք հանդերձ ամենայնի Հաճութեան համբերութիւն բազմաւ. զի այսպէս ժառանգաւոր լինել կարասցուք աւետեացն սուրբ Երրորդութենն։

Ի. Ալյլ և վկայութիւք լաւութենն որ մտերիմ է անձնիշխան կամքն ի վարդապետութիւն Հոգւոյն սրբոյ. որ ի ձեռն մարգարէից և առաքելոց և վարդապետացն գրով աւանդեցին մեզ. զի ծանիցուք զնոսա զբարեպատուոյն, զարդարն, զարարչն, զսուրբն, զՀշմարիտն. և մերձել և հեռանալ ի դժոխոյն վարուց, յապականալոյ և յանՀաւան յանխորատ և յանխորհ անօրինութենէ, և սրբել ի մտաց և մարմնոյ ըղձասակաւ զամենայնչտութիւնն միշտ։

Ալ և Պարսիկք և այլ խուժադուժ ազգք, որ ոչ գիտեն զօրէնս, ընտանեաց զօրինացն գործեն ըստ Աստուածային բանին, և ի ձեռն դատաւորաց պատժեն ըզպիղծս և զանիրաւս։ Եւ միշտ սպառնալիք իշխանաց և դատաւորաց առ անխորհուն ի ջարիս, առ սուտս և երդմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս, շունս, կախարդս, դիւթս, և որ այլ ևս են հոյլք մեղաց։ Զորս բանդիւք և երկաթի կապանօք և պէսպէս տանջանօք խոշտանգեն և մահ ի վերայ ածեն, զի այլքն երկիւղ ունիցին և արդելցին յանխնայ անօրինութենէ։ Իսկ որ խրատին և գան ի լաւութեան կարգաց և իրաւանց թագաւորի, ի միամտութենն և ի Հպատակութեան կացուցանեն զանձինս, այսպիսեացն փառք և պատիւ և պարգևք ազատութեան շնորհեն։

Դոյն օրինակ և Յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս. երախտաւորացն և մտերմիցն պարգևօք և մեծարանօք պատուեն. իսկ զանօրէնս և զանհնազանդս և զամբարհաւաճս և զանառակս և պիղծս պատուհասիւք և պատժովք և դառն նեղութիւնք նեղեն, զի խրատեսցին ի բաց կալ ի մեղաց և գործել զարիս Հանապազորդ. զի մի վրիպեսցի աշխարհս յանիրաւաց, այլ վեհաղաղութեան և զշինութեան կալցի։ Նոյն

պէս և ամ ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին այ. զի ունին կարգիչս և իրաւունս դատաստանօք և խրատու ուղղել, և մի ամբոխ և մարտ յուզիցի։ Եւ իրաւանցն արդարութեան երկու բարբառք են, որ յարգեն և պատուեն զիրաւախորհն աւետեօք պարգևացն, և սպառնալեօք և պէսպէս նեղութիւնք պատժեն զապախտաւորսն և զանիրաւսն. զի չիք ազգք որ ոչ ի ցեն իրաւունք 'ի դատաւորաց։ Եւ այս ամ կարգք 'ի շինութի աշխարհի կարգեալ են 'ի ամենէ ըստ նախախնամութեն որ առ ազգս մարդկան. թէպէտ և ոչ ծանեան զայծ և փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ ընդրեցին զայծ ունել 'ի գիտութի. այլ նանրացան 'ի խորհուրդս իւրեանց և խաւարեցան անմտութիւն։ Այլ ոչ անտես առնէ աբարիչն զարարածս. զի հայր է շնորհիւ և ամ, որ հրաւիրեաց և կոչեաց զամենեսեան յարքայութիւն։

Արդ այս ամ կարգք իրաւանց և արդարութեան վկայք են այ հոգևոր օրինացն, որ քարոզեցաւ մարգարէիւք գրովք սրբովք։ Որք յանիրաւութէ յիրաւունս ածեն, յանարգութէ 'ի փառս, յանցաւորէս 'ի մշանջենաւորսն, յերկրաւորէս յերկնաւորսն առաքինութիւնք հանդիսիւք. և ամ կարգաց իրաւանց և սրբութիւնք պատկառ կալ, Ճշմարիտ հաւատովք և կենդանի սիրով անմեկնելի լինել 'ի կամացն այ 'ի նեղութիւնք և յանդորրու։ Կոխել զպատրանս աշխարհիս և հաստել 'ի յոյս կենացն յաւիտենից խաղաղարար սրբութիւնք. զի հասցէ 'ի բնակարանս սրբոց յերանելի և 'ի սքանչելի փառսն. վայելել 'ի բարութիւնն անպատում, յանհամեմատ վայելչութիւնն, յանուշակ արքայութիւնն Հօրն ամենակալի և Որդւոյն բարերարի տուողի մեզ զկեանս, և Հոգւոյն սրբոյ նորոգողի ըզհաւատացեալս. միասնական սուրբ Երրորդութիւն. որում փառք յաւիտեանս. ամէն։

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԱԼ, Ի ՏԻՐ ԱՄԵՆԱՐՐԻՒԵՍՏ ՊԱՀՈՑ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Թ.

Լի քանզի ամենայն կարգաց չափ եղեալ յամենակալ տեառնէն և յարարչէն, որպէս զի հանգիստացեալք կատարեսցուք զառաքինութիւն ահիւն այ, որ փառաւոր պսակի հաւատովք և հնորհօքն Քրիստոսի. Զի ամենարուեստ քաջութիւն նահատակեալ'ի մշակութիւն օրինացն՝ սուրբ սիրոյն զօրացեալք, որպէս և զզօրս հոգեղինացն։ Որով և օրէնսդիրն փառաւորեցաւ, և օրինապահքն պսակեցան, և առաջնորդն յօթեանս երկնից արքայութեան օրինակաւ ամենագիւտ սիրոյն'ի բարերար խնամն։ Զի նմանեալք նոցա խորհել յօրէնս տն'ի տուէ և'ի գիշերի՝ ընկալցուք զարդարութիւն և զժուժկալութիւն զհնարքն. զի ըստ իւրաքանչիւրոցն լաւութեան վարուցն՝ թագ'ի գլուխս մոցեն յարքայութիւն'ի մշանջենաւոր և յանվախճան կեանսն. երկնայնոցն և անմահիցն կցորդ լինել ըստ ընդրութեանն հնարհացն գործելով յանդիման առաջնի այ և զօրաց անմարմնոց. զոր յերկրի աստ մատակարարեալ և յերկնաւորսն երևի։ Եւ յսու յուսով յորգորէ զորդիս մարդկան ըստ աւետեացն, և ժառանգաւորս առնել Քրիստի Հայրն բարերար և Հոգին սուրբ ամենախնամ. որ ոչ թողու զարարածս իւրոնախնամական սիրոյն. զի զամենեցուն կամի զկեանս և'ի գիտութիւն ճշմարտութեանն հասանել։ «Զի որ աբասցէ և ուսուսցէ, ասէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից»։

Լաւ որպէս հրեշտակացն կարգաւորութիւն է յարքայից արքայէն, և'ի նոյնս կան մնան ըստ բարերար կամաց կենարարին և ոչ եւ անցանեն, սոյնպէս յոր-

գորէ և զմարդիկ 'ի հրեշտակային կարգաւորութիս։ Սոյնպէս և սերոբէք և քերոբէք ընծայեալ են յիւրեանց սպասաւորութեն ամենակալ Տրուէն. որով արարածք դարմանին 'ի խնամս բարերարութեն միշտ։ Այլ և Տամ զուարթունք և զօրք հոգեղինացն և անմարմնոցն յիւրաքանչիւր կարգի հաստատեալ կան պաշտօնեայք ակնարկման կամաց բարերարին։ Այսոքիկ բանակք բիւրաւոր զօրացն հաւանեալք և հնազանդեալք 'ի հաճոյս Տրութեն՝ ցուցին զսպասաւորութի իւրեանց անհանգիստ օրհնութք 'ի Տր. գործակից լինել բարերարին այ երախտեաց, և փառաբանիչք նորա մեծութեն և Տծութեն. որով ուրախացեալք 'ի պայծառութի արարչին միշտ։ Իսկ ըստամբակեալն 'ի նոցանէ իւր բանակօքն և դժնդակ բարս ստացեալ՝ սատանայ անուանեցաւ, և դևք՝ որ նորա են արբանեակք չարի սպասաւորք. որք ցուցանեն զգործս անօրէնութե և հակառակ են արդարութե վարուցն։ Զի ինքեանք անկան 'ի պատուոյ, և զմարդիկ որսան 'ի կորուստ. որոց Տծ խոստացաւ տալ զնոցա պատիւն մարդկան։ Զի Տծամարտ է և մեղսասէր, և հանապազորդ թշնամի մարդկան, և հակառակ արդարութե և սրբութե. և ոչ դադարէ յիւրմէ խորամանկութէն 'ի խաբել 'ի կորուսանել զմարդիկ պէսպէս և զանազան չարեօք։ Վասն այսորիկ գրաւեալ է ընդ սպառնալեօք ահաւոր տանջանացն և անմահ սատակմանն։ Ոչ միայն նմա և նորին զօրացն, այլ և որք սիրեցին առնել զկամս նորա խորհրդով և բանիւ և գործով. «Երթիցեն, ասէ Տրն, մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենից զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա»։ Այսոքիկ 'ի կամաց լինին և ոչ 'ի հարկէ։

Իսկ մեզ պատուիրան տուաւ 'ի Տնէ, զի ծանիցուք զնորա զպատուիրանսն և զերծցուք 'ի նորա խաղբիցն միշտ, և աւետեօք բարի խոստմանցն գործեսցուք միշտ զբարիս առաջի Տն յամ ժամ, և մտերիմ հաճոյիւքն այ կալ յանվնաս մշակութե, և յորդորել զբազումս 'ի լաւն և որ լին է փրկութք և ամենազարդ սրբութք։ Վասն որոյ փառք և պատիւ 'ի բարերար Տնէն յաղագս արդար և սուրբ գործոցն պատ-

բատուեալ կան։ Զի յուսով զօրացեալ կան յամ փոր-
ձանս. ոչ վրիպին 'ի ստոյգ և յուլիղ վարուց, ածա-
սիրութեան առաջնորդեալ յամ առաքինութիւնս, և
կալ մնալ անսասանելի։ Զի զմարդն յիւրում կար-
գին հաստատեալ նեբբոյ իւրոյ չափոյն, զի լիցի աբ-
բանակ ՀՀմարիա քարոզութեան հրաւիրանաց վերին
կոչմանն, և ըստ մարդարէութեանն հնորհի խորհրդա-
կից լինել կամաց աբարչին։ Եւ 'ի գիտութիւն աւե-
տեաց նորոց կտակարանաց և 'ի նորոգումն կենացն
անմահից ուղիղ հաւատով ընծայիլ քահանայական
հնորհիւ օծմամբ և հոգւովք խնամովք տեսչութեան սի-
բոյն Քրիստոս։ Մերկանալ զհին մարդն և զգեցուլ զնորն՝
որ ըստ պատկերի ՀՀ է սուրբ և արդար։ Մերկանալ
յամ չարէ աւազանին հնորհօք, և մաքրիլով և ա-
բեամբն Քրիստոսորի և 'ի թիւ խնամատուն կուսանացն և
ՀՀամ սրբոց, որք զմարմնոս իւրեանց 'ի խաչ հանին,
որպէս ասաց Առաքեալն՝ ՀՀամ ցանկութիւքն հանդերձ։
Զի հոգւով գնասցուք և զցանկութիւս մարմնոյ մի կա-
տարեսցուք։ Եւ այսպէս յամենի առնէ զանն՝ որ զնշ-
խամութիւնն ունի զասանայ։ Զի սարեցին որսա-
գեալքն 'ի նմանէն հնորհօք արարչին, և առաքինեալք
յարդարուն և 'ի սրբութիւն և 'ի ՀՀմարտութիւն հաւա-
տարիմ պատերազմաւ՝ անարատ մաքուր և անարիծ
կատարեալ սիրոյնս որ 'ի Քրիստոս, և համբերութիւն 'ի վը-
տանկս, սարա հասցեն խոստացելոց բարեացն Քրիստոս։

Լսել որք ոչ ընկալան զօրէնս արդարութեան կարգաց
և կրօնից, և խաւարեցան անմտութեամբ սիրաք նոցա,
մասնեալք եղեն 'ի բանսարկուէն յանառակ ցանկու-
թիւս և յամբարշտուս և 'ի հպարտութիւս և յամ անօ-
բէնութիւս, մասնեաց գնասա ածն տանջանաց անմահ
մահու։ Վասայն խնամք արարչին ոչ թողին անդարմանն
զարարածս իւր. այլ վասն բազումմարդասիրութեան իւրոյ
քարոզեաց զդարձ և զապաշխարութիւն 'ի քաւուն ամ
մեզաց։ Զի դարձեալ վերստին առցուք արտասուօք
զաւազանին լուացուցիչն 'ի ձեռն հաւատարիմ և ան-
սուտ խոստովանութեան և ապաշխարութեան, որ ար-
տասուօքն խառնեալ է։ Զի զթացեալ ողորմի և տա-
ցէ զորդեգրութիւն զհնորհս։ Զայնուհետև հնազան-

գեալ ընդ բարի կամացն՝ կատարեսցէ զարդարութեան ամ [1], և խլեսցէ զչար սովորութիւնն ամ աղտեղի չար ցանկութիւնն հանդերձ. և աղատեալք 'ի դառն պարտեաց գեհենին՝ և ժառանգաւոր լինել կենդանի խընամոց բարերար սիրոյն սուրբ երրորդութեան. զի յորդորեալք յառաքինութիւն և 'ի սուրբ վարս՝ ժառանգեսցեն զարքայութիւն։

Զի յորժամ յաւելուած սուտ կարծեացն մտին 'ի նախաստեղծն մարդն յայրն և 'ի կինն 'ի մախանաց բանսարկուին, և 'ի հրապուրանաց հեշտութեանն քարշեալ՝ և սուտ կարծեօք աստուածք լիեալ՝ խաբեցան և ոչ պահեցին զպատուէր արարչին իւրեանց, և ելին 'ի փափկութիւն դրախտէն և զմահ ըստացեալ ժառանգեցին։ Զի յառաջագոյն պատուիրեցաւ նոցա գործել և պահել զդրախտն ժուժկալութիւն պահոց. յորս ուտել նոցա 'ի պտղոց, և յորս ոչ։ Նոյնպէս և այժմ քարոզեցաւ 'ի մեզ պահք, յոր աւուրս պահելի, և յորս լուծանելի. որպէս օրինադրեցաւ 'ի մարգարէիցն և յառաքելոցն և 'ի սուրբ հարց մերձաւորացն այ։ Զի որ պահէ զսրբութիւն և զամ արդարութիւնն իմանալի դրախտին, կայ մնայ 'ի նմին անմեղ 'ի դրախտի արդարութիւն և առաքինութիւն անկոծն 'ի վայելս հնորհօք արարողին կենաց աստ, և անդ փոխել յանձառելիսն։ Զայս ասելով ոչ իմանալի ասեմ զդրախտն, այլ տեսանելի առաջին մարդոյն. թէպէտ և 'ի մէնջ ծածկեաց հրեղէն սուրն ըստ խորին իմաստութեան այ։ Զի երկդիմի է իմանալ. մինն շօշափելի և տեսանելի, և միւսն իմանալի՝ որ յառաքինութիւնն վերաբերի։

Զի պահք դաստիարակ են մարդկան։ Զի որպէս զտղայս դաստիարակն հրահանգէ 'ի բաց կալ 'ի քնասակարաց և յօգտակարսն կալ մնալ և յանօգուտսն ոչ զբաղնուլ անժուժկալութիւն։ Վասն այսորիկ եդան մեզ պահք խափանիչ անժուժկալութեան ամ քնասուց, որ 'ի մեզն է հակամիտութիւն հոգւոյ և մարմնոյ. զի կատարեսցուք զսրբութիւն ահիւն այ. անցցուք յանդորրութիւնն յանքննելիսն որ կայ և մնայ պահողացն։

1 Միւսն ուրարդեալ զանօրէնութիւն ամ աղտեղի։

Եւ մի որպէս որովայնամոլքն՝ որ նստան ուտել և ըմպել և յարեան ՝ի խաղալ , և սատակեցան ՝ի բարկութենէն տեառն իսկոյն յոլովք ։ Զի զպատուիրանս նորա ոչ պահեցին . այլ նաներացան ՝ի խորհուրդս իւրեանց , և զՔրիստոս պահոցն անարգեցին որկորաստութեամբ , և ոչ կացին յուխտին , և խոստացեալ պարգևացն ոչ հաւատացին և բարկացուցին զԾած . և էած ՝ի վերայ նոցա հարուածս և սատակեաց ։ Իսկ որ ամենեցեան ՝ի պնդութենէս պահոց , և ցուցին զիրոյթ հաճութեան և ժուժկալութեան , և պահեցին զՀրամանն տեառն , և կացին մնացին ժուժկալք յօրինադրեալ պահման սրբութեան ամբարեձև կարգաւ , նոքա ընկալցին զՀանգիստն որ ՝ի Քրս։

Օ՛ էն մեզ պահք բժիշկք . զի զոր անժուժկալութիւն մեր ՝ի հոգի և ՝ի մարմին զիսաս զոլեսցէս Ճաշակաց մեզաց , և՝ի միմեանց վերայ շեղջակուտեալ և նեղեալս յայլանդակ խորհուրդս և յանմաքուր վարս , ՝ի ժուժկալութիւն և ՝ի պահս մնեալ՝ նորոգեալ սրբի ՝ի մեզանից մեզաց , և լինի քնակարան սրբութեան։ Զի պահք մերձ եկեալ զդեղ առողջութեան հնարել ՝ի ժուժկալս , և ՝ի ջերմութեամբ հոգւոյ սիրով հալել զմեզս աղտեղութեան և յառաքինութիւնն վերաբերել։ Եւ անուշահոտ վարուք ցանաքէ զժահահոտութիւնս և ՝ի միջոյ բառնայ , և զառողջութիւն տայ հիւանդաց որք մեզքն ապականեալք ի՝ցեն։ Եւ զարբութեան և զանարատ վարս յանձին ցուցանեալ զմեր առողջութենէն՝ նահատակեալ ՝ի սրբութիւն։ Եւ զայն որ վիրաբերեացն զնա աղտեղի ցանկութիւն և անխորհ անառակութիւն , հարցէ զնոսա սրբութիւն և անարատ ամբծութիւն . և դատեսցէ զորովայնամոլութիւնն միշտ պահովք[1] , և խլեսցէ զչար սովորութիւնն յանձնէ։ Զի դատապարտեսցին ՝ի ձեռն հնարացն Քրիստի մեզքն և իշխան մեզացն , և առցեն զկատարեալ առողջութիւն փրկական խորհրդովն ստոյգ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ , պահաւք աղօթիւք ամրացեալ ՝ի միասուն։ Եւ այսպէս առցեն զպակաս յաղթութիւն՝ որ գովութիւն և պարծանաւք յօրինեալ է պա-

1 Միանգամայն պահելովն . . . պահ անյիշատակ ։

հողացն։ Զի բազում արուեստք են կարգք պահոց, և բազում շահս ստանայանձանց՝ որք սիրեն զնա և պահեն միշտ։

Պահք կատարեալ հաւատոց ճշմարտութիւն ազգեցութի. յոյժ ակնկալութի և յոյսն առողջութիւն տանի անարատ և ամբիծ և սուրբ երախտեաց սիրոյն որ առ՝ած։ Եւ այնորիւք դադարէ այլանդակութի մտացն և շուայտութիւն զգայութեցն. աչաց 'ի տեսանել և ականջաց 'ի լսել, լեզուոյ առ 'ի խօսել, և ձեռաց առ 'ի գործել, և սրտիւ ուղիղ[1], և ճաշակելեաց առ 'ի պարկեշտութի. ամենեքումբք պնդեալ 'ի պահս սուրբս, և զամ կամն ցանկութի զգայութեցն արմատաքի խլել, և զմոռացումն բարեացն զարթուցանել նշողիւք ՝ածասիրութենն։ Եւ հրաժարել 'ի չար լուծմանէ մեղացն, 'ի պոռնկութէ, յորովայնամոլութենէ, յամբարտաւանութէ, 'ի նախանձուէ, 'ի բարկութէ, յագահութէ, 'ի գողանալոյ, 'ի ստութէ, յերդմանէ, 'ի չարախօսութէ, 'ի զրկելոյ, 'ի նենգութէ, 'ի ցասմանէ, 'ի թշնամանաց, յոխակալութէ, 'ի ծուլութենէ, 'ի ծիծաղելոյ, 'ի խեղկատականաց, յարբեցութէ, 'ի բանբասանաց։ Զայսոսիկ զմահաբեր լուծուածս 'ի բաց փսխել ուղիղ խոստովանութի, և առնուլ զգեղն կենաց, և առողջացեալք սիրով Հոգւոյն՝ յառաքինութենէ ասպարէզնենահատակեսցուք ընդդէմ փնասակարացն զուղղութէ վարսն։ Եւ միամտութի հնազանդեալք բարերար կամացն փակել զամ յորդումն[2] չարին։ Եւ զչար և զդառն շարժմունս մտաց և զգայութեց արգելուլ միշտ, որ է լրումն և կատարումն պահոց. որ հասուցանէ 'ի դրունս կենաց։ Ամրացեալք ներքոյ պահոցն ժուժկալութի համբերութի, և զգուշութի 'ի զգաստութէ մնալով, և յորդորեալք 'ի գութ և յողորմութիւն առ կարօտեալս հեռաւորս և մերձաւորս 'ի փառս և 'ի պարծանս համօրէն ատենին և յարութենն մեռելոց։

Պահք զծածկեալ հիւանդութիս որ 'ի մարմնի՝ արտաքս հանէ։ Որպէս դեղ մաղձոյ՝ որ ընդ ճաշա-

1 Միւսն «ուղղիւ»։ 2 Միւսն յորդորումն։

կէն իւրում զմաղն արտաքս փսխել և զառաջնոյն թի տայ, սոյնպէս և զմէզն պահէ. զի 'ի նուազել կերակրոյ՝ և մարմին հանդարտանայ և սրբի։ Զի զմարմնոյ զհետ երթեալ՝ կորուստ անձին ստանայ. իսկ ըստ հոգւոյ՝ զկենան յաւիտենական 'ի տէր։ Պահէ զոսպացուցիչ են հոգևոր վարուց և խոտանիչ մարմնական շարժմանց. զի 'ի զօրանալ միոյն՝ միւսն տկարանայ։ Զի որպէս գիշակեր թռչունք տկարանան 'ի թռչել յանխնայ ուտելոյն, և գիւրաւ ըմբռնին յորսողացն 'ի մահ, իսկ սակաւակերքն երագաթռիչք են և անորմբռնելիք յորոգայթ ագիր որսողաց, սոյնպէս է խմանալ զոբիամանն և զպարկեշտն 'ի պահս սուրբս։

Եւ եղիա մարդ արէն յորդորէ զմէզ 'ի պահս պրնդութեան, որ պահեաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և երարձ գնամ կարիս յինքեանէ զմարգկային շարժմանցս, և երկնանայ արժանաւոր լեսալ՝ վերացաւ հրեղէն կառաք յերկինս։ Սոյնպէս և Մովսէս պահեաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. ոչ մի անգամ, այլ երրորդ անգամ. զի զինքեան զպարիսն լուծցէ, և զբարկութենայ որ 'ի վերայ ժողովրդեանն՝ որ ուտելով և ըմպելով 'ի խաղս լեսալ պարտեցին զգլուխ արթուն և սատակեցան, արգելցէ պահաքն, և լիցի օրէնգրիր յոյ՝ Խարայելի սուրբն։ Սոյնպէս Յովհաննու ամենայն կենացն զպահն բացցայայտ. որ ոչ ուտէր և ոչ ըմպէր 'ի բերից երկրաւորաց կազմեալ կերակուր. այլ մարախով և վայրենի մեղրբք զպէտս վՀարեր յանապատին։ Եւ սրբեալ 'ի պահցոյ՝ եղև կարապետ և տեսող անՀաւիտն ըստ աւետարանին։ Աւյսպէս և տէրն յետ մկրտութենն պահովք անդեալ ՀՀաճախանն մարմնոյն ընդդէմ թշնամանոյն զպատերազմն առնէր. զի այնպէս ուսուցանէ զմարդկն սպառազինեալ պահովք ընդդէմ թշնամւոյն մարտից, և նահատակեալ պահովք և բոլանդակ առաքինութիւք առեալ հնարս յաղթութեան և յաղթեալ փոքձողին։ Որպէս և տէրն մեր որ վերացաւ 'ի թեւս հոգւոյն ընդ աջմէ մեծութենն 'ի բարձունս, և զնոյն իսկ զմարան պահովք եցոյց մեզ։ Զի զորկորբսութութիւն և զամ զբօսանս որ են բեռնիք մեզաց՝ 'ի բաց ընկենցուք, զի արժանի լիցուք թեւաք հոգւոյն վե-

բանալ և զտէրն փառաց տեսանել, և լսել եթէ ե-
կայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայու-
թիս իմ։

Օ ի՜մ սրբոցն՝ պահք եղեն առիթ սրբութե՛ և
յերկրէս ամբառնալոյ և մերձենալ 'ի հոգեղէնսն։ Զի
որպէս հրով զսրբութիսն ընկալան 'ի ձեռն պահոց,
և ապա ընտանեցաւ նոցա հուրն կիզող որպէս երից
մանկանցն 'ի հնոցին՝ որ պահովքն էին սրբեալք։ Զի
հուր զայրելիսն այրէ, և զսրբեալսն պահովք առա-
ւել լուսաւորէ և պայծառս կազմէ լուսով։ Իսկ որ
ոչն էին արժանի և մերձ եղեն 'ի հուրն, իբրև զխռիւ
այրեցան. զի չէին ընկալեալք 'ի պահոց զսրբութի։
Իսկ եթէ արդարոց կատարումն են պահք՝ 'ի հոգե-
ղէնս և 'ի մարմնեղէնսն լինել, քանի՛ օգուտս բերէ
մեղաւորաց՝ որ 'ի պէսպէս ցանկութիւնս իցեն։ Զի
սրբեալն պահովք՝ ազատէ 'ի մեղաց զնեբքին և զար-
տաքին մարդն 'ի բծից անտի, որպէս զոսկի և զար-
ծաթ հրով սրբեալ և պարզեալ յաղտոյ անտի. և
այսպէս լինի անօթ պատուական պիտանի տեառն
իւրոյ. և կամ որպէս զերկաթ ընդրեալ 'ի փորձո-
զաց կարծր և մաքրական հրով կազմեալ 'ի պէտս
մարդկան։ Զի և սուրբ առաքեալքն և մարգարէքն
նախ ինքեանք սրբեցան պահովք և ա՜մ սուրբ կար-
գօր, և ապա քարոզեցին զհաւատս և զուղղեղ վարս
հանդերձ ա՜մ սրբութի։ Որք հաւատացին 'ի ձեռն շը-
նորհացն 'ի Քրս, սրբեցան և եղեն օթևան ա՜ծութենն։
Զի եղեն սուրբքն աղբիւրք հրեղէնք, և զամենեսեան
արբուցին հրով Հոգւոյն սրբութի՛ պահոց. որք ընթա-
նան 'ի կէտ կոչմանն որ 'ի Քրս։

Պահք աղ են, որ անուշացուցանեն զնեխութիս
հոգւոց և մարմնոյ ապտեղութե մեղաց, և անուշա-
ցուցանեն ընդ անոյշ կամս Հոգւոյն սրբոյ անարատու-
թեամբ. զի և աղ յերկրէ ելանէ և անուշէ զայլսն։
Պահք յորդորեն զմարդիկ յապաշխարութի և յուղ-
ղութի ածեն. և ըստ խոստովանութե կարգին հաս-
տատեալ 'ի պահս՝ լուծանին մեղքն։ Զի որպէս զա-
նասուն համարեալ են՝ որք ոչ զգան 'ի ձեռն պահոցն
սրբութի՛ մերձենալ առ տէր։ Եւ իմաստունք են՝ որ
զառհաւատչեայ յուսոյն կենաց ընկալեալ են յան-

ՀԻՆ. և յիմարք են՝ որ 'ի պատիրս յուսահատութեան իւրեանց կապեալ են։ Եւ երկուցունց պիտոյ են պահք. զի որ կատարեալ է 'ի գիտութենն, անուշացուցանեն պահք զՀաշակս սրբութեան ըստ ՀաՀոյիցն տեառն, և զտխմարսն ածեն 'ի գիտութիւն Հշմարտութեան Հաւատոցն։ Եւ որք կենդանիքն են առ սրբութիւն, ամենայնեալ պահէ անարատս պահք, Եւ որ մեռելքն են մեռեալ, կենդանացուցանէ պահք, խառնեսեալ ընդ նմա զնմ՝ արդարութիւնս։ Զի որպէս կերակուրքդ սուիս Համեմին և 'ի պէտս մարդկան հրով անուշանայ, այսպէս կամք մտաց և մարմնոյն կատարեալ պահովք Համեմին 'ի տնօրհաց Հոգւոյն, և 'ի մեծութիւն տերութենն։ Զի Հոգին սուրբ թշնամանի յանժամ որկորստութենէն և 'ի ստոյգ յանդգնութեէ և 'ի զբօսանաց արբշռաց, որք զանձինս իւրեանց եՀուն 'ի կամս շռայլութեան։ Զի որպէս անժուժկալութենն Եւայի և Ադամայ մեՀծս 'ի մերայ էած և մաՀ, նոյնպէս ծնեալքս 'ի նոցանէ որ զնոսն անժուժութիւն ունին՝ արտաքոյ բարւոյն որովայնամոլութեան անվանիցին։ Իսկ պահք և ժուժկալութիւն փրկչին երարձ զթշնամութիւն 'ի միջոյ և Հաշտեցոյց զնոսն ընդ մարդկան 'ի ձեռն խաչի և կամաւոր չարչարանաց. որք հաւատացին կենսաբեր քարոզութենն, որ կոչեաց զմարդիկ 'ի կեանս վերստին նորոգմանն։

Պահք պարիսպ հզօր և գուռն ամուր, որ պահէ 'ի մտից վնասակարաց 'ի խորամանկ թշնամւոյն մերոյ։ Զի մի լեցուք որպէս զորդիսն Հեղեայ անժոյժք, որ զբարկութենն ՅՀ շարժեցին իվերայ ինքեանց։ Հօրն և ժողովրդեանն ՅՀ։ Ա՝ Ա՝ ժուժկալք որպէս Յամուէլն, որ պահօք մնեալ 'ի մանկութեէ՝ եղև գլուխ մարգարէից։ Պահք շինուցանեն զսորբոքեալ Հուրն ցանկութեան։ զի որպէս Հուր 'ի նիւթոյ պակասեալ շիջանի, նոյնպէս և որովայնամոլութեան և արբեցութեան պակասեալ՝ ցանկութենն ըստ շիջանի, և սրբութենն և արդարութիւնն բորբոքի պահովք սնդեալ։ Պահք ցամաքեցուցանեն զդիջութեան պղծութեան։ և որպէս ջերաչուեէ խոնաւ երկիր չօրանայ, այսպէս գարշացեալ անձն 'ի գէլ Քանան զաղիր պատէ սրբեալ անուշահոտանայ։ Պահք արգելու զեռանդն ցանկութեան մանկանց. որ ցրով

ախտին տոչորի 'ի թշնամւոյն շարժմանց։ Պահք դա-
դարեցուցանեն զկտուրթիս որ 'ի կերողութէ և յար-
բեցութէ յառաջագոյին. զի մերձեալ պահք 'ի մար-
մնոյ՝ վերաստեղծու 'ի սրբութիս։ Պահք խափանեն
զյոյզս մտաց և մարմնոյ՝ պղտորեալս 'ի յուղխից ցան-
կութեց հոսմանց, և յատակեալս արբուցանէ զիմա-
նալի և զհոգեկիր երկիրն։

Պահք նաւահանգիստ են խաղաղ ծովածուփ ա-
լեաց ախտից և ամ՛ենասու, և առաջնորդէ 'ի կենաց
նաւահանգիստն, զի մի փնասեսցի յորկորստութէ և
յարբեցութէ 'ի մահ՝ 'ի ծովու մեղաց ալեկոծելով։
Պահք եկեալ՝ խաղաղութի առնեն ամբոխից, և հան-
գուցանեն զսպասաւորս, և ամենեցուն առաջնորդ
լինի 'ի զգաստութի՝ զվերինսն խորհելով որ 'ի Քրիստ։
Պահք սանձք է ստահակաց՝ որ անարգել են յանի-
բաւութիս։ Զի որպէս ձիոյ սանձս 'ի բերանս դնի,
և ամ՛ մարմինն նուաճի և անսայ 'ի կամս երասանակա-
կալին առ հոգևոր պատերազմն։ Իսկ որոց միտքն վա-
ռեալ իցեն արդար և սուրբ խորհրդովք, զգայա-
բանսն կազմեալ պատուիրանապահութիւն. և եթէ
ոչ ունի զսպահոցն սնդութի, յարձակել մարտին դիւ-
րաւ ըմբռնի։

Լռաւել ևս զգուշացուցանէ 'ի մնոյ և 'ի գինւոյ
բանս խրատու. զի գինի առաւել յիմարեցուցանէ
զգայութիսն և զմիտսն և եռացուցանէ զցանկութիսն
և յանառակութի շարժէ, մանաւանդ զմանկանց. և
հոսումն գիջութե 'ի մարմնոցն լինի։ Գինի թմբրու-
թի սրտի, պապանձումն բերանոյ, խաւար աչաց, խը-
լութի ականջաց, լուծութի ձեռաց, գայթակղութի
ոտից, ցնորք խորհրդոց, ծանրութի քնոյ, թշնամի
արդարութե։ Գինի զերկիւղ մերժէ, զպատկառանս
'ի բաց մղէ, և զյիշատակս պատուիրանացն քամահէ,
և զմնաման սուրբ սիրոյն զանցուցանէ, և յուղիւղ հա-
ւատոցն զարտուղի հանէ, և զահեղ դատաստանն ան-
յիշելի թողու, և ոչ տայ թոյլ զմտաւ ածել զմահ և
զանվախճան տանջանսն։

Այս ասելով ոչ 'ի հիւանդաց և 'ի տկարաց ար-
գելում զսակաւապիտութի գինւոյ ըստ Առաքելոյ
խրատուն վասն ստամոքսի և ստէպ հիւանդութե առ

տկարս և առ ծերս։ Իսկ որ կարողք և մանկագոյնք էն հասակաւ, զզոյշ կայցէն 'ի մոլ և 'ի գինւոյ, զի մի դիւրաւ ըմբռնեսցի 'ի հանապազորդ թշնամւոյն, օրսացեալք 'ի նմանէ 'ի նորա կամն։ Զի գինի և արբեցութիւն ապականեն զկատարեալ արս իմաստունս. իսկ զանկատարս մարմնով և մտօք զինչ պարտ է ասել. Զի որպէս հրով տոչորէ և վառէ զցանկութիւն բոց. զի հուր զմտրմինն միայն այրէ, իսկ միս և գինի զհոգ գիսն շարժմամբ ցանկութիւն։ Եթէ հուր առանց նիւթոյ շինանի, ապա և ցանկութիւն առ 'ի պահոց։ Եապա եթէ անարգել յուտել և յըմպել և 'ի զբօսանս իցէ մանկութիւն, մի ակն ունիցի ողջախոհանալ 'ի սրբութիւն. այլ եռացեալ ցանկութիւն օրովախամոլութիւն՝ հեղու զհոսանս և այրէ զոր գտանէ ախտին սիրոյն, և կալցէ գատաստանս ինքեան սրտմտութիւն և հաղորդացաց իւրոց. «Զի որդն նոցա, ասէ մարգարէն, ոչ վախճանի և հուրն նոցա ոչ շիջանի. և եղիցին 'ի տեսիլ ամենայն մեղեաց»։ Եայսքան պատիժք ունին որովայնամոլք և արբեցողք. որք կան և մնան 'ի նմին և ապականեն զանձինս պէսպէս գաղջութիւն ախտիւք։

Պահք ձշմարիտ զամ ցանկութիւնս 'ի բաց մերժէ զհոգւոյ և զմարմնոյ, և հեռանել յամ արգաբութիւն, և ժուժկալ լինել՝ որք զինուորին ընդդէմ հոգւոյ և մարմնոյ առ 'ի լուծումն մեղաց։ Եայլ կալ մնալ 'ի բարեպաշտութիւն ջանս 'ի Քս Յս 'ի տէր մեր. օրհնեալ փառք յաւիտեանս. ամէն։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԵՐԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՆՁԵՂՁ ԲԱՐԵԲԱՐ ԿԱՄԱՑՆ ԵՒ ՅՈՐԴՈՐՈՒՄՆ Ի ԼԱՒՆ ԵՒ ՅԱՌԱՒԵԼՆ ԸՍՏ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՆ Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ ՃԱՌԵԱԼ

Ժ.

ՇՆՈՐՀՍ ունիմ երախտեաց բարեբարութեն անսկիզբն և անփոփոխ մշտնջենաւոր տէրութեն սուրբ Երրորդութեն, որ աղբիւրն է ամ արարածոց երկնաւորաց և երկրաւորաց, և որ 'ի նոսա արարածք են։ Եւ արբուցանէ զամենեսեան առհասարակ բարեբար կամաք, ամենագիւտ սիրոյն խնամովք. զի ժառանգորդս արասցէ զբանաւորս մշտնջենաւոր երանութեցն։ Զի առողջ, սուրբ և անաղտ լիցուք 'ի պատուիրանացն պահպանութիս, և անբիծ երախտեաւք՝ մտերիմ սիրով և ուղղղ հաւատով լինել օթևան սուրբ՝ ամենասուրբ Երրորդութեն, և կալ 'ի մշակութե հանապազ վասն առաւել սիրոյ արարչին, և կենաց և փրկութե ընկերաց. աշակերտել բարեբար կամացն և հնազանդել, և ցուցանել զհանդէս լաւութե ըստ հոգևոր օրինացն յորդորմամբ յուսոյն։ Առեալ զկենդանի խրատուն զսերմին, և հատուցանել զարմտիս հարիւրաւորս. զի որպէս եղեալք 'ի նմանէ, նոյնպէս խնամեալք 'ի նորա շնորհացն։ Որպէս երկիր բարի զսերմն բարի ընկալեալ՝ բազմապատիկ առնէ զարդիւնս արմտեացն, նոյնպէս զսերմանեալն 'ի մեզ խրատս բազմապատիկս արասցուք արդիւնս իշխանական կամաք. զի և ընդրութիք են 'ի տեսողէն լաւաց և վատթարաց արմտեաց։

Զի որ զընկերն սիրէ ըստ այ սուրբ սիրոյն, արմտիք լինին սուրբ. է որ 'ի ձեռն շահաւոր օգտիցս, և է

որ 'ի ձեռն բարի խրատու՝ յորդորել 'ի հոգևոր շահս, և ատել զվնասակարն սիրով Հոգւոյն։ Զի «Սէր, ասէ, ոչ կերպարանի, ոչ ամբարտաւանի, ոչ ամբարհաւաճէ, ոչ նախանձի, ոչ խորհի զչար ընկերի, այլ զբարի. ամի տևէ, ամի համբերէ, և ոչ երբեք սէր 'ի չար փոխի 'ի բարւոյն»։ Եւ ամ առաքելոց և մարգարէից գլուխ սէր է՝ որ 'ի միասին և յաճ կապէ։ «Սիրեսցես զոր ածք, ասէ, յամ սրտէ. և զընկերն քո իբրև զանձն քո»։ Զի որ կայ 'ի սէրն, կայ յաճ։ Զի սիրել զընկերն՝ զաճ է սիրել։ Եւ բազում շահս անձինն ստանալ յայ և ընկերաց սիրողաց այ։ Իսկ որք անձնասէրքն են աւելի քան զարժանն, զընկերին շահս յինքեանս ձգեն. և անդ լինի զրկումն և զլացումն և ապիրատութիւն, ստուի, երդմնահարութիւք, զզուել հարկանել սպանանել։ Եւ վասն այսորիկ օրինադրեաց մարգարէիւք, և քարոզեաց առաքելովք, և խրատէ քահանայապետիւք և ժառանգաւորք եկեղեցւոյ, զի ողջախոհասցին յարդարութիւն և 'ի սրբութիւն և յիրաւունս. յուսով արքայութիւնն առնուլ ասա զառհաւատչեայ ազատութիւնն և անհոգութիւն մեծարանք 'ի գոհութիւն այ. զանձն և զտուն ազգք ազատել 'ի պատժոց և օրհնիլ 'ի ճոնէ. և 'ի հանդերձեալսն փառս և պսակս անեղծս պարծանք 'ի Քրիստոս։

Զ.յլ և զթագաւորս և զիշխանս և զդատաւորս 'ի խաղաղութիւն և 'ի շինութիւն աշխարհաց կարգեաց ածք. զի զամբարիշտս, զշունս, զգողս, զկախարդս և զամ անիրաւս պէսպէս տանջանք և մահուամբ զարհուրեցուսցեն. զի ամ չարագործք ըմբռնեալ 'ի յահէ արգելցին 'ի չարեաց։ Բայց է և 'ի նոսա անիրաւութիւնք նման նոցա և առաւել ևս, որք կաշառք և կամ այլ ևս չարեաք բազմացուցանեն զանօրէնութիւս համարձակեալ 'ի վնասս։ Եւ վասն այսորիկ բանան դրունք բարկութիւն սովոյ և սրոյ և գերութիւն և պէսպէս վտանգից մահուց. և յետ ասատեացս 'ի հրախառն խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց։

Իսկ իրաւախորհքն և արդարադատքն փրկութիւն և կենաց պատճառք լինին բազմաց, առողջութիւն և խաղաղութիւն և շինութիւն աստ, և անդ փառաք պսա-

կեալ 'ի գլուխ բազմականացն արդարոց։ Զի աղ-
բիւրք են յիրաւանց այ՝ ուստի կեանք բաշխին բա-
րեգործացն, և հարուածք և մահք անիրաւացն։
Եւ լոյս գիտութեան ածային գրոց յայտ առնեն զբա-
րեգործացն բարի հատուցումն, և անիրաւացն զհա-
րուածս բարկութեան։ Եւ յերկուցունց կողմանց յայտ-
նի լինին արարչին իրաւունք. զարդարսն փառաւորէ,
որ հոգևոր օրինօքն հաճոյացան տէրութեանն, և կա-
ցին 'ի ճշմարտութեան 'ի սրբութեան յամարդարութիս.
որք և անանց լուսո

«Լրջանի, ասէ տէրն, աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։ որք վասն աւետեսցն հոգւով կամաւ աղքատացան, ՝ի բաց ընկիցեալ զմարմնաւոր գիտդակ մեծութիւն՝ և հոգևոր յուսոյն զգեցան զնմանութեան մեծութիւն։ Սուրբ մտաք և մարմնով անկեղծաւոր հաւատով կատարիցին զկամն ամենեցուն սիրով. որպէս խնամատուն նաւապետաք ուղղելով զնաւ մարմնոյս ՝ի ծովածուփ աշխարհական ալեացս, թափեալ զծանր բեռինսն յաշխարհիս ծովու, և հոգւով թռուցեալ հասցեն ՝ի նաւահանգիստն խաղաղութեան։ Ա յասէս հոգւով աղքատացեալքն երանեալն, որ ընդ ամ՝ վասնզս աշխարհս անցանելով հոգւով և չէմարտութիւն անվնաս պահիցին զանձինս ՝ի չար ցանկութենէ, ՝ի փառասիրութենէ։ Ա՝ ձեռն պատրաստ ունելով զամ՝ ցանկութիւս, և զամենեքեանսքեզ զանց արարին վասն անՀաւ երանութեան՝ որ կայ պահի յուսացելոցն ՝ի Քրս։ որ վասն մեր աղքատացաւ ստուգապէս, որ տերն է փառաց։ Զի Հայեցեալք յելս գնացից կամաւոր աղքատութեան երախտաւորին՝ հասցեն յօթեևանս կենաց ՝ի գուռն փրկութեան յանփոփոխ երանութիւնն, որ լին է կենդանի անուշակ երանութեամբ։

«Լրջանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիրս։ Զաւետեսս եկեղեցւոյ ասէ երկիրք։ որ ամենաշահ կենաց հանգարտութիւնքն են վարք, աղաւնեալք յամենայնից և ՝ի խռովութենէ փարձանաց։ Յամ՝ գիտդակացն որք զինուորին՝ անշարժ մնալ միշտ։ Հեզութիւնն ցաւուցանել զամ՝ բարկութենէ և զմտաստակ շարժմունս՝ զմիբեան և զամենեցուն, որ ամբաստանաք լի է, ՝ի կրտամբանս, ՝ի տոյժս, ՝ի տուգանս, յանարգանս, յամենի և ՝ի պէսպէս տանջանս։ Իրաւամբք հեզութենն առաջնորդել յամ՝ արդարութիւն։ յամբնութենէ, ՝ի սրբութենէ, ՝ի սէր անշարժ, յուղիղ հաւատս։ Զնոր հոր հեզութիւնն բնակել յերկրի, և զուարթածաղիկ առամ՝ առաքինութիւնս անուշահոտ հեզութիւնն զարդարեալ, և յուսով ակն ունել մշանջենաւոր անփոփոխ անվախճան կենդանութեանն։

«Լրջանի, ասէ, սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ Որոց ընկալեալ են ՝ի նորէն ՝ի Հոգւոյն որ առ

ՈՒԾ. սէր բաղձալի, խնդիրս արտասուօք. անմեկնելի 'ի նմանէ լինել յայ սգաւորն, որ անձկայ շնորհօք տեսանել զանձառելիսն՝ որ սրբոցն տուաւ։ Ա՛յլ և զզջացեալսն է իմանալ սգաւորս, որք դառնան 'ի չարաչար վարուց ատոյգ խոստովանութիւն, և հանապազ արտասուօք խնդրեն զթողութիւն մեղաց յամենեցունց ՈՒՆԷՆ. զի կարասցեն հասանել յօթևանս կենացն՝ որ լին է անմահութիւնք, և զուարթաճաղիկ զուրախութիւնն ընդ Աշմարիտ սգաւորսն ժառանգէ զերանութիւնն՝ որ յաւիտենից միխիթարութիւն է։

«Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութիւն, զի նոքա յագեսցին»։ Որք հրաւիրանաւն կոչեցան 'ի հոգևոր հարսանիսն, զի վայելեսցեն զբարիսն. որ մեծաւ բաղձանօք ցանկան ընուլ արդարութիւն Աշակօքն։ Որպէս քաղցեալքն և ծարաւիքն ըստ համահամ քմացն խորտկաց և ըմպելեաց լցուցանեն ըզպէտս ցանկութիւն 'ի կերակուրս և յըմպելիս, այսպէս և փափաքողք ՈՒԾայնոցն վայելից՝ արժանաւոր կարգօք փութան հասանել 'ի բաղձալին և 'ի յոյժ ախորժելի Աշակու�՝ որ կայ միայ միշտ, որ երանութիւնն է զարդարեալ յարքայութիւնն արդարոց։ Որ միշտ վայելեն զանանուաղ և զանապառ բարիսն, որք աստէն ժողովեցին 'ի շտեմարանս անմահ կենացն։

«Երանի որք լան այժմ, զի նոքա ծիծաղեսցին»։ Որք զերծանել ցանկան յերկրաւոր 'ի զբօսանաց, 'ի յաղահութիւն, 'ի չար ցանկութեց. և Ջանան մնանել առ ՈՒԾ, Ջերմեռանդ արտասուօք խոշտանգեալ զանձնն և նեղեալ բազում նեղութիւնք. զի սուրբ և անբիծ և անարատ երախտեօք բարերարին հասցէ յուրախութիւնսն ՈՒՆ 'ի վայելսն անուշակս հանդըստեան սիրոյն սրբութիւն՝ ընուլ զբաղձանս անձկոյն որ առ ՈՒԾ, զոր արտասուօքն խնդրեր միշտ զերանութիւնսն զորդեգրութիւնն շնորհս, որ լին է անՀառ խնդութիւն 'ի փառս ՈՒԾութիւնն։

«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»։ Որ գործակցութիւն ողորմութեցն ՈՒՆ նմանեալ, այժ օգտութիւն առեալ յՈՒԾեղէն զօրութիւն անտի. զի ամենեցուն ողորմեսցին առաջնորդել, ուսուցանել, օգնել նեղելոց, լցուցանել զկարօտեալս 'ի պէտս հո-

գեաբոս և մարմնաւորս։ Զի ընկալցի զարիան յերկրի աստ զոզորմութեան հնորհս ի՝ ներել, և ի՝ Հանդերձեալսն զառատապարգև բարիսն որ լինի՝ ամ երանութեաբ, զոր պատրաստեաց ածն ողորմածացն։

«Դրանի ամենայն որ սուրբ են արտիւք, զի նոքա գնած տեսցեն։ Որ հնորհաբեր այ հաւատով և Հշմարտութեաբ, սրբութեաբ և արդարութեաբ զամ բիծս մարմնոյ և զմտաց սրբեալ զբաբ ցանկութեանց։ Եւ մաքուր խորհրդով և անարատ մարմնով հայել՝ի փառս ամն։ Իբրև ընդ հայելի տեսանել իմմանաբեաբն զիմանալի ածութեան լոյս։ Այպա եթէ ժանգով մեղացն ապտեղալ իցէ, բաբ ցանկութեաբն և բաբ խորհրդովքն և բաբ գործովքն, և ոչ սրբեալ զխորհուրդս և զզգայարանսն և նայի՝ի վեր՝ի Հառագայթս ածութեան որ՝ի Քան է արդարութեան արեգական, ոչ տեսանէ զլոյսն մեծ ամենասուրբ Երրորդութեան, որ յիմանալիսն ծագէ և լուսաւորէ զսուրբսն սրտիւ և գանարատսն անմահք։ Զի ժառանգեսցեն զերանութիւն կենացն անմահից, որ տայ զառատաբեալ տեսութիւնն՝ի Քա Հայր։

«Դրանի խաղաղարարաց, զի նոքա որդիք այ կոչեսցին։» Որ գործակից են Որդւոյն այ, որ արաբ խաղաղութիւն և Հաշտեցոյց զՀայր ընդ արարածս։ Զի որ Հրաժարեալ է՝ի բաբ ամբոխից և՝ի խռովութենէ և՝ի ցասմանէ և՝ի բաբ ցանկութենէ, և խաղաղաբեալ սիրով, այնպիսին ունի զՀին խաղաղութեան մտաւոր հոգւոյ՝ի Քա։ Զի որպէս Որդին այ որ եբարձ զխռովութեան որ յաղագս մեղացն պարտեալն էր առ մարդիկ, և աւետարանեաց զխաղաղութիւն, նոյնպէս, ասէ, լինել խաղաղարար, զի եղբարբ նորա լինցուք՝ նրմանեալ խաղաղարարին։ Զի թէ մեծաց իրաց խաղաղարար լինի և կամ փոքունց յաղագս այ և մարդկան փրկութեան, և բառնայ՝ի միջոյ զմիասակար թշնամութիւն հոգւոյ և մարմնոյ, Հաշտ և խաղաղակաղնին հանդիպի, և զանուն և զփառս Որդւոյն այ ժառանգէ հանդիսիւբ լաւութեան, սուրբ և անբիծ և անարատ խաղաղարար՝ի Քա։ որ ատ մեծարի և պատուի, և անդր բարձրանայ և փառաւորի խաղաղարարբ երանութիւնքբ՝ի Քա։

«Դրանի որ Հալածեալ իցեն վասն արդարութեան,

զի նոցա է արքայութիւն երկնից։ Զվկայիցն զհանդէս ցուցանէ բանս և զնմա առաքինութեաց. զի որ յնմէ օտար է, և մասն չունի ինչ ընդ երկրաւորս և պատճառս ինչ եկամուտ զբաղմանց, անյար 'ի ինքեանակար ցանկութիւս, այնոքիկ են որ 'ի չարէն հալածեալք և առ ոչ դիմագրաւեալք հաւատով վասն ճշմարտութեան աւետարանին քարոզութեան։ Որպէս և Առաքեալ ասէ՝ եթէ «Որ կամին ոչնչացութիւն կեալ 'ի քս Յս, 'ի հալածանս կացցեն. զի մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն 'ի չար անդր 'ի մոլորեցուցանելոյ։ Իսկ սուրբք հալածին 'ի չարէ 'ի բարիսն որ առ ոչ և յոյ առեալ. զի մի նմանեսցեն անառակ որդւոյն, խաբեալ 'ի դիւաց ելցեն 'ի հայրենի խնամոյն, վատնել զսրբութեան վարսն անառակութիւն։ Այլ դարձցին՝ նմանեալ 'ի հայրենի խնամսն՝ 'ի չարասիրաց հալածչաց 'ի դիւաց 'ի մարդկանէ, զի հաստցեն հալածանաքն 'ի խոստացեալ աւետիսն արքայութեանն անճառ երանութիւնքն պսակեալք 'ի փառս ամենաշնորհ Տեառն։

«Այրանի, ասէ, ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ և հայհոյեսցեն և ասասցեն զնմա բանս չարս զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս։ Զի 'ի ձեռն լաւութեան փառք և պատիւ ընծային յոյ հանդիսիւք նահատակեալ 'ի քս, որ զինուորին ընդդէմ հակառակ ճշմարտութեանն։ Այլ օգտակար է առ նմա մարտուցեալսն համբերութեամբ 'ի կամն նոյ, զի զաւետիս բարեացն ունիցին զարդիս և զհանդերձելոցն։

«Օ՜ի այսպէս, ասէ, առնէին սրբոցն՝ որք յառաջ քան զձեզն էին». որք զանուն և զոգիս ժառանգեցին համբերութիւն բազմաւ։ Ոմանք որպէս զերկաթ անվանգ, և կէսք իբրև զպարիսպ պղնձի ամուր. այլք որպէս զարծաթ զտեալ և սրբեալ որպէս 'ի հրոյ փորձութիւնն։ Իսկ այլք որպէս զոսկի պատուական 'ի սպաս, կամ որպէս զմարգարիտ գեղեցիկ, կամ որպէս ակունս մեծագնիս՝ որ 'ի փառս Թագաւորաց։ Սոյնպէս և սրբոց և համբերողաց որ զանազան փորձանաքս 'ի դժնդակացն կազմեցան, և եղեն վկայք ապարչին 'ի փառաւորութիւն անմահ Թագաւորին։

Զի որպէս զանազանք են հանդէպք իւրաքանչիւրոցն վկայից, խոստովանողաց և կուսանաց և պարկեշտ ամուսնացելոց, նոյնպէս և պարգևք ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն բաժանին և որոշին յամենեցունց ՅՆԷՆ, որ 'ի միտ առնու զամենեցուն ըզխորհուրդս զբանս և զգործս։ Զի որք ՃՇՄԱՐՏՈՒԹԵՔ և անարատ սրբութեք և անբիծ հաւատով նահատակին ընդդէմ չար ցանկութեանցն և ՅԱՄ ՓԱՍԱԿԱՐԱՑ յաղթող լինեալ՝ զմարտիրոսացն առնուն զպսակն. զի ընուն զբանն ՅՈՆ. «Առյէ, ասէ, զխաչ իւր հանապազ, և եկեսցէ զհետ իմ»։ Զի խաչ մարմնական ախտից և դժնդակ վարուց մահ գործէ. որպէս և սուրբքն զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն և ցանկութեքն հանդերձ, յԱռաքելոյ վկայեալ զայս։ Զի որպէս նոցա պէսպէս տանջանքն, սոյնպէս և սոցա զանազան փորձանք. զի յԱՄ մարտուցելոցն չարաչար տաժանմանցն ոչ յաղթահարի 'ի հոգևոր պատերազմին որպէս քաջամարտիկ. այլ զյաղթութեն զՀՈՐՀՆ ԵՐԵԼԻ ցուցեալ 'ի փառս ՅԱՅ։

Բայց է և 'ի նոսա առաւելութեն կամ պակասութեն առաքինութեանն, ըստ նմին և վարձն, եպիսկոպոսաց և քահանայից և սարկաւագաց և դպրաց, որք կուսութեք նահատակին։ Այլ և միանձունք և սուրբ ամուսնացեալք զանազանեալք 'ի վարս. որք ստուգապէս ցուցանեն յաւուրն յետնում յարութեն որ 'ի մեռելոց՝ զիւրաքանչիւրոցն զվարուցն պտուղս։ Այլ և որք զՃՇՄԱՐՏՈՒԹԻՆ անիրաւութեամբ ունին, կերպարանեալ պատՃառանօք զարդարութեն։ Այլև անսուրբք և կաշառաւուք և զօշաքաղք և մարդահաճոյք և որ այլ ևս են արատք և բիծք զորս ծածկել ջանան։ «Զի ոչ ինչ է ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, ասէ տէրն, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի»։ Զի ստոյգ երևին սուրբք և արդարք. որք ՃՇՄԱՐԻՏ հանդիսիւքն վշտացան և նախատանօք և թշնամանօք և բազում նեղութեքք տանջեալ, և 'ի ՃՇՄԱՐՏՈՒԹԷՆ ոչ վրիպեալ։ Որք և աստ ունին զառ հաւատչեայ յուսոյն զերանութեան. զի վիշտքն անցանեն, բայց աւետիք երանութեցն կան մնան միշտ։ Զի աստ առին զազատութեն, և անդ ժառանգեսցեն զարքայութեն։

Զի՞մ հանդիսիւք լաւութեան զերանութեանցն զգրաւականն ընկալան բարի վարուքն, որ պատՃառ է փրկութեան յերևելիս և յաներևոյթս, 'ի պատմելիս և յանպատմելիս։ Բանն Որդւոյ[1] առ Հայր ասէ. «Որպէս դու և ես մի եմք, այսպէս հաւատացեալք 'ի մեզ իցեն»։ Զի զիւրն տայ զորդեգրութեան շնորհ 'ի հօրէ, և ժառանգորդս իւր առնէ զսուրբս իւր։

Զի ետ մեզ լոյս աչաց և խրատ մտաց, զի արթունք և զուարթունք եղիցուք. կենաց լուսոյն առաջնորդեալ և հոգևորական խրատուքն յամենայն գործս արդարութեան, և իմանալի լուսոյն սուրբ և արդար կալ մնալ։ Զի հոգևոր սուրբ գրոց խրատք գիտութեան ՃշմարիտՃարուցն տան, և 'ի հոգևոր կարգս յորդորեն։ Զի զոր ինչ խորհի ոք զաստիս 'ի հիւթանութեան իրաս, զնոյն և շարժմունս մարմնաւորս յիշատակօք ունի զաղտեղութեանն, որ պղտորէ զմիտս և զզգայարանս մարմնոյ։ Իսկ եթէ զհոգևորսն խորհի 'ի սրբութեան 'ի սրբոյ Հոգւոյն ազդեցութենէ, և ըզհոգևոր վարուցն խորհի և ջանայ 'ի կատարումն առաքինութեան, և[2] վայելէ 'ի շնորհս Հոգւոյն զոր անասելի է և անլսելի. վասն զի հոգևոր է և մտաւոր, և նա միայն գիտէ՝ որում ազդին։

Եւ որ գիտաց մերձենալ 'ի շնորհս յիշատակաւ սրբութեան և անմեկնելի լինել յանուշութեան վայելիցն, և 'ի նորա գեղն ցանկ պէնուլ, լուսաւորեալ խորհրդովք մերժել զչարին յարձակումն մթագին խորհրդոցն։ Կանխել յաղօթս 'ի խնդրուածս ջերմեռանդ արտասուօք և պինդ պահովք ամրացեալ, ունել ըզդրունս ողորմութեան։ Եւ հանցէ և բարձրացուսցէ 'ի վերոյ քան զՃամ երկրաւորացս շարժմունս և ազդմունս, և առնուլ զհաստատութիւն հոգևոր օգտութեանցն որ ըստ հաՃոյից Այ։ Յորդորի ըստ Աւաքելոյ բանի 'ի վեր նայել, զվերինսն խորհել՝ ուր Քրիստոս ընդ աջմէ Հօր. «Զի մեռարուք, ասէ, զմեղացն մահ, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոս յԱծ Հայր»։ Զի զՃամ զհոգս երկրաւորս 'ի բաց ընկեցեալ որ խափանէ հոգևոր և երկնային կոչմանն. որպէս մշակք առ

[1] Միւսն Որդի։ [2] Միւսն նա.. ցանկ պէնու։

գործն և զինուորը առ պատերազմ զինեալք, այսպէս և մեզ ի պատերազմ առաքինութեան հանդիսանալ միշտ և արիանալ. զի կարասցուք հարիանել զդէմսդս չարեացն, զանկութիւն և զամբարտաւանութիւն և զագահութիւն, և որ ընդ նորօք են արկածք փնասուց յազգմանէ չարին։ Զի նմանեալք հաւատարիմ ծառային՝ մնցուք յուրախութիւն տեառն ընդունել զերանութիւնն ի Քրս, որ կեանքն է հաւատացելոց։

Օ՜ի ոչ լուսով նորա զնայ յայրատն և ստահէին, զի ոչ գնայ ընդ Հանապարհն արդարոց որ տանի ի կեանսն. զի ոչ առնու ի սիրտ զիարատս իմաստնոց և զիծային գլոց. այլ որպէս թակարդ զհոգոմն անցուցանէ զիարատն։ Եւ յաղագս այսորիկ ասէ տէրն ոչ տալ զսրբութիւն շանց, և արկանէ զմարգարիտն առաջի խոզից։ «Զի մարդ բարի, ասէ, ի բարի գանձոյ սրտի հանէ զբարին. և մարդ չար զչարն ի վէր բերէ»։ Զի անձնիշխանական կամքն շարժէ յոր և կամի, եթէ ի լաւն և եթէ ի վատթարն։ Եւ վասն այսորիկ ասէ Աստուածաբան։ «Յառնէ ամբարշտէ յետ երից խրատուց հաւաժարեա»։ Եւ Դաւիթն ոչ տայ թոյլ մեղաւորին պատմել զօրէնսն. որ ատեաց զիարատս և յետս ընկեաց զիրաւունսն որ յայր եդան։ Յանդիմանէ խստագոյնս՝ որ զօրէնսն ասէն և ոչ առնեն, և լսեն և քամահեն։ Զի ամ զիրք ի խրատ են և յանզիմանութիւն, որ քարոզեն զիրիւնքն որք հաւատով ամբարեն յանձինս։ Զի որպէս ի մարտուցելոցն ի պատերազմունս գժուարինս յաղթեալք խնդան ոչ սակաւուք, և եւս առաւել մարտի յաղթութիւնք հոգևորացն է խնդումն։

Օ՜ի և մեծատունք և աղքատք յանձնիշխան կամսն ունին առ բարին շարժումն և առ չարն։ Զի աղքատն լի է փառօք մեծացեալ, որ անմեղութիւն և ամ առաքինութիւն է յարդարեալ։ Նոյնպէս և մեծատունքն և ամբիծքն և անարատքն որք զտաւապեալ լցուցանեն. զի զանմեղս աղքատութիւնն որպէս բոլ զոսկի սրբէ ի յաղտոյ, և ի պատիւ փառացն ոչ բարձրացուցանէ երկնից մեծութիւն։ Եւ յսպէս համ բերութիւնք և ժուժկալութիւնք որ անարտուն ունին զաղքատութիւն՝ մեծանան։ Նոյնպէս մեծատունքն որ

գթով խնամեն և դարմանեն զկարօտեալսն, նոքա զանմահութիւն և զփառս և զպատիւ ժառանգեն, որ անանցանելին է։ Ապա եթէ զաղքատութիւնն ոք անիրաւութիւն ունի, և անխտիր յանառակութի՛, 'ի շընութի՛, 'ի գողութի՛, 'ի չարութի՛, 'ի ստութի՛, յամենայն գործս չարս, նոքա ընկալցին զպատիժս յերկրի, և անդ զանզերծ պատուհասն։ Եւ մեծատունք որ արգելուն զկարօտեալսն զպէտս, և 'ի շռայլութի՛ և յարբեցութի՛ կեան, եկեսցէ, ասէ նոքն, մա՞հ յորում ոչ գիտեն, և ընդ մէջն կորիցէ 'ի կենաց, և զմանն նորա ընդ անհաւատս դիցէ յանչէջ հուր գեհենին. զի էր յանառակութի՛, և զտուեալն յայ մեծութի՛՝ ոչ իրաւապէս բաշխեաց յաղքատս։ Զի էր կաքանչիւրոցն են իրաւունք, ըստ բարեացն գործոց միանգամայն և անիրաւաց՝ 'ի դատաւորէն։

Այնպէս և առողջութիւն ունի զշահս և զվնասս. զի առողջն մարմնով որ կայցէ 'ի հոգևոր առողջութենն, ժրացեալ 'ի բարեպաշտութի՛ ջանս, ընդունի զաշխատութենն զհատուցումն զհանգիստն անանց. ապա եթէ ծուլութի՛ 'ի վնասս[1], զանհանգիստն ընդունի զպատիժս անդ։ Այնպէս և հիւանդն մարմնով և առողջ հոգւով կայցէ 'ի համբերութի՛ 'ի գոհութի՛ այ, և մաքրեալ յամենայն սխալանաց. և յուսացեալ յա՛ծ և նմա հաւատայ զշահ անձին՝ ըզմահ և զկեանս, ընդունի զօրհնութի՛ յայ և զկատարեալ առողջութի՛. ուստի մերժեալ են ցաւք և տրտմութի՛ք և հեծութի՛ք. ապա եթէ ոչ, և սա ընդունի ըստ արժանեացն զհատուցումն։

Այնպէս և իշխանքն որ ունին զվերակացութի՛ աշխարհի, երկուցունց հոգասցի. զա՛ծ ունել 'ի մտի և ոչ թողուլ 'ի մտաց զկամն նորա, և անձինն սրբութի՛ և ամբծութի՛ և զամենայն արդարութի՛ և զուղղութի՛՝ և զիրաւունս առ ամենեսեան ցուցանել։ Եւ որք ընդ իշխանութի՛ են, 'ի մտերմութի՛ կեալ. «Զի ոչ ուստեք է, ասէ, իշխանութի՛ բայ յայ. և որք են՝ յայ են»։ Եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ յարդար դատաւորէն, իշխանք և որք ընդ իշխանու-

[1] Միւսն 'ի վնաս։ Ձեռագիրն։

թիւ են. զի ամենեցունց մի է ՝որ արդար՝ որ ըստ արժանեացն պատժէ և փառաւորէ յորժամ գայ փառօք Հօր 'ի դատել զերկիր։ Զի որ արդարքն են և լեկին, անդ բազմապատիկ ընդունին զՀատուցումն բարեաց յարդար դատաւորէն։ Իսկ որ մեղաւորքն են և լեկին, զպարտիս մեղաց իւրեանց հատուցանեն. որ արհամարհեցին զբանն ՝այ և ոչ ապաշխարեցին. զի ամենայնի լինիցի հատուցումն խորհրդոց և բանից և գործոց երկրաւորացս։ Զի զօրաւորաց և տկարաց և ամենեցուն իսկ կայ յանդիման լինել առաջի բեմին Քրիստոսի. որոց բարիս գործեալ իցէ, ինդրեն [1] ըզկեանսն յաւիտենից. իսկ որ ապստամբքն են 'ի Ճըշմարտութենէ և գործեցին զչար, անվախճան տանջանքն կան մնան։

Այնպէս վերակացութիւնք և որք ընդ վերակացութիւն են՝ ունին զշահս և զվնասս։ Զի որ զվերակացութիւն ունի, և զինքն ՝այ հրամանացն տուեալ է 'ի հնազանդութիւն յերեւելիս և յանտեսանելիս, սուրբ և անարատս, և առաջնորդ զՃշ ունել 'ի խորհուրդս միամիտս, և զինքն արբանեակ ՝ոն կազմեաց, այնպիսիքն առաջնորդեալ յամենայն արդարութիւնս, զանվախճան վերակացութիւն առնուն ընդ սերովբէս և ընդ քերովբէս և ընդ երկնային զինուորութիւնն սպասաւորս ՝այ։ Զի առաքեալք և մարգարէք և քահանայք սուրբք առին իշխանութիւն 'ի ՝ոնէ, և եղեն Ճշմարտութեան վերակացուք։ Եւ զոր կապեցին յերկրի, եղիցին կապեալ յերկինս. և զոր արձակեցին յերկրի, եղիցին արձակեալ յերկինս։ Այնպէս և ամենայն սրբոց տուան շնորհքս այս 'ի փրկչէն։

Իսկ եթէ առեալ զվերակացութիւն՝ յղփասցի և ծուլասցի հպարտացեալ իշխանական Ճոխութիւնն, և ըստ կամաց իւրոց վարէ զառաջնորդութիւնն և ոչ 'ի կամն ՝այ, և երկբայեսցի յուսոյն որ 'ի Քս, անկցի 'ի փորձանս, և առանց բժշկութիւն է նորա բեկումն։ Այսպէս եղև գ ժնդակ բարուք սատանայ, և խոտորեալ 'ի ՝ոնէ անկաւ 'ի բարձրութենէն և 'ի լուսաւոր կարգացն, և առանց բժշկութիւն է բեկումն նորա։ Տե-

[1] Մերն ՀԴՐ։

սանէի, ասէ՝ ոչն, զսատանայ անկեալ յերկնից զառաջնորդն դիւաց հանդերձ իւր հաւանելովքն, և եղև կոխան սրբոց և առաքինեաց։ Որք առին հրաման 'ի նոսէ լուծանել զնորա թոյնսն որպէս օձից և քարբից, և ոչ կարեն մեղանչել։ Իսկ հաւանեալքն նորա կամացն և ապստամբեալք 'ի ճշմարտութենէն ըզնոյն պատիժս կրեսցեն։ Զի 'ի ձեռն իշխանաց արդարոց և առաջնորդաց սրբոց է շինութիւն աշխարհի և եկեղեցւոյ այ հաստատութիւն 'ի բարի կամն. զի նոքօք զօրանայ իրաւունք յերկրի և մեծարի սրբութիւն։ Որք և ընդունին զհատուցումն բարի ըստ բարեաց գործոց. համանգամայն և չարեացն որք ոչ կամեցան գնալ յօրէնս նոսա։ Եւ իմաստութիւն 'ի գիմացն երևի, որք ըստ այ վարին և որք ոչ ըստ այ։ Զի որ իմաստութիւնն տիրէ, և խորհի յօրէնս նոսա 'ի տուէ և 'ի գիշերի, և ամենեցուն լինի առիթ փրկութիւն, այն է վերին իմաստութիւն սուրբ և խաղաղարար, լի բարեօք և պտղովք արդարութիւն։

Իսկ խորամանկն նմանեալ է բանսարկուին լի անիրաւութիւն և դժնդակութիւն և նախանձու շոգմոգք, չարախօսք, ճծատեացք, գտիչ են և նորոգիչ չարեաց. որք տայցեն վրէժս 'ի հուր գեհենին՝ որ պատրաստեալ է սատանայի և որսացելոցն 'ի նմանէ 'ի նորա կամն։ Զի դիւրագոյն է որք ընդ իշխանութեն են՝ կատարել զառաքինութիւն, քան կամակար իշխանութիւնն. «Զի որում շատն տուաւ, ասէ, շատ խնդրեսցի»։ Զի որք կարգաւորք են 'ի վարս իւրեանց 'ի հնազանդութիւն արքանեկութենն վկայութիւն սուրբ գրոց, սոքա երանեսցին։ Զի անդանդաղ վաստակօք 'ի պէտս կարօտելոցն բաւական լիցին միշտ. և 'ի մտերմութիւն կացեալ և յանարատ սրբութիւն՝ ոչ իւիք գրգեալ 'ի հակառակացն որք ընդդէմ են բարեացն գործոց. և ազատեալք 'ի ծառայութիւն մեղաց, և արքանեակք սրբութիւն և արդարութեան վարուցն միշտ լիեալ, ասա զմիշատակ գովութիւն թողցեն, և անդ զփառս և ըզպարծանսն[1] յաւիտենականս առցեն, որ ոչ անցանեն։ Զի կամք է բարերարին ամենեցուն լինել բարե-

1 Մի՛ան զպարծանսն։

բար և ժառանգորդ անսպառ բարեացն՝ որ յուսա-
ցեալցն է։

Զքեզ՝ ո՜ՀԾ ամենայն բարեաց՝ որ արբուցանէ
զՀաւատացեալս ըստ իւրաքանչիւր բաբեաց ցանկու-
թեան սուրբ Հոգւոյն։ Եւ կեանք է կենդանաբար և
մշանջենաւոր, որ զկենդանութիւն տայ ամենայն ա-
բարածոյ իւրոց։ Եւ բարեբար է առ ամենեսեան, որ
պարգևէր իւրովք Հոգւոյն զբաւութիւն օրք գառնան
'ի չարէն։ Եւ այս է, որ լուսաւոր առնէ զամենայն
մարդ որ կամի 'ի խաւարային մեզայն զերծանել 'ի
սուրբ լոյսն։ Եւ Ո՜ՀմարտութԻն մեծ է, որք նախա-
շաւիղ Ճանապարհորդեն սրբութիւն 'ի Հնմարիտ բա-
րիսն։ Եւ 'ի նմանէ ուժեր 'ի բացէ լինել չիք, ոչ վերբ-
նոց և ոչ ներքնոց։ զի զամենայն արարածս ընդ ինն-
քեանսն ունի ամենակարող զօրութիւն իւրովք զերկ-
նայինսն և զերկրայինս։ Եւ գիտէ զԽորհուրդս մարդ-
կան և 'ի միտ առնու զամենայն գործս նոցա և ըստ
արժանեացն Հատուցանէ։ «Զի ես եմ, ասէ, ՈՏ։
և չիք այլ։ որ սպանանեմ զմեռաւորս, և կեցու-
ցանեմ զարդարսս»։ և ոչ ոք է որ Հանէ 'ի նմանէ զա-
բարածս իւր։

Այ՜ է զոր խրատէ վտանգաւոր պատուհասիւք, որ
ապիրատ վարուք ընթանան։ և է զոր Հոգւոյն յորդ-
որեալ 'ի լուսն և յառաւելս փառաց ժառանգութիւն,
որք Հաւատով և երկիւղիւ և սուրբ սիրով մերձե-
նան առ ՈՏՈՒԹԻՆ։ և սրբեալ 'ի մեղաց Հոգւոյն ե-
բախտեացն նորա ծանիցուք զպարգևատուն բարեաց։
Կոչեաց զՀաւատացեալս իւր ժողովուրդ։ զի խրնդ-
բեսցուք զողորմութիւն 'ի նմանէ և արասցուք զկամն
նորա։ Կոչեաց զմեզ ծառայս։ զի մտերիմ և սուրբ
սիրով և սուրբ վարուք կատարեսցուք զկամն նորա։
Կոչեաց զմեզ և որդիս։ զի և 'ի Հայրենական խնամն
վայելեցեմք և յորդեգրութիւն մի արտաքս եկցուք
անսուրբ վարուք։ Զի սուրբ է տէր և 'ի սուրբս բնա-
կեալ է։ զի եղբարս իւր անուանեսցէ զսուրբս։ ասէ։
«Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, 'ի մէջ եկեղե-
ցեաց օրհնեցից զքեզ, Հայր»։ Եւ գարձեալ ասէ։
«Հոգժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս։
Զի եկն Արքինայ փրկել զազգս մարդկան, և ուրախ

արար զՀաւատացեալս իւր. զի նովաւ եղեալք և նովաւ փրկեցաք, և առ նա երթիցուք՝ որ Հրաւիրեացն զմեզ և կոչեաց յիւր արքայութիւն և 'ի փառսն, յանեղծ և յանվախճան և յանպատում կեանսն. զոմանս ինքեամբ և զոմանս 'ի ձեռս առաքելոց և մարգարէից և Հոգևոր վարդապետաց. զի զամենեցուն կամի զկեալն և ժառանգորդս լինել կենացն անվախճանից 'ի փառս ամենասուրբ Երրորդութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՆՈՐԻՆ ՍԻՐՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՍՆ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՈՐ ՀԱՆԴԻՍԻՒՔ ԼԱՒՈՒԹԵԱՆ ՊՍԱԿԵԱԼ ԵՐԱՆԻՆ

ԺԱ.

Ա՛ՄԵՆԱՅՆ արուեստից լաւութիւն և քաջութիւն և առաքինութիւն սուրբ Երրորդութիւն է, որ ընդհանրաբար յորդորէ. վասն զի նա է տուիչ և յաջողիչ երկնաւորաց և երկրաւորաց. և որ զմտերիմ հաւատացեալս և զսուրբս և զսիրելիս իւր աշակերտեաց։ Եւ զոր ընկալան զարուեստս լուսաւոր կարգացն, և վառեցան որպէս զՀառագայթս լուսոյ 'ի մէջ աշխարհս. զի ասէ նոցն. «Դուք լոյս աշխարհի էք, և լուսաւորէ լոյս ձեր զմարդիկ. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինսն է»։ Եւ Առաքեալ իբրև լուսաւորս ասէ շրջելլ յաշխարհի, զանազն կենաց ունել 'ի զգուշութիւն անձանց և 'ի շահ օգտի բազմաց։ Որ նոքաքն սփռեաց զՀառագայթս բանին կենաց ճշմարտութիւն ընդ ամենայն տիւղերս, և կոչեաց զՀաւատացեալս 'ի հաղորդութիւն բարեբար կամացն իւրոց 'ի կենդանի փառն անեղծութեան. զի ժառանգաւոր լինիցին արքայութեանն արքային և աւետեաց ուրախութեան անճառ բարեացն։

Ա՛յսպիսի յուսով հաճոյացան սուրբքն, և կամաք արարին զամենայն դժնդակութիւս յոգդմանէ չարին և զշարժմունս մտաց և մարմնոյ խափանեցին շնորհաբար Քրիստոս. անարատ սրբութիւն, անդադար աղօթիւք և ջերմեռանդն արտասուօք, կատարեալ ժուժկալութիւն պահպանք. սանձել զագահութիւն և զորկորսութիւն, զկիսութիւն և զանառակութիւն զստահակութիւն 'ի չար անդր։ Ունել զգրունս ողորմութիւն միշատակաւ սիրոյն Քրիստոս. յորդորելք 'ի հանդէս բարեաց, և արժանի եղեալ ազատութիւն ընդարձակաց և պարգևաց հո-

գ.ոյն սրբոյ վկայութիւն հանդիսիցն լաւութիւն, սուրբ սի-
բով, մտերիմ հաւատով 'ի նեղութիւնն և յանդորրու ։
Ընդ բոլոր և անբիծ ունել զմիտս և զզգայութիւս ամե-
նայն ՀՇմարտութիւն ։ Մի իւիք ունել խարդախութիւն
և կեղծաւոր խորհուրդս, անհաւատութիւն և անսրբ-
բութիւն վարս, որ են պատճառք կորստեան ։ Այլ ըզ-
լուսաւոր զսրբութիւն միշտ յանձինս ունել ամբիծ ե-
բախտեաք սիրոյն սրբութիւն . ծաղկեալք առաքինա-
սէր վարուք և պսակեալք յաւիտենական յուսոյն 'ի
գովեստ փառացն ՈՅ ։ Զի հրով Հոգւոյն սրբոյ յան-
արատ սրբութիւնն վերաբերեալ՝ օթևանք ամենա-
սուրբ երրորդութիւն լինին յերկրի ։ Զի ամենայն հան-
դիսիցն և առաքինութիւնցն զարդ սրբութիւն է յե-
րևելիս և յաներևոյթս հոգւով և մարմնով ։ Եւ ար-
դարութիւն ամենայն և քաջութիւն թագ և պսակ պար-
ծանաց սրբութիւնն է միշտ ։ Եւ ամենայն կարգաց
երկնաւորաց և երկրաւորաց փառք և պատիւ և մե-
ծարանք սրբութիւն է, որ ընտանեցուցանէ քեզ ՈՅ
և ամենայն երկնային զօրութիւնցն ։ ՊատմուՀան լու-
սոյ և արմատ բարեաց սրբութիւն է . և որ ՀՇմար-
տեալ և միաբանեալ են 'ի գովեստ փառացն ՈՅ՝ ան-
մարմնոցն դասք, և լուսաւոր վարուք հաստատեալ
կան 'ի սրբութիւն . վասն այնորիկ են ամենասուրբ տե-
ր.ութիւն սպասաւորք ։

Սոյնպէս հրաման առին առաքեալքն զսուրբսն
կարգել 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ ՈՅ . զի հաղորդ
լիցի հրեշտակայ՝ սպասաւոր քեզ պատարագին ։ Զի
որպէս հոգի 'ի մարմնին յարմարի և ամէն զամենայն
հասակի, սոյնպէս մտաւոր հոգին զամենայնն քննէ
և որոշէ զլաւն 'ի վատթարէն ։ Սոյնպէս են և հա-
ւատք ՀՇմարիտ ՈՅծգիտութիւն . որ ամէն զամենայն ա-
ռաքինութիւնցն որ 'ի քեզ, և լինի կատարումն հասա-
կի արդարութիւնն հաւանութիւն հաւասարել անդա-
մոցն 'ի միաբանութիւն հաճոյիցն ՈՅ ։ Զի ամենայն լու-
սաւոր վարք հաւատովք բովանդակին յերևելիս և
յաներևոյթս . զի լուսաւորեալք 'ի գիտութիւն ՀՇմ-
մարտութիւն՝ զօրասցի 'ի հանդէս բարեպաշտութիւնցն
որ 'ի քեզ . զի ամենայնի քեզ եղև կատարումն՝ եթէ
յերկինս և եթէ յերկրի, ասէ Առաքեալ . զի զանե-

րևոյթան յերևելիս ցուցանեն հաւատք, և զերևելիս յաներևոյթան 'ի կամս ետն։

Զանձ անկապուտ են հաւատք, որք զբարին 'ի մեզ ամբարեն. և 'ի ձեռն շնորհացն յայտնեաց հաւատովք զպարգևս փրկութեան և կենացն անմահից, զի զամենայն երանութեան յուսով վայելեսցուք. զի իբրև առաջի աչաց ունի զուարթաճաղիկ զերանութեան յուսով. զի մի հեղգասցուք 'ի հանդիսից որ առաջնորդեն մեզ յանանց բարին՝ որ պատրաստեալ է սրբոցն։ Զի նախ սէրն նուաւ լցեալ և զարդարեալ Ճառագայթիւք յիշատակաւ սրբութեան և ամենայն անդամոցն և մտացն առաջնորդէ յարդարութեան հաւատովք յամենասուրբ յերրորդութեան, և 'ի կամն նորա սիրով հաստատի։ Զի սիրտ սուրբ տաճար է Հոգւոյն սրբոյ. և սէր սուրբ ունել՝ բնակարան քոի, և 'ի նմա հանգուցեալ են ճծեղէն կամք։ «Զի որ կայ 'ի սէրն իմ և պահեսցէ զբանս իմ, ասէ տէրն, ես և Հայր իմ եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք»։ Զի սիրով բարերարութեանն յանձառ բարին վայելեցուցանէ։ Եւ ո՞րք են որ զբան նորա պահեն։ Որք սուրբ սրտիւ և անարատ յամենայն ինաստուց մեան անբիծք։ Զի որ սիրեն զնա, սիրեսցին 'ի նմանէ. և որք խնդրեն զնա, լինի պարգևատու։ Իսկ որք ոչ պահեսցեն զնորա զբանն, ասէ, ինքնին բանն զոր խօսեցայ ընդ ձեզ, նա դատի զձեզ յաւուրն յետնում։

Իսկ որ զբանն նորա պահէ, խլէ 'ի սրտէ զդըժընդակ խորհուրդս մոաց. զանհաւատութեան, զերկմտութիւն, զչարութիւն, զնախանձ, զաղտեղի ցանկութիւնս հանդերձ ամենայն ինասակարօքն, և 'ի ներքս բերեալ զբարեխորհրդութեան սուրբ՝ որ լին է բարեօք 'ի քոա։ Զի ազատեալք 'ի բծից զգայարանքն՝ կատարեսցեն զարդարուեիս, և արթուն կայցէ միտքն զգայութիւնքն 'ի վերայ շահից և կենարար գիւտից։ Եւ մի 'ի սաստկանալ պատերազմին լքանել և լուծանել զմարտն, այլ Ճշմարիտ համբերութիւն զդէմ ունել. և երկայնամտեալ յուսով և զօրացեալ 'ի քոի շնորհացն՝ յաղթեսցէ մարտին, և հասցէ 'ի նաւահանգիստն քոի։ Շինչուցանել զազգմունս չարին և

զշարժմունս բարուց ցանկութեան։ Եւ զյաղթութեան զնորհս ընկալեալ և զգովութեան 'ի վերնոց և 'ի ներքնոց, պսակեսցի փառօք և պարծանօք աւետեաց փրկութեան կենացն։ Զի որ կայցէ յայն սէրն որ 'ի Քրիստոս, որ փրկեացն զարարածս և եբարձ զթշնամութեան 'ի միջոյ, նոյն է բնակիչ։ Եղիցուք նմանողք նորա մեծութեան, և շահեսցուք զբարիս և զեղբարս, և փոխանակեսցուք զբարին մեր առ նոցա կարիսն, և ըզկեանս մեր ընդ մահուն նոցա. և լինիցիմք ժառանգաւորք նորա տէրութեան, և բնակարան կենդանի կամաց նորա, և հաղորդս սքանչելի և սուրբ սիրոյ նորա, և կցորդ փառաւորեալ փառաց նորա։

Սէր սուրբ մայր է առողջութեան, անարատութեան, անբծութեան. որ խնամէ և յորդորէ յառաքինութիւն և յարդարէ յամենայն բարեգործութիւնս։ Սէր աղբիւր է ամենայն բարեաց, որ արբուցանէ զսուրբ անձինս. և դրաւական ամենայն երանութեանցն, և մեծութեան պարգևացն այ բաշխող։ Սէր բղխուն երախտեաց Քրիստի, և վայելեցուցիչ յանպատում շնորհս նորա. լուծիչ խռովութեան և տուիչ խաղաղութեան. լուսաւորիչ մտաց և անդամոց։ Սէր սուրբ հոգւոյ և մարմնոյ անեղծ ստացուածն է, որք ունին զնա միշտ. և կենդանի շնորհք 'ի Քրիստոս ամենաշահ երանութիւնն յարդարեալ 'ի գովեստ փառացն այ։ Սէր աւետեօք կենդանի յուսոյն սիրափիչ է նեղութեան և վշտաց, և լուծիչ ամենայն դժնդակութեանց 'ի վերայ եկելոց՝ որ զինուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից։ Սէր սուրբ երախտեօքն հրեշտակ է խաղաղարար, որ ըզցասումն մերժէ և զխռովութիւն լուծանէ և զնախանձ արտաքս մղէ և ցածուցանէ զչար։ Սէր սուրբ այգի վայելուչ, որ խաղողով և գինեաւ զուարթացուցանէ զսիրտն և զզգայարանսն 'ի տրտմականացն եկամտից, և ուրախ առնէ 'ի կամս նոյն։ Սէր սուրբ ձիթենի պտղալից է 'ի սրտի բարեխորհին, մզելով զձէթ 'ի լուսաւորութիւն իմանալեաց և յօծումն, և երևելի անդամոցն զուարթութիւն։ Սէր սուրբ հոգևոր կարգաց յարդարիչ է և մարմնաւոր վարուց յանձանձիչ. որ 'ի միասին կապէ, և ոչ տայ բաժանել և քայքայել զհասարակաց բարին։ Սէր սուրբ բանալի է

գրանն կենաց, որ զկենանն բաշխէ. և անբեւոյթ Հոգւոյն այ գանձուցն բաշխող 'ի սուրբ անձինս, և զմտադակ վարուց խափանիչ և ընդդիմամարտ մեզաց։

Օ ի մամ արուեստաբ առաքինութեան սիրով յարգաբին, սրբութեան, արդարութեան. և նոսաւ ցուցանն զգհանդէս լաւութեան իւրեանց, որ է վարիչ չարի և յաղագրիչ բարւոյ, զօրավիգն ածասրաց և կործանիչ խորամանկաց և մեղասիրաց։ Եւ խառնեալ սուրբ սերն ընդ հաւատոց և ընդ յուսոյ՝ հանդիսանայ 'ի բարեպաշտութեան վարս, և միմեանց խաղաղութիւն յայտնի առնեն զլուսաւոր կարգս։ Զի պատշաւաւոր առաքինութիւքն լուստու թագաւորն պակեսցին յանուշակ յերկնաւոր Հօրն խնամն, և վայելեսցեն յանվախնէան և յանպատուհմ բարութիւս նորա։ Զի որ ունի զնանան սիրոյն սրբութեան առ ամենեան հեռաւորս և մերձաւորս, առ հոգիս և մարմինս ամ ՃՀմարտութիւն, երանութիւնքն սուրբ սիրոյն, յամենասուրբ Երրորդութենէն օրհնեալ պակին և մեծարին, և մշանջենաւոր խնդութիւնքն վայելեն յանվախնէան և յանհամեմատ բարութիւնն։

Օ ի և հաստատութեան ուղեղ հաւատոց բովանդակեալ է սուրբ սիրոյն և յուսոյն անսասանելի կալ։ Զի Հնորհաւ սուրբ Հոգւոյն՝ այնոքիւք միաւորելոցն պարիսպ ամուր ապաստանի ամենայն առաքինութիւնքն շրջապատեալ է։ Որ ոչ ոք վստահացի առնուլ զամուրն, զի պահեսցի 'ի զգուշութեան հաւատոյն արքնութիւն, սուրբ և յիշատակաւք յուսոյն անդրդուելի միտ. գոհանալով և օրհնելով զտէր անյագ բաղձանաւք։ հաւանական կամաւք, յորդ և քաղցր անձկաւ փափաքեալ առ աղբիւրն Հնորհացն և ըմպելանյագ 'ի նորա ողխմանէն, և արբուցանել զտուհնկս արդարութեան և զտերմանս բարեպաշտութեան Հնորհաց արտասուացն վտակաւք, զի զառ հաւատչեացն բերցեն զպտուղ։ Զի դարուն հոգեւոր է անմանն հաւատոց և սրբութեան սիրոյն, որ զնամ առաքինութիւս բազբոջէն. որպէս տունկկը և բոյսք զսաղարթս և զծաղիկս 'ի ձմերնային կապանացն լուծեալք։ Ա յսպէս ջերմութիւնք սուրբ սիրոյն հաւատով Հնորհալից արտասուաւք՝ զառաքինութիւնն փայլէ ամենասուրբ Երրորդութենն կամաւք և Հնորհաւ։

Եւ հաւանութեի հաւատոյ և սուրբ սիրոյն հաւասարութեի յոր կողմ յորդորի, զամ հաւանեալսն 'ի քո ժողովի։ Եւ նա է նաւահանգիստն մեր և բաշխողպարգևաց. կենդանի աղբիւր և Ճաշակք անմահութեի, որ զամ սուրբս վայելչութիւն պսակէ յաւէժ կենդանութիւնքն։ Եւ զիւրաքանչիւրոցն քաջութեի 'ի վեր բերեալ՝ յօրինին և կազմին օգտակար շահիցն փառք, և լուսաւոր առաքինութեանցն հանդէսք ցուցանին ըստ արուեստիցն բարութեանցն. զի զգուշութեի զգաստութեե ամ զգայութեանցն հաւատով և սուրբ սիրով սիրեալ զանարատ ամբծութիս յինքն հպեաց. որ 'ի բաց մերժէ զախտ և զբիծ 'ի մարմնոյ և 'ի մտաց, յստակ և սուրբ սիրո

փառք մեր. և ազատեալք ի Քէ առցուք զպսակն պարծանաց յամենակալ Հօրէն։

Լայցից և վասն սուրբ Հեզութեան՝ որ առողջութիւն է խլացմանն ցասման մնաց և մարմնոյ։ Զի լուսաւորեալ անարատ Հեզութիւնք և ամրիծ սիրով, որ Հաւատովքն յարգարեալ է ի Հաճոյս սուրբ Հոգւոյն և ի կամս Որդւոյն և ի փառս Հօրն երիցաւորի, առողջացեալ և Աշմարտեալ ի սուրբ սէրն նորա՝ պահեսցի, և ի Հարուածոց ցանկութեանց ազատեսցի, և Հանդարտութիւն առցէ ի մեծասակար մարտից, և ի ընել այսոցս չարութեանն ցածուսցէ ի միտս և ի մարմնս։

Հեզութիւն սանձք է բարկութեան և չարժմանց ցասման և մեծասակարաց լկտութեան և սատակութեան և ի թշնամանս յանդգնեալ ըստ ամի։ Հեզութիւն քաղցր և անոյշ Ճաշակք են քմոց և ցածուցիչ խռովութեան ամբոխից, որ յամբարտաւանութենէ գերին։ Հեզութիւն Հանդարտեցուցիչ է մրրկաց ալեաց մտաց և մարմնոյ ալէկոծելոց ի փոթռանս ինչ։ Հեզութիւն արմատք խոնարհութեան և Համբերութեան և ժուժկալութեան են՝ որ մերձաւորի Քէն։ Հեզութիւն զօրութիւն է ամ առաքինութեան և հիմն ամ բարեաց յերեւելիս ի մեզ։ Հեզութիւն շինուած է խաղաղութեան, և քակտումն և հերքիչ խռովութեան, օխտութեան և նախանձու՝ երեւելի և գաղտնի։ Հեզութիւն աղբիւր յստակ է և ամպ քաղցր ցօղով, որ արբուցանէ զերաշտութիւն չարացելոց։

Հեզութիւն գաստիարակ է մանկութեան և հաւատութեան խրատուց և կարգաց ուսուցիչ։ Հեզութիւն փառք ծերոց, որ նովաւ են հրահանգեալ յողջախոհութեան և յիմն առաքինութիւն։ Հեզութիւն պատիւ երիտասարդաց, որ նովաւ յաղթեցին ամ հակառակաց, սատակեաց և անիրաւաց խոնարհուէք և քաղցրուէ։

Հեզութիւն պսակ է պարծանաց կուսանաց, որ ամենարուեստ երախտեօք և բազմահանդէս առաքինութիւնքն ի կոչումն ընծայեալք սիրոյն սրբութեան։ Զարթուցեալք, անվէհեր քաջութիւն հնազանդեալք, և զՏիզգութեան և զյամառութեան յորդորել ի հաւատ Աշմարտութեան։ Փոյթ յառաքինութեան գործաւորուն.

անքակ աղօթիւք, յորդորեալ յիշատակօք, մտերիմ կամօք, խոնարհ շարժմամբք, քաղցր հնարիւք, սիրով սրբութեամբ, կատարեալ պահովք սանձել զդժնդակ և զաղտեղի խորհրդոցն շարժմունս յազդմանէ չարին. շինլուցանել զհուր ցանկութեանն ջերմեռանդ արտասուօք։ Բաց ունելզդուռն ողորմութե՛ի պէտս կարօտելոց, և ակն ունել յուսով խոստացեալ աւետեացն իմաստուն կուսանացն։ «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն սուրբ»։

Հեզութի՛ մանկանց եկեղեցւոյ մնունդ է, և յորդորիչ ըստ աՀմանն զգաստութե՛ և Հշմարտութե՛. որոց սկիզբն առեալ 'ի տղայութենէ 'ի սրբութի՛ և 'ի պիտանութի՛ զլուսաւոր վարդապետութի՛ն և ըվՀանգամանս բանից և ձայնից որպէս Հառագայթս արեգական փայլեցուցանել փառաւորութե՛ 'ի փառս Այ վերնոց և ներքնոց, Հանդերձ Սամ սուրբ վարուք և խոնարհ սրտիւ. զի այնպէս լինիցին վերնոցն փառակից։

Հեզութի՛ զգաստութի՛ է առաքինեաց և քարոզիչ նոցա Հանդիսիցն. որ իմացան զերկրաւորս անցաւոր, և բուռն Հարին զանանց կենացն միամիտ սրտիւ և անՀեղգ մարմնով, ազատեալ յա՛մ փնասակարաց մըտօք և մարմնով։ Զի կատարեալ զամենայն Հրամայեալն 'ի տեառնէ՝ և զայլս յորդորեսցեն ո՛րպէս պարտ է պահել արդարոց զսրբութի՛ և զա՛մ առաքինութի՛. կամ ո՛րպէս մեղաւորաց դառնալ 'ի խոստովանութի՛ ապաշխարութե՛, զի ապրեսցին։

Հեզութի՛ դովելի մեծութի՛ է տնանկաց. զի երկրաւոր մեծութիս մաշի և կորնչի Հպարտութե՛ն. այլ տնանկացն Հեզութե՛ն մեծացեալ կան և մնան անանցք. զոր ոչ ցեցուտէ և ոչ ուտիչ ապականէ, կամ գողք ակն Հատանեն և գողանան։ Եւ յաղագս այսորիկ երանէ տէրն զՀեզս. քանզի ասէ. «Երանի Հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիրն կենդանեաց», որ ոչ լսի Համբաւ մահու. որպէս և Դաւիթ ասէ. «ՀաՀոյ լինել առաջի տեառն յերկրին կենդանեաց»։ Այլ և աստէն ունի զՀանդարտութիւն մտաց և անդամոց և առ ամենեսեան՝ ոչք Հակատամարտին։ Զի զաղքատս 'ի Համբերութի՛ կրթէ, ըվ-

զօրաւորս զգօն առնել, և առանց խռովութեան ունել զնչխանութիւնս երկրաւորս և առանց աղմկի հանապազորդ. յիմի ամենեքումբք է համեստութեան, մեծաց և փոքրունց դասուիարակ։

Հեզութիւն լուսաւորութիւն է քահանայական հնորհի. զառաջնորդական միտն 'ի հնազանդութեան ունի, և ոչ տայ թոյլ ցասման շարժել 'ի բարկութեան և 'ի թշնամանս, անգիտացեալ որ ինչ խորհրդոյն է ամբարտաւանեալ 'ի ցասմանէն։ Եայլ հեզութիւն մեաց յոյզ եղեալ բան քեռի աւետարանութենուղղէ զերաման իրացն առ սովին գիտութիւն. և լուսաւորէ այնպէս հեզութիւն, որպէս զի տեսցին զգործս ձեր բարիս, ասէ տէրն, և փառաւորեսցեն զհայրն ձեր որ յերկինս է։ Հեզութիւն որպէս աղ է անուշչիչ խորտակաց, որ զհամեղութիւն ճաշակացն համահամ քմացն տայ։ Զի բանք ձեր, ասէ, որպէս աղիւս համեմեալ լիս հնորհօք և ճշմարտութիւ, յարդարեալ հեզ վարդապետութիւք. զի տացէ հնորհս լսողացն վասն հանդերձեալ դատաստանին արդարոց և մեղաւորաց։ զի օրք լուիցեն՝ իմաստանացին 'ի քէս։ Հեզութիւն անարդամեծար տեր է. զձիհնոյսս քարողս արար և աղբիւր կենդանարար հնորհաց սուրբ Հոգւոյն, արբուցանել լոյզ զհաւատացեալս յանծկիտութիւն։

Հեզութիւն պատկաւէ յանդուգն և յահաւոր բարուց, որպէս Մովսէս և Դաւիթ վկայեն. ովն առ ապարասան ժողովուրդն, և ովն առ Սաւուլ բազում անգամ երևի։ Հեզութիւ իմաստնոց՝ իմացուցանել լսողաց զբանն հանձարոյ, 'ի միտ առնուլ զարգարութիւն ճշմարիտ և ուղղել զերաւունս և զամ առաքինութիւնս։ Հեզութիւն զարդ է երևելի առաքինեաց անձանց, հաւատոյ, յուսոյ, սիրոյ, սրբութիւ, աղօթից, պահոց, խոնարհութիւ, ժուժկալութիւ, և ամ բարեաց։ Հեզութիւ՝ սրբութիւ զգեստ է, որ մերկացան և 'ի բաց ընկեցին զաշխարհական զգանկութիւս, և զգաստութիւ կատարեցին զկեանս 'ի քէս։ Հեզութիւ մեծաբանչ շուք և պատկառ է [1] 'ի մէջ բազմամբոխ հրապարակաց. որ զհոգևոր օրհնան հանդար-

1 Միւսն գոյնաւոր է։

տութիւն ձառէ, և հրեշտակ խաղաղարար լինի առ
ամ լսողս, և անուն տեառն փառաւորի. 'ի հեղոյն
և 'ի մարդասիրէն այ փառաւորեալ՝ վերափոխի 'ի
կեանս, և լսէ 'ի տեառնէ՝ եկ հաւատարիմ ծառայ
և հեղ, որով 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վե-
րայ բազմաց կացուցից զքեզ։

Հեղութիւն կերպարանք փառաց է տէրութենն, և
գիւտք հանգստարար յաւիտենից. որ իւրովք դար-
մանօք 'ի ձեռն հեղութենն իւրոյ վանք երկնաւո-
րացն լինի և մոերմաց հաւատացելոց սրբոց 'ի նա.
որ խոնարհեցաւ 'ի յերկնից 'ի յերկիր 'ի մեծութէ
փառաց և էառ զծառայի կերպարանս, զի ծառայքս
զնորա կերպարանս առցուք արդարութիւն սրբութիւն
ճշմարտութիւն վասն բարերար և ամենադիւտ սուրբ
սիրոյն, և գրաւականաւն զոր էառ 'ի մէնջ և ինք-
եամբ նստոյց ընդ աջմէ Հօր 'ի բարձունս, և ետ յոյս
վերստին հաւատացելոց ամենեցուն խոստացեալ աւետ-
եօքն՝ «Ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ Վասն որոյ հրաւիրեաց զամենեսեան և կոչեաց
յիւր արքայութիւն և 'ի փառսն. եկայք առ իս, ասէ,
ամ աշխատեալք ձգնաւորական հանդիսիւք և բեռ-
նաւորք մեղօք յապաշխարութիւն խոստովանութիւն,
և ուսարուք յինէն զհեղութիւն զխոնարհութիւն, և
գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ աշխատելոց
յուսով հեղոյն քաղցր է, և բեռինք մեղաց խոնար-
հութիւնն փոքրոգի լինի։ Եւ յերկուցունց հաստա-
տութենէ [1] կայ ընդ աջմէ այ սուրբ և անարատ, ոչ
ինչ ունելով զձախակողմանն զդժնդակութիւն, այլ
զաջակողմանն արդարութիւն. զի որ զայս ունին, քան
նմանին հեղոյն և խոնարհին առ արածելն. և երա-
նութիւնքն պսակին 'ի խնամոց սուրբ սիրոյն հեղքն և
խոնարհքն սրտիւք յամենասուրբ Երրորդութենէն.
ազատեալք 'ի վշտաց և 'ի յաւիտենական տանջա-
նացն, և յանանց խնդութիւնս և յանհամեմատ բա-
րութիւնսն վայելեցուցանէ։ Զի բազմաբոյս առա-
քինութիւնքն 'ի բազմագով կեանսն ուրախանան, և
փառաւորեալ և պսակեալ՝ զանձառ զլոյսն զգենուն

1 Միւսն հաստատութէ։

'ի քան՝ յանպատում և յանանց 'ի կենանն, որ պատրաստեալ է ամենայն սրբոց 'ի խորանսն յաւիտենից։

Օ ի բաղում և առաւել ևս է Ճշմարիտ քաղցրութիւն և խնամարհութիւն և հնազանդութիւն, ողջախոհութիւն և անարատ վարուց և անրիծ սիրոյ երախտեաց։ Որովք խորտակեցան գրուանք պղնձիք անհաւատութեան, և նիզակ երկաթիք անհնազանդութեան փրեցան, և յաւար եղեն գանձք մտերիմացիկ թշնամւոյն Ճշմարիտ խմաստութիւնն։ Քեզ հաւատովք աւետարանին քարոզութեան։ լուսաւորացն նմանեալ որ Ճառագայթիւք ընաւն ջոտիկ դերս, և ուղիւղ զդնացս մարդկան ունին բոլոր արդարութեան Ճանապարհին։ Զի քաղցրութիւն խնամարհութեան և հնազանդութեան աղբիւր բարութեան վայելեցուցիչ են, և բժիշկ դառն ցաւոց՝ որ զառողջութեան տան։ և բարեաց առաջնորդք՝ որ ուղիւղ Ճանապարհօք յերանութիւն տանին, ազատեալ յամ վշտագին վտանգից։

Քաղցրութիւն խնամարհութիւն հնազանդութիւն և հեզութիւն միաւորեալ՝ օրսօրդ բարեաց է և ժողովող ամ առաքինութեան և վանք սրբոյ Երրորդութեան։ Քաղցրութիւն և խնամարհութիւն և հնազանդութիւն միաւորեալ՝ զժողովս Ճշմարտոյ 'ի միասին ունի, և ոչ թողու քայքայել 'ի մէնանց։ Քաղցրութիւն և խնամարհութիւն և հնազանդութիւն ընտանեցուցիչ է օտարացս զդաստան մերձաւորաց, նուաստութեան ամբարտաւանից և զոբութեան հեզացեալոց, ցածուցիչ ամ ստահակաց, զարթուցիչ է կենաց յուսոյն, և համարձակութիւն վարանելոց որ 'ի մեղացն ազատեցան 'ի ծառայութենէ։ ՊատՃառք է ամ հոգևոր շահից, և խափանիչ կարստեան վնասակար խորհրդոց և գործոց։ Բացիչ է Ճշմարիտ խոստովանութեան, և արձակիչ կապելոց զզնմամբ 'ի թողութեան մեղաց։ Հրաժեշտ վնասակարաց, և մուտ յորդեգրութեան։ Օտարացուցիչ է ամենայն գժոգակաց, և մերձաւորիչ յուսոյն կենացն յաւիտենից։ Ցան է Ճշմարիտ քարոզութեան խնամոյ, և աղբիւր մենդեանն Հոգւոյն սրբոյ բղխման։ Հեռացուցիչ է անգիտութեան, և տուն գանձի է խնամութեան հանՃարոյ։ Ընտանեցուցիչ է Ճշմարիտ բարեկամաց, և յանդիմանիչ սպրդոցաց սուտ եղբարց

ամբարշտաց։ Ցրուելոց Հշմարտասիրաց է ժողովիչ, և անիրաւաց ցրուիչ։ Հեշտացուցիչ սարտուցելոց. պարգևատու շնորհօք՝ որ դառնան յիրաւունս արդարութեան, և կարգաւորիչ 'ի լաւն առհասարակ։ Մխիթարիչ է սգաւորաց, և սփոփանք ամ վշտանգելոց։

Բաղցրութեան և խոնարհութեան և հնազանդութեան անդորրութեան է 'ի դարմանս մարդասէր խնամոց։ Առողջութեան ցաւագնեալոց, և յոյս հաստատուն 'ի հանդերձեալն։ Ծփելոց նաւահանգիստ, և օգնական առաքինութեան. սրբութեան ամենագիւտ հնարք, և պղերգաց ձեռնտու 'ի գործս այգւոյն՝ որ առնու վարձս զառաջնոցն։ Դուռն բաց է 'ի կենսաբեր մուտսն, որ ունի զբաղձանս արքայութեանն՝ ընդ ինքեան ունելով զբարիսն։ Եւ փակի ապախտաւորաց և անհնազանդից, ամբարշտաց և մեղաւորաց և որք ոչ լուան նորա բանին։ Իսկ որք խոնարհեալ հնազանդին ընդ քաղցր լծով ապաշխարութեանն, և սոքա ոչ զրկին 'ի խոստացեալ աւետեացն ստոյգ խոստովանողացն և ապաշխարողացն. զի ոչ եկն կոչել զարդարս, այլ զմեղաւորս։ Զի որ զայս վարս առաքինութեան ունին, կենդանի երախտեօք երանութիւնքն պսակեսցի յամենասուրբ երրորդութենէն։ Աղատեալ 'ի դառն վշտաց գեհենին, և մշտնջենաւոր անմահ խնդութիւնքն յանհամեմատ բարիսն վայելեսցէ 'ի փառս աքանչելի ամ երանութիւն։ Ուղիղ միաբանութեան հաւատոյ և սուրբ վարուց առողջ ամբիծ անարատ ունի զերախտիս սիրոյն առ ամենեսեան անդամոցն յարմարութեան 'ի փառ։ Զի նովաւ հաստատին 'ի մի կամս փառի և 'ի մի հաւատ. 'ի նմա բնակի այ յորդորումն և առաքինութեան աճումն։

Միաբանութեան հաւատոց և սուրբ վարուց՝ աղբիւր գիտութեան. 'ի նոցանէ բաշխի անծախաբար այն՝ որ տայ իւրաքանչիւր զէնս նահատակութեան, զկամս բարիս, ընտրողական միտս. ատել զչարն, և կանխել 'ի սէրն այ և 'ի շինութեան կամացն՝ կատարեալ ապաշխարութիւն և մտերիմ խոստովանութիւն։ Միաբանութեան հաւատոց և սուրբ վարուց՝ խառնէ ընդ արարիչն ըզշնորհս, և 'ի սուրբ յիշատակաց նորա անքակ ունի

զնամ անդամն, և առ դրունս ողորմութեան սիրոյ նո-
ցա կայ միշտ վասն ամ բարեացն որ յարարածս է։ Եւ
ընդ սոյն դուռն մտանեն պարգևք միաբանութեան,
որ ազատէ և մեծացուցանէ. և նովին միաբանութիւն
ընդունին անդամքն 'ի միմեանց զօգնութիւն առ շինու-
թիւն իւրաքանչիւր կարգի։ Եւ ամ որ քակի 'ի միա-
բանութէ հաւատոցն և 'ի սուրբ վարուցն, ոչ միայն
հրաժեշտ լինի յերանութէ անտի, այլև 'ի պատիժ
մատնի. որպէս անդամ 'ի մարմնոյ հատեալ անպի-
տան լինի, և կամ ոստ 'ի ծառոյ կտրեալ 'ի հուր։

Միաբանութիւն հաւատոց յամենասուրբ Երրոր-
դութենն 'ի սուրբ վարս՝ քաղաք ամուր է երկնային
զօրութիւնն պարսպեալ. բնակութիւն է սիրոյն այ և վե-
րին զօրացն, ժողովիլ 'ի նոսա ամ սրբովք յանձառ
օրհնութեան միաբանեալ, ընկղմեալ յուրախութիս
խնամոց սուրբ սիրոյն՝ վառեալք յուսով փառացն այ.
որոց սիրել զմիաբանութիւն անարատ սրբութենն ամ-
բիծ երախտեօքն Յեսի Քրի։ Զի որ այսպէս անքակ
զմիաբանութիւն ունի սիրով Հոգւոյն, հաւատով և
սուրբ վարուք, կենդանի երանութեամքն պակի 'ի
խնամոց սուրբ Երրորդութենն. ազատեալ 'ի դառն
տանջանաց գեհենին, և մշտնջենաւոր անհամեմատ
բարեօքն բերկրի յանանց կեանսն։

Ոստանօր վասն գթութեան ունիմ ասել, որ կապ է
միաբանութիւն և մայր է սիրոյ և գոգ հանգստեան ա-
ռողջութիւն, անարատ սուրբ ամբիծ երախտաւոր սի-
րոյ աւետեացն Քրի։ Զի առատապարգև է առ մեր-
ձաւորս և հեռաւորս. դաստիարակ է մեծամեծաց
և օգնական տկարաց. մնուցիչ է ընտանեաց և դար-
մանիչ օտարաց. սիրելի առ երախտաւորս, և ոչ ա-
տեաց զապախտաւորս. սիրէ զլաւարեկամն 'ի բարութիւն
և կամի զդարձ ատելեաց, զի հասցեն սուրբ սիրոյն։

Գթութիւն խնամք է սուրբ սիրոյն, բորբոքումն անձ-
կոյ առ սիրողն. յիշատակ ծնողաց և յորդորումն
ծննդոց. խնդիր հեռացելոց և մնունդ մերձաւո-
րացն միշտ։ Գթութիւն արմատ բարեաց, և ոստք նորա
խնդութիւն, և տերև նորա զուարթութիւն, և ծաղիկ
նորա ուրախութիւն, և պտուղ նորա անհամեմատ ա-
նուշութիւն։ Զի գթոտն բառնայ զտրտմութիւն յանցա-

նաց և զտաղտուկ ճանձրութիւն՝ որ վհատեն զանձն, և զսուգ՝ որ օտարացուցանեն և յիմարեցուցանեն։ Խափանիչ է վատութիւն և յորդորիչ առատութիւն, խլիչ ագահութիւն և ընդունիչ սակաւապիտութեան, յանդիմանիչ լկտութիւն և ծաղկեցուցիչ սրբութիւն, շինչուն թերահաւատութիւն և նշոյլք լուսոյ հաւատոց, ելք երկմտութիւն և մուտք կենդանի յուսոյն. օտարացուցիչ ատելութիւն և անդորրիչ վտանգելոց, և ամ նեղելոց սփոփիչ։

Պնթութիւն կռփիչ է հպարտութիւն և լուծիչ նենգութեց. խայտառակիչ խորամանկութիւն և մերժումն ոխակալութիւն և նախանձու. խոշտանգանք է անհնազանդից և քաջալերիչ համբերողաց. զօրացուցիչ ժուժկալաց և սրբիչ գինջութիւն. խրախոյս է երկայնամտաց և ձեռնտու խոնարհաց. պսակ զգաստութիւն և ամբծութիւն և յորդորիչ առաքինութիւն. զարթուցիչ է քնէածից և պղերգաց, և հաստատիչ 'ի գործս հանգրստեան, որ լին է ամ բարութիւնք, որ ունի զինամս գթութիւն առողջ սուրբ անարատ ամբիծ երախտեօք խնամով սիրոյն։ Զի որ զայս հոգևոր գութ յանձին ստացեալ ունի 'ի վերայ սուրբ վարուց, կենդանի ե՞ր անութիւնքն պսակի 'ի խնամոց սիրոյն ամենասուրբ երրորդութեանն. որ ազատէ 'ի դառն վշտաց գեհենին, և մշտնջենաւոր անհամեմատ բարեօքն վայելեցուցանէ 'ի բարին։

Այլ և զգաստութիւն իմանալեացն որ հաստատեալ 'ի հաւատն որ 'ի Տէր, իշխանական կամօքն խլէ 'ի զգայութեցն զփնտասակարան, և 'ի ներքս բերէ զառաքինութիւնն, զսրբութիւն, զխոնարհութիւն, զՃշմարտութիւն ըստ ամենայնի։ Խզել զդժնդակայն զեկամուտն, և վառել զէնս հակառակ չարին, և 'ի վայր կործանել զհակառակս արդարութեանն։ Եւ հրով Հոգւոյն հալել զձմեռնային խստութիւն սառամանեաց ջերմեռանդ արտասուօք։ Եւ արձակել արմատս՝ զքաղցր սրբութիւն և զանոյշ խոնարհութիւն և զբարի հնազանդութիւն ամենայն Ճշմարտութիւնք 'ի քո։ Եւ բարձրացուցանէ զոստս հաւանութիւն հաւատով յամենայն առաքինութիւն աՃմունս որպէս զծառս՝ որ տնկեալ են 'ի գնացս ջուրց։ Որ մեծաւ ցանկութիւն 'ի շնոր-

հացն այ շարժին վտակք արտասուացն, որով մարբին երևելիք և անեղեալքք. և խաղաղ և հեզ ցօղով արբուցանէ զտուչկս և զբոյսս զկանուխս և զանագան. և յորդօրէ զամենայն անդամն յաձուցն արդարութիւնէ ի լուն և յառաւելն. զի եկեսցէ ի կատարումն առաքինութեան պտղովք, իբրեալ զօտարսրսի բոյսն՝ զրամին և որպէս ևս չար սերմանք ի թշնամւոյն սերմանեալ ի միտս և ի զգայութիւս, և զիռոլութիւն ըստ ամենայն սրտմտութեան շարժմանց. ցայտրատութիւն, դյանդգնութիւն, զանզգամութիւն, զանհնազանդութիւն, զբարկութիւն, զամբարտաւանութիւն, զիսառասիրութիւն, զհպարտութիւն, զագահութիւն, զանխտրութիւն, զպղերգութիւն։ Ահա էն պատճառք կորստեան. վերսպեալ ի մեծ բարեացն շահից, ի գոլութիւն առաքինութեան փառաց։

Լ.ՍԼ իմանալեաքն որոշել զբարին ի միամիտ խորհուրդս, և հաւանական կամաք գործել զբարիս ա՝նոյշ և քաղցր և լուսաւոր յորդորմամբ ամենագիւտ շնորհօքն Քրիստ։ Յիշատակօք երախտեաց սիրոյն սրբութեան ըստ հաձոյից կամաց նոցն բարեբարի արբանեակ լինել շնորհացն ի փառս և ի պատիւ կենաց տուողին։ Եւ գործակից լինել նորա բարեբար կամացն հանապազ, և ձգմարտեալ ի հաւատս՝ առողջ սուրբ անարատ անբիծ երախտեաքն հաստատեալ կացցէ։

Լ.Ս զի գլուխ է ամենայն զգայութեանցն իմանալիքն՝ որ ի Քրիստ շնորհօքն ամենայն անդամքդ յօդեալ և պատշաձեալ է, և ածէ զաձումն այ, որպէս Աստուածաբան ասէ։ Եւ ի նմանէ բաշխին շնորհք իմաստութեան յամենայն անդամսն, յերբեմն պէտս և յանհրեաւոյթ։ Եւ ի նմանէ ընկալն զհանձար բարեաց ի մէջս օգտից և մերժելոց ի վնասակարացն։ Եւ անտի ծագէ լոյսն յայտնիչ ամենայն քննութեաց, և իմաստնանան ամենայն զգայարանքն ի ձաշակս հոգևորական վայելիցն և ընդլցողք զլաւսն անձանց, և առաջնորդին ի զգուշութիւն իմաստից, և զգրոնս բանան զմտից շնորհացն։ և զգաստացեալ և լուսաւորեալ անվնասիցեն փութով հանդիսանալ յընթացս վերին կոչմանն, պատրաստ ունելով զօգտակար շահն հոգւոյ և

մարմնոց, զի Ժառանգէսցէ զառհաւատչեայ երա-
նութիւն։

Լոյս բերմանն բղխեալ յիշխանական հոգւոյն զՀմա-
բիտ վարդապետութիւն առողջութիւն անարատ սրբու-
թիւն անբիծ սիրով։ Եւ ընդ նա գնան ամենայն վը-
տակք իմաստութիւն ի սրտին յառաջագոյեալ, աբ-
բուցանել և պարարել դշդեկան երկիրն բանիւն կե-
նաց առ ի յաՀաւնին բարութիւն բուսոցն և առ ծա-
ղիկս անուշահոտս վայելչացեալ քաղցր պտղով։ Եւ
զի բերմանն է Հմբրիտ բանին որպէս Հրագաբան լու-
սոյ, որ հալածէ զխաւար և յայտնէ զամենայն զոյ-
ցանէ զաղտեղութիւն և երևեցուցանէ զդայթակղու-
թիւն ուստի բեկուին։ Ուստի Արդին այ հնարիւք իւ-
րովք զսպառաղմնութիւն նորա յաՀշտակեաց։ զնո-
բամանկութիւնս, զյանդգնութիւն, զյափշտակութիւն, և
զզողբանս խաբէիցն և զարՀաւիրս, Հարձուցանե-
լով ի Հմբրատութիւնէ անտի։ և որ այլ ևս են մեքե-
նայք չարին, որ յայտնին նշոյլք վարդապետութենն
Քոյ։ Զի տացէ Հնարս նահատակաց առաքինանալ,
և յորդորել ընդդէմ չարեացն զուղղութիւն, և բառ-
նալ ի մեաց զիմաստութիւն մոլորեալսն, և ամենեքեան
զինքն ի Հմբրիտ վարս, և զգուշանալ յամենայն
վնասուց։ առաքնորդել և այլոց ի բարիս։ Եւ դիւ-
շատակ սրբութիւնն սիրոյն որպէս խորհրդոյն մեզու ունել
ի քիմն բերանոյ իւրոյ։ զի նա է որ քաղցրացուցա-
նէ զդառնութիւն չարին։

Իսկ որ բանայ զաչս իւր ի լոյս արեգական ի մի-
ջօրէին, ոչ մերձենայ խաւար ի բիբս նորա։ Այնպէս ո-
ոչ նայելիքն յստակ են յիշատակաւ սրբութիւն, և լոյս
ուրախարար է նորա կենդանի սիրոյն խնամքն որ պա-
հէ զնա առանց վնասուց տուժից անբիծ և անարատ։
Եւ նովին լուսաւոր ՀնորՀիւ տեսանէ զկորուսեալսդն
զդիւտս, և մերձաւորս առնէ ողորմութիւն փրկչին և
ներելոյ խնամոյ նորա կարդէ։ Զի Հաճայոյ լուսոյ քա-
ղցրութիւն բանին ցուցանէ զդէղ կենդանի յուսոյն,
և զդարմանս արքայութիւնն զանՀատն և զանպա-
տուհանն։ Ի մեռն Հմբրիտ Հաւատոց ընթացուցանէ
ընդ Հանապարհ վերին կոչմանն առ Հայրն ամենա-
կալ և Արդին բարերար և Հոգին կենդանարար։ որ
անՀատելի է մեծութիւն փառացն։

Լաբդ և գոնդք վերին զօրացն եղեն փեսաւէրք Որդւոյն Այ և առին փրկութեան մերոյ. և քաջալերեն զայրերելս Այ, որ փրկեաց զմարդիկ ի մահուանէ մեզաց։ Զի ուրախութեամբ եղիցի յերկինս, որք դառնան առ Աստուած և ապաշխարեն։ Եւ որք Հաւատացին յԱծ և Հաճոյացան նմա, արար զնոսա Ժառանգաւորկիցս իւր արքայութեան։ Այսպէս և որ այժմ Ճշմարիտ Հաւատով կատարեցին զբան նորա, և ուսուցին առողջութիւն, անարատ սրբութիւն, ամբիծ երախտեաց սուրբ սիրոյն Այ։ Զի որ զայն վարս ստացեալ ունի յանձին ըստ ամենայնի Ճշմարտեալ, կենդանի երանութիւնք պսակեսցի ի սուրբ Երրորդութենէն. ազատեալ ի դառն տանջանացն, և մշանջենաւոր յանդամմամբ բարութեան վայելէ։

Լաբ ասէին Հաւատով սրբեալ, տեսչութեան խնամոյն նշոյլք է լուսոյ անսպասս ուրախութեանն։ Որով վառեալ լուցանի լոյս արեգականն արդարութեան, որ լուսաւորէ զնմա սուրբս, և մերձաւորս առնէ ի սէր Հնոր Հայր իւրոց, և բառնայ զնաւարային մնջորութեան, և անսխալ գնացիւն ընթանայ ի կետ կոչմանն վերին յօթեւանս Հանգստեան ըստ քաղցրութեան լուսոյն Այ։ Զի նոքա Հղի ի գիրկս սուրբ սիրոյն Որդւոյն Այ, և ի գգուանս Հօրն երկնաւորի, և ի պարգևս Հոգւոյն սրբոյ յանձնաւորելոյն։ Որ տայ զվիճակ ժառանգութեան իւրոյ այնոցիկ՝ որ ի կամս նորա վարեցան յաշխարհի, և զինուորեցան Հոգեւոր զինուք ընդդէմ չարչարեցն զբարիսն ըստ աւետարանին Քրիստի։ Եւ կցորդ եղեն նորա չարչարանացն, և խաչակից եղեն կամաւորս մահնոն ամենայն Համբերութիւք Ճշմարտեալ անբաղ սուրբ սիրով՝ ի նեղութիւն և յանդորրս։ Զի Ջուցին զպարտիս ողբանաց և զխիստ բռնութիւնս կատարեալ Ժուժկալութիւք։ Հանապազ ասին կալեալ խնամակալաքոյն, որ զօրացուցանէ զյուսացեալս իւրս։ Զի խնամալեաց ասաց և երևեցեաց լոյս նոա է։ Զի Հանապազ կանխել ի պաղատանս խոնարհ սրտիւ, և ՔԷրմեռանդ արտասուօք զաղօթսն Հատուցանել այ ի բոլոր սրտէ, և յայտ Հեղուլ զարտասուս Հոսանս, որ ի ձեռն գթոյ անձկոյ յառաքագայի ի Նքշոլից Հնարհայ աւետեանն՝ որ բառնայ զվիշտս և լոյ-

հարուածս և զամենայն վտանգ 'ի բռնաւորաց, և ընու բարութիւն յորդառատ զղջմամբ, և ընդունարան լինի Հոգւոյն սրբոյ. որ յայտնէ զծածկեալս և զանքնին սիրելեաց ՝այ. զի և զփափաքումն կարօտութիւն անձկոյն լցուցանէ կենդանի և անՀատ Հաշակօք 'ի բարերարութէն։ Եւ լոյսն ահեղ անմատոյց ոչ մերժի սքանչելապէս յանձանց անտի. և տեսիլ աչացն հաւատով լուսաւորի. և 'ի նշողից շնորհացն ընու միշտ և ծաղկեցուցանէ զզգայութիւն, և զուարթացուցանէ անմահական խնամովք զայնոսիկ՝ որ մերժեալ են յինքեանց զաշխարհական զցանկութիս և զգեցեալ զսրբութիւն վերարկու, ամբիծ հաւատով՝'ի սուրբ Երրորդութիւն Հշմարտեալ, և 'ի թեւս սուրբ Հոգւոյն վարեալ յաշխարհի 'ի շինութի և 'ի խաղաղութի ըստ ամենայնի հոգևորօք և մարմնաւորօք մինչև հասցէ յանքոյթ նաւահանգիստն իմանալի տեսութիւն, առողջ անբիծ անարատ խնամօք սուրբ սիրոյ երախտեաքն Քրիստի։ Զի որ զայս շնորհս ստացեալ ունի յայ, 'ի վերայ ամենայն սուրբ վարուց կենդանի խնամօք սուրբ սիրոյն յամենասուրբ Երրորդութէն պսակեսցի. ազատեալ 'ի դառն տանջանաց գեհենին, և մշտնջենաւոր անհամեմատ խնդութեամբն վայելէ 'ի բարիսն։

Այս ասելիք անխարդախ հաւատով հնազանդեալ յառողջութի և յանարատ սրբութի՝ ամբիծ խնամովք երախտաւոր սիրոյն, ընդ որս մտանեն ՝ածային պատգամաց աւետիքն, և կերպարանէ 'ի ներքին մարդն զկերպարանս փրկչին մերոյ Քրիստի իւրով փառաքն։ Որ ունի յաջմէ զնիշ խաղաղութիւն, և յահեկէ իւրմէ զհաստատութի որդեգրութիւն, և 'ի գլուխն իւր ունի զպսակն պարծանաց, և ընդ մէջ ածեալ զկամարն սրբութիւն, և Հշմարիտ զգաստութիւն պատեալ զկողս իւր 'ի գօրութիւն Քրիստի։

Այսելիք դրունք են հաւատոց 'ի մուտս զգուշութիւն անարատ վարուց, երկիւղիւ և խնդութիւն խառնեալ. և ելք նորա արդարութի և իրաւունք. ըստ հոգևոր օրինացն կատարեալ սրբութիւն ծաղկեալ, և 'ի ներքս բուրէ զանուշահոտութի զսաղմոսից և զօրհնութեաց. և անդ հնչեն փառք թագաւորին անմահի, և բու-

րեն սրպէս յանցաչ խնկոց 'ի բերանոյ սրբոց իւրոց պաչտօնեից, որք սրբութիւն գովէն զամենասուրբ զերրորդութիւն։ Այդ գուցդք հրեշտակաց բանակեալք, և պատրաստութիւք [1] զուարթնոց, որ վառեալ բորբոքին յերգս հոգևորս, հաւատարեալք ամենեքեան 'ի միասին հատուցանել զփառս։

Լսելիք հաւատով ճշմարտեալ՝ ընդունելութիւն է ծառայոյն կենաց և հատոյն [2] քաւութեան և որթոյն փրկութեան։ Եւ 'ի նմանէ արձակեն զարմատս 'ի սիրոս կատարելոս ՝այ, որ ընորհօք դարմանեին հանապազ, և պարարէ զնա 'ի ցօղոյն հոգւոյն սրբոյ։ Եւ ամենայն արարածք որ գրաւեալ են սրբութիւ'ի սէր նորա, ուրախ են ընդ նմա. զոհանան և փառաւորեն զարբեր-ծան ՝ամ որ արար զամենայնս, և յարգարեալ պատհէ 'ի փառաւորութիւն սուրբ անուանն իւրոյ։ Լսելիք ճշմարտեալ հաւատով վասակք են, ոռոգել 'ի կենաց աղբիւրէն զանգամ մնաց և զգայութեան յաճառնին առաքինութեանց։ Եւ զգծոդակաց զբերուին արատաց հանեալով լաւագոյն ժրութիւն, որ 'ի նիւթ հրոյն ուն՝ զհանգամանս։ Լսելիք ճշմարտեալ զնայն յինքն ամփոփէ. որ վերաստեղծու զգաստ գիտել, Հանաչել զարարչ և զբար։ Որպէս այլաբերութիւն գիւրանց լսեն առ 'ի պէտս խօսս՝ և ոչ զմերն, այսպէս և որ զայս լսելիս սրբութիւ ունի, զնայն լսէ և ոչ զբարին։ Եւ ունին սրբոցն բանի որ 'ի բերանոյ՝այ՝ լսէ, որ մուտ է և անց բանի. որ սրբէ զմիտս և զզգայարանս, և 'ի հնազանդութիւն յարգոցն հոգևոր օրինացն առողջութիւն անարատ և սուրբ երախտաւոր սիրոյն. որ կենդանի խնամք սիրոյն յամենասուրբ Երրորդութիւն լուսաւոր երանութիւք պատկեցն. ազատեալ 'ի դառն տանջանացն՝ յանհամեմատ բարութիւնն վայելեցէք խօսքս։

Լսէ հոտոտելիք հաւատով հոտոցն են զգայութիւք գիտութեան և խնամութեան, առողջ անարատ ամբիծ երախտաւոր սուրբ սիրոյն. և ճշմարտեալ անուշութիւ 'ի հոգևոր հոտ գիտութեան՝ սրբուցանել 'ի Հոգւոյն սրբոյ զանձն 'ի հոգևոր օրինացն։ Զի 'ի նոցա-

1 Միւսն պատասարքիներ։ 2 Միւսն հաստոյն։

նէ յառաջագոյն հոտ գիտութեան հօր, և Ճանաչէ զՈրդի, և իմանայ զՀոգին սուրբ։ Գիտութիւն հօր տաՃար է նորա փառացն. և որք մտանեն 'ի նա խոստովանութիւն, գտանեն զնա։ Իմաստութիւն Որդւոյ խորան է նորա ծնելութեան. զի որք հպին 'ի նա գաւանութիւն, մերձեցուցանէ առ ինքն։ Եւ Ճանաչէ զՀոգին սուրբ զտուիչ բարեաց 'ի ձեռն Ճշմարիտ հաւատոցն, որ ցուցանէ զլոյս ՃՃութեանն, որ շնորհօք զտեսողսն լուսաւորէ, և հոտ գիտութիւն վերաբերէ ընդ վերին զօրսն վառեալ յօրհնութիւն հօր 'ի բարձունս և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ Ճշմարիտ հաւատով։

Հոտոտելիք իմաստութիւն հաւատոց տայ Ճանաչել զՀայր ամենակալ, և գիտել զՈրդի մարդասէր գոլ, և զՀոգին սուրբ պարգևատու։ Հոտոտելիք հաւատոց ընթացուցանեն յարքայութիւն երկնից, և բանան զդրունս կենաց, որք առ սուրբ Երրորդութիւն անձկացեալ են, ընդ ինքեանս ունելով զառաքինութիւս. և փառակից լինել վերին զօրացն՝ օրհնեն զՀայրն ընդ սերովբէսն, և գովեն զՈրդի ընդ քերովբէսն, երկրպագեն Հոգւոյն սրբոյ ընդ հրեշտակս միոյ ՃՃութեան։ Հոտոտելիք Ճշմարտեալ հաւատով որոշեն զհոտ կենաց և մահու, զարքայութիւն և զդժոխոցն, զսրբութիւն և զաղտեղութիւն, զարդարութիւն և զանիրաւութիւն։ Ո՞մանց գովութիւն և շնորհօք բուրէ, և ո՞մանց պարսաւանօք և զաղիրս։ Զո՞մանս վայելչացեալս յերկրէս ամբառնայ առ ՃՃ, և զո՞մանս 'ի վայր բերեալ և խոտորեալ 'ի վիհս կորստեան ընկենու։

Հոտոտելիք Ճշմարտեալ հաւատով Ճանաչէ զորդիս լուսոյ և զորդիս խաւարի. իմանայ զկամն իւրաքանչիւր զուղղութիւն և զմոլորութիւն, որ այլանդակ և այլուսմունք են, որ որոշեն զնոսա 'ի բաց հոտոյն սուրբ ըստ հրամանի ՃՃն՝ արտաքս հանելով 'ի խնամոց ՃՃ 'ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրՃել ատամանց։ Եւ զսուրբսն անուշահոտ վարուքն մնուցանէ առաքինութիւն, մինչև հասցեն 'ի չափ կատարմանն Քրիստի ժառանգորդ լինել անուշակ արքայութեանն. որ Ճշմարտեալ են 'ի հաւատս լուսաւոր և սուրբ վարուք, անարատ և ամբիծ երախտեաց սիրոյն։ Զի որ զայս շնորհալից հոտ առաքինութիւն ունի 'ի վերայ

պլոց սուրբ վարուց, կենդանի երանութիւնք պսակեսցի ի խնամոյ սիրոյն յամենասուրբ Երրորդութիւնն. ապատեալ ի գառն վշտաց գեհենին, և մշտենաւոր անհամեմատ երանութիւն վայելեսցէ ի բարուն անսպառ և անվախճան։

Այս ձեռք Աշմարտեալ ի բարի գործս հաւատով առողջ անարատ անբիծ երախտեօք սուրբ սիրոյն, են մշակք պատրաստեալ հանգերձեալ աշխարհին արքայութեան երկնից։ Եւ երախտաւոր լինի բարի գործով. հնոյ բարի սերմամբն զանգս յուսով պտղոցն բարեաց. ձեռնտու գլուխոց. զբեկեալսն պտուտ, զանկեալսն կանգնել, զտկարացեալսն զօրացուցանել, ըստկարօտեալս յագեցուցանել. գործեսցէ ձեռաք, զի բաւական լիցի տալ իւրաքանչիւր ըստ ՀՈՐՀՈՒՅՆ նմա յայ առաջնութեան առ չինութեան հաւատոց։ Յիշել զԱՌաքելոյ ասէն և առնել. «Զնա, ասէ, և որ ընդ իմն էին, պաշտեցին ձեռաքս այսոր»։

Ձեռք սուրբ հաւատով բուրվառք են անուշահոտ խնկով ի հրոյ Հոգւոյն սրբոյ, բուրեալ ի բարի գործս հեռաւորաց և մերձաւորաց ի վայելս. և ի վերս ամբառնալ ամենասուրբս և գոհութիւն ընծայել ՈՅ։ Ձեռք Աշմարտեալ հաւատով գործարան են մտաց և մարմնոց, որ գիւրաքանչիւրոցն զպէտսն վՀարէ յերեւելիսս և յանտեսանելիսն անարատ յօրինեալ գովութիւնք ի փառս ՈՅ ըստ աւետարանին։ Ասասի ծագէ լոյսն աւետեաց՝ ձեռացն տարածմամբ, և գօրծողի գյաղթութեան զվարձս առնուլ։ Ձեռք Աշմարտեալ հաւատով անօթ է խորհրդոյ խաչին, որ խլէ զփուշ յանդէ՝ զանիծիցն զատատակ մեռցին, և անկէ զծառն կենաց՝ որ պտղաբերէ ի մեզ զՔՀոն մարմնոն և զարիւնն ի թողութիւն մեռցայ ի ձեռն սրբութեան և խնարհութեան և հնազանդութեան. զի այսպէս մոցուք ի յարկս լուսոյն կենաց։ Ձեռք Աշմարտեալ հաւատով մշակք Հոգւոյն Աշմարտութիւնն են. որ ի ձեռն վաստակոց իւրեանց առաքինութիւնն առնուն պարծանաք զվարձն։ Եւ որպէս ի ծովու յաշխարհիս ձեռաք վարեն գնաւս, զի հասցեն ի նաւահանգիստն խաղաղութիւնն և հանգիցեն ի ՔՍ ՅՈ։ Ձեռք Աշմարիտ հաւատով օրսորդք են ոչ ձկանց, այլ մարդ-

կան. որ քահանայական ձեռնադրութիւնքն չնորհս ընձեռէ 'ի Հոգւոյն սրբոյ ազդմանէ, որսալով աւետարանին ուռկանաւն, առողջ և անարատ անբիծ երախտեաց խնամակալ[1] սուրբ սիրոյն։ Զի որ զձեռադրեալս ստուգութիւնքն կատարեսցէ հանդերձ սուրբ վարուք, կենդանի երանութիւնքն երախտաւոր սիրոյն պսակեսցի յամենասուրբ Երրորդութէն. ազատեալ 'ի պատժոց գեհենին, յանհամեմատ բարութիւնն վայելէ յանանց և յանսպառ։

Եւ ոտք ուղղեալ հաւատով 'ի գնացս սրբութեան, անարատ և ամբիծ երախտեաց սուրբ սիրոյն՝ նախաշաւիղ Ճանապարհորդէ ըստ աւետարանին 'ի հանդերձեալսն յօթեւանս արդարոց որ 'ի Քրիստոս։ Ոտք ուղղեալ հաւատով հասուցանեն ամենասուրբ վարուք և կարգաւ 'ի քաղաքն կենդանեաց 'ի սրբոցն ժողովս։ Ոտք ուղղեալ հաւատով երիվարք են սուրբ կամաց, որք ընթացուցանեն 'ի գործ նահատակութեան վերին կոչմանն։ Ոտք ուղղեալ հաւատով զհրաւիրեալս և զկոչեցեալս յորդորէ 'ի հոգևոր ուրախութիւնն պայծառ և սուրբ գնացիւք, հանդերձ յարմարական առաքինութեամբ, ոչ ինչ խածեալ զդարշապարս։ Ոտք ուղղեալ հաւատով ընթացուցանեն զհետ մոլորեալոց 'ի դարձուցանել զհողեղէնս 'ի հոգեղէնս, զապիրատս յիրաւունս, զանհնազանդս 'ի հնազանդութիւն արդարութեան գնացիւք։ Ոտք ուղղեալ հաւատով առաջնորդեն վերնայնոցն զհետ երթալ, ուր սրբոցն բնակութիւք. և կոխել զզօրութիւն թշնամւոյն, ամրացեալ պահպանական կօշկաւ առաքինութեան. որ ոչ կարասցէ խածանել օձն 'ի Ճանապարհի, և լուծանել ըստ այ զգնացս։ Ոտք ուղղեալ հաւատով կոխեն զհուր ըստ օրինակի երից մանկանցն գնալով 'ի հնոցին։ Կամ որպէս Պետրոս 'ի վերայ ծովուն գնալով որպէս յատակի. եթէ ոչ էր 'ի թերահաւատութէն ընկղմեալ, ոչ օգնականութեան Յեսի կարօտանայր, որ վերստին զգնացս հաստատեաց 'ի վերայ ալեաց ծովուն։ Զի որ այսպէս հանդիսացեալք ըստ աւետարանական գնացից արդարութեան, աւետեաց

1 Միւսն ամենակալ։

յուսոցն պսակեսցին յամենասուրբ Երրորդութենէն, և զանսպառ բարիսն ժառանգեսցեն։

Ա. յսոքիւբխրատեալք և պսակեալք առհաւատեայ յուսոցն, ծառայել առաջի տեառն երկիւղիւ և ցընծալ առաջի նորա դողութիւն, ընդ՝ Դաւթայ ասել, «Ընկալարուք զխրատ նորա՝ զի մի բարկասցի տէր, և կորնչիջիք 'ի Ճանապարհացն արդարութենէ 'ի ժամանակի յորում զարթչիցի բարկութիւն նորա» 'ի դատել զերկիրս և հատուցանել ըստ արդար դատաստանին։ Դժնդակացն և յանցաւորացն, որք մեղան և ոչ ապաշխարեցին, որոն անմահ և խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանց, և անդէջ հուր զեհենին պատրաստեալ կայ անմահ տանջանաց։ Իսկ որ սրբեցին զանձինս իւրեանց յամ աղտեղի ցանկութենէ և կատարեցին զարդարութիւս ամ, անհամեմատ երանութիւնք մեծարեալ և փառաւորեալ պարծանօք պսակեսցին յամենասուրբ Երրորդութենէն։ Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

՝ Միւսն ըստ Դաւթի ասէլոյն։

ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԱՐՉԻՆ ԽՆԱՄՈՑ ԵՒ ԿՇՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՀԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԱՑՆ ԼԱՒՈՒԹԵԱՆ

ԺԲ

Բ ԱԶՄԱԴԻՄԻ են երախտիք շնորհայ միոյ Հօրն բարերարի, և միոյ Տեառն կենարարի խնամք արարչութեն լուսաւոր փոփոխմանցն, և միոյ Հոգւոյն սրբոյ խնամոցն պարգևք և ամենագիւտ սիրոյն առ երկնաւորս և երկրաւորս և որ 'ի նոսա են արարածք ամ։ Զուր և օդ ըստ փոփոխման արարչին յօրինուածոց ցուցանեն վերնոց և ներքնոց, առ փոքր փոքր զաճումն առեալ, և 'ի կատարումն ընթացուցանեն հաճոյից ոյ, և զհանդէս մտերմութեն բացայայտեն երկրաւորացս և երկնաւորացն լուսաւորացն մտերմութե գործակցութեք հոգևոր օրինացն բարձրացուցանել 'ի փառս և 'ի պատիւ լրմամբ խոստացեալ բարեացն. որ փառօք և պարծանօք մեծարեալ են բարերար և առատ և աննախանձ կենդանարար շնորհօքն։ Եւ զփոփոխմունս յարգանացն տեսեալ՝ յառաւել մտերմութե հանդէսն յորդորին, և զաներեւոյթսն երևելեօքս ցուցանեն առողջ անարատ լուսաւոր սրբութե յորդորմամբ՝ անբիծ երախտեօք սիրոյն։ Եւ ընձայաբեր լինել տեառն ըստ միոյ միոյ պարգևին գործակցութեք ամենաշահ նորա խրատուցն զմերս մեծարելով հաւան և բարերար կամաց շնորհողին. կարգելով մշակս ճշմարտութենն առ երախտիս բարեացն ամի յաներևոյթսն և յերևելիս, յանմարմին զօրութիսն ասեմ, յերևելիս որդիս մարդկան։ Զի նուաւ կեան և շարժին երկնաւորքն և երկրաւորքս։

Ի բարերար կամացն այ արքանակք լինին և սիրելեաց նորա վերին զօրքն, առաքելոց և մարգարէից և ուղիղ վարդապետաց, վկայից արքոց, քահանայից, կուսանաց, արգարոց և ամ Ճշմարտասիրաց՝ որք առաքինութիւն նահատակին՝ի փրկութեան անձանց և մերձաւորաց գործակցութիւն հոգևոր՝ օրինացն տեառն։ Եւ առ փոքր փոքր յաւելուածոյն գալ՝ի կատարումն մնդեամին։ Որպէս և ինքն իսկ եղբայր զիւրոց գործոցն գլխաւորեալ՝ի ծնունդս։ որ յոչ ընդ՝ի սայլեին յարդանդն՝ի հաւանութենէ արուին և իգին ըստ օրինաւոր ամուսնութեան կարգացն այ՝ զաւակ ստանան՝ի սփոփանս անձանց և մերձաւորաց և՝ի գոհութիւն պարգևատուին, և բարկամք և մերձաւորքն տուն կատարի ծնունդեանն և անուանակոչութեանն։ Որ՝ի մէջն և յաղջամղջին յարովանէ յառաջ եկեալ մարգ կերպարանեալ ցուցանի յերկրի։ Եւ յորժամ մնդեամբ մարմինն ահէ՝ի կատարեալ հասակ պատրաստութեամբ արուեստիւք ոմամբք, և ոգիքն բանաւորք և մտաւորք ըստ մարմնոյ ահմանն զգիտութեան և զիմաստութեան ընդ նմին բացայայտեն՝ի ձեռն ուսուցչացն խրատուց։ որ և պետութեաց և իշխանութեաց հանդիպին յերկրի։

Այլ նախ քան զամենայն Ճանաչելն զոհ, և արարածովքս խմացեալ զարարիչն երկնի և երկրի որ՝ի նոսա արարածք իցեն։ և լինել աշակերտ և արքանեակ նորա կամացն՝ նմանեալ նորա բարերարութենն Աստ՝ զչարն և ընդդրել զբարին։ պատճառս լինել շահից և խրիչ վնասուց կորստեան։ երախտաւոր լինել հեռաւորաց և մերձաւորաց առ գրացիս և ընտանիս։ բարի կամք և բարի գնացիւք և բարի գործովք առ ամենեսեան լինել արժանաւոր իրաւամբք, և արգար և ուղիղ և սուրբ և Ճշմարիտ վարս ստանալ։ Եւ այն պէս երանելի երևեալ յաշխարհի՝ ամ առաքինութիւն զարդարել ըստ պատկերի այ, փոխել յանուշակն՝ կենդանի յանմահ փառս՝ի յայսն յաւուրս, և ընդունի զերանութեան սիրոյն։ Զի խնամով սիրոյն լի էին եր-

1 Միւսն Հոփոյի Բարեաց գիրառ։

կինք և երկիր և որ 'ի նոսա արարածք իցեն, և նորա նախախնամութիւն վարին։

Եւ ոգիք կատարելոց սիրելեաց այ ուր և են, 'ի նորա սուրբ սիրոյն 'ի գիր կան, և 'ի նորա կենդանի խնամն վայելեն։ Նոյնպէս և մարմինք 'ի նորա գիրսն ' կեալ 'ի խնամոյն պահին, եթէ 'ի ցամաքի և եթէ 'ի ջուրս՝ ուր և իցեն։ Զի ամ մեր յերկինս և յերկրի, 'ի ծովս և յամ խորս, ասէ մարգարէն։ Եւ դարձեալ ասէ. «Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես. և եթէ իջանեմ 'ի դժոխս, և անդր մոտ ես. եթէ առիցս զթևս իմ ընդ առաւօտս և բնակեցայց յեղերս ծովու, սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ և աջ քո ընկալցէ զիս սիրով»։ Դժոխս ասէ զգերեզման ապականիչ՝ որ այ խնամովքն պահի 'ի յոյս յարութեանն. ուստի վերստին նորոգին 'ի կեանսն յաւիտենից՝ ընդունելով զհոգիս իւրեանց։ Եւ որ սուրբք իցեն, 'ի քա մերձ լինին. զի «Ուր ես եմ, անդ և պաշտօնեայքն իմ եղիցին»։

Այլ և զմեղաւորացն զմարմինս և զհոգիս պահէ, ուր և իցեն, 'ի յանդիմանութիւն կշտամբանաց մեծի աւուրն դատաստանի և յարութեն 'ի մեռելոց։ Զի դիմադարձ եղեն օրինացն արդարութիւն, սիրեցին զչար և ատեցին զբարի, և զպատուիրանս նորա ոչ պահեցին։ Իսկ որք Հնմարտեալ սիրով խնդրեցին զնա, եղև նոցա պարգևատու. զի արդար է տէր և ուղիղ են դատաստանք նորա, թէպէտ և մեղ է այս անհասանելի։ Որ ծագէ զարեգակն 'ի վերայ չարաց և բարեաց, և որ այլ ևս են խնամք հասարակաց 'ի տեառնէ։ Բայց որ առնէ զկամն նորա, մնայ յաւիտեան. զի «Եղերուք սուրբք և արդարք, զի և ես սուրբ եմ և արդար, ասէ տէր»։ Իսկ որ զայս աւետիս ունին յանձինս, սրբեն զինքեանս յամ ցանկութեց, և լինին արքանեակք Հնմարիտ և սուրբ վարուց, և այնպէս լինին ընդունարան ամային շնորհացն և օթեւանք այ։ Արդ որ այսպիսիք են, 'ի խնամն սիրոյն հաստատեալ կան։ Որպէս և ասաց՝ եթէ «Բնակեցայց 'ի նոսա և գնացից 'ի նոսա և եղէց նոցա յամ, և

1 Միւսն գիրքն։

նոքա եղիցին ինձ ժողովուրդս». և գարձեալ. «Էս է. զէջ նոցա ի Հայր, և նոքա եղիցին ինձ յուստերս և ի դստերս, ասէ տէր ամենակալ»։

Լաց ամ արարածք ի ներքոյ զօրութեանէ նոքա կախեալ կան. բայց զսրբելիս իւր և զկամարարս ի ներքոյ վարագուրի խնամց սիրոյն պահէ յամ վասնզից։ Եւ այլ կայեանք են, որ արհամարհէին զօրենս նոքա, և ծառայեցին գմտադակ ցանկութեանց մարմնոյ պէսպէս չարեաց, որք ժառանգեն զարտաքին խաւարն։ Խաւար է ասա արտաքին չար, որոյ խաւարեալ են միաք և գգայութիք, և օտարացեալ են ի կենաց անտի, որպէս ասէ Աստուածաբան։ Իսկ անդ ուր. ի Հուր գեհենին, ուր լալ ատաց է և ոչ զոք տեսանէ, և որ ի նոսն են տանջանք՝ որ պատրաստեալ է դիւաց և պղծոց։

Օ ի իրրև երկրաւոր կեանքս ի ձեռն մահուան ի գլուխս ելանէն, հոգիքն յուզարկին առ ած՝ որ ետ զնա, և մարմինն դառնայ ի հող՝ յորմէ ստեղծաւ յարարչէն։ Եւ սուրբ և արդար հոգեացն ընդ առաջ գան հրեշտակք և սրբոցն հոգիքն, և տանին առաջի այ սաղմոսիւք և օրհնութիք և երգոք հոգևորօք. գովելով զամենազօր փառս տերութեան ամենասուրբ երբորդութեան. և գոհանան զերախտաւոր բարերարութէն, որ փոխէ յերկրաւորացս յերկնաւորսն, յանարգութենէ ի պատիւ զշարեխրեալսն և գկոչեցեալսն յիւր արքայութեան և ի փառսն. որ նա միայն է փառաց և պատուոյ և օրհնութեանց արժանի։ Քաղցր խոնարհութիւն, հնազանդութիւն օրինացն, ընծայիւք պատարագաց՝ ի նուէրս լուսեանէ արդեաց բարեաց, ըստ Քն պատարագեալ զասրստիելի խոնարհութեանն վասն նորա փրկութեանէ և յուսոյն քահանայական խորհրդածութիւն։ Զկատեալս արձակել, զպարտս թողուլ զկարօտեալս լցուցանել, և որ այլ ևս են բարեգործութիք բաշխմանեռնութիւն աղօթիւք և խնդրուածովք, Ջերմեռանդ արտասուօք վասն հանգերձելոցն փրկանաց։ Աւսորիւք յուզարկել զՀրաժարեալսն ի յոյս կենացն յաւիտենից ի Քն, որ այսորիւք հաշտեսցի Հայրն զԹած և Որդին բարերար և Հոգին սուրբ բարեխնամող. և ուրախութիւն լինի ի վերայ այսոցիկ

վերին զօրացն, որպէս 'ի վերայ մեղաւորաց որ դառնան ստուգապէս խոստովանութիւն յապաշխարութեան. և ընդունին զՀոգիսն յօթևանս ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն, բաժանել զՀանգիստ և զտեղի ըստ տեսչութեանն այ։

Ի վերայ այսոցիկ հաւատացելոց և արժանաւորաց յուսոյ, որ անյուսութիւնքն լան և կոծին և ցտին զՀրաժարեալսն յերկրէս որպէս զՀեթանոսս՝ որ ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զՅԾ։ Եւ 'ի գործոց երախտեաց բարեացն որ ընձայեցաւն այ վասն հրաժարելոյն, զրկեն այնուիկ զնա 'ի հանգստենէն, և տրտմեցուցանեն զզօրս երկնաւորս և զՀոգիս արդարոց, և զնոցին զՀոգիսն իսկ՝ վասն որոյ զսուգն յերկարեն։ Եւ ինքեանք անկանին 'ի պատիժս վասն անյուսութեան, և առնուն զվՃիռս պատուհասիցն։ Զի որ խռովեցուցանէ զՅԾ և տրտմեցուցանէ զերկնային զօրսն և զարդարոցն Հոգիս և զրկէ զՀոգի հանգուցելոյն 'ի հանգստենէն, կրեսցէ դատաստան ո ոք և իցէ՝ ըստ Առաքելոյ բանին։ Արդ որ զմարդիկ խռովեցուցանեն՝ պատուհաս կրեսցեն, ոլքան որ զՅԾ և զընտանիսն նորա զՀրեշտակս և զսուրբս։ Զի այ դատաստանքն ՃշմարտութՃեան են, ասէ, 'ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն։

Եւ զի երրորդ մարդկային կեանք բացայայտին, առաջին է յորովայնի մօրն սաղմն առեալ և աՃեալ, 'ի մթին և յաղջամղջին արգանդին զկեանս տնօրինեալ մինչև 'ի ժամանակս ծննդեանն։ Եւ երկրորդ՝ կեանք երկրագործ. որ յաշխարհիս քաղաքավարի ըստ աշխարհիս բերմանց, նախախնամութիւն արարչին դարմանեալ յերկրէ և 'ի ծովէ։ Իսկ երրորդ՝ կենդանեաց աշխարհն. ուր ոչ լսի համբաւ մահու. որ ոչ փոփոխի կենդանի երանութիւնքն, անհրաժեշտ պայծառութիւնն, անմոռաց ուրախութիւնն։ Զոր ոչ կարէ ասել բան, զի անՃառելիք են. և ոչ ունկն կարէ լսել, զի անհամեմատ է 'ի լսել. և ոչ միտք բովանդակեն, զի անիմանալի է քննողաց։ Զի և ոչ զյորովայնի ըզկեանսն կարէ ոք ասել զյօրինուածսն. այլ և ոչ զերեւելիսս ոք բովանդակի ասել, որ 'ի յերկնէ և 'ի յերկրէ և 'ի ծովէ կեանք մարդկան 'ի ինամոց այ մատա-

կարարին, թող թէ զառհաւատչեայ յուսոյն զանանց կեանսն։ Բայց հրաւիրեն զիրք միայն խոստմամբք զարքայութիւն հաւատացելոց, և յորդորեն յուսով զոգնչախոհսն՝ թէ որ զերկինս և զերկիր եւ լրիւ իւրով ի մտանդ ամ՝ բարեօք վասն ոչ մի իրիւք լաւութիւն, ապա ի սոցանէ յայտ է անտուտ խոստմունքն ի բարերար տեառնէն սիրողաց իւրոց։

Լաւ զի ոչ կարեն ձանաչել սիրողք այ զՀանդերձեալսն, այլ ի բանէն տեառն. «Ծագեսցեն, ասէ, արդարքն որպէս զարեգակն յարքայութիւն այր»։ Եւ որ պէս ոչ է նման խաւար արեգական լուսոյ, սոյնպէս և ոչ արեգական լոյս կենդանի լուսոյ փառացն հաճմեալ է, զոր զգենոյց են սուրբքն զանատուերք լոյսն զմանդիանաւորն զանփոխին՝ որ լին է կենդանաբար քարութիւք։ Զի որպէս ի զգալիսս արեգակ, յիսնանալիսն ասէ է՝ որ լուսաւորէ զնմա։

Օ ի որք ասա բան խրատու պատուիրանաց տեառն հրամանգեն զինքեանս ի վարս առաքինութեան, առհաւատչեայ յուսոյն իբրև ի տուրնիեան բարեձև կարգք վարեն զաշխարհ, և ոչ մեկինն ի նորա կամացն, ոչ ի տխրակնանց և ոչ ի հեշտականաց, և ոչ խառնվեցուցանել զանձ և զոգիս անմարմնոյն տրամեցուցանել և զՀոգիս արդարոցն ի զգայութիւն ընդհանուր, Որ յամ դժնդակաց չարժմունս՝ որ ի սուգ և ի վիշտս՝ ի նեղութիւն և յանդորրու՝ արտաքոյ կամացն այ գոծէ։ Խակ որ առաքինաբար անցանեն ընդ վիշտս և ընդ նեղութիւնս՝ ոչ ինչ ինքսեալ ի պատահեալն, ուրախ առնեն զանձ, և ի հրճուանս զոգիս հրեշտակաց և զոգիս արդարոց, ըստ այնմ օրինակի զոր վերագոյնն ասացաք։ Եւ լուսաւորեալք լուսով աւետեացն՝ փոխին յանմահութիւն կեանսն։

Խակ որք մեղաւորքն են վախմանեալ ամբարշտութիւք և անիրաւութիւք և յուսահատութիւք, նոքա են ողբոց արժանի և արտասուաց։ Որք վերիպեցան ի խոստացեալ բարեացն և յանսպառ ուրախութիւնցն, և հրաւիրեցան յանչէջ հուր գեհենին և յանմահ տառապանսն, ուր լալ ոչաց և կրճել տատմանց է միշտ։

Օ ի որ զՏամարեարն հաւատով և զարեգործն վարուք ագան անցոյց, նոքա ընդունին զպատուհաս

փոխանակ անյուսութեան 'ի տեառնէ, և զՀրաժարելոյն հոգիսն ՀՍասեն։ Արտասուք օգտակար այս են 'ի տէր, որ զմեռելոյն զյիշատակս մեղացն և զանձանց առաջի այ ընծայել և ոչ առաջի հրապարակաց. որ լինի սրբարան մեղաց և ոչ 'ի պատիժս։ Եւ Ջերմեռանդ արտասուօք միշտ յաղօթսն կանխել 'ի տուէ և 'ի գիշերի հսկել։ Եւ ցաւագին հեծութիւն և պահօք պնդութիւն, բազում զղջմամբ և ապաշաւանօք զսխալանսն սգալ հանապազ, որ վրիպեցան յերկնային լուսոյն և 'ի յայտնութենէ փառաց մեծին այ։ Զի որ իւր մեղօքն 'ի խոստացեալ այ բարեացն զրկեցաւ, զնա սգասցուք այնպիսի ապաշաւանօք, և եղուկ վարկանել զվրիպեալսն յանանց բարեացն։ Եւ արտասուալից աղօթիւք և առատատուր ողորմութիւք և ամ բարեգործութիւքք հանդերձ Քեռի պատարագաւն զայծ 'ի հաշտութեան ածել, և 'ի հրաժարելոյն՝ մխիթար լինել 'ի հանդերձեալսն։

Այսոքիկ են որ զանձն օգտեցուցանեն, և զՀրաժարեալսն՝ իւրեանց մերձաւորքն և զմտերիմ սէրն ցուցանեն վասն հրաժարելոյն յերկրէ։ Վասն հաւատացելոցն յուսով զննջեցեալսն և Առաքեալ մխիթարէ և ասէ. «Մի տրտմիք որպէս և հեթանոսք, որոց ոչ գոյ յոյս. զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց, նոյնպէս և զվախճանեալսն մեր և զմեզ յարուցանէ և յանդիման կացուցանէ իւր հանդերձ ամենայն սրբովք 'ի գալստեանն իւրում Քրիստոս»։ Ի զօրս մանկաբայելեցւոց երևի յոյս. որ զնիշ հեթանոսաց յանձին ունելով անկան 'ի պատերազմի, և զնոցա աւարն ետուն զքահանայսն, զի աղքատաց բաշխեսցեն 'ի քաւութիւն նոցա մեղացն՝ որ վրիպեցան 'ի Աշմարտիցն։ Եւ զի գիրք են մեր վարդապետք, և 'ի ձեռն նոցա զյաւիտենից զյոյսն ընկալցուք, և նոքօք վարեսցուք յաշխարհի. զի Աշմարտեալք սուրբ սիրով փոխեսցուք 'ի կենդանի յոյսն երանութեան՝ որ կայ և մնայ։

Պատուական՝ ասէ մարգարէն զմահ սրբոց առաջի տեառն ամենակալի։ Եւ ի՞նչ է պատուական մահ սրբոց. որ Աշմարիտ որոշմամբ զլաւսն 'ի հանդէս ա-

1 Միւսն հրաժարելոյն։

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՐԵԱՆ

ռաբիութեան ցուցեալ 'ի յոյս կենացն յաւիտենական։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի յանցաւոր կենացս յայսցանէ 'ի մշտնջենաւոր կեանսն փոխին։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի 'ի վշտագին նեղութենէս այսոցիկ 'ի հանգիստ բարեացն փոխին։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի 'ի թշուառութենէ և լեղեալի կենացս յերանելի կեանսն փոխին։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի յակամայ փոքանաց հոգւոյ և մարմնոյ ազատի և յանդորր փոխի։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի զծերութենէ և զտկարութենէ թողուն, և 'ի նորոգութիս վերստին փոխին։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի սիրոմբ որով յաղթեցին ՝ամ կարեաց մարմնոյն, 'ի նա փոխին։ Եւ է պատուական մահ սրբոց ՝այ. զի զմեղացն մահ մեռանի յերկրի, և կենդանի յուսոյն փափաքեցին. զի յորժամ Քս յայսմեսցի կեանքն մեր, յայնժամ և սուրբք ընդ նմա փառաւորին։ Զի սուրբք կենդանի երանութիւք կացին յաշխարհի, և այժմ կենդանի են առ ՝այ ինամսն։ Զի հոգիք արդարոց 'ի ձեռանս՝այ են ուրախարար յուսոյն ըստ անսուտ խոստմանն ՝այ. զոր 'ի յարութենն ընդունելոց են զնառս յաղագս սրբութեանն և արդարութեանն յարքայութենն երկնից յամենասուրբ Երրորդութենն։

Իսկ որ կենդանի մարմնով մեղացն յաշխարհի վարին զաղիր ախտիւք և դժնդակ վարուք, կենդանի մեռեալս կոչեն ՝ածային գիրք։ Որպէս զայն որ ասաց տէրն՝ մեռելոցն մեղօք թաղել զկայրն մեռեալ, և նմա քարոզել զարքայութենն ՝այ։ Զի որ յուսահատեն 'ի կենաց անտի և օտարացեալք յայ և յուղիղ վարուց, նոքա են ստուգապէս մեռեալ։ Եւ որք արարին զկամս մարմնոյ և զմտաց, որպէս 'ի գերեզմանի թաղեալ կան նեղեալ մեղօք 'ի մարմնս անսրբոց և պղծոց և անխրախք յամ յանցանս. որք և ժահահոտութիս բուրեն զանօրէնութենէն։ Որպէս տէրն ցուցանէ զփարիսեցւոցն ժողովն. որ 'ի վերջ երեւեն ինչ, և 'ի ներքոյ լի են ամբարշտութեամբ չարեօք և հայհոյութեամբ։ Զի որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա, տամ մարգարէն. գատեա զնոսա, տէր ՝ած, զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց չարաց։ Զայնպիսիսն ողաս-

ցուք, որ կենդանի մեռեալք էին և մեռան զհասարակացն մահ անմխիթար։

Զ մահ մեղաւորաց չար ասէ մարգարէն յաղագս դժնդակ անսուրբ վարուց. բայց որ ատէին զարդարս յաղագս ողջախոհ խրատուց՝ ղղջասցին, զի հրաւիրեցան յանշէջ հուր գեհենին։ Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի յուսահատութիւն է վախճան նոցա. զի մեղան և ոչ զղջացան և ոչ ապաշխարեցին և հաշտեցուցին զՅԾ։ Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի ելին 'ի ժառանգութենէ հրեշտակաց, և եղեն ժառանգորդք դիւաց և յաւիտենից տանջանացն՝ որ նոցա էր պատրաստեալ յամենեցունց տեառնէն։ Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի ել յայս աշխարհէս որ անզգայաբար կեայր և ոչ առնոյր 'ի միտ զօր ելիցն. զոր ոչ կարէ գործել զկնի աստի վճարելոյն զբարի և մոռանել առՅԾ։ Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի լսեն յամենեցուն տեառնէն՝ երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից. որ սատանայի կամարարք եղեն և ոչՅ՝ որ արար զՅՄ 'ի բարի կամս։ Ի՞նչ է չար մահ մեղաւորաց. զի դրունք կենաց ապաշխարութենն փակեցան, և ոչ ևս է լսել 'ի տեառնէ՝ դարձարուք առիս, և ես դառնամ առ ձեզ. այլ թէ՝ հանեք 'ի խաւարն արտաքին, զի ոչ լուան ինձ։ Ի՞նչ է չար մահ մեղաւորաց. զի բանան դրունք մահաբեր դժոխոցն յաղագս զանազան դժընդակ չարեացն զոր գործեցին, և ոչ յիշեցին զտանջանսն յաւիտենից մեղաւորաց։

Զ՞ի անդ զղջումն անօգուտ է. զի արգելեալ է գութ մարդասիրութենն, որք յառագաստէն արտաքս անկան։ Եւ կամ կաթի ջրոյն կարօտին Ղազարու, և կամ շիջեալ ջահիցն իւղ, և որ այլ ևս են անշրջելիք. և ոչ ուստեք գտանել այցելութիւն։ Այլ երթիցեն մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենից, ասաց բանն ՅՄ մեզ. իսկ արդարքն 'ի կեանսն յաւիտենից։ Որոց պատուական ցուցան մահ սրբոցն առաջի տեառն յաղագս սուրբ և ուղիղ վարուց ՅՇմարիտ հաւատով, լուսաւորեալք 'ի լոյս կենացն յաւիտենից։ Զի 'ի վերայ արդարոց և մեղաւորաց յանսուտ բանէն յաւիտենիցն է հաստատեալ, և ոչ ունի փոփոխումն. «Երթիցեն մեղաւորքն յաւիտենից տանջանսն, և արդարքն

գարքն յաւիտենից կեանսն։ Եւ գովիչք և փառաւորիչք լինին միոյ ՅԱԾՈՒԹԵՆ, և փառաք և պատուով և պարծանաք երանին և պատկին, և մտանեն 'ի ժառանգութիւն որդեգրութեն, և վայելին յանապատարարին 'ի փառս ամենասուրբ Երրորդութեն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՀԱՆԴԷՍ ՎԱՍՆ ԼԱՒՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՑ
Ի ՊԷՏՍ ՕԳՍՏԻՍ
ԶԱՆԵՐԵՒՈՑԹՍՆՑԵՐԵՒԵԼԻՍ ՅՈՒՅԱՆԵԼՈՎ Ի ԳՈՐԾ
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ
ՓՈԽԻԼ Ի ՅՈՅՍՆ ԿԵՆԴԱՆԻ Ի ԲԱՆԱԿՍ ԶՈՒԱՐԹՆՈՑՆ
ՈՐ ԱՍՏ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԶՀԱՃՈՑՍՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԺԳ

Ավ խորք մեծութեան և գիտութեան և իմաստութեան այ. որ բազում հնարիւք ունկնդրաց և հնազանդելոց առաջնորդէ 'ի հաճոյս տէրութեան իւրոյ, և զգուշութիւն և զգաստութիւն սուրբ սիրոյն յորդորէ 'ի պահպանութեան պատուիրանին. զի հասցուք 'ի դուռն փրկութեան կենաց 'ի հանգիստ նախախնամական սիրոյն, և իրաւամբք արդարութեան ժառանգեսցուք զպատիւ փառացն, և հաւատովք հասանել 'ի յոյսն Ճշմարիտ։ Զարթնուլ 'ի կոչումն բանին կենաց ըստ պէսպէս շնորհացն. ընուլ զարժանն և զիրաւն. առնուլ յուսով զառհաւատչեայ աւետիսն, և թռչել թեւօք հոգւոյն յերկնից արքայութեանն, և դեղեցիկ վարուք լինել Ճանապարհ բազմաց 'ի կեանսն։ Եւ յիշատակաւ յուսոյն յառաջիկայսն ընթանալ, և զկնի ծաւալել Ճշմարիտ հաւատով զստուգութեան [1] վարսն 'ի նախանձ բազմաց։ Զի առաջինքն օրինակ են վերջնոցս 'ի բարի յորդորումն, և վերջինքս հանապազ նորոգին յիշատակաւ առաջնոցն առաքինութիւնքն։ Գովելով զնոսա և գոհանալով փառաւորեն զնա զտուիչն այնպիսի շնորհաց մարդկան։ Եւ այնպէս յորդորիլ 'ի սէրն այ, և բերանով խոստովանիլ զՃշմարտութեան ամենակալ զօրութեանն այ, և ընծայաբեր լինել բարի պարգևաւ արդարութեան ամենեցունց տէառնն՝ առաջ

1 Միւսն զՓառոՒԷ։

նոցն գործակցութիւն Հշմարիտ նոցա հանդիսիւքն։ Այլեակ համարել զանձինս 'ի նոցա անտի յուսոյն և 'ի մտերիմ սիրոյն և առհաւատեալ միշտ բարեխօս առ տէր։ որպէս զի Հշմարտեալ հեռեալ լիցին 'ի կամ տարուն լրման առաջնոցն՝ որ յուսոյն իւրեանց կենդանի են այ։

Եւ հաստատեալ յուսոյն մի շահ է. զի առաջինքն ուրախ լինին 'ի վերջնոցն բարեգործուն, և վերջինքս հաստատին յառաջնոցն կատարելութիւն յուսոյն։ Եւ առաքինութիւնք առաջնոցն ժառանգուն առնի վերջնոցս. զի մնացուածք բարի գործոց առաջնոցն առնուլոյն 'ի վերջնոցս ասի։ Եւ եթէ յանցաւոր ես ի ցէ լեալ և ստոյգ խոստովանեալ և ապաշխարեալ ջերմեռանդ արտասուօք և գթով մնանկաց և ամ տեալ Հանդիսիւք որ ընդգէմ մեղայն, եթող զկարգ բարի վերջնոցս իբրև ժառանգութիւն խոստովանողաց և ապաշխարողաց և ջատագով մեղուցելոց։ Զի գթութիւնայ կոչէ զվերջինքս ըստ առաջնոցն կարգաց. զի բարձրի 'ի միջոյ պարարիւն փնաուուց, և ապատեալ 'ի մեղաց ստոյգ ապաշխարութիւն մոցեն 'ի ժառանգութիւն հեռացեալքն յամ փնաստկարաց, որ անհաւատութիւն և անսուրբ վարուք ապականեալ էր 'ի Հոսանս չարեացն, և բժշկեալ լինէին 'ի սրբութիւն և յառողջութիւն համ անդամոլքն։

Եւ սովորութիւն իսկ է գրոյ՝ զառաջնոց լաւացն զարի յիշատակս՝ որպէս և նուէրս պատարագաց վասն հաստատակաց յուսոյն կատարել վերջնոցս, և հաւատով և ուղիղ վարուք կալ 'ի մշակութիւն հաՀոյիցն այ՝ որ յոյսն է կենդանեաց և մեռելոց։ Եւ բաղումք են վերջինքք՝ որ վասն առաջնոցն աղօթս և պատանս և նուէրս մատուցին այ և եղև ընդունելի. որ ուղիղ խոստովանութիւք գաՀան առ նոՀ յայսաշխարութիւն։ Որպէս Աբաքեալ յուսցանէ զընդրութիւն հաւատոց և գարգար վաստակոց. և նոցա յիշատակօք բարեխօսութիւն գՏաշտութիւն պատարագս մատուցանել վասն նոցա և մերոց։ Որպէս և զԱբէլին զարգարև զուղիղ պատարագն յիշէ. որ ամ պատարագաց է գլուխ, միջնորդ և բարեխօս վերջնոցս իւր մտերիմ և սուրբ ՀաՀոյակատար կամաց։ Եւ որ զիմի նորա առաքինեցան անարատ մնաց,

որպէս Ենովս և Ենովք և 'Նոյ հաճոյ եղեն այ, և հաշ-
տարարք կան առաջի տերութեան նորա վասն հաւատա-
ցելոց 'ի տեր ամ։ Որպէս Աբրահամ և Խահակ և Խ-
ըսյել՝ որ հանդիսիւք լաւութեան առին զընտրութիւն։
Վասն որոյ ոչ ամօթ համարի ամ առնել զնոսա խոր-
հրդակիցս, և յայտնել զծածկեալս որպէս մտերիմ
սիրելեաց։

Եւ 'ի նոցա ծննդոց զօրէնսդիրն և զմարգարէս և
զքահանայս և զթագաւորս յարոյց և զայլս բա-
զումս։ Զի և Մովսէս լաւ համարեցաւ չարչարել ընդ
ժողովրդեանն այ, քան առ ժամանակ մի վայելել 'ի
հեշտութիւն։ Որոյ ելեալ 'ի խաւարային վարուց եգիպ-
տացւոց յանապատ պանդխտանայր. և անդ առնոյր
հրաման յայ դառնալ անդրէն և հանել զժողովուրդն
յերկիրն աւետեաց նշանօք և արուեստիւք, և նովաւ
կատարել զուխտն որ առ հարսն էր յուսացելոց։ Զի
«Ես եմ, ասէ, ամ Աբրահամու և ամ Սահակայ և
ամ Յակովբայ»։ Եւ չասի ամ մեռելոց մեզաւորաց,
այլ կենդանեաց արդարոց. զի արդարք՝ այ կենդանի
են, զի սիրոյն այ և յուսոյն միշտ առաջի այ են։ Եւ
մեք հաստատեալ 'ի հաւատս և 'ի սուրբ սէրն այ,
որպէս զի Հշմարտեալ սիրոյն առցուք զյոյսն՝ որ առ
ամենազօր տերութիւն. և ամենայն արդարոց յիշա-
տակօք միշտ նորոգել 'ի մեզ այ սիրոյն՝ որ 'ի նոսա մա-
տակարարէր։ Եւ ըստ այսմ օրինակի ամ յոյս սրբ-
բոյն կենդանի է առաջի այ և անշէջ. և առանց մո-
ռանալոյ է յիշատակ սուրբ սիրոյն յուսացելոց 'ի
տէր։ Որպէս յանցանքն Ռուբէնի առ հայրն հանին
զնա յօրհնութենէ հօրն, և անարատ սրբութիւն 'ի
մէջ ածէ զՅովսէփ յօրհնութիւն հօրն, և 'ի ժառան-
գութիւն եղբարց իւրոց 'ի յելս զԵփրեմ և զՄանասէ.
և եղև պատճառք կենաց ամենայն ազգին սուրբն և
անարատն։

Հասանէ ահ 'ի վերայ Երուսաղէմի վասն անիրաւ
ժողովրդեանն յաւուրս Եզեկիայի 'ի Սենեքերիմայ։
Այլ աղօթք թագաւորին և Եսայեայ դարձոյց զբար-
կութիւնն 'ի թշնամիսն այ. և սատակեցան այնքան
բիւրք, և կորեաւ յիշատակ նոցա 'ի միջոյ։ Յայնոսիկ
և զԴաւիթ յիշէ՝ թէ վասն նորա։ Զի ամ արդարք

յիշին առ այցելութիւն աշխարհի ՝ի սուրբ գիրս յիսկզբանց անտի մինչև ցդալուստն Քրիստոսի, որ զառաքինութիւն երկաքանչիւրոցն բացայայտէ. զի ըստ հաւատոց մեռան սմա սուրբք։

Իսկ յորժամ Ծագեաց տէր մեր Յն Քս արեգական արդարութիւն և փրկիչ աշխարհի, կատարեաց և էլեալ զառաջին օրինակն պակասութիւն. զի երանց զնոր շնորհս զկենացն զգրուեսս ՝ի ձեռն աւազանին լուսաւորութիւն ուղիղ հաւատով յամենասուրբ Երրորդութիւն. և մեռանել զմեղացն մահ ՝ի ջուրսն սրբութիւն, և ընդ Քրիստոս յարուցեալ ՝ի նորոգուսին կենաց կայ և մնայ։ Եւ թէպէտ մեռանին, կենդանի են Հոգւով ՝ի յոյս կենացն յաւիտենից։ Եւ մերկացեալ են զհին մարդն, որ վասն ժխտիցն Քրիստոս օրինացն պարտական էր. զի զՔս զգեցան և զկերպարանս որդեգրութիւն առին և ժառանգաւորք եղեն Քրիստոս։ Մանաւանդ որ զՀմարիտ հաւատս և զուղիղ վարս մինչև ցդալիճանն պնդունիցին յուսովն Քրիստոս. զի յոյս նոցա ընդ Քրիստոս է յարուցեալ, և ընդ Քրիստոս նստի ընդ աջմէ մեծութիւն ՝ի բարձունս և բարեխօսեն Քրիստոս առ Հայր վասն սրբոց։ Որք ՝ի Քս մկրտեցան Հմարիտ հաւատով և սուրբ սիրով հաղորդութիւն մարմնոյ և արեան փրկչին. որ գրաւական է յուսոյ փառաց յարութիւն ըստ բանի տեառն, «Քանիցս անգամ ուտիցէք ՝ի մարմնոյ իմմէ և ըմպիցէք յարենէ իմմէ, զյիշատակ մահուան իմոյ պատմիսջիք մինչև ՝ի դարձ գալստեանն իմոյ յերկիրս»։

Օ՛ի նա է ազատիչ և արդարացուցիչ, որում լուծանին մեղք հին մարդոյն և սկիզբն առնուն նորքս, որ ըստ այ հաւատով սուրբք և Հմարիտ ՝ի Քս Յն մեկնեալ յիմ՝ արեաց, և յարդարեալ ամենայն բարի գործովք աւետեաց յուսոյն կենաց։ Զի մահաւանն իւրով եղոյծ Քս զզօրութիւն սատանայի, որ զիշխանութիւն մահու ՝ի ձեռն մեզաց ունէր. և կեանք թագաւորեցին արդարութիւն. և յոյս յարութիւնն հաստատեալ կայ ՝ի Քս։ Զի յարոյց զմեզ, ասէ, ընդ իւր, և նստոյց յերկնաւորսն ՝ի Քս Յն յոյս հաւատացելոց և սրբոց։ Զի զմարմնոս իւրեանց ՝ի խաչ հանին, ասէ, ընդ Քրիստոս կարեաք և ցանկութիւնքն հանդերձ. որ և ընդ նմին փառաւորին և յուսովն զուարճանան։

Զի Քոյ սուրբ սիրոյն խրախուսեալք սրբոյն յուսով՝ի ձեռն հաշտարար պատարագին՝ որով փրկեցան արարածք։ Որ զաներևոյթն երևելեաքս ելոյց կամաւոր խաչելութեն՝ի հաշտեցուցանել զաբարիչն ընդ արարածս։ Եւ լուսաւոր վարդապետութեն ստուգեաց զՀշմարիտ հաւատս յամենասուրբ Երրորդութեն։ Եւ բառնայ զվիշտս վտանգից՝ի մարդկանէ՝ի պէսպէս ցաւս և՝ի տանջանս ըմբռնեալս. զքաղցեալս կերակրելով զբազումս յանապատի, ըզմեռեալս յարուցանելով, զդևս հալածելով։ Եւ ազատեալ զմարդիկ՝ի կշտամբանաց նոցա՝ բառնայ իւրով չարչարանաքն զամ վիշտս՝ի մարդկանէ, և պէսպէս երախտեաք արժանի առնէ հայրական խնամոց և ընորհաց Հոգւոյն սրբոյ և խոստմամբ բարեաց այ։

Եւ՝ի մատուցանել զահաւոր և զսարսափելի ըզփրկական զխորհուրդն, և անդ յիշէ զմարդասիրութեն երախտիս. և խնդրէ ջերմեռանդ արտասուաք զքաւութի մեռելոց և կենդանեաց, առցէ զինդրելին։ Մանաւանդ եթէ սուրբ իցէ և անարատ և ազատ՝ի մեղաց մատուցող պատարագին, և Հշմարտեալ հաւատով ստանայ անձին զփառացն պսակս։ Եւ վասն որոց պատարագն է, քաւութի յուսով ընորհի՝ի բարերար տեառնէն։ Զի եթէ որ ունի խեթ ինչ զընկերէն՝ թողուլ տայ զպատարագն մինչև հաշտեսցի, ապա վասն այլ չարեաց և դժնդակ վարուց զի՞նչ պարտ է ասել զարհաւիրս սպառնալեաց պատուհասից, որք ոչ սրբութեք զպատարագն ընծայեն այ, և որք անարժանութեք հաղորդին։ Այլ որում շատն տուաւ ընորհ, շատ խնդրի. և որում սակաւն՝ սակաւ, ասէ տէրն յաւետարանն մեզ։ Զի կատարեալ առաքինութի խնդրէ Հշմարտութի՝ի սպասաւորաց խորհրդոյն. զի կեանք է փրկութե մերոյ, և մի լիցի կամակար մտաք՝ի դատապարտութի՝ի տեառնէ. զի ամ ինչ նոքաւ է և՝ի նա կատարի՝ կենդանեաց և մեռելոց։

Այլ և սրբոց առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց յիշատակք՝ Քոյ պատարագաւն կատարի, խորհրդածեալ փառաբանութեք զսրբոյն նահատակութիս վերաձայնելով յորդորումն ածասիրաց և՝ի գովեստ ամենասուրբ Երրորդութենն՝ որ ետ զյաղթու-

թեն Հոգւոյն ամ սրբոց իւրոց։ Զի ուրախութիւն է զոքայ երկնաւորաց յիշատակք սրբոց, որք յաղթեցին բանաւորաց և հրեշտակացան։

Բդ Հոգիք արդարոց ՝ի ձեռին այր են ընդ անմարմնոյն գաւուց, աբանելի ինն ՝ի փառս այր ուրախութիւն յուսոյն։ Եւ ՝ի հասարակաց յարութեանն զկենակից մարմինն առնու յերկրէ, որում Հաճոյացաւն այր. և լինին որպէս հրեշտակք յերկինս ըստ բանին տեառն։ ասէ. «Ի յարութիւն ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին. այլ են որպէս հրեշտակք յերկինս», զի յարութիւն որդիք են և ոչ ունին մեռանել կամ մեռանել։ Տեսեր, զի յոյս կենդանեաց բնակութիւն է հրեշտակաց և արդարոց, և ՝ի միասին ուրախ լինին։

ԲՀլ և որք մեռանն և ստոյգ խոստովանեալ ապաշխարեցին ՚Ջերմեռանդ արասաուռ և ամ բարի գործով, և նոքա ոչ զրկեսցին ՝ի հանդերձեալ յուսոյն. ամ Ճշմարտաբար ՝ի հաւատս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, լուսաւորեալ միրտութիւն և մարմնով և արեամբն Քրիստ, որդիք լուսոյ և ժառանգք արքայութիւնն են, քաղաքակիցք սրբոց և ընտանիք այր։ Զի մի է ոճ և մի հաւատ և մի միրտութիւն և յոյս կենդաբար։ Եւ ուրախ լիցին յուսովք սրբ կատարեալ գլխաւորակ սրբոց հաւատալք. զի և նոքա զուարճանան նոցա սիրովն, որ յաղագս այր զայս յուսով կատարեալն ամ բարեգործութիւքք ՝ի Քրս։ Եւ մնացեալքն ՝ի բարեացն առաջնոցն ՝ առնու զլուսն վերջնոյնս. զի և զմնա ցուածս մարգարէիցն լցին առաքեալքն, և զնոցայն հաստատեցին վարդապետք զհաւատս և զլարս և ըզվարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց։

Ցուեալ իակ են յամենեցունց տեառնէն և պակքն. զի «Ամ փառք արեգականն է, ասէ Պաւաբեալ, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառաւ. սոյնպէս և յարութիւն մեռելոց»։ Զի իւրաքանչիւր զիւր փառս զգենու ՝ի տեառնէ ըստ արժանաւորութեանն ՝ի միոյ ՝ուծութենէն փառաց՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Զի մի յոյս է վերին կոչմանն այր մի մնութիւն ՝ուծութիւն, մի խկութիւն,

1 Վերին յառաջնոցն։

անփոփոխ մնանելնաւորութիւն, մի ամենակալ զօրութիւն, անվրէպ գիտութիւն, անպէղջ իմաստութիւն, անակիզն էութիւն. որ յիւր 'ի Ճշմարիտ 'ի կենդանի փառն և յանմատոյց լոյսն բնակեալ է։ Եւ սուրբ սիրոյն իւրոյ խնամք առ արարածս լուցեալ բորբոքի անՃառ և անպատում բարութիւնն։ Եւ զարարածս ամ զրանաւորս և զմտաւորս յանՃառ երանութիւնն հրաւիրէ, և կոչէ յիւր արքայութիւնն և 'ի փառս անՃառս և յանվախՃան երանութեանցն ուրախութիւնն։

Ա.Յլ զյիշատակս առնել արդարոցն կատարելոց, նոցա նահատակութիւնն և սիրոյն որ առ ած վկայք, և բազում շահս անձանց ստանալիք սրբոցն բարեխօսութիւք առ տէր։ Իսկ զհաւատացելոց մեղուցելոց և խոստովանողաց և ապաշխարողաց և հաղորդեալ փրկական խորհրդոյն, և հրաժարեալք յաշխարհէս, և նոցա կատարեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն, և աղօթիւք և գթով տնանկաց և այլ բարի գործովք. զի վերջնովքս բարեգործութիւքք հանգուցեալքն նորոգեսցին նորոգութիւք կենացն անվախՃանից։

Այլ եթէ ասիցէ ոք, եթէ զիարդ մնա 'ի վախՃանն ողջացեալ խոստովանի և ողբայ զգործեցեալ զյանցանսն, և խոստանայ ապաշխարել, և խնդրել զմարմին և զարիւն Քրիստոսի հաւատովք 'ի քաւութիւն, զինչ առ յոյս փրկութեան իցէ։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զի եթէ մնա 'ի վախՃան իցեն, և 'ի հրապոյրս սատանայի ընդունեալ 'ի դժնդակ վարս, և օտարացեալ 'ի նախախնամական սիրոյն յառաջագոյն, և դառնայ 'ի վախՃանի 'ի զղջումն և 'ի խոստովանութիւն ջերմեռանդ արտասուօք, և 'ի բոլոր սրտէ հաւատով հայցէ զփրկական խորհուրդն, յուսով ապաւինեալ 'ի մարդասիրութիւնն Քրիստոսի, մի անյոյս լիցի 'ի վստահացեալ բարութիւնն, զզջմամբ և կենդանարար մարմնով և արեամբն Քրիստոսի փրկչին մերոյ, որ տայ զկենդանութիւն ստեղծուածոց իւրոց. զի ամենայն որ կարդասցէ զանուն՝ տեառն՝ կեցցէ։

Բայց որ ոչ դարձան յառաջագոյն յապաշխարութիւն և ոչ ի վախճանի զղջացան, և յուսահատ և առանց խոստովանութեան և անմերձ ի փրկական խորհուրդն՝ զինչ պարտ է ասել վասն նոցա յիշատակաց. որ բազում ողոց և արտասուաց արժանի են, և ծանր վիշտս ունին ի Քեզ։ Բայց յառաջագոյն մեղուցելոցն և ստոյգ խոստովանողացն և ապաշխարողաց միշտ կատարեսցին յիշատակք. և որ ի ժամ ելանելոյն զղջանան։ Բայց և բազում բարիս ցուցանել մեցելոցն յաղագս հրաժարելոցն յաշխարհէ. զկարեալս արձակել զպարտս թողուլ, զկարօտեալս լցուցանել բարութեամբ։ Զի է զոր ինքն արար բարի, և է որ պատուիրեցաւ առնել. և երթայ զՀետ բարի գործոյն ի հաւատարիմ սիրելեաց հրաժարելոցն յերկրէ։

Օ՛ի որ մերձեցան ի սրբութիւնն ստոյգ զղջացելքն, իբրև հուր սրբիչ և ազատիչ և լուսաւորիչ է իւրով ընծայիւքն, մեերիմ հաւատով վկայութիւն ահիւն այ. որ զգուշութիւն և արդարութիւն լի է։ Որ սկիզբն է ամ շահաւոր օգտից երկեղ տեն ըստ իմաստնոյն բանին. և ամ անհնարինք հնարաւորք են երկեղածաց այ։ Եւ որ հեռի է յերկեղ տեն՝ ի ծուլութիւն և յարհամարհութիւն այ պատուիրանին կրթի, և յամ բարեաց խորհրդոց և գործոց հեռանայ, և յանիրաւութիւն սոսրի։

Բայց որ փոյթն է ի հնազանդութիւն հոգևոր օրինացն երկեղիւն այ, միշտ ընծայաբեր լինի այ՝ ի ձեռն սուրբ հրեշտակաց ըստ բանին տեն որ ասէ. «Զգոյշ լերուք, մի արհամարհէք զմի օր՝ ի փոքրկանցս յայսցանէ. զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է»։ Զի զհաւատն գործովքն զօրացուցանէ, և զաղօթսն սիրով զղջմամբ և անձկալի և անմոռացիկ ինդրուածովք. անշարժ ուներ առ ՀՐ զկամին ի նեղութեան և յանդարդ. և առնուլ զյաղթութեան չնորհս առ մարտս մտաց և անդամոց ի բարերար խնամոյն այ։ Եւ սուրբ սրտիւ և անկեղծաւոր հաւատով առաքինանան և արան առնեն զՀրեշտակս կենդանի սիրով և զուարճանան միշտ ի նոցա բարի գործս։ Զոր ոչ է իմանալ կամ

տեսանել որ յայ է նոքօք մեզ զպահպանութիւն, որ պատրաստեցաւ յայ խնամոյն սիրոզաց իւրոց։

Օ յ ամ խորհուրդք կամ գործք մտերմութեան երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց առաջի այ ամենակալ հրութենն հանապազօր վերանայ 'ի կշիռս։ Եւ 'ի կողմն ճշմարիտ հաւատացելոց և սիրոզաց այ մահն Քրիստի յառաջանայ ամենաշահ չարչարանօքն՝ վկայութեամբ սուրբ սիրոյն իւրոյ՝ սրբոց իւրոց։ Եւ առնա ժողովի ճշմարտութեի արդարոց, քաջութիւնք նահատակաց և արդարութիք սրբոց, ժուժկալութիք կուսանաց, համբերութիք մարտիրոսաց։ Այլ և ստոյգ խոստովանողաց վարք շարժեն զգութ և զողորմութի խնամոց սուրբ սիրոյն։ Եւ գործք անօրինաց և անհնազանդից ամբարշտաց և մեղաւորաց և ամենայն չար ցանկութեց հանդերձ չար խորհրդակցօքն գիւօք կշտամբեալ յանդիմանին, և զարժան զհատուցումն պատուհասիցն ընդունին յարդար դատաւորէն և 'ի տեսողէն, որ գիտէ զվերինս և զներքինս։

Իսկ որ 'ի սուրբ սերն Քրիստի հաստատեալ են, որ զանձն իւր ետ 'ի մահ վասն նոցա, զի ազատեսցին 'ի դառն վշտաց յերևելեաց և յաներևութից, ապրեալք լինին, գործակից և բարեխօս ունելով զսուրբս և զամենայն արդարս։ Եւ բացցին դրունք կենաց բարեբարութե շնորհօք Հոգւոյն սրբոյ վերին կայանից, ուր ժողովք սրբոցն են հանգուցեալ։ Զի զամենեցուն կամի զկեալ և 'ի գիտութի ճշմարիտ կենացն լինել ժառանգաւոր. զի ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն 'ի Քրիստ։

Յ.յսքան շահք օգտից են զյիշատակս հանգուցելոցն առնել ուղիղ մտօք, արդար և ճշմարիտ և հրաւատով, ահիւ և սուրբ սիրով, ողջամիտ յուսով 'ի գովեստ այ։ Զի լինիցի ընդունելի մեր պատարագն 'ի ներքոյ վարագուրին կենդանարար'ի կեանս վերաբերելով, և վայելել յերանելի բարութիս 'ի խնամն կենարար սիրոմն աւետեացն խոստացելոցն։ «Զի ուր ես ես եմ, ասէ հրն, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ Զոր և բարեբար երկնաւոր Հայրն ուրախ առնէ զկոչեցեալսն յուրախութի, մարդասէրն միա-

ծին Որդւոյն իւրով և կենդանարար սուրբ Հոգւոյն ի բորբոքումն կենդանի սուրբ սիրոյն, յանհրաժեշտ և յանվախճան և յանհամեմատ յաճեցեալն բարու-թեան զիւրսն վայելեցուցանելով։ Նմա գոհութիւն և պատիւ և փառք յայժմուս և յաւիտեանս յաւիտե-նից. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՈՐ ՅԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ԺԴ

Մեծ է խորհուրդ ՝ծածպաշտութեան Ճշմարիտ հաւատով՝ որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին. և առաքինի գործովք արդար և սուրբ երևել առաւել քան զարեգակն լուսաւորէ զաչս մտաց հաւատայելոց, և հալածէ զխաւար մեղաց, և առաջնորդէ յարդարութիւն և 'ի սրբութիւն։ Ի բաց կալ 'ի դժնդակ վարուց և 'ի չար մտաց, և գնալ 'ի Ճանապարհս արդարոց՝ որ տանի 'ի կեանսն յաւիտենից։ Բարի կամօք զՀետ երթալ բարերար կամաց արարչին՝ որ 'ի չգոյէ 'ի գոյ էած, և յանարգութենէ 'ի պատիւ, երկու մասամբք՝ տկար և զօրաւոր, զմարմին և զՀոգին։ Զի տկարն Ճգնեսցի վաստակովք, և 'ի զօրութիւն արարչին ապաւինեսցի, զի մի վրիպեսցի 'ի բարերար օգնականութենանցն՝ որ առաքինացուցանէ արդար և սուրբ վաստակովք։ Եւ զանուն քաջութեան առնու, և գովութեամբ պարծանօք պսակի, և 'ի խնամս բազմադարմանս վայելէ յուսով երանելի կենացն։ Իսկ զօրաւոր մասն հոգւոյն Ճշմարիտ հաւատով և անսխալ և ստոյգ գիտութեամբ սուրբ երրորդութեան՝ որոշէ զսուտ պատիր մոլորութի, և ազատանայ 'ի ծառայութենէ մեղաց՝ վասն որոյ մահն 'ի ներքս եմուտ. և զերծեալ 'ի մեղայ՝ ժառանգաւոր կենացն եղիցի 'ի քն տկար մարմնով, և երևեսցի մըտերմութիւն 'ի Ճգնութի համբերութե յուսոյն։ Եւ զօրաւոր մասամբն երևեսցի շնորհն ՝ան ըստ Առաքելոյ բանին, որ խնդրեաց 'ի ՝անէ հրաժեշտ տկարութեն. որ Ճգնէր և աշխատէր և վշտանայր ազգի ազգի վշտօք և նեղութիւ։ Եւ լսէ 'ի ՝անէ. «Շատ են

քեզ՝ ասէ, Տնօրէն իմ՝ զի զօրութիւն իմ՝ ի տկարութիւն կատարի։ Վասն որոյ յօժարութիւն ընդունի զանմեծայն վիշտս չարչարանացն. զի տկարութիւն զօրութիւն կատարի։ Զի և մեկոք բազմագիմի աշխատութեամբ վաստակով յաղթին. և տէրն բազմաշնչահ պարգևովն փառաւորէ։

Վասն այսորիկ ի չորիցնութեանց աւար զարարածս, և յօրինեաց կարգաւ զերևելիսս և զանտեսանելիսն, և անաի զմարմնիս կազմեաց՝ ի ցամաքէ, ի խոնաւոյ, ի ջերմոյ և ի ցրտոյ։ Եւ յայս չորից նութեանց աւարան՝ ի ծառնոգս և ի դարմանս, զի երևեսցի խնամք տարաւութեան։ Երկինք ցոգոնին յամնոյզ զիջմանէ, և ջերմութիւն լուսաւորօք և խառնուածովք օդոյ՝ որ սրնուցանեն զտունկս և զբոյս և զամենայն շունչ կենդանի, և թռչունք երկնից։ Երկիր ջրով և լողակք և որ այլ զեռունք ամենայն՝ ի խնամոց այ դարմանին։ Զի նախ զՀոգին եդ զանտական՝ ի մարմին և խառնեաց, և ապա զպէտս դարմանոցն պատրաստեաց. զի ցուցցէ զսիրոյն խրոյզ ուսուցութիւն՝ որ յաստ բարեբարութիւնէն անտի։ Բանաւոր և մտաւոր ոգւոյն զօրաւոր դարմանս եցոյց՝ ի Տնօրէնէ Հոգւոյն սրբոյ՝ զիրատս ուսմանց՝ ի վարդապետաւէ Հոգևոր օրինացն։

Յայսմանէ Հոգևոր դարմանս վայելելոյ և ընտանեանալ ամենազօր Որդութիւն և խնամոց արարչին, որ յերկնէ և յերկրէ և՝ ի ջրոյ և յօդոյ զկենդան ամենեցուն յօրինեաց։ Եւ այսաբիւբ ուսուցանէ և ընդլացուցանէ մեծի յուսոյ աւետեացն խոստացեալ որդեգրութեան անմահ Ժառանգութեան։ որ Եւ ասէն զառհատուցեալ ազատութիւն Տնօրէնք աւազանին և մարմնով և արեամբն Փառ։ Զի տկար մարմնով Որդեանաւրեալ ազգի ազգի առաքինութիւնք, զՀամբերութիւն զՀանգիստս ցուցցեն բան Հաստատեցն այ, ահիւ և սուրբ սիրով առնել զկամն նոր։ Զի եթէ նոր է, ասէ, ուրէ երկիւղ նորա. և եթէ հայր, եղեցին կամք նորա որպէս յերկինս և յերկրի։ Եւ այս ուղղի՝ ի ձեռն օրինաց եդելոց և պատուիրանաց կարգելոց, և մարդասիրի մնել՝ ի լաւագոյն կարգս առաքինութեանն զօրութեան. և յաղթող երևեալ՝ պատկեսցի յարքայէն Փառ։

Բ. Յսու իրաւամբք յայտնի արար զիւրոյ բարերարութեանն զամենառատ ողնորհս։ Զի մուերիմ ծառայից գործակից է բարի վարուց. և ըստ խնամոց սիրոյն իւրոյ զնեղութիւն հանդիսից անցաւոր արար, և զհանդիսսն անվախճան։ Այլ և ինքն իսկ ոչն փառաց որ ամենայն զօրութենց և զօրաց արարիչ է և պարգևիչ յորժամ կամեցաւ ցուցանել զանեղևոյթս սեր իւր առ ազգս մարդկան, որ չարչարելին էր և վշտաւոր, որ աշխատելին էր. և նովին հոգւով միաւորեալ առ ՝ի Բանն՝ մտաւորն և բանաւորն, խառնեալ ՝ի մարմին ըստ աւետարանական բանին. զի «Բանն, ասէ, մարմին եղև և բնակեաց ՝ի մեզ. և տեսաք մեք զփառս նորա զփառս իբրև զմիածնի Որդւոյ առ ՝ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութիւնք»։

Զի ՝ի ձեռն ճշմարիտ շնորհաց իւրոց և կամաւոր խոնարհութենն՝ որ կրեաց զամենայն կիրս մարմնոյ և հոգւոյ բաց ՝ի մեղաց, զի ցուցցէ զփրկութիւն ճանապարհն արդարոց, և զինամս մեծի սիրոյն իւրոյ զդարմանս տեսչութենն, որպէս շնորհօք դարմանէ զորդիս մարդկան յերևելիս և յանեղևոյթս. ըզհիւանդս բժշկէր, զմեղս քաւէր, զդևս հալածէր, զմեռեալս յարուցանէր։ Եւ երբայ զդրուանս կենաց, և ազատեաց զհոգիս չարչարանօք մահուամբ իւրով։ Եւ կատարեաց զարդարութիւնն ամենայն ՝ի փառս և ՝ի պարծանս մարդկութեան մերում, և եղև վարդապետ ամենայն արարածոց. զի նորա առաքինութիւնն հետևողք եղեալ, և նորին փառացն հաղորդակիցք եղիցուք. որ կայ պահի յուսացելոց ՝ի Քրս։

Եւ վասն այսորիկ տկար է մարմինս, զի յերկրէ ունի զսնունդ՝ ՝ի բուսոյ և ՝ի տնկոյ և ՝ի հնչաւորաց. որպէս և ամենայն անբան կենդանիք։ Զի Նոյի հրամայեցաւ ուտել զմիս հնչոյ կենդանւոյ և բմպել գինի յաղագս տրտմութենն ՝ի մխիթարութիւն. զոր ուներ վասն համատարած աշխարհի սատակմանն սուգ։ Զի որ ՝ի դրախտին կեանք էր և անուն, յայնմանէ վրիպեցաք յաղագս յանցանացն և ընդ բազում տարկարութիւն անկեալք։ Եւ վասն այսորիկ ՝ի պատճառէ իմեքէ ձգէ ՝ի մահ ցուրտ և տօթ և հիւանդութիւք մարմնոյ։ Այլ և ՝ի կերակրոյ և յըմպելւոյ ա-

ռաւելութեՆ լմեի լակնք և մահ. նմանապէս և 'ի պակասութեՆ, 'ի սովոյ և 'ի ծարաւոյ։ Ամէն և թուռնաւոր ՃՃիք և դաժանութիւնք պատասոց և բուսոց կարեն լլկել և սպանանել և անզգայացուցանել և այլամոել։

Եւ վասն այսորիկ տկար է մարմինս, զի մի յորժամ լսիցեմք այ պատկեր, ամբարտաւանեալ ամբառնայցեմք և անկանիցիմք 'ի վայր ամբառնալոմն 'ի վերՆ կորստեան որպէս զնոյն ինքն զանծամբան՝ որ 'ի վեր քան զամպս ասէր զնել զաթոռ իւր և լինել նման բարձրելոյն. իսկ այժմ 'ի դժոխս էջ հանդերձ ամենայն ապստամբ զօրութիՆքն, որպէս ասաց մարգարէն յերեսսոց՝ ոՆ։ Եւ զնա զնոնարհութեՆ մարմինս զայս առնլով խոնարհութիՆ զնա կործանեաց, և զնոնարհս բարձրացոյց, և խայտառակեաց զնորա ամբարտաւանութիՆն։ Չի այսքան միայն է նորա չարութեՆն թոյնք. որպէս ՃՃեաց թոյնք և որպէս բուսոց և արմատոց դաժանութեՆ զնաՆք։ Ասեն բժիշկք՝ թէ գոն արմատք, որ հալածեն զդէա՝ 'ի մարդկանէ. և իմանալի է այսպէս. զի այ ներգործութիւնն 'ի տրկար նիւթոց ցուցանէ զնորա տկարութիւնն և զկարծեալ զօրութիւն հակառակամարտին, զի անգօր է առ սուրբս. որ և կոխել զնա հրաման ունին 'ի ՀՆեն. որպէս ամենայն հաւատացելոց է քաջայայտ։ Եւ դարձցին յետս և ամաչեսցին նորա կամարքք, և որք յուսան 'ի նորա յոյսն։

Իսկ որ ամենակալ զօրութեՆ ամենասուրբ ԵրրորդութիՆն են օրհնեալքդ, երկրպագուք և փառաւորիչք, այսու տկար մարմնով զՆանդէս առաքինութիՆն սրբապէս կատարեսցեն, և անցանեն ըստ կարգս աշխարհիս ամենայն ՃշմարտութեՆամբ՝. և անցանեն ժամք և աւուրք և ամք, և յառաջադէմն նկատի. և առաքինութեՆ ծնունդք զՆետ երեՆան սուրբ և արդար վարուց. աշակերտեալք սրբութեան և ՃշմարտեաՆ ամենայն առաքինութիՆ՝ փոխին յայսմ աշխարհէս՝ 'ի կենդանեաց աշխարհն՝ որ ոչ լսի համբաւ մահու՝ յանուշակն 'ի մշտնջենաւոր ուրախութիւն։

1 Միան ՃՄՀՀՀՆՆՄ։

Որ վերստին նորոգին ճծային զօրութիւնքն յանսպառ և յանվախճան ուրախութիւնն։ Որ լուցանին որպէս զարեգակունս յանմատոյց լուսոյն, և կենդանի սուրբ սիրոփն վառին և բորբոքին հրով ամենասուրբ երրորդութեանն յանվախճան երանութիւնն, և վայելեն յանսպառ և յանպատում բարութիւնն 'ի քո ցո 'ի ներ մեր. ընդ որում Հօր ամենակալի և Հոգւոյն սրբոյ պարգևողի փառք իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՍՆ ՀՈԳՒՈՅ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՑԱՑՈՒԹԻՒՆ

ԺԵ

ԱՍՏՈՒԱԾ ըստ մեծի մարդասիրութեան իւրոյ բազմագութութեամբ իւրով խնամի զարարածս, որպէս վայել է իւրոյ բարերարութեան։ Զանմահ զօրս հրեշտակացն մտաւորս և բանաւորս և պաշտօնեայս իւր արար. զի փառաւորեսցեն զամենազօր հրութեան, և արքանակեսցեն կամօքն որ առ ազգս մարդկան. զի հոգիք են հարիւրաւորք, որք առաքին 'ի սպասաւորութեան բանին ՅԻ։ Զի ամենայն արարածք նովաւ են կազմեալ և բովանդակեալ. և պաշտօնեայք զ սպասաւորքն են մեծի փառաց ՅԾՈՒԹԵՆ, որ նորոք հրաւիրէ և կոչէ զմարդիկս իւր արքայութեան և 'ի փառան։

Իսկ ծնունդ մարդկան 'ի սաղմնառնութենէ ' անսի նորոգի, և զլինելութեն առնու և ԱՅՀ, և ըստ սահմանի աւուրց յառաջագոյի ծնանելոյն, և ԱՅՀ մնդեամբ և զարգացմամբ, և 'ի խրատ և յուսումն ՅԾՀՒՈՒԹԵՆ. և 'ի միտ առնուլ զարգարութեան ՅՐՇՄԱՐԻՏ, և ուղղել զիրաւունս հոգևոր օրինաց։ Եւ ծանիցեն զարարիչն և զսուրբ սիրոյն իւրոյ զխրախտիս առ արարածս։ Եւ զիտութեամբ խրատուն նորա ստանայ զՀնազանդութեան օրինացն, և ընտրել զարիսն 'ի վատթարացն։ 'ի բաց կալ 'ի գԺնդակացն, և բուռն հարիանել զարդարութեան վաստակոցն տերամբ։ Եւ այսպէս կատարեսցէ զառաքինութեան զՀանդէսն ընդ բուն ըստ հոգևոր օրինացն, ըստ բազմամեամբ օգուտմուն ՅԵՆՆ ՅՈՅ. Համբերութեամբ բազմաւ և ԺՀմարտեալ սիրով, կենդանի յուսով ընթանայ 'ի կէս կոչման վերին ՀՈՐՀՅՈՅ ամենառատ բարերար ամե-

1 Ա. յդպէս յերկոսին օրինակսն։

նասուրբ Երրորդութեան. և կատարեսցեն զվարս երկրաւորացս ըստ կանխագիտութեան այս սահմանի յերկրի. ոմն 'ի տղայութեանէ, ոմն 'ի մանկութեանէ, ոմն յերիտասարդութեանէ, ոմն 'ի ծերութեանէ։ Այնպէս և այս 'ի խնամոց այս մատակարարի, զի մի գիտասցեն զօր վախճանի իւրեանց, և հեղգացեալ վրիպեսցին յարդարութենէ. այլ արթունք և պատրաստք 'ի գործ սրբութեան զամենայն աւուրս կենաց իւրեանց։

Եւ այն որ 'ի տղայութենէն և 'ի մանկութենէն առնու զվախճանն, զերծեալ լինի 'ի փորձութեաց հոգոց աշխարհականաց. և զգուշութի լինի այնոցիկ՝ որ վարեն զաշխարհս առ հանդէս արդարութեան և ամ առաքինութեան. և կատարեալ 'ի հաւատս և 'ի սէր և 'ի յոյս անարատ և ամբիծ՝ յանմահ կեանսն փոխին յանապական ժառանգութենն արդարոց։ Զի հոգիքն որ ելանեն 'ի մարմնոյ աստի, երթան 'ի կեանսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան. և անդ հրաձուին առաքինեացն ոգիքն ըստ խոստացեալ աւետեաց երանութեանցն, որ կայ պահի յուսացելոց սրբոցն անհառք՝ որ 'ի կամն այ վարեցան յաշխարհի ըստ աւետարանին քարոզութեան։

Երանին 'ի տեառնէ աղքատք հոգւով, որ վասն աւետեաց մեծութենն հոգւով աղքատացան վասն արքայութենէն երկնից՝ որ 'ի տէր Յն Քն։ Երանին և խոնարհք սրտիւք, զի գտանեն հանգիստ յերկրի յերկինս, որ անբաւ բարձրութի է. զոր խոնարհք ընդունին 'ի Քն Յն։ Երանին և հեզք, որ ժառանգորդք են երկրին կենդանեաց. յորմէ փախուցեալ են ցաւք և տրտմութիւք և հեծութիւք անհառ յուսով 'ի Քն Յն։ Երանին և սգաւորք, որ յաղագս սիրոյն այ, որ 'ի խոնարհութենէ սրտին հեղու զարտասուաց աղբիւրս զշնորհալիցն իմաստութեաւ, որ միխիթարութի ունին 'ի Քն Յն։ Երանին և սուրբք սրտիւք, որք ազատեալ և սրբեալ են յաղտեղի ցանկութենէ. զի նոքա զայծ տեսցեն։ Երանին և խաղաղարարք, զի նոքա նմանողք են Որդւոյն այ՝ որ արար խաղաղութի յերկինս և յերկրի, հեռաւորաց և մերձաւորաց. նմանապէս և սոքա եղեն։

Այս և ամ երանութիք զուարձանան և զուար-

թեան հոգիք արդարոց 'ի հանգստեանն 'ի Քս մին, և 'ի հաստատակաց յարութեան, յորժամ զայցէ տէրն մեր փառաւք Հօր, և մեռեալք 'ի Քս՝ յարիցեն առանց ապականութեան. և առաքինեաց անձանց արդարութիւք առաջի ընթանան ամենասուրբ Երրորդութեան, Զի հաւատք հասուցանեն 'ի ծանօթութեի փառացն այ. զի եւ պիտոյ է ասել վասն այսորիկ զոր ետեսն, և վասն յուսոյն որ մուծանէ 'ի ժառանգութիւն բարեացն՝ որում ցանկացեալն է, և ինքն տեղի տայ։ Զի յայնմ հետէ զի եւ յուսայ կամ ակն ունի զոր ժառանգեաց։ Այսպէս համբերութեն և ժուժկալութեն, երկայնմտութեի և հեզութեի, հնազանդութեի և ուղղութեի, սրբութեի և Հնմարտութեի, հանդերձ ամ երանութիւք փառաւորեալ և պատկեալ և մուծանեն զժառանգաւորսն 'ի ժառանգութեի արքայութեն։ Զի ուր կատարումն է, զի եւ պիտոյ է առաքինութեի հանդիսից. զի եմուտ 'ի վայելսն անսպառ բարութեանցն, և ուրախանայ սուրբ սիրոյն յանխախտան երանութեան ամենասուրբ Երրորդութեան, որ անՀաւան է և անբաւ և անպատում։

Այսպէս մարդք չարք և անսուրբք և ապստամբք 'ի Հնմարտութեի անտի, և զհետ երթեալ զանիրաւութեան և 'ի նոքս վախճանի, ընդ նոսս յառաջանայ գոլիք իւր ամբարշտութեի դառն յիշատակաւք յաղագս ամենայաւք ցանկութեցն, ահաւորսպառնալեաւք 'ի վերայ անօրինաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց և որ այլ ևս յանցանք իցեն։ Վայ 'ի վերայ վայի հաստատեալ կայ նոցա յաճեղէն գրոց սրբոց, և յանպատաւ դատաւորէն պատիժք։ Զի յիմարեցան սիրաք իւրեանց յիմանալոյ, և ոչ լուան ձայնի տեառն և պատուիրանաց նորա ոչ անսացին։ Եւ վասն այնորիկ պատրաստեալ կայ բարութեան՝ 'ի վերայ ամբարշտաց և մի զաւրաց, որք զՀնմարտութեն այ անարգեցին յանձինս իւրեանց, որոց յառաջագոյն սպառնացաւ։

Եւ այս ամ սպառնալիք յանցաւորաց յոյժ 'ի տրտմութեն ունին զոգիս մեզաւորացս, 'ի կայանս որ ըստ իւրաքանչիւր մեղացն բաժանեալ և որոշեալ 'ի տիրական տեղիք։ Եւ որպէս երևումքիք տեսանեն իմանալեօքն զհատուցումն արդար դատաստանաւք՝

զանշէջ հուրն և զխաւարն արտաքին և զլալ աչաց և զկրձել ատամանցն, այնոքիւք ահիւ տխրեալ և տրրամեալ կան ոգիք մեղաւորացն մինչև 'ի հասարակաց յարութիւն որ Քրիստն է։

Այլ եթէ ասիցէ ոք՝ թէ այդ յառաջ քան զհանդէս առենին և հատուցմանցն է. և դարձեալ ուր է ասացեալն յԱռաքելոյ՝ թէ առանց մեր չառնուն ըզկատարումն առաջինքն։ Եւ դարձեալ ասէ մարգարէն. «Մի յուսայք յիշխանս յորդիս մարդկան. զի ելցէ հոգի 'ի նոցանէ, և դարձցին անդրէն 'ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամ խորհուրդք նոցա»։

Այլ եթէ ոչ ուրախ առնին հոգիք արդարոց առանց մարմնոց, ընդէր վաղագոյն կանխէր տէր զաւետիսն. ապաքէն զի զոգիս սրբոցն ուրախ արասցէ։ Կանխեաց և զսպառնալիս ամբարշտաց և մեղաւորաց. ապաքէն զի զարհուրեցուցանէ զնոսա, և տխրեալ տրտմեսցին։ Ըստ այնմ օրինակի է իմանալ, որպէս թագաւոր քաջամարտկաց և յաղթողաց պարգևս խոստանայ. և նոքա հաստատեալ գիտեն եթէ 'ի դէպ ժամանակի առնուն զխոստացեալ պարգևսն, ուրախութիւն ուրախ լինին մինչև առցեն զփառս և զպատիւ երանութեանցն։ Սոյնպէս և մեղաւորացն հոգիք, որոց սպառնացաւ մահ յաղագս յանցանաց որպէս թագաւորացն մահապարտքն, կան և մնան իւրեանց տանջանացն և մահու բազում տրտմութիւն և դողութիւն մինչև 'ի ժամանակն յորժամ առնուն ըստ արժանեացն զհատուցումն անմահ տանջանացն զպատիժս և զպատուհաս, որ մարմնով և հոգւով ընդունին։ Այլ զոր Առաքեալ ասէ, և մեք զնոյն ասեմք. զի իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ 'ի հասարակաց յարութենն զոր ինչ գործեցին՝ եթէ բարի և եթէ չար։ Եւ մի՛ յուսալ յիշխանս, ասէ մարգարէն. զի լուծանելոցն յերկրէս ամբարտաւանեալք իշխանութիւն և շինչանի հպարտ կամքն։ Այլ յուսալ յԱծ, ասէ, որ անմահն է և իշխան մահու և կենաց յաւիտեան։

Այն ոմանք որ ասեն՝ եթէ որպէս մանուկն յորովայնի անզգայ և կենդանի՝ լռեալ և դադարեալ կայ

1 Հին օրինակք խնդրին 'ի պարզել զմիտութիւն Ճառիս։

'ի խօսելոյ և 'ի լսելոյ, 'ի գնալոյ և 'ի գործելոյ, այսպէս հաստատին զոգիս մարդկան լուսաւոր և ցաւուցեալ։

Օ այս գիտասցեն, զի 'ի սաղմնաւորմէն անտի յա-ռաջագոյի և լինի մնասուկ յօրինուածովք ըստ կեր-պարանին մարդ, և անուն առնու տղայն 'ի ծնունդ և 'ի մնունդ տղայութեան՝ անմանն մարմնոյ և մտաց յորովայնին։ Եւ յետ ծնունդեան նախանշանութեան այ որպէս ինքն գիտի կազմոյն հոգւոյ և մարմնոյ 'ի միա-սին և գայ 'ի կատարելութեան մարմնոյ և մտաց, և գար-ձեալ պակասիլ և զմահ ստանալ ըստ սահմանի այ։

Եւ այս ասեն այսորիկ, զի ըստ իւրաքանչիւր հա-սակաց անմանն և զառաքինութեան զմանդէս ընդ նմին յարդարեցին 'ի կատարումն Քրի գլխոյն մեր հասա-րակաց։ Եւ հաւատով և սիրով և երկիւղիւ գնալ ընդ Հանդարձիս արդարոյն, որպէս առաջնորդն մեր և կատարիչ առաքինութեան Յս Քրս. և բարձրագիմի շը-նորհաբ իւրովք խնամէ զարարածս յերկրի։ Եւ որ անդէն կայանք ենթջեցեալոյն հոգիք 'ի զգայութեան և յանձառ փառաբանութեան հրեշտակային օրհներգու-թիւնք։ Զի ճաշային գիրք՝ կենդանի և անմահ ասեն զհոգիս մարդկան։ Որով իմանալի է ոչ անզգայս, այլ ունին և փառս տան արարչին։ Զայս ելեալ ըստ մար-մնոյ օրինակի իմասցիս, որպէս յորովայնի, և յետ այնր-ցիկ գայ 'ի գետեղութեան մտաց և մարմնոյ և փոփոխի։

Զայ հոգի անմահ բանաւոր և մտաւոր յորժամ ելանէ 'ի մարմնոյս, յառաւել գիտութեան իմասցից է իմանալ և Հանաչել զաբէն փառաց։ Որով յառա-ջագոյն մարմնոն որպէս ամպ ինչ ծածկեալ ունէր զի-մանալի տեսութեան, թէպէտ և յուսով նահատակեր 'ի գործս բարիս 'ի ձեռն հոգւոյ օրինացն։ որով զնո-սրութիւնն առնէր բարւոյ և չարին, անարգելովն զչարն և ընտրելովն զբարին խրատու և իմաստութիւն տեսանն երախտաւոր սիրով։ Զի ոչ է պարտ զհոգիս մարդկան մահկանացու ասել կամ անզգայս. այլ որ-պէս Եղեկիէլն մարգարէի 'ի միում վայրի յարութեան մեռելոց նախ ոսկերաց և ջղաց և մարմնոյ միաւո-րեալ ամ յօրինուածովք, և ապա կոչէլ զհոգի ամենի-բաքանչիւր կայենից հոգւոյով սրբով որպէս հոգեմով։ Զի և Աստուածն զոգի քո և ստանան զնոսա և նորո-

գեսն. և որ յաւետարանսն պատմին մեռելոց յա-
լութիւնն 'ի տեառնէ. զի հոգւոյն դարձ 'ի մարմինն
վկայութիւնք այս են։ Բերան խօսի, աչք տեսանեն,
ականջք լսեն, ունչք հոտոտին, ձեռք շօշափեն, ոտք
գնան, սիրտ շարժի իմանալեօք, և փառաւոր առնեն
զնոսա կենդանարար Հոգւոյն որ զնա զգայութիւնս շար-
ժէ տերամբ։ Եւ յորժամ հոգին արձակի 'ի մար-
մնոյն, մեռեալ կոչեցաւ. և քակտին նա յոգեալ յո-
ղինուածք անդամոցն իւր։ Նոյնպէս վկայութիւնք են
իւրոյ հոգւոյն շարժելն, իմանալն, ճանաչելն, յիշելն.
զի մարմնոյս այս տուիչ և վարդապետ և կենդանա-
րար հոգիքն են ըստ այ կամացն։ Ապա եթէ 'ի զգայ-
ութիւնն է պատճառ կենդանութեան, ապա ո՞ւր է կեն-
դանութիւն հոգւոյն որ զկեանսն ունի Աստուծով։

Եւ այսպէս իմանալի է. զի ամենայն շարժմունք՝
հոգւոյն են, և ոգիքն տան մարմնոյն զկեանս ըստ նա-
խախնամութեանն այ։ Եւ որպէս մարմնիքն վկայութիւն ու-
նին զգործ բնութեան բարուցն, այսպէս ոգիքն զիւ-
րեանց բնութիւն բարուցն ունին զվկայութիւն։ Եւ ոգի ա-
նուանի կենդանի 'ի մարմինս ազդելիս և չարչարելիս
և մահկանացուս, յորմէ որոշի ըստ վերին կոչման ա-
բարչին 'ի պատրաստեալ օթևանս անմարմնոցն։ Զի
մարմին յերկիր դառնայ և հանդչի անհոգ. և հոգին
սուրբ և բարի աւետեաց յուսոյն զուարճանայ ընդ
հրեշտակս 'ի փառս ամենակալին իբրև արդէն ա-
ռեալ զառհաւատչեայ երանութիւնս երկնից արքայու-
թեանն։ Զի և հոգին, ասէ, վկայէ հոգւոյս մերում
եթէ եմք որդիք այ և ժառանգակիցք Քրիստի. զեր-
ծեալք 'ի ծառայութենէ մեղացն յաղատութի փառաց
որդւոյն այ։

Զի՞ նա հաւատացելոց ծանուցեալ եղև երախ-
տիք սիրոյն առ արարածս իւր լուսաւոր աւազանաւն
և փրկական խորհրդոյն մարմնով և արեամբն իւրով,
որ պատարագեցաւն 'ի վերայ խաչին և երարձ զմեղս
աշխարհի՝ որք հաւատով մերձեցան առ փրկիչն մեր։
Եւ յորժամ դարձեալ գայցէ փառօք 'ի նորոգել զոր-
դիս մարդկան, և յարուցանել զմեռուսն, նորափե-
տուր զարդարէ լուսով զարդարս կենդանիս և զյա-
ւիտենից ննջեցեալս սուրբս 'ի տէր, և մուծանէ 'ի

ժառանգութեան իւր յանմահական կենացն ուրախութեան՝ որ կայ պատի հաւատացելոց սրբոց և յուսացելոց ի տէր։ Եւ ինքն եղիցի, ասէ Աստուած, ածամ յամի իւրում կենդանի սուրբ սերունդն և կենդանարար խնամովքն։ Զորս վայելեցուցանէ ի փառս ածութեան զՀնամարտեալս ուղիղ հաւատով, և սուրբ և անարատ վարս վճարեալ զերկրաւոր կեանսս, և զանանց կեանսն շահել ի Քս զմտանջենաւորն զերևելին յանուշակ փառս միածնին։ Որ ամ երանութիւնք պատկէ և փառաւորէ ի կամն Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՎԱՍՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆՑ

ԺԷ

Ակսանիմք այսուհետև և վասն մարտիրոսաց Ճառել բանիւ. զի պատուեսցուք զյիշատակս նոցա, և երանեսցուք նոցա վասն Ճշմարիտ վկայութենն և սիրոյ, և բաղումք վարձս առնումք նոցա բարեխօսութիւնքն վասն մեր։ Այլ զպաշտօնն այ մատուսցուք սաղմոսիւք և օրհնութիւնք և երգովք հոգևորօք. սուրբ սրտիւ գովելով զանսկիզբն էութիւնն և զամենաշնորհ տէրութիւնն, զի արժանիս արասցէ զմեզ մասին ժառանգութեան սրբոց աւետեացն 'ի լոյս 'ի փառս տէրութեանն։ Եւ ամ ժողովուրդք որ ժողովին 'ի յիշատակս սրբոցն, 'ի միտ առցեն հաւատով և սուրբ սիրով զհանդէս նահատակութեան նոցա։ Եւ նոցա բարեխօսութիւն աղաչել զՅած Ջերմեռանդ արտասուօք, հսկելով զտիւ և զգիշեր 'ի պաղատանս սուրբ սրտիւ. զի զերծուսցէ յաշխարհէ աստի չարէ առաքինասէր վարուք։ Որպէս զսուրբսն զայնոսիկ՝ որոց յիշատակն կատարին 'ի փառս այ, և զհանդէս մտերմութեան իւրեանց ցուցանել առ ամենեցունց տէրն և արարիչն ամենայն՝ որ ետ նոցա զայնպիսի յաղթութիւն առ բռնաւորսն և հակառակորդսն Ճշմարտութենն։ Զի և մեզ տացի շնորհս յաղթել ամ կարեաց որ յառնեն 'ի վերայ մեր Ճակատամարտք երևելիք և աներևոյթք. և զպաշտօնն փառաբանութեամբ այ ընծայել երկր պագութիւն։

Զի այս իսկ են սրբոցն կամք, զի և ժողովուրդք նոցա բարեխօսութեամբն յայ պաշտօնն յորդորեսցին. և այնպէս առնուն զաշխատութիւն փոխարէնս յամենասուրբ Երրորդութենէն։ Զի Պողոս և Բառնաբաս արարեալ նշանս յանուն տեառն Յեսի Քրիստի, զառ 'ի

մարդ զկաղն բժշկելով և զարմացուցեալ զամենեսեան. մինչ զի քուրմքն ՝ի ծոս զնոսա համարեցան յէրինից թշեալ և զմարդոյ կերպարանս ունելով։ Զսոն որոյ զոհիւք կամին պատուել զնոսա որպէս զաստուածս։ Եւ յաղագս այնորիկ պատառելոցն զՀանդէրձս, և Ձիւ բարձեալ ասէին. մեք ձեզ նմանեալք մարդիկ եմք ծառայք ՝ից բարձրելոյն՝ որ արար զերկինս և զերկիր և որ ՝ի նոսա արարածք իցեն. և յանուն նորա բժշկեցաս սա։ Եւ զայս ասացեալ Հաղիւ լռեցուցին զամբոխն. զի լաւ համարեցան մեռանել, քան եթէ զպատիւն ՝ից ՁԳԵԼ յԻնքեանս և փառաւորիլ ՝ի մարդկանէ։

Լսցեսիսք ինչ արար սատանայ, զի զ՝ից պատիւն յինքն ՁԳԵԱՑ, և որոշեցաւ ՝ի խնամոց արարչին իւրոյ, և անկաւ ՝ի փառաւորեալ կարգաց հրեշտակեան դասուցն, և եղև խաւար փոխանակ լուսոյ և ժառանգորդ գեհենին պատժոց։ Զի սրբոց առաքելոցն և մարգարէիցն և Ճշմարիտ վարդապետացն ծառայս ՝ից անարգս երևեցուցանելով. զի գիտէին զսատանայի ՝ի ձեռն հպարտութեան ամբարտաւանեալ և ամբարհաւաճեալ զի վայր անկուցին, և զխնամարհաց և զՀեզոց զի վեր ելուցին ՝ի տեղիս անկելոցն։ Մանաւանդ Քր. քանզի յայտնագոյնս եցոյց ըստ սնօրէնութեան զանձառ զխնամարհութիւն իւր. յորս և ասէ իսկ. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։

Լաւ ամենայն սուրբք իւրեանց առաջնորդութիւն Ճշմարտեալ խոնարհութիւն առ ՝ն՝ի ՝ի բարձունս ընթացուցանեն զամենայն հաւատացեալս յաջ. զի արժանի լիցին յամենեցունց տեառնէն փրկութեան և քաւութեան պարգևացն բարեխօսութիւն սրբոցն, և այլ մի ևս գտանիցէ ՝ի գժտղակ վարս սատանայի։ Ալ լսել զիւրաքանչիւրոցն նահատակութիւն և զկատարեալ սուրբ սէրն, որ առ ՝ն՝ ունէր յայն նոցա համբերութեան, նախանձ ունել Քրիս։ Որ հրով և սրտով, ջրով և սատանայիւք, բերանովք և հարուածովք, բանդիւք և կապանօք, սովով և ծարաւով, սրով և մահու, սպառնալեօք և ոգեբանօք. զի երկնայն զարհուրեսցի և արիւն կաղեսցի։ Ալ ոչ ինչ կարաց

այսպիսեացս չարաչար տանջանացն վիշտք և նեղութիք և վտանգք մարմնոյ քակտել և խզել զսուրբ սէրն որ յամենասուրբ Երրորդութին։ Եւ յաղագս առաւելութեան այ սիրոյն առին համարձակութի բարեխօսութեան առ ՝ուր։ Զի զայս ամենայն դժնդակ տանջանս 'ի հակառակաց անտի ընկալան համբերութիք բազմաւ վասն երախտաւոր սուրբ սիրոյ նորա՝ որ սիրեաց զաղգս մարդկան, որ հրաւիրեաց և կոչեաց։

Ա.Զդ զհետ երթիցուք կոչողին զհետ սրբոցն սուրբ սիրով. ինդրեսցուք ջերմեռանդ շնորհալից արտասուօք զանտի զհանգիստն աստեօք աշխատութիք. ըզհուր ցանկութեցն շիջուսցուք հրով Հոգւոյն սրբոյ. և սրբեսցուք զանձինս զերևելի զդայարանս և զաներևոյթ հոգւոյն շարժմունս 'ի խղճէ չարեաց։ Զի Ճշմարտեալ սիրովն որ առ ՝ուծ՝ կարասցուք մասին սրբոցն աւետեացն արժանի լինել յետ զկեանս աշխարհիս լուծանելոյ։ Զի այսպէս 'ի ժողովս սրբոց հաղորդեսցուք և տօնեսցուք 'ի փառս ամենակալին ՝այ, որ ետ նոցա զյաղթութի առ չար բռնաւորս. և փառաւորեցան յերկինս և յերկրի որ կան և ՝ինան։

Բ.Յսպէս յուսալ և հաւատալ 'ի սրբոցն ժողովս և 'ի բարեխօսութինն որպէս զքահանայս որ կան առաջի այնորիկ՝ որ նստին ընդ աջմէ Հօր, և զիւրաքանչիւրոցն պատարագք ընծայեն աղօթիւք առ 'ի հաշտութի ակամայ և կամաւոր սխալանաց հաւատացեալ ժողովրդոց վախճանելոց և կենդանեաց։ Եւ իւրեանց Ճշմարտեալ հաւատովն և հանդիսաւոր Ճգնութիք առաքինասէր վարուք՝ արդար և սուրբ և ուղիղ բաղձանօք, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանօք հաւատան առնուլ զինդրելին յամենեցունց փրկչէն ըստ յուսոյ հաւատացեալ ժողովրդոց. մանաւանդ 'ի ձեռն փրկական խորհրդոյն սրբապէս կատարմանն 'ի Քս Յս։

Բ.Յսպէս է իմանալ զսրբոցն զբարեխօսութի առ հաւատացեալ ժողովուրդն։ Զի իւրեանց մտերիմ վաստակովքն որք զմարմինս իւրեանց պատարագեցին յերկրի վասն անուանն ՝այ 'ի հոտ անուշից, և սուրբ հոգիք նոցա հոգ և որ բարեխօսութիքն զՆՃ յողորմութի աշխարհի ածեն։ Եւ նշխարք ոսկերաց նո-

ցա փրկութեանն շնորհք ընծայեն 'ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ. զի երևեցի սէրն այ 'ի նոցա նշխարսն բնակեալ, և նշանօքն ծանուցեալ յերկրի։

Իսկ արդ իմանալեօքն զյուսացելոց իրաց զհաստատութիւն և զյանդիմանութիւն այ մերձաւորութեանն ունին, զհամարձակութիւն բարեխօսութեան՝ որ ոչն երևի մարմնաւորացս. այլ երևելեօքս շնորհատուր զօրութեանն այ 'ի նոցա նշխարս և 'ի սուրբ ժողովս զաներևոյթն իմացուք առաւելագոյն այցելութիւն 'ի հանէ։ Զի հոգիք, ասէ, առաւել են քան զմարմին առ արարիչն և առ արարածս։ Զի այսպիսի շնորհք տուան յայ առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց և ամենայն ընդրելոց սրբոց յերկրի աստ և յերկինս։ Զի նոցա առաջնորդական հանդիսիւքն և առաքինասէր վարուք հաճոյացուք այ. և նոքա պատճառք լինին մեզ փրկութեան և կենաց միշտ բարեխօսութեամբն իւրեանց։

Եւ մեք զփառաւորեալսն յայ երանեսցուք. որ վասն սիրոյն այ զանձինս իւրեանց մատնեցին չարչարանաց և մահու, և առին զպատիւն և զպարգևսն անապական յանմահ թագաւորէն։ Այլ զպաշտօնն և զփառաբանութիւնն երկրպագութեամբ ամենատուրբ երրորդութեանն մատուսցուք 'ի յիշատակս կատարման ամենայն սրբոց այ։ Զի այս են կամք ամենեցունց նոցն և ամենայն սրբոց նորա. զի նա է փառաց և պատուոյ արժանի յամենայն սրբոց և յարարածոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԶԳՈՒՇԱՒԹԻՒՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՇԱՀԱՒՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄՏԵՐԻՄՍԵՆ ԵՒ ԸՆԴ ԴԺՆԴԱԿՍԵՆ ՊԱՏԻՒ ԵՒ ՊԱՏԻԺՍ

ԺԷ

Պ՞ՐԵԼ ՁԵԶ և ուսուցանել կամիմ, եղբարք իմ և որդիք, զորս 'ի Քս աւետարանաւն ծնայ։ Զի որք յարգեն զանձինս իւրեանց 'ի գործս բարութեան և յուսումն Ճշմարտութե՛ն, ինքեանք իսկ պատրաստին 'ի վնասակարացն, և պէսպէս հնարիւք յառնել զբարին խորհին։ Որպէս զի օրինակ Ճշմարտութե՛ն եղիցին յառնել և յուսուցանել միշտ, և անխիղճ և անպատՃառ իցեն առ հեռաւորս և մերձաւորս ըստ բանին ՝ն. «Լուսաւոր եղիցի, ասէ, լոյս ձեր արդարութե՛ն առաջի մարդկան. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկնաւոր»։ Եւ գարձեալ երանէ զծառայսն, յորոց անունն օրհնի և փառաւորի. և վայ և եղուկ զայնոսիկ վարկանի, յորոց անուն ՝ն հայհոյեսցի։

Զի որք լինին քարոզք Ճշմարտութե՛ն, Ճշմարտութի՛ն ինքնին յարգէ զնոսա անմոլար գիտութիւ՛ն։ Եւ ՝ն ծ փառաւորէ զնոսա, յորժամ տեսանի նոցա բարեպաշտութե՛ն ջանքն. զի զոր նոքայն տնկեն և սընուցանեն, ՝ն ծ աՃեցուցանէ և հաստատէ աւետեաց կենացն 'ի փառս և 'ի պարծանս նոցա 'ի տիեզերական ատենին յարութե՛ն որ 'ի մեռելոց։ Եւ կարասցեն ասել. ահա մեք և մանկունք մեր Ճշմարտեալ զոր ետուր մեզ, ՝ն ծ։ Եւ պսակեալ առաքինութիւ՛ն առնուն զգրաւական խոստացեալ աւետեացն Քսի։ «Զի որ արասցէն, ասէ, և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութե՛ն երկնից»։ Զի «Սկսաւ, ասէ, Յն առնել և ուսուցանել մինչև յօրն՝ յորում վերացաւ յերկինս»։

Խսկ որում Հաւատացաւ վերակացուն Ժողովրդոց, և Հեղգացն 'ի նոցա խնամն 'ի Հոգեւոր ուսումն և 'ի խրատ, և ստունգասիցն և կամ ոչ տայցէ զմարմնաւոր պէտս կարօտելոց, այլ ուտէ և բմպէ անգգայաբար, յանկարծակի գայ 'ի վերայ նոցա մահ՝ յորում աւուր ոչ ունի անկն. և Հաստատող բանն այս սուր՝ ընդ մէջ կարեսցէ զնա, յինքն առեալ զչնորհն՝ որ յայր է, և զվատթարն ընդ անհաւատսն դիցէ 'ի խաւարն արտաքին և 'ի Հուր, ուր լալ ա-չաց է և կրճել ատամնոց։ «Չի Հաւասք 'ի լսելոյ են, ասէ Աստուած, և լուր 'ի բանէն Քրիստոսի. զի զինքդ Հաւատսն զոր ոչն ուսան, և կամ զինքդ ազատեսցեն զոր ոչ գիտեն»։

Լոյս դարձեալ առ մարգարէն Եզեկիէլ ասէ օրինակաւ առ ամենայն վերակացուս. ասէ. « Դէտ կացուցի զքեզ. զգուշասջիր անձինդ և ժողովրդեանդ, և ասասցես ցանօրէինն՝ եթէ մահու մեռցիս։ Եթէ ոչ զզջասցի և դարձցի խոստովանութիւն յապաշխարութիւն, մեռցի զմեղացն զմահ՝. և դու ապրեսցիս, զի զգուշացուցեր յառաջագոյն։ Եպա եթէ զզջասցի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, կենդի կեցցէ զարդար կեանսն և մի մեռցի զմեղացն զմահ՝։ Եպա եթէ ոչ զգուշացուցեր նմա, 'ի մեղս իւր մեռցի 'ի պատուհաս, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից», ասէ զայս ամենեցունց տէրն։

Լոյս Դանիէլ բանիւք և արդեամբք եցոյց զիրաւացն դատաստանն առ ծերսն՝ օրք էին վերակացուք Խայելի՝ զպատիժս պատուհասիցն։ Որ և 'ի գերն յառիւծուցն ապրեցաւ՝ մատնեալով ասողացն 'ի մահ՝, որ անդէն իսկ 'ի նոսին դառնայր մահն յառիւծուցն։ Եւ այնպէս երևելի եղև Ճշմարտութիւն արդարոյն և ամբարտաւանութիւն զրպարտողաց։ Եւ այսպէս փառաւորեաց ՅԾ զիրաւորիչս իւր և զՃշմարիտ վերակացուս։ Որ և զերիս մանկունսն արկին 'ի հնոցս առ 'ի յայրել վասն առ 'ի յԱծ զՀաւատսն ամբողջ պահողաց. զի հրամայն, ասէ, թագաւորին սատկանայր, և հնոցն բորբոքեալ առաւել, և հուրն ոչ կարէր մերձենալ առ սուրբսն որք օրհնեին զԱծ։ Եպլ զՀրան զորս գտանէր, այրէր հուրն. զի

այնու ծանուցեալ եղև արարիչն արարածոց. և Թագաւորն խոստովան լինէր ՝այ զմեղսն։

Եւ զերեմիաս արկին ՝ի գուբն ՝ի մահ յաղագս յանդիմանելոյ զանիրաւան և ՝ի դարձ ածելոյ, զի ապրեսցին ՝ի բարկութենէն որ գալոցն էր ՝ի վերայ ժողովրդեանն։ Որ և զգրեալ զխրատսն և զմարգարէութիւնն այրեցին, և ըստ արժանեացն ընկալան ըզհատուցումն մեղաց իւրեանց, և մատնեցան ՝ի սով և ՝ի սուր և ՝ի գերութիւն։ Եւ մարգարէն փառաւորեալ պատուեցաւ ՝ի Թագաւորէն և ՝ի մեծամեծացն, և վերստին նորոգեաց զրով զմարգարէութիւն և զուղիղ խրատսն։ Եւ զի ասաց, « Անիծեալ ամենայն որ գործէ զգործ տն ծուլութիւն։ »

Եւ տրն որ յաւետարանսն առ Պետրոս ասաց. դու ես վէմ, և ՝ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. այսինքն զհաւատացեալ ժողովուրդն ՝այ. և դրունք դժոխոց զնոսա մի՛ յաղթահարեսցեն, զարձակեալսն յերկրէ սուրբս և արդարս Ճշմարիտ հաւատով յերկինս. և զոր կապիցես յերկրի զանսուրբս և զանիրաւս և զայլահաւատս, եղիցին կապեալ ՝ի յերկինս ՝ի պատիժս սպառնալեացն։ Եւ Պետրոս բանս ՝ի տնէ առ ամենայն վերակացուս սուրբս ասացաւ, որք զՃշմարտութիւնն իրաւ ունին։

Բայսպիսի ընտրութիւնք են ՝ի մէջ լաւաց և անիրաւաց, որք իւրեանց սրբութիւնն և առաքինասէր վարուք եղեն արբանեակք և քարոզք բանին Ճշմարտութեանն ՝ի զգուշութիւն անձանց և ժողովրդոց, արհամարհողաց և անհնազանդից, անսրբոց և պղծոց և որ այլ ևս դժնդակութեան վարք իցեն, յամի խելամտեալք Ճանաչելով զերկաքանչիւրոցն զշարժմունս, և ընդ սխալեալսն մարտիցէ զինուք Ճշմարտութեան ողոքանօք կամ սաստիւք. որով կարասցէ շահել զմեղապարտսն։ Եւ զՀեծանոցն ՝ի ձեռն ունել. զի հողմոյ Հոգւոյն սրբոյ շնչելով որոշեսցէ զցորեանն յշտեմարանս սրբոց, և զյարդն պատրաստիցէ ՝ի նիւթ հրոյ գեհենին, որպէս ասացաւ. զի ընտրութի է ՝ի մէջ բարւոյ և չարի։

Իսկ որ ՝ի Ճշմարիտ վերակացութէն օտար են, բարկութին ՝այ ՝ի վերայ նոցա պատրաստեալ կայ ՝ի տնէ

ըստ բանի Առաքելոյն. «Որք զՀշմարտութիւնն անիրաւութիւն ունին, և ոչ ըստ աւետարանին Քրիստոսի։ Զի որ ժամ է առաջնորդաց վերադոյն ըստ արդարութեան օրինացն եղեալ յամենայն 'ի հաճոյս ոյ, և զժողովուրդն զգուշացուցանել Հշմարիտ վարդապետութիւնն վասն իւրաքանչիւրոց փրկութեանց. զի մի սպառնացեալ պատուհասն 'ի վերայ հասանիցէ 'ի ձեզն հրեշտակի էարի։ Որպէս մարգարէին ցուցաւ սատակել զանիրաւսն և ոչ ումեք ողորմել, ծերոյն և արդայոյն, կուսին և երիտասարդին, և քահանայից և ժողովրդոց։

Բայց ասէ, որք հեծեն և յոլով հանեն և սգան զայլոց անիրաւութիւնս, խնայել հրաման առնու նշանաւն որ 'ի Հակատն առեալ 'ի ճոնէ, զի ապրեսցին 'ի սատակմանէ անտի։ Եւ սկիզբն սատակմանն 'ի քահանայից անտի առնու, յորոց վերակացութիւն ժողովրդեանն է յոյ. որ զշահս մարմնոյն առնուին, և հոգւոյ շահիցն անփոյթ առնուին. զի ոյ դատաստանաւն Հշմարիտ են. զի «Ամենայն գործ աշակերտեալ արքայութեան ոյ, ասէ նոցն, նման է առն տանուտեառն՝ որ հանցէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին»։

Ցանուտէրն անուանեաց զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտեալս Հշմարտութեան աւանդիցն, և գանձք գիտնականս սրտին, որ 'ի հնոյ և 'ի նորոյ ունի զստոյգ գիտութիւնն, և վայելեցուցանէ զմերձաւորս և ըղձելուս բարի խորհրդովք և բարի գործովք և անարատ սրբութեամբ։ Եւ զլաւ գործոցն զմիերս արտաքս պեղել, մինչ ոչ մնայցեն նշխարք լար գանձուցս 'ի բարի ուսմանցն, ընտրելով զլաւն 'ի վատթարացն։

Ինքեանք, ասէ, օրինակ լիցին կացիւք գնացիւք, ոմ՝ առաքինութեան հանդիսիւք. զի աշակերտեալքն յորդորեսցին 'ի Հշմարիտ վարս, որ փառաւ վարդապետաց, գնալ 'ի Հանապարհս արդարոց, և խորհել 'ի պատուիրանս տեառն, և առաջնորդել լուսաւոր վարդապետութիւն 'ի սրբութեան վարս և յարգարութիւնն ոմ։ Զի զնոսն ժառանգորդս արասցեն արքայութեան ոյ, գործակից լինել կենարարաւետարանական խրատուն, և մի իւրք զանց առնել 'ի Հշմարիտ աւանդիցն։

«Զի եթէ միավլիւք ինչ, ասէ, գթիցես, եղեր ամ օրինացն պարտական»։ Զի ձշմարտեալք հաւատով և սրբեալք 'ի խղձէ չարեաց, միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեանն տեառն, 'ի ներքին մարդն բնակել փութի, որ լուսաւորէ զաչս սրտի անարատ և ամբիծ երախտեօք սուրբ սիրոյն, հոգևոր և մտաւոր դարմանօք յամենասուրբ երրորդութենէն միշտ։

«Իսկ յորժամ քո յայտնեսցի կեանքն մեր, ասէ Աւաքեալ, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք»։ Որպէս զի եղիցի մեզ ամենեցուն որ զգեցաք զքո, ձշմարտեալ հաւատով և առաքինասէր վարուք հաճոյացեալք մերձենալ 'ի լոյսն անմատոյց, և պայծառանալ 'ի փառացն քոի յուսոյն մերում 'ի տիեզերական ատենին յարութենն որ 'ի մեռելոց։ Եւ փառաւորեսցուք զամենազօր տերութինն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից. ամէն.

ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԳՈՎԱՐԻԹԻՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱԽՏԵԱՆՆ ՀԱՆԳԻՍԻՒՐ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ՀԱԶԱՐԱՑ ԱՌԱՔԵԼՆԵՐԱՑ

ԺԸ.

ԱՀԵԱՒ են խնամք բարեբարին և անդեղջ պարգևք կենարարին, որ հաստատեաց զզօրս երկնից 'ի փառս անուան իւրոյ սրբոյ, և զմարդիկ յանարգութեէ նմանապէս 'ի գովեստ փառաց մարդոյ իւրոյ. եւ իշխանութեամբ 'ի վերայ ամենայն երեւելի արարածոց, և խոստացեալ զանպատումն երանութիւնն։ Զի անձնիշխան կամն ստացան 'ի ոտնէ երկնաւոր զօրքն և երկրաւոր օդդիք մարդկան. զի հաղորդ լիցին բարերար կամաց արարչին, խորհել միշտ զարքին և առնել 'ի կամարար մտաց ըստ կամացն ոյ, զի շահեսցին զօգտակարն անձանց։

Այլ եւ գաստիարակս երկուս, զաւետին և զսպառնալին։ Եւ վարդապետս յօրինեաց զՀոգեւոր օրէնսն խրատուն կենաց, որ յիւրմէ կանուխ գիտութեէն ծածկեալ անձնիշխան կամացն բոյսք։ Այլ զի որ 'ի լաւագոյնսն հնազանդեցաւ մտերիմ հաւանութեամբն, փառօք պսակեսցի։ Իսկ արհամարհողն և անհնազանդն և ապստամբեալն 'ի ճշմարտութեէ աւանդիցն՝ պարտաւորեալ պատուհասեսցի։ Եւ արարչին բարեբար կամք ոչ եթէ հակառակ ինչ էր իւր կանուխ գիտութեն, այլ հաւան ըստ նախախնամական սիրոյն իւրոյ առ 'ի հաստատուն կալ 'ի բարին։ Եւ զպատիւ խոստացեալ աւետեսցն արգաբոցն յուշ առնել միշտ. այլ և զպատիժս արհամարհողացն և անհնազանդիցն 'ի հոգեւոր օրէնացն։ Զի զամենեսեան զգուշացուցեալ 'ի հնազանդութեէն պատուիրանին, զի մի զրկեսցին 'ի վարձուցն հատուցմանն։ Այլ յորդորել յօգտակարսն, սակայն ոչ բառնայ զանձնիշխան կամն, թէպէտ և յառաջագէտ է։

Որպէս առ մանկունսն Խաչակայ, մինչդեռ յորովայնի մօրն էին, ընտրութիւն առնէ. զՅակոբ սիրէ՝ որ բարի բացայայտի, և զԵսաւ ատեայ՝ որ չար երևիւր։

Եթէ այդպէս է, զիաւրդ չարն, ասեն, յառաջագայի, և ոչ բարին միշտ յառաջագայի։ Եթէ այդպէս էր, բառնայր պատիւ անձնիշխան կամացն, և կորընչէր ընդրութիւնք արդարոցն, և զրկեալ լինէին քաջքն յաղագս հանդիսի պսակացն և փառաւքն։

Զի արքայութիւն երկնից, ասէ տէրն, աւար է, և բռունք յափշտակեն զնա։ Զի առաքինասէրք վարուք և մեռեալք մեղացն փոխին որպէս 'ի մեռելոց 'ի կենդանիս՝ 'ի սրբութիւն և յարդարութիւն ըստ Ճշմարտութեան աւետարանին։ Զի մեղք՝ նոցա ոչ տիրեն. զի ոչ են ընդ օրինաւք, այլ ընդ շնորհաւք։ Զի այլ պարգևք 'ի տեառնէ է որ ընդ շնորհաւք են, և այլ պատիւ և փառք որ առաքինութիւնն և քաջութիւնն են շահեալք. և այլ է որ 'ի գիւտից վայելէ՝ 'ի խոնարհութիւն պատկառանաց զգաստացեալ, և այլ է որ 'ի հանդէս առաքինութեան մրցին ըստ հարկեաց սխալանաց անձանց։ Զի զամենայն բարութիւս զերկնաւորսն և զերկրաւորս որ փառաւքն և պարծանաւքն է՝ վայելեսցեն 'ի բարի տուողէն։

Այսպէս է իմանալ վասն հրեշտակաց և դիւաց, արդարոց և մեղաւորաց. զի նախ ընտրութիւն լինի 'ի մէջ քաջացն և վատացն, և ապա ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան զհատուցումն առնէ ըստ արդար դատաւորութեան։ Զի քաջացն որպէս պարտս տայ զպատիւն, և վատացն որպէս ողորմութիւն՝ որպէս շընորհս և պարգևս ինչ։ Զի զօրէնսն իբրև զբուսս եդ 'ի փորձ, և նուաւ առնէ զընտրութիւն 'ի վերս և 'ի խոնարհ, և ըստ արժանեաց տայ զպատիժս և զպատիւս արդարոց և մեղաւորաց։ Զի հոգևոր օրէնքն կենդանարար են. զարդարասէրսն առաւելուն 'ի բարի գործս, և զպղերգսն զարթուցանեն յառաքինութիւն սպառնալեաւք պատուհասիցն, և փառացն ցանկացող առնէ։ Ուստի հանդէսք լաւութիւն կենացն նորոգին, և պսակեալ քաջութիւք ըստ յաջողելոյն ՅՅ յաւետիս արդարոցն մտանիցեն։

Բարեբարբ են որ զարժանն և զիրաւն առնեն, և ժառանգաւոր լինին վերին կոչմանն՝ որ ի կեանսն տանի. զի բան միոյ միոյ առաքեալն՝ և պատկին փառաց և գովութեան յորինին ի տեսանն։ Զի բազմապատիկ են տանջանք Ճգնաւորացն, որ զրազմաշարս օգուտսն ժողովեն ի խրատուէ կենարար օրինացն Քրիստոսի. զի ամ Ճշմարտութիւն եղեցին որդիք լուսոյ Հօրն երկնաւորի, և ժառանգակից Քրիստոսի։ Որ իւր մեծիւմ վաստակօքն էառ զմեծութիւն սնբան բարութեանցն, և պատուոյն և փառացն և արքայութեանն երկնից ժառանգաւոր։ Զի եկամուտ եղև ամենայնիւ՝ ի կամաց և ոչ ի հարկէ, հանդերձ ամ դժուարութիւնք. և փշալից աւար զնամ անդս մտաց և անդաստանն՝ զմտաւորս և զբանաւորս բուսովք չարութեան և սնոտի խաբէութիւք քանարկուսին։ Զանն ամենարիկ ի մեկուսութեան կացոյց զոգիսն ստուգութեան. զի բազում Ճգնաւորական հանդիսիւք քաղեցին զբրանն չարութեանն՝ ի մտաց և ի մարմնոյ զոյսս փաստակաս, զնարեկութեան, զստութեան, զՀպարտութեան, զգայութեան և զամ չար ցանկութիւնս հանդերձ ամ փաստակարօք երևելեօք և աներևութիւք առ չարն հակամիտութեան։

Այլ մարտ պատերազմի բաջացն ոչ միագիմի, այլ բազմագիմի է։ Դարս զի մի հաղորդեսցի բանից խաբէիցն՝ ոչոբանաց և պատրանաց, որ զմիտս և զանդամս շարեն ի փաստակար և յաղտեղի ցանկութիւնս։ Երկրորդ զի մի անկցի ի բուռն ամբարտաւանութեան, Հպարտանն և սնափառութեան. որ փակէ զմարմին և զՀոգին նեբքոյ կորստեան անՀնարին չարեաց։ Երրորդ զնարեկութեանն և զստութեանն և զայլանգակութեան շարժմանս շինուցանիցէ. ընդ նմին և զբարկութիւն և զանզգամութիւն և զստահակութիւն սանձեսցէ խոնարհ սրտիս։ Չորրորդ որ զտեսիլ չարայութեան և որկրբրաստութեան զՀեռ շրջի չեղծակուտեալս ցանկութեանն գիծութեան, ածային ցանկութիւն և պարկեշտութեամբ ապատանայ. ընդ նմին և զամ ցտութիւնս և զգոռոզութիւնս յանձանց թափարել և զամենայն անօգուտս որ ալեկոծեն զմիտս և զզգայութիւնս՝ յանձանց ի բաց ընկենուլ բարի յուսոյն։ Հինգերորդ որ ոչ վրիպէ և ոչ

մելոբի և ոչ գայթակղի յերախտաւոր բարերար տես-
չութիւն. որ հեռացուցանէ յերանութիւն, և 'ի մեա-
գին ափշութիւն ընկենու, ստերիւրեալ 'ի Ճանապար-
հացն արդարութիւն՝ որ տանի յօթեւանս հանգստեան։
Վեցերորդն երդմնահարութիւն և յափշտակութիւն և
զրկանաց. որ արկանէ յամօթ և 'ի տոյժս և 'ի տու-
գանս սպառնալեօք. և առանց պատասխանւոյ է դատն
եթէ ոչ զգաստասցի 'ի սոցանէ։ Եօթնեերորդ որ ըզ-
սրտմտութիւն բարկութիւն շարժէ և խռովեալ պղտորէ
զմերձաւորս, որ 'ի փորձանս խորհրդոց և բանից և
գործոց. եթէ ոչ յաղթահարեսցի հեղութիւնն, ար-
կանէ 'ի պատիժս յաւիտենից պատժոցն։ Ութերորդ
ոխութիւն և նախանձ և ատելութիւն. որ թէ ոչ աղա-
տեսցի յայսոցիկ չարեաց, մահ անձին և այլոց ստա-
նայ. զի քինայ և զչարի 'ի խորհուրդս ղեղաւորս, և
զիոյնս դառնութեան հեղու զորս[1] ատեն։ Ութերորդ
որ զանհաւանութիւն և զծուլութիւն արմատս խլէ, որ
մեթերք են ամ չարեաց և պատճառք անզեղջ կորըս-
տեան և դրունք մահու հոգւոյ և մարմնոյ։ Տասնե-
րորդ որ անխտիր է յամբարշտութիւն և 'ի գարշելի
ախտս և յամ անօրէնութիւնս. որ եթէ ոչ զգաս-
տասցի յահ և յերկիւղ տեառն զողմամբ, կորիցէ
զյաւիտենական զկորուստն։

Այս են բոյսք չարութիւն, զոր ժիր մշակքն քաղա-
հան առնեն, և զբարի բոյսսն մնուցանեն ոռոգմամբ
շնորհալից արտասուօք և առաքինասէր վարուք։ Եւ
յայսոսիկ է մարտն և յաղթութիւն քաջացն և առա-
քինեացն, որ վկայք են Ճշմարտութիւնն, և կենդանի
մարտիրոսք սիրեցեալք 'ի տեառնէ։ Զի սպանին ըզ-
թշնամիս արդարութիւն, և զնորոգումն կենացն՝ որ 'ի
Քս եղեն՝ կեցին, և յոյս նոցա հաստատեալ կայ ընդ
Քսի։ Ճշմարտեալ հաւատովք և հանդիսիւք առա-
քինութիւն 'ի լաւագոյնսն միշտ կալ զօրութիւն Հօրն
ամենակալի և օգնութիւն Որդւոյն բարերարի և շնոր-
հօք ամենասուրբ Հոգւոյն, միոյ ճշմարտութեանն որ ապա-
ւէնն է յուսացեալոց իւրոց։

Առաջին և նախ քան զամենեսին Ճշմարիտ հաւա-

1 Միւսն զոր ասէին։

տոյն հաստատութեան՝ որ 'ի Հայր և յՈՍդի և 'ի Հոգին սուրբ՝ սիրով և յուսով։ Զի այսու վկայեցան առաջին սուրբքն. իմացան և ծանեան զառ 'ի նմանէ յօրինուածս՝ ամ՝ արարածոց, և զնախախնամութիւն սուրբ սիրոյն և զվստահութիւն յուսոյն որ առ ՝ուծ, որ ոչ երևի։

Լրջերորդ լինել Ճշմարիտ բանին քարոզութեան առ գիւտս կորուսեալոյն և առ պատկանաւորեալսն։ Որով կարգին ընդ սուրբ հրեշտակս՝ որ առաքին 'ի սպասաւորութեան որ ժառանգելոց են զփրկութեան և զերանութեան 'ի յոյս կենացն յաւիտենից։

Լրջերորդ որ յստակ խորհրդովք աղբիւրանան 'ի բարեգործութիւս՝ յորդորումն առ երախտիս ամ՝ հեռաւորաց և մերձաւորաց. ուռոգել զանդս մտաց և մարմնոց հոգևոր շահիւք և մարմնաւոր պիտոյիւք. և այնպէս բազմացուցանել զպտուղս արդարութեան արմատացն 'ի վայելումն անմահ կենացն։

Չորրորդ որ զհաւատոյն զնշանագուդութեան և զմիաբանութեան զհանգամանս ունի յոգիս Հոգւոյն սրբոյ, 'ի միասին ժողովելով 'ի խաղաղութիւն և 'ի փառաբանութիւն այ, և զմիմեանս օգտեցուցանել անդնախանձ օգնականութեամբ, և յերանելի կենանն յուզարկել։

Հինգերորդ որ անարատ և ամբիծ յորդեռանդ հոգևոր սիրոյն խնամէ զամենեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից. ձեռնտու լինել զրկելոց և վշտացելոց, և եթէ այլ ինչ աղէտք իցեն որ պէտս ունին օգնականութեան հոգւոյ և կամ մարմնոյ. և այսպիսի երախտեօք մտեալ 'ի ժառանգութիւն կենացն քնի։

Վեցերորդ որ լինին մնատակարաքը Ճշմարտութեան աւանդիցն՝ որ հաւատացաւ նոցա յայ՝ Հոգեկանաց և մարմնականաց. տալ 'ի ժամու զՀոգևորական զօրուտրս և զմարմնական զպէտս, և առնուլ զառհաւատչեայ երանութեանցն զպարգևս յարքայութեանն արդարոց։

Լրօթներորդ սրբութեան և զզուշութեան պահպանութեան ամ՝ առաքինութեանցն. արթուն և զուարթուն կալ յամ՝ գաղտանձիգ նեռս չարին, որով սպան զանմեզս 'ի մեզս։ Զի յամենայնի ամրացեալք և յաղ-

թեալք նորա խորամանկութեն՝ առցուք զպսակն անեղծութեան։

Ութերորդ լինել խոնարհ սրտիւ և հեզ բարուք և խաղաղարար առ ամենեսին՝ առ հեռաւորս և մերձաւորս, նմանել Քրիստի հեզոյն և խոնարհին և խաղաղարարին. զի հայեցեալք յառաջնորդն հաւատոց՝ զհետ երթիցուք, և գտցուք զանտի զհանգիստն 'ի խոնարհ և 'ի հեզ և 'ի խաղաղարար սիրոյն։

Իններորդ որ պարկեշտութիւն և համեստութիւն բարեմտեալ ըստ ամի առաջնորդական խրատուն փրկութեան և կենդանարար, հասանել 'ի դուռն կենաց և մտանել 'ի յարկսն յաւիտենից 'ի հանգիստն՝ որ պատրաստեալ է 'ի փրկչէն մերմէ ըստ իւրաքանչիւր վարուց։

Տասներորդ Քրիստի փրկական պատարագին լինել խորհրդածու և խորհրդակից ըստ արժանաւորութեան մաքրման հաղորդելով. աղօթանուէր պաղատանօք և ընդհալից արտասուօք և ջերմեռանդ հոգւով երևացմամբ սուրբ սիրոյն առլցեալ 'ի Քրիստ, ընդ երկնայինսն մերձենալ առ ածն և անտի լուսաւորել զհոգի և զմարմին, և բուռն հարկանել զկենացն յաւիտենից։ Եւ զերկնայինսն միշտ խոկասցի, և զերկրաւորս արհամարհեսցէ, խորհրդակից և գործակից ունելով միշտ զամենազօր տէրութին. և մտերիմ կամաք զանձն անշարժ ունել 'ի Ճշմարիտ վարս և յուղիղ հաւատս. երախտաւոր սուրբ սիրոյն յառաջնալ 'ի բարիսն, և զայլս յորդորել 'ի խոստացեալ բարիսն և 'ի կեանսն։

Այս են քաջացն և առաքինեացն հանդէսք, որ 'ի վերին կայանսն տանի. և լսեն յամենեցունց տեառնէն, ով ծառայք բարեգործք և հաւատարիմք, որով 'ի սակաւուդ հաւատարիմ եղեայք յերկրի աստ, 'ի վերայ բազմաց կացուցից զձեզ 'ի մշտնջենաւոր կեանսն. եկայք մտեք յուրախութիւն տեառն ձերոյ յանվախճան երանութիւնսն՝ որ պատրաստեցաւ ձեզ։

Այսպիսի խրատու լինել աշակերտ և խորհրդակից, և մերկանալ զզբօսանս աշխարհիս և զհոգս մնոտիս, և զգենուլ զհոգևոր ազատութիւնն լուսաւոր ըզգեստն՝ որ յառաքինութիւնէ կազմի անհամեմատ լուսոյն։ Եւ հանապազօր քննող լինել խորհրդոց և բա-

նից և գործոց. եթէ ստունգանեալ իցէ, ասղէսցի լուսագոյն խրատու ածային գրոց 'ի ձեռն զղջման. «Զի զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զըզ-ջացարուք. և մատուցէք պատարագս արդարութեան և յուսացարուք 'ի տէր» որ արդարացուցանէ. Զի փառաւորք են 'ի վարդապետաց որք առնեն զայս և ուսուցանեն 'ի նոսին ինքն 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ. որում փառք այժմ և յաւիտեանս. ամէն.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆԵԱԼ

ԺԹ

Ա՛ԵԴ են յարդանք հրամանաց տեառն և անբաւ շնորհք բարերարին ՅԻ. զի զոր յառաջն Ճանաչէր, զնոսին և կոչեաց 'ի յոյս կենացն անվախճանից, և արդարացոյց և փառաւորս արար։ Որ հաւատով և երկիւղիւ պահեցին զպատուիրանս նորա, և հնազանդեցան ընդ ամենախնամ սուրբ սիրոյ նորա, և ընկալան զբանն կենաց յանձինս իւրեանց, և եղեն պտղաբերք և աՃեցունք առաքինութեանն վաստակովքն, որոց վարձքն կան և մնան 'ի հանդերձեալ կեանսն։ Իսկ ծուլիցն և անհնազանդիցն որք արհամարհեցին ըզբանն Ճշմարտութեանն, և խափանեցին զպտուղս արդարութեան, և ընկալեալ զչարաչար սերմանս 'ի թշնամւոյն՝ և եղեն մեղաւորք Ճշմարտութենն աւանդից և խնամակալ սիրոյն՝ մոլորեալք յուղիղ Ճանապարհացն, որոց կատարածն 'ի կորստեան վիհս ընկենու։

Սակայն բարերարին ՅԻ բարերար խնամքն ոչ անտես առնէ որք դառնան առ նա. բանայ զդրունս ողորմութեանն շնորհացն, և ընդունի զթութեամբ երախտաւոր սուրբ սիրովն, և յանձանձէ զապաւինեալսն 'ի նորա զթութիւնն։ Եւ 'ի ձեռն Ճշմարիտ խոստովանութեան, և խոնարհեալ և բեկեալ սրտին 'ի զղջումն սգաւորի՝ զթայ 'ի նա և ողորմի և այցելու լինի փրկիչն։ Զի զծածկեալ մաղձն դառնութեան 'ի բաց փոխեաց. և եցոյց՝ եթէ զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի՝ զառողջութեանն և զսրբութեան և զարդարութեան։ Եւ ըստ ունակութեան ցաւոցն 'ի մարդասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի՝ զարդարութեանն վարս, որ ընդդէմ մեղացն և դժնդակ ցաւոցն զոր

ուներ. զի այլ մի ևս անկանիցի ՚ի նոյն, և այլ ոչ ևս գայցէ զմարդասէր թէ՛ իշխն։

Օ ի կոչէ բանն ՝ն զծանրաբեռնեալսն խոստովանութիւն յապաշխարութիւն. զխաւարեալսն մեղօք ՚ի լոյս արդարութեան. զմոլորեալսն ՚ի գիտութեան Ճշմարտութեան, և զվրիպեալսն ՚ի Ճանապարհացն արդարութեան ածել յուղղութեան. և զմահաբեր վարս ՚ի կեանս վերստին նորոգել խոստովանութիւն, լուծանել զամենայն խարդախութիւն սատանայի։ Զի զամենայն մարդ կամի զի կեցցէն, ասէ Եռաբեալ, և ՚ի գիտութեան Ճշմարտութեան հասանել. ամենագիւտ սիրոյն տեսչութիւնք։

Օ ի խոստովանութիւն, ասէ մարգարէն, մեծվայելչութեան է առաջի ՝ն և քաղցանալոյ նորա. զի «Աստուածոյ է թեթև պատմելոյ յինէն զմեղս իմ», և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց»։ Զի ըզվերսն բանայ և զցաւսն յայտնէ, և զդեղ բժշկութիւնն ՚ի վերայ ածէ. զղջմամբ զապաշխարութիւնն եռանդմամբ հոգւոյն ՚ի հանապազորդ արտասուալից աղօթսն անդադար ՚ի տուէ և ՚ի գիշերի. և աղօրմ կերպարանս ստանալ Ճնշելով զմարմինն պահովք, զի զնոյն խանարհեցուսցէ ՚ի գութ բազմախնամ շնորհօքն առ ՚ի թողութեան մեղաց։ Զի ապաշխարութիւն ոչ միով իւրք կարգի, այլ բազում իրօք շինի. և ՚ի մի հասակ արգարութեան կանգնի անկեանն և աւարեալն։

Օ ի նախ առաջին զղջմանալ և խոստովան լինել զյանցանս, և արտասուաց ընդունարան առնել զանձն յապաշխարութեան ժամանակս անդադար աղօթիւք և աքնութիւք և միշտ պահովք, և մեծաւ ապաշաւանօք սգալ զյանցանս գործեցեալս հանապազ։ Երկրորդ զի ատեսցէ զմեղս և զգործակիցսն մեղաց ըստ ամենայն դնասուցն. և կշռամբել զմիտս և զզգայութիւս որք ՚ի լարն հակամիտեցին, և ոչ պահեցին զՀոգևոր օրէնսն՝ որ նոցա աւանդեցաւ յարարչէն։ Երրորդ սիրել զարգարս և զառաքինիս, և գործակիցս իւր արասցէ զնոսա աղօթիւք առ ՝ն՝ և յամենայն գործս բարութեան յորդորիչս ՚ի Ճշմարտութեան աւանդս կարգաց։ Զորրորդ զի ՚ի յանցաւորաց անտի խորշեսցէ մտօք և բանիւ և ամենայն տեսութիւն պատ-

կառ. լաւ համարել զնեղութիւն կրել ընդ արդարս, քան զհանգիստն ընդ անիրաւս։ Հինգերորդ յահ և յերկիւղ ոտն կրթել, և չթողուլ 'ի մտաց զօր վախ-ճանին, այլ և զպատիժս մեղաւորաց. և մեռուցա-նել զանդամսն կարեօքն և ցանկութիւքն։ Վեցերորդ 'ի տուէ և 'ի գիշերի հսկել վասն փրկութեան անձին եթէ որպէս կարասցէ լուծանել զմեղս, և ապրել 'ի բարկութենէն որ գալոցն է 'ի վերայ անապաշխա-րիցն։ Եօթներորդ զի մի մոռասցի զբեկումն անձին իւրոյ և պղերգասցի 'ի բարեպաշտութեան ճգանցն և դարձցի 'ի նոյն ինքս, և վերստին ոչ կարասցէ բժըշ-կել։ Ութերորդ զի առողջացեալ զդաստացեալ սրբ-բեալ, իմասցի զնեբքին մարդն և զարտաքին և զսի-շատակս խոստացեալ աւետեացն ստոյգ ապաշխարո-ղացն։ Իններորդ զամենայն հրամայեալսն արարեալ ըստ հոգևոր օրինացն և աւետարանին Քրիստոսի, և ակն ունել վերստին նորոգման 'ի ձեռն քաւութեան պա-տարագին։ Տասներորդ առաւելեալ յամենայն բա-րեգործութիս երևելեօք և աներևութիւք, և զպիս մեղացն ջնջել զհոգւոյ և զմարմնոյ, և յաղթող ե-րևել 'ի հանդիսի ապաշխարութենն՝ կարասցէ հա-մարձակել 'ի մեղսաքաւիչ խորհուրդն կենդանարար, և լինել հաղորդակիցս և մարմնակիցս և կցորդս ան-ճառելեացն։ Եւ յայսմհետէ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի և սուրբք ընդ նմա առհաւատչեայ երա-նութենն։

Եւ ստոյգ խոստովանողք և ապաշխարողք ազա-տեալք փրկաւէտ մարմնով և արեամբն Քրիստի. զի նա է յոյս մեր և առիթ քաւութեան, և նովաւ լինի ազատութիւն և մուտ յուրախութիւն և 'ի ժառան-գութիւն արդարոցն երախտեօք Քրիստոսի սուրբ սիրոյն, որ արդարացուցանէ զմեղաւորս՝ որ ապաշ-խարեսցեն։ Զի որպէս սուր որ հատանէ զմարմինն և վտանգէ զանձն, և կարօտանայ բժշկի որ զիջու-ցանէ զվտանգսն դեղովք ոմամբք յառողջութիւն, այսպէս դեղովք ապաշխարութեամբ զհարուածս ցան-կութեամբ և զաղտեղի յիշատակս ջերմեռանդ արտա-սուօք լուանալ զվերքն և բժշկել անարատ սրբութիւն։ Զի արտասուաց դրունք են վիշտք նեղութեանց և ախ-

տից ինչ ցաւք, փնասուց կսկիծք, հոգւոց տագնապք, վրդովք օգտից, պատահարք թշուառութեանց, վանողք ի բռնաւորաց, անանկութիւն յանկարծահաս, կորուստ սիրելեաց, ցաւք պէսպէս դժնդակաց անբմբերելի, և որ այլ ինչ սոցին նմանեալ։ Իսկ հոգւոյն շարժմունքս յայսոյն չարութիւն յարփշտակեալ յանխտիր ցանկութիւն՝ վշտացուցանել զմիտս ի դժնդակ խորհուրդս ապարատուորս, որ ոչ ունի զկայանս արդարութեան։

Վասն այսորիկ պիտոյ է պաղատանս արտասուալից առ փրկիչն, զի զերծուցեալ յայնքան փնասուց։ Եւ իմանալեօք ընդ զերկմտութիւն նոցա նայել, և ի վայր կործանել զմնուք առաքինութիւն զնոսա, և զբարվիգ ունել զապատէն կենացն մերոց զՔՒՍ ՅՈ. և ասէն զայցելութիւն առնուլ բարեացն ցանկութիւք, գութ առ ընտանիս հաւատոց, անձուկ հեռաւորաց սիրոցաց՝ այ, ծարաւ մտերմութեանն գիւտից հոգեւորաց, փափաքումն առ սուրբս, քարոզ խաղաղութեան, խոկումն խոնարհութեան, քաղցրալից բաբառք խրատուց՝ որ զկարծրացեալ միտս շարժէ ի յորդորումն առաքինութեան։ Զամենեսեան օգտեցուցանել առ իմանն սիրոյ փրկութեան, և առ օգուտս՝ ի լրումն՝ հոգեւորացն, և՝ ի շահս բարեաց վայելից, և՝ ի համբերութիւն՝ ի նեղութեան՝ վայելել՝ ի պարգևս հնորհաց, որտայ՝ ի յոտսի աղերէն կենաց։ Վասն որոյ աղօթք և խնդրուածք մտերմութիւ՝ ի բոլոր սրտի՝ տանի՝ ի նաւահանգիստն հնորհօք։

Եւ ձնչեալ զմիտն՝ ի զղջումն արտասուաց յիշատակս աւետեաց իմանալոյ պաղատանաւք եռանդնասէր խանդաղատանաւք հեղուլ զարտասուս հնորհալիցս առ՝ ի մաքրուութիւն մտաց և մարմնոյ, որ զանմաքրութիւն ստացեալ ունէին զաւր և զաղտեղի ցանկութիւս։ Զի արտասուք զմտացն հարուածոց դառնութիւն սրբէն և ողջացուցանէն, և զխոտանն՝ ի բաց ընկենուն՝ ի մտաց և՝ ի զգայութեանց։ և մնի ընդ հովանեաւ նախախնամական սիրոյ փրկչին, և առնուլ յուսով զմխիթարութիւն։ Արտասուք շարժեն զմիտն առ ՅԱ, և զարթուցանեն յափշտութիւն [2] մեղացն որպէս

[1] Միւսն՝ ի զարդուն։ [2] Միւսն յոգեւորութիւն։

'ի քնոյ, և վառէն 'ի զգուշութեի զգաստութեէ շահաւորն օգտից սիրով։ Արտասուք արբուցանէն զհոգևոր ըմպելին 'ի խնամս սուրբ սիրոյն 'ի գութ յիշատակաց բարերարին տեսչութեէ քաղցր կամացն 'ի շնորհալից աղբերէն բղխեալ յաղատութեի և 'ի ժառանգութեի կենդանարար յուսոյն յաւիտենից։

Լայսչափ շահք օգտից 'ի զղջմանէ արտասուաց. որ շարժեն զբարս հոսանուտս 'ի գիւտս փրկութեէ և 'ի պահպանութիւն ՝այ կամացն, և զմիտս ամիոփեն 'ի հաճոյս ՝այ։ Եւ որքան 'ի յայսցանէ շահք բարեաց, այնքան առաւել ՝ինասք՝ 'ի ծուլութենէ և յարհամարհանաց զարտօսր՝ որ 'ի խորութէ սրտի յառաջագայի, և 'ի պղերգութէ արգելեալ՝ դժնդակացն լինի մուտք 'ի չարին ազդմանէ. և շարժեն զմիտս և զանդամս 'ի յանխտիր չարիս. և ելք զղջման և արտասուաց 'ի ծուլութենէ և 'ի խստացեալ ամբարտաւան սրտէ, որ քամահէ զզեղջ շնորհացն և ոչ հոգայ վասն այնր որ զրկեցաւն։ Եւ ընդունի փոխանակ բարեացն զչար զարհամարհութի, զամբարտաւանութի, զապիրատութի, զյամառութի, զամբարշտութի, զսնափառութի, զագահութի, զորկորստութի, զցանկութի, և որ այլ ևս են մուտք չարին։ Եւ որ յայսոսիկ ըմբռնեալ է, դժուարաւ բժշկելի է։

Լայց ոչ անյոյս առնէ մարդասիրութէ բանն որ զղջանան և գան 'ի հնազանդութիւն ահիւն ՝այ, և ընդդէմ չափեն մեղացն զուղղութինն, անիրաւութենն զիրաւունս, անսրբութենն զսրբութիւն, ամբարտաւանութեանն զխոնարհութինն, բարկութենն զհեզութի, որովայնամոլութեանն զպարկեշտութի, հեղգութենն զպնդութի, ստութենն զճշմարտութի միշտ. անհնազանդութենն զհնազանդութի, ագահութենն զչափաւորութի, կեղծաւորութենն զպարզամտութի, երդմնահարութենն զերդնուլն, մախանացն զբարերարութի, ոխութենն զանոխակալութի, խստութենն զքաղցրութի, ատելութենն զսուրբ սէրն միշտ. անզղջութենն զզղջումն արտասուաց, անխոստովանութենն անխղճի զխոստովանութի խղճի մեղացն, անյուսութենն զյոյսն ուղիղ, թերահաւատութենն զուղեղ հաւատս յանձին հաստատել և այլոց քարոզել զճշմարտութինն։

Բայց էստոյգ աւանդիցն գէմբ ապաշխարութեան, ամ որ ինչ Հակառակ է մեզացն՝ առնել զարգարութիւն ամ որ երևին և որ ոչն երևին՝ ի խորՀուրդս մտերիմս և ի յիշատակս աւետեացն սոյգ ապաշխարողացն, և դարձեալ ի սպառնալեաց անապաշխարողացն յամենեցունց տեառնէն։ Յայսոսիկ զգուշանալ և ի պատրաստի ունել զՀաճոյսն ոչ աՀիւն տեառն, յիշատակօք անվրէպ գիտութեան ոչ Համարս առնելոյ արդաք դատաւորին յաւուրն դատաստանի, յորում ոչինչ ծածկի ի խորՀրդոց և ի բանից և ի գործոց։ Օ ի ընտրութիւք են առաքինեաց և պղերգացն, Հաւատացելոց և անՀաւատից, և ըստ արժանեացն Հատուցմունք։ Պատիւք և մեծարանք և երանութիւք յաղթողացն են՝ որք մարտեան ընդդէմ մեզացն և Հակառակորդին, և յաղթեցին և պսակեալ փառաւորին։ և դարձեալ որք սոյգ ապաշխարեցին զմեսս իւրեանց։ Խակ ահաւոր սպառնալիք տանջանացն պաշարէ զանիրաւսն և զամբարիշտն ի տուգանումն պատժոց, որ ոչ անկան յապաշխարութիւն։ Եւ զխնամաՀեալսն և զնուաՀեալսն ընդ կարգաց ապաշխարութեան ընդունի յօթևանս կենացն ըստ արժանաւորութեան մաքրմանն ըստ բազում ողորմութեան իւրոյ։ Զի նեղեալն և վտանգեալն արատասօքք և բարի շարժմամբք յողորմութիւն դարձուցանէն յաղագս սիրելանաց ինչ այսպէս զմարդասէր տէրն։

Եւ որպէս տղայքն որ ոչ գիտեն բառիւք զպէտս ի մարցն խնամոցն առնուլ, այլ արտասուօքք զպիտոյսն խնդրեն և առնուն ի խնամոց սիրոյն, զի ոչ գաղաբեն ի լալոյ մինչև ամենայն խնամք ի մարցն կատարի՝ ապա դադարեն և զուարճանայ և Հանգչի, այսպէս պարտ է մեզ լինել առ բարեգութ տէրն, որ խնամէ զմեզ յանեղեալսն արաբչական սիրո

սիրո

թեան մինչև՝ ի սխալանն աշխարհի։ Զի զհանապազ-զորդ սխալանն հանապազորդ արտասուօք աւազա-նին լուանալ և սրբել։ և զի հանապազօր մեղանչ-մամբ՝ որ խորհրդով, որ բանիւ, որ ընդլով, որ տեսանե-լով, որ շարժմամբ իւիք այսոքիկ, հանապազորդ ա-զօթեք և լուացք արտասուաց մի պակասեսցէ։

Օ՛ի որ կամակաւն են մեղք, այսինքն ընդ կամանօք, այնոցիկ ժամանակք որոշեն և զատուցանեն յեկե-ղեցւոյ և՝ ի ժողովրդենէ և՝ ի սեղանոյ. զի ըստ մե-ծի մեղասուցն և մեծ ջանք և աշխատութիւք պիտոյ-անան։ Եւ որոյ նուազ ունին սխալանսն, և բժշկու-թիւն արտասուօք սրբել։ Իսկ որ՝ ի խորութեան սրտին է աղտ ապականեալ անդամքք, անդ վտակք արտա-սուաց և հուր և եռացումն հոգւոյ պիտոյանան. որ սրբէ և հալէ և՝ ի բաց մերժէ։ Եւ որ փոքր ինչ սխա-լանս ունի ակամայ վրիպեալ, զզջանալ և յոգւոց հանել և արտասուօք անդէն իսկ սրբել։

Լ՚ԱՒ որ սաստիկ ունի զվերս մեղաց, և կամաւ ըմ-բռնեալ, որ կամոնաւ ունի զանուն և զկարգ որ՝ ի՝ ձոնէ, ունի զհնագամանս սպառնալեաց. բազում՝ ջանք և ջերմեռանդ՝ արտասուք և բեկումն սրտի և որոշումն ժամանակաց ըստ յանցանացն՝ ի՝ ներքս բե-րիցէ առ՝ ի լուծանել զդժոգակ ձմեռն խստութեան մեղաց։ Զի գարունն հոգևոր երևեսցի՝ ի՝ շնչել հա-բաւոյ ջերմութեան հոգւոյն։ և՝ ի վերուստ սաստիկ անձրևով զհոսանս արտասուաց։ նոր երկիր զբոյսս և զծաղիկս բացայայտէ, և տունկք զսաղարթս և զպը-տուղս առ՝ ի վայելս թագաւորաց և ռամկաց, որովք զուարճանան։ Այնպէս և որ ջերմութիւք հոգւոյն զհո-սանս արտասուացն հեղու և լուծանէ զկապանս ծը-ռեանցին մեղացն, արձակին բոյսք առաքինութեանն և պտուղք արդարութեան մնկոցն. որով ուրախանան երկնաւորք և երկրաւորք՝ ի փառս՝ այ։

Օ՛ի այսպիսի միաս և բարս պարտ է ստանալ ա-պաշխարողաց. զի ազատեսցին՝ ի պարտեաց հարուա-ծոց գեհենին անչէջ հրոյն և անմահ օրդանն։ Եւ ՀՇմարտեալ ստոյգ ապաշխարութիւն արտասուաց ա-

1 Մեռան Ջերմոնիի արքասուաց։

ւազանաւն ժառանգաւորք արքայութեն եղիցին, զգեցեալ զպատմուճան սրբութեան լուսոյն Ճառագայթեալ առաքինութենն հանդիսիւք, պսակեալ և վայելեալ յանվախճան երանութենն ընդ սուրբս։

Օ՛ի ապաշխարութենէ ստգտանելն զինքն և հրաժարել՝ի ինասակարացն և՝ի չար ցանկութենցն։ Եւ փոխանակ միոյ միոյ չարեացն զարդարութիւնն ընդդէմ դնել, զի խափանեսցէ զմեղն, և զարդարութենն աՃեցուսցէ սուրբ սիրով և արտասուալից աղօթիւք, և պահովք ցամաքեցուսցէ զպղտորեալ զանժոյժ բղխումն գիՀութե՝որ ապականութի է յանդամն։ Զի ջուրք աղբերաց և սրսկմունք անձրևաց զերևելի հուր շիջուցանեն. իսկ առ ՈՃ սէրն և ջերմեռանդ արտասուք զհուր ցանկութենն շիջուցանեն, և խափանեն զկամն մարմնոյ, զինքնագործութե շոշափելեօք զաղտեղի շարժմանցն զհոսմունս. և այլ մի՛ևս մերձենալ՝ի նոյն գարշութիս ախտից, այլ մաքուր մտօք զմաքրութի ստանալ։ Զի մի՛ սպառնացեալ պատուհասն անսրբութե՝ի վերայ հասանիցէ յաւուր յորում՝ոչ գիտիցէ, և՝ի ժամու յորում՝ոչ կարծիցէ, և տայցէ վրէժս ըստ ինասուցն։

Ա՛յլ սիրել զսրբութի՝ի տէր որ՝ի սուրբս բնակէ։ Եւ զանսրբոցն ասէ. «Որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի. և եղիցին տեսիլ ամենայն մնեղեացդ»։ Եւ զամենայն արկուածս մեղաց՝ի մտաց և՝ի մարմնոյ՝ի բաց թօթափել. մինչ զի կարասցէ ասել, գայ իշխան աշխարհիս այսորիկ մեղսասէր, և յիս ինչ ոչ գտանէ զմեղացն նշխար. այլ Քե ըստ աւետարանին կենաց՝ որ վերստին նորոգեաց ստոյգ խոստովանութիւ և արտասուօք ապաշխարութիւ և գթով տնանկաց հանդերձ ամենայն առաքինասէր վարուք յարդարեալ՝ի հաՃոյն ՈՃ։ Եւ մշակք լինել այգւոյն ՃրՃմարտութե՝ի սկզբան հաւատոց և ուղիղ վարուց, որով կայ՝ի վերայ երկրի և առաքինանայ։ Եւ ելանելով յաշխարհէս՝ ընդ իւր տանի զարդարութիսն ամենայն, զտղայութե անմեղութին, զմանկութե անարատութին, զերիտասարդութե անբծութիւնն, զծերութե զմաքրութին, գլխաւորելով ըստ իւրաքանչիւր հասակացն զամենայն առաքինութի, և ըզ-

վարձս առցին ըստ իւրաքանչիւր վաստակոց յամենեցունց ՝ՍՈՒՆ գործոցաց այգւոյն հաւատացելոյ ըստ ժամանակացն փոփոխմանց ։ Օժանդակ լինել առ վերին կոչումն, ուր Քս նստի ընդ աջմէ ՝՝՝ յԵրուսաղէմն վերին՝ որ է մայր մեր ամենեցուն . ուր և յառաջագոյն գանձք առաքինութեան բարեաց ամբարեցան . ուր յոյսն մեր է հաստատեալ՝ անմահ երանութիւնն , անսպառ վայելչութիւնն , անխախտան ուրախութիւնն , անզեղջ բարութիւնն 'ի վայելումն Քոհիւ ։ Մի հաւասն ինդութի երկնաւորաց և երկրաւորաց երանութի 'ի փառս Քոյ գործակցութիւն բարերար երախտեաց սուրբ սերոյն ։ Որ մատոյց 'ի յորդէգրութիւն Հօր և 'ի խնամն սուրբ Հոգւոյն և 'ի ժառանգութի արքայութիւն իւրոյ ։ Որ ատ արգարացոյց , և անդ թագ 'ի գլուխս պակեալ փառաւորեն յԾծողէն խրախճանութիւնս , հանապազորդ 'ի հրճուանս յանսպառ բարիսն ամենասուրբ երրորդութիւն ։ Զի նմա վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՐՈՒԵՍՏ ԽՐԱՏՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԻՑ

Ի

Որպիսի գոհութիւն և օրհնութիւն և փառս տալ արժան է ամենակալ Տրութեանն ամենառատ բարերարութեանն. որ ոչ թողու 'ի խնամակալ սիրոյն իւրոյ, այլ յանձանձէ և աղբիւրաբար բաշխէ զշնորհս յաւարաածս իւր։ Նախ զի իշխան կացոյց և տէր 'ի վերայ երկրի, որ ընդ իշխանութիւնս վերնոցն. զի ծանիցուք զնորա խնամն արարչական սիրոյն, և աշակերտեալ նորա պատուիրանին՝ կատարեսցուք զարդարութիւնն ամենայն, և առցուք զհատուցումն բարի 'ի ժամանակի այցելութեանն. և ըստ ժամանակի՝ անապականութեամբ վարուցն հետևողք լինել։

Որպէս 'ի սկզբանէ նախաստեղծին կեանքն յարդարեցան 'ի Տնէ անմեղութիւն, զայն սուրբ սէրն հաստատել 'ի մեզ։ Որպէս և Քո սիրեաց զմեզ, և զանձն իւր մատոյց պատարագ 'ի հոտ անուշից։ Որ բարկացուցաք զարարիչն, զի ոչ պահեցաք զպատուիրանս նորա։ Զխնամն սիրոյն իւրոյ ոչ որպէս առ երախտաւորս եցոյց, այլ յապախտաւորս որպէս ՅՈՒ վայել է։ Զի զբարիսն զոր եցոյց մեզ ՅԱԾ, ոչ ըստ մերում արժանաւորութեանն, այլ յաղթեալ յարարչական սուրբ և անբիծ սիրոյն՝ դարձաւ յողորմութիւն։ Որ և ոչ իսկ փոխարէնս խնդրէ 'ի մէնջ փոխանակ երախտեացն. այլ կամի՝ զի կեցցուք արդարասէր, և ժառանգորդք լիցուք երկնից արքայութեանն։

Օ՛ի նա է յոյս և կեանք մեր և աղբիւր բարեաց։ Զի՞ ոչ խնդրէ աղբիւր ջուր, և ոչ արեգակն լոյս. այսպէս և ՅԱԾ տուող է բարեաց և ոչ առողջ ինչ յաղագս մեծի բարերարութեանն իւրոյ և անկարօտ լինութեանն։ Այլ որ առ միմեանս լինին երախտիք, զայն իւր

համարի, և ինքն առնել զիսոխարէնս յերկրի և յերկինս որ կան և ինան։ Զի միանգամ բարի առնել, փոխարէնս ի նմանէ առաքին երևելիք և աներևոյթք։ Զի որպէս արիւն Աբելի առ ածծ բղխեաց, որ սպանաւ ի Կայենէ և պատժի ՝ ի տեառնէ, սոյնպէս բարի բղխեալ ցածծ ի բարի խնամս շարժէ բարեգործաց։ Զի օրք ոչ խնդրեն զվրէժս ի զրկողաց, ինքն առնու վրէժս ըստ արդար դատաստանին. զի ըստ արժանեացն է հատուցումն առ բարեգործսն և առ չարսն։

Լաւ ՝այ նմանել այս է, որ ապէրախտին երախտաւոր լինի, զկորուսեալսն խնդրելով, զգտեալսն պահել իւրով աշխատութիւն և ջանիւ։ Նմանել Որդւոյն ՝այ՝ որ եհտ զանձն իւր ՝ի մահ վասն մեր, և կամաւոր չարչարանքն ազատեաց ՝ի ծառայութենէ մեղաց, և բարեաց կենաց և աւետեաց զմեզ հրաւիրեաց, և Հոգւոյն սրբոյ ընդունելութեան արժանի արաց։ Եւ զամենակալ Հօրն զանհամեմատ զերանութիւն խոստացաւ։ զի միանական Երրորդութենն միշտ Հանցուք օրհնութիւն, որ հանապազ ՝ի բաց ունի զդրունս փրկութեան կենաց հաւատացելոց, և ապաւէն ամենեցուն որ կարդան առնեսս։ Եւ աշակերտեալ առաքելական բանին՝ գործակից լինել բարեբար կամացն, և խորհել զարին և առնել և ընուլ զՀաճոյս արարչին ՝ի հնամէն մերձաւորաց։ Զի զիսոխարէնսն առգին զարբեացն ըստ անմեղութեան սուրբ սիրոյն։ և ՝ի նոյնս յառաջանալ ՝ի լաւսն, և պատերազմել ընդդէմ մեղացն առաքինութեան հանգիսիւք։ և ՝ի բոլոր սրտի ապաւինեալք ՝ի խնամս մարդասիրութենն, և խրել զմամ բոյսս անօրէնութեան ՝ի մտաց և ՝ի զգայութեց հանգերձ ամենայն ազտեղի և չար սխտիւք։ Եւ ՝ի բաց բառնալ զՀպարտութիւն ՝ի մէջդ, զագահութեն, զխռամանկութեն, զբարկութեն, զոխակալութեն, զնենգութեն, զտուութեն, զերդմնահարութեն, զնսխանած, զորովայնամոլութեն սրբչաց։

Օ այսոսիկ փնասակարութիւնս և որ սոցին նմանեն դժոգակութիւք մեզաց՝ սպառնալեօք յաւիտենական տանջանացն արտաքս հանել, և տնկել զբարեացն

1 Ուրն դոսիք։

տունկան 'ի միտս և 'ի վարս հանդերձ յարմարական առաքինութիւնքն և անարատ սրբութիւն և ճշմարիտ հաւատով, խրախուսեալ յաճ յուսով աւետեացն խոստմամբք. զպատուիրեալ առհաւատչեայ ասա առեալ, և հրաւիրեալ 'ի պատրաստեալ արքայութիւն երկնից 'ի յոյսն կենդանեաց, 'ի բարութիւն անվախճան երանութեանցն, որ ոչ մտաք իմանալի է և ոչ բանիւ ճառելի որ անդէն երանութիւնքն։

Զի որպէս մանկունք որ յորովայնի մարդն լինին յապաժոյժ, և 'ի խաւարի թաղեալ. և ոչ գիտեն զերկրիս վայելչութիւն, զարեգական պայծառութիւն, և զլուսնի և զաստեղաց և զժամանակաց և զամսոց շրջագայութիւն, և զլուսոց և զտնկոց պտղաբերութիւն, և 'ի վայելս կենդանեաց և որ այլ ևս անասնոց նախիրք և գազանաց և թռչնոց որ 'ի կերակուր և որք 'ի հնազանդութիւն են անկեալ, որք 'ի ցամաքի և որք 'ի ջուրս են զուղակք՝ որ պատրաստեալ որոգայթիւք ըմբռնին յորսողաց, և որ այլ ևս իցեն վայելչութիւք և պայծառութիւք հանդերձից, և ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ որ 'ի զարդ մարդկան գործեցաւ և 'ի փառս թագաւորաց՝ յորս ուրախանան աշխարհասէրք, արդ որպէս ոչ գիտեալ մանկանցն զայս կեանս և ոչ նման է յորովայնի կենացն, սոյնպէս և ոչ մեզ իմանալ զհանդերձեալ կեանսն. և ոչ համեմատի այս լոյս և կեանք առ այնր կեանք և լուսաւորութի փառաց ամենազօր տերութեն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց ՚ուծ սիրելեաց իւրոց զանվախճան երանութիւնն 'ի Քս Ցս։

Այս և ոչ որ յաշխարհիս են նեղութիւնք և վիշտք և չարչարանք և տանջանք հրով և ջրով որպէս Սոդոմայն և ջրհեղեղին, ոչ համեմատեն անչէջ հրոյն և յաւիտենական տանջանացն՝ որ պատրաստեալ է ամբարշտաց և մեղաւորաց։ Զի ՚ուծ զմիտս և զզգայարանս գործի կենաց ստեղծեալ ամենիմաստ կամաք 'ի սրբութիւն, 'ի ճշմարտութիւն, յաճ բարեգործուիս. և շահիւք բարեացն լցուսցէ զանձն իւր և զայլս, և ուրախ արասցէ զտէրն. զի 'ի բերանոյն քարոզեսցի ճշմարտութի հաւատոց և անբիծ վարուց։ Զի արբ-

թուն և զուարթուն պահեսցէ զմիջն և զամենեսին զհաւանեալսն յողջախոհութիւնն. և ահիւ և սուրբ սիրով կալ 'ի հնազանդութիւն հոգևոր օրինացն, որ առեալ տայ զչարն և սիրել զարին, որ քաղցր և անոյշ բարեօք լիցէ. և զովիչք գոհութիւնքն 'ի վերս ելանեն առ ՅԾ, և պատրաստեն զերանութիւնն աբրայամեան երկնից։ Զի հաճոյացան ՅՀ 'ի նեղութիւնս և յանդգնութս. և անբակ մնացին 'ի սիրոյ նորա Ճշմարտեալ հաւատով. խաղաղասէր և բարեսէր առ ամենեսեան. մեկնեալ յԱմ իրաց չարեաց, յերևելեալս և յանեւևութիւց սխալանաց։ Զի «Լոս եմ, ասէ, ՅԾ որ առեմ զանիրաւութիւն և սիրեմ զարդարութիւն»։ Եւ 'ի յայսմ երևելն սիրելիք ՅՀ և ընտանիք հաւատոց, զի զնոսն սէր ունիցիմք առ սրբութիւն և արդարութիւնն ՅԱմ միշտ։ Եւ գարձեալ զատելութիւն առ զապիր ցանկութիւնս և առ ամենայն մեղս։ Զի գրեալ է՝ ասէ. «Զչեղս ատեցի և անարդեցի, և զօրէնս քո սիրեցի»։

Զի այնպիսիքն են բերան ՅՀ, որ գարմանօք կենս գանարար խրատուն լի է, և որպէս յաղբերէ բղխէ զկենացս խրատս։ Զի ՅԱմ որ կարդասցէ զանուն ՅՀն՝ կեցցէ, որ զայսոցս յարդաբէ 'ի քս ՅՀ։ Իսկ որ ապէրատս խօսին առ 'ի կորուստ բազմաց խորամանկութիւնք, այլանդակութիւնք, պատրանաց և պէսպէս մեսասկարութիւնք, որ զերիպեցուցանեն զտգէտս 'ի Ճշմարտութիւն աւանդիցին, որ տայցեն վերէժս վասն կորբստեան անիրաւելոցն ըստ արդար գատաւորութիւնն ՅՀ. որ ժառանգորդ լինին անէջ հրոյն և յաւիտենից տանջանացն։

Այս այլն որ Ճշմարտութիւնքն զտեսութիւնն ունին, առաջնորդութիւնք իմանալեօքն անվրեպ զգուշանալ 'ի մեսասկարացն։ ՅԱմ անդամանցն անարատ և սուրբ և անբիծ զտեսութիւնն հրաշանալ յԱծ։ Զի ՅԱրագ մարմնոյ անն է՝ ասէ տերն։ Զի որոյ աչքն լուսաւոր են, ՅԱմ մարմինն լուսաւոր եղիցի. որ չունի մասն խաւարի զմիջացն իրս, այլ լուսաւորեալ կացցէ 'ի լոյսն ՅՀ։ Ապա եթէ խաւարեալ է 'ի նշանակին լուսոյն 'ի ցանկական ազատեղութիւնս և յԱմ աշխարհասէր պատրանս երևելեացս ամենայաւ, որ շլացուցանէ 'ի ՅՀշմարիտս տեսութիւնն, և 'ի մեղացն որպէս բիժ զակամբ

եկեալ՝ ոչ թողացուցանել տայ զպատշաՀն՝ այլ գնա-
ւար չարին, նոքա են որ ժառանգորդ լինին խաւարին
արտաքին, ուր լայ ատաց և կուրութիւն յանդիպ հուր
գեհենին։ Զի երկաքանչիւրոցն է հատուցումն, Հրշ-
մարտասէր տեսողացն և ցանկասէր վատթարասե-
սացն։

Լաւ լսելիք որ բանայ զդրունս ունկնդրութեան Հրշ-
մարիտ քարոզութեան, և ընդունակ առնէ կենդանա-
բար բանին զմիտս և զդայարանս ՀամՀատացոց և
ամ Հշմարտութեան ոչ պատուիրանին յերեւելիս և
յանտեսանելիս, ընդ նոսին լսելիս մտանեն բարբառք
աւետեացն։ «Եկայք մտեք, ասէ, յուրախութիւն տեա-
ւրն, և վայելեցէք զարիսն զանՀառս և անվախ-
Հան, որ ի սակաւուդ Հաւատարիմ երևեցայք յերկ-
րի»։ Իսկ որ խնամ զանկանքն առ Հշմարտութիւն աւե-
տարանին, և մտաւ առնեն կորստեան բարբառոյ և
ամենապատիր փնտռակարաց, և առնեն զմիտսն բոյնս
խժից և քարբերից՝ զի մի ուռցեն զկենաց դեղ զպտու-
թեացն ի դեղատուէ ՀՀոյին բանիցն, լսելոց են զբան
և զգոյժ ահաւոր սպառնալեաց ի տեսանէ։ «Երթայք
յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից, որ պատ-
րաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա յաւուրն
այցելութեան»։

Լաւ հոտոտելիք հոտոցն են զգայութիւք, որք որո-
շեն զանոյշ սրբոցն հոգւոցն զհոտ բուրման հնոր հա-
ցին. որ սրբեալ են յՀայ գաբրուութեանց ախտից մար-
մնականաց, ըստ Պաւղոսի. «Հոտ անոյշ եմք Քրիստոսի
մէջ փրկելոցն և ի մէջ կորուսելոցն. ոմանց հոտ ի
մահուանէ ի մահ, և ոմանց ի կենդանութենէն ի
կեանս. և առ այս ով իցէ բաւական»։ Որք որոշեն զը-
լաւն ի վատթարէն՝ զՀաւատոցն և զվարուցն ամ-
բծութի, որք վայելեն յանոյշ բարիս։ Իսկ որ զՀոտս
անսրբութեան և զամբարշտութեան ոչ որոշեն և զաղ-
խարՀական ցանկութեաց՝ որ լին է ժահՀոտութիւնք և
անառակ և անմխիթար շարժմամբք, հրաժարեալ ի շը-
նորՀարլից Հատոցն, առնլոց են այնպիսեաքն զՀոտ ժա-
խից Հարուածոցն տաքուն որդանցն և կիզման հրոյն.
և գրաւեն ի նեռքս յաղաժոյժ տանջանսն ի Հաղուստն
և ի մաշուստն հոգւոց և մարմնոց։

Լոյս ձեռք՝ի խնամն տեսչութեանէ գործաւորութեան առ՝ի պտղաբերութեան յարգարեացին միջոց, և զլրեալսն և կարօտեալսն օգնական և ձեռնտու լինել ըստ ամենայն պիտոյից, և՝ի գործ ոչ գանդաղանաք. զի զանձին պէտս ինչ իրաց և զմերձաւորաց և զհեռաւորաց ստուգապէսներդործեսցէ ըստ հնարելոյ նմա՝ի տեառնէ աջողութիւն։ Աչս ձեռք առնելոց են՝ի հոգի զվերին ազատութիւն, զմարմնական որդեգրութիւն, զպատկն անապական՝ որ փառաւք և պարծանաք յորինեալ է՝ի ձեռաց ոչ։ Իսկ ձեռք որ ըստ ազատելի ցանկութեանց՝ի յամենայն չարամերձեալ ինքեան և կամ գործակցաց անտասիրաց, և գարձեալ որ գոռոզանայ, որ տանջին և նեղին և սպանանեն, այն ձեռք կապին հրեղէն կապանաքս և մատնին անվախճան տանջանացն անդէջ հրոյն, և ինքին՝ի կենդանի գրոյն տապտակացն։

Լոյս ոտք որ եղեն երիվար շինութեանէ և խաղաղութեանէ սուրբ վարուց և ճշմարիտ քարոզութեանէ առ ամենայն օգուտս հոգեւորս՝ի հեռաւորս և՝ի մերձաւորս՝ի հաճութեան կամաց տէրութեանն, և արհամարհեցին զաշխատութիւս ոտից առ հանդէս վերին կոչմանն, այն ոտք եղանեն՝ի գրաւնս կենաց և մտանեն յօթեանս ուրախութեան հարսանեաց զարդոն վայելչութեանէ ընդ աջմէ մեծութեանէ յանանց ուրախութիւնն։ Իսկ որ զարտուղեցան ոտք յարդարութեանէ Ճանապարհէն, և զրաչեան եղեալ մոլորեցան՝ի չար անդր՝ի ինքատակարան ընթանալով, յանսրբութեան, յաւազակութեան, յապիրատութեան, ի ստահակութեան, անիրաւ յամենայն Ճանապարհս գնալ որ տանի՝ի կորուստն յաւիտենից, այնպիսի ոտք մեկնեալ՝ի կենաց անտի առաքին՝ի վիշտ դժոխոց, որ ոչ իցէ վախճան և կամ հանուցիչ՝ի կապանաց տանջանացն լուծանել։

Լոյս իմաստք խելացն՝ որ ընակեալ է յղիկն որ՝ի գլուխն է, որ է՝ի վերայ ամենայն անդամոցն պատկ՝ և զգայուցեցն գործարան, շարժմանցն առաջնորդ, և տեսուչ և վարդապետ և հրամանատար ամենայն անդամոցն։ Որ զթիւրեալ անդամն ուղղէ, զվերիպեալն հաստատէ, զանգիտն իմաստնացուցանէ, զկարօտեալն լցուցանէ, ամենայն հնարիւք զգիւտս

փրկութեան անձինն ստանալ և այլոց, և լինի տուն գանձուց հոգևոր իմաստից մերձաւորաց և հեռաւորաց ըստ շնորհելոյն նմա 'ի Հոգւոյն սրբոյ՝ որ աղբիւրն է ամենայն բարեաց և իմաստից, ուստի ծագէ լոյս գիտութեան և զամենայն մարմինս լուսաւորէ ըստ Քրիստոսի աւետարանութեանն սուրբ և բարի հանգամանցն, և ընու զամենայն անդամս երանութիւնք ըստ Ճշմարտութեան բարեբար կամացն, և առնու զթագաւորքայութեանն որ 'ի Քրիստոս։ Իսկ խելք՝ որ մոլորեցան 'ի Ճշմարտութեան իմաստիցն, և անկան 'ի ցանկութիւնս սխտից և յամենայն վնասս անիրաւութեան անխնայ մեղացն, և փոխանակ կենաց մահու պատճառք եղեն անձանց և բազմաց, և նոքա կրեն սաստիկ պատուհաս. «Կորիցեն, ասէ, մեղաւորք յերկրէ 'ի դըժոխսն, և ամբարիշտք ոչ ևս գտցեն զՀանգիստ 'ի չարաչար տանջանսն»։ Զի այս է որք 'ի վտանգս անկանին, չար կորուստ է նոցա և մութ և խաւար 'ի չարաչար և դառն տանջանացն, և զլոյս ոչ տեսանեն, և ոչ զայլ ոք 'ի մխիթարութեան առ տանջանսն։

Իմանալի է և զսիրտն՝ որ ընդունարան է հոգւոյն շարժմանց. «Զսիրտ սուրբ հաստատեա յիս Ա՛ծ, և զՀոգի ուղիղ յանձին նորոգելովն»։ Որ խնդութեամբ յուսոյն վերաստեղծու 'ի զգայութեան առաքինասէր վարուց, և շարժէ զամենայն անդամսն 'ի վատթարացն 'ի լաւագոյնսն բարի խորհելով. առհաւատչեայ յուսոյն առնուլ զազատութեանն զկտակ, և մըտանել 'ի ժառանգութեան արքայութեանն երկնից։ Իսկ որ 'ի սրտէն բղխէ զգունդս չարութեան, որպէս ասաց Տէրն, զամենայն գժնդակացեալս 'ի սրտէն, զշնութիւն, զամբարտաւանութիւն, զբարկութիւն և զայլ ամենայն չարիսն, նոքա ելանեն 'ի խնամոց բարեբարին 'ի խաւարն արտաքին և 'ի կորուստն յաւիտենից. զոր ոչ բաւեմ ասել զայնքան աղէտս տանջանացն։

Իմանալ և 'ի փորոտին սրբութեան ըստ ամենայնի. որով նեբքին մարդն նորոգի օր ըստ օրէ, որպէս ասաց Առաքեալ։ Զի առժամայն թեթև նեղութեանքդ զյաՀախութիւն բարեացն գործէ յանձինս 'ի ցաւս և 'ի հարուածս փորոտեացն մի ըստ միոջէ՝ որք զանուանսն ունին, լեարդ և թոք և փայծաղն և ա-

զիք և երկամանք. այնպէս մնօրինեալ, որպէս 'ի սկզբանն էին առանց սխալանաց։ Եւ ամենայնիւ մեզուցեալ երևելի մարմնով և անտեսանելի հոգւով և ամենայն փոքրոտեօքն, դարձեալ լինել բարի խորհրդոց ընդունարան։ Զի ամենայն անդամքն առաւել ևս պարկեշտութիւն ունին, ասէ Աստուածաբան։ այսինքն զանարատ սրբութիւն և զամրիծ մաքրութիւն, մեռուցանելով զնա Հգնաւորական պարկեշտութիւն, և զՀուր ցանկութիւնն հրով Հոգւոյն և ընդրկալից արտասուօք շիջուցանել։

Օ 'ի ամենայն անդամքն և փոքրոտեօք և հոգւով 'ի կամակար մտաց պարտաւորեալ՝ և արդարացաք 'ի ձեռն լուսաւոր աւազանին և վերստին ծննդեամբն հնարէաքն Քրիստոս։ Որ ազատեաց զմեզ 'ի ծառայութիւն մեղաց յաստուածութիւն նորոգման իւրոյ։ զդեցաւ զնոյն մարմին և զՀոգի, և խառնեաց ընդ ոգեութիւնն իւր յաղագս անքաւ սիրոյն իւրոյ, և զամենայն կիրս մարդկային կրեաց բաց 'ի մեղաց։ և զմեզ յորդորէ հայել յելս գնացից իւր, և նմանող լինել Ոչմարտութեան սուրբ վարուցն մարմնաւորաց։ զի եթէ կցորդեսցուք չարչարանացն՝ և փառացն հաղորդեսցուք՝ խնդրոյնոցա։

Եւ պատուիրան առաք սիրել զնա, որպէս և նայն սիրեաց զմեզ, և եւ զանձն իւր փրկանս ընդ ամենեցուն։ Զի յայս երկու պատուիրանս օրէնքն և մարգարէք կախեալ կան ասէ Տէրն։ սիրելն զնոյն և սիրել զընկերն։ Զի որ սիրէ զնոյն, հեռի է յամենայն անիրաւութենէ յերևելեացն և յանտերևութիւնց, և մերձ յամենայն արդարութեան և 'ի սրբութեան։ զի իշխանութեան առեալ ոգեային սիրոյն՝ խափանէ զանիրաւ սէրս որ գերեն զմիտս և զգայարանս։ Զմենաստան և որ զընկերն սիրէ նմանութեամբ Քրիստոս սուրբ սիրոյն, որ և հեղ 'ի մարդիկ առատապէս։ Զնոյն սէր, ասէ Աստուածաբան, յանձին ունել։ Համաշունչք և միախորհուրդք առ Հաշոյս նոյ։ Փախչել յանձնասիրութենէ պարտեաց, և խոնարհութեամբ առաւել համարել զընկերս քան զանձինս։ Զի Հոգևոր և սուրբ առ ոգեն և առ ընկերս Ոչմարտեալք, երկնայնոցն լիցուք ժառանգաւորք։ Որ զսերմն բարի սերմանեաց Քս, և թշնամին արդարութեան սատանայ՝ զորոմն անիրաւութեան։ զոր Քս հրաս-

մայէ խլել 'ի Ժամանակի և հիւթ հրոյ արկանել. և զբարի սերմանն ամենասացանել, որ բերէ պտուղ զբ-հարիւրաւորն և որ ըստ իւրաքանչիւրոցն է սերմն առաւել կամ պակաս սերմանեալ։

Եւ սատանայ 'ի սկզբանն ոչ թշնամի արարաւ, այլ յանձնիչքնան կամացն եղև հակառակ բարւոյ. զի ըստ երբայեցւոց բառիցն Հակառակ թարգմանի։ Որպէս և զԻեսրոսէ լսեմք 'ի ներսէ. ասէ. «երթ յետս իմ, սատանայ. զի ոչ խորհիս զնայն, այլ զմարդկան»։ Որ անդէտ էր փրկական չարաբանացն, և հակառակէր արգելուլ։ Եւ ամենայն որ բարւոյ հակառակ կայ, սատանայ անուանի։

Օ՛ի ամենայն արարածք 'ի բարերարէն բարի ըստեղծան. և 'ի կամակար մտացն եղեն չար գործ։ Զի զսատանայ անձնհաճ հպարտութիւն իւր ընկէաց 'ի փառաց. նմանապէս և զմարդիկ որ զնոցին ախտացան 'ի սատանայի խաբմանց՝ զնոցուն ամենն զպատուէ խոստանայր, զի ոչ ամենարատ լցին իբրև զինքն։ Եւ Գաբրիէլ հրեշտակապետ էր, այլ աւետաւոր լինի առ կոյսն, զուարթ լեր երերիրեալն աւետարանելով և ազգի մարդկան փրկութիւն։ Որ 'ի ձեռն մարմնանալոյ Որդւոյն այ որով ազատեցան տիեզերք 'ի յանցուածոցն որ 'ի սատանայէ՝ պարտեցան և զմահ ընտացան։ Զոր Քս կենդանացոյց և արար հաշտութիւն, արարիչն ընդ արարածս. և հրաւիրեաց զհաւատացեալս յամենատուրբ երբորդութիւնն առաքինասէր վարուք յերկինդ արքայութիւն։ Զոր և գնչն խոտովանեին Որդի այ՝ և զիւրեանց զպատիժս. «Գիտեմք զքեզ ով ես՝ Որդի այ. որ եկիր յաշխարհ, և յառաջքան զժամանակն տանջես»։

Օ՛ի եթէ չար բնութիւն էր և սուտ, զիարդ կարէր արդար ասել զգեղարան և զլիեալոցն գնչն. զի չէր ոք եղեալ բնութիւն չար, այլ 'ի կամաց և 'ի գործոց իւրոց առնու զանուն Չմարտիւ, և ըստ չար կամաց ունի զՀատուցումն։ Զայն այսորիկ օրք ուսուցանէին զչարն և օրք ուսանին, առնուն զՀատուցումն յանչէջ Հուր։ Որ հրապուրէ և ուսուցանէ զչար՝ սատանայ է. և որ ոչ հրապուրին և ուսանին զչար՝ մարդիկ։ Զի գողն և գողակիցն 'ի միում պատժի էին.

և որ այլ և այ չարագործաց հաղորդակիցք իցեն, ընդ նոսին տայցեն վրէժս։ Զի «Երթիցեն, ասէ Տէրն, մեղաւորքն ի հուրն յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակացն նորա »որ հրապուրիչք են։

Իսկ զաւետարանին գործակիցն զքահանայսն սրբոն և զպատուականս եկեղեցւոյ, որ սրբութեանցն են ըստ պատուաւոր հրեշտակային կարգաւորութիւն, ոչ վարկ պարագի համարեսցուք. այլ որպէս յայլ կարգեալ՝ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդոց այ։ Զի զառաջնորդս եկեղեցւոյ՝ի տեղի առաքելոցն կարգեաց քարոզս և ասաց՝ եթէ «Որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ մերժէ, զիս մերժէ». և զարձեալ ասէ. «Զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»։ Զի իշխանութիւն որ յայր է, զորութեան ունի մեզաց թողութեան, և պիտաժեռաց աւուղութեան, և գիւաց հանումն՝ի մարդկանէ։ Զի զոր ասէ կարգէ, զզորձս այ գործէ Տնորհօքն Քրիստոս։ Եւ երախտիք որ՝ի նոցանէ յառաջագայն՝ պարգեւք են, որ գյուսատատն՝ի յոյս կենդանի ածէ, և զիրքս կուսի աւետարանէ, զմահապարտս և զանմեղսն յանցայսրս խոստովանութեամբ յապաշխարութիւն ածէ ըստ տգէ և Հնմարիտ վարդապետութիւն ըստ հոգևոր օրինացն և ըստ աւետարանին փրկանաց՝ի փառս և՝ի գովութիւն ամենասուրբ Երրորդութեանն։ «Զի հրեշտակ ոն ամենակալի է, ասէ մարգարէն, և՝ի բերանոյ նորա օրէնս հայցեն »։ Զի որ սուրբք են առաջնորդք բանին և ուսմամբ աշակերտեն՝ի Հնմարիան, նոքա առցեն զերանութեանն զիտաս և զսքան ընդ սուրբս հրեշտակապետս և ընդ ամենայն սուրբս յամենակալ Տրութենէն։

Եւ ընդ սրութիւք են հրեշտակաց և մարդկան յերկինս և յերկրի։ Արդ հրեշտակապետքս և հրեշտակք՝ առաջնորդք սուրբքս և ամենայն ընդ բերալք և սիրելիք այ։ Արդ՝ի վերին զորացն որոշեալ՝ի հրեշտակապետացն հանդակ բարւոյ՝ սատանայ անուանեցաւ. և զոքին իւր՝ դեւք, հաւանեալք կամաց նորա և ապստամբեալք՝ի բարի կարգաց։ Սոյնպէս և ասա մարդիկ թիւրեալ՝ի հերձուածս կորստեան և՝ի վարս

անօրէնութեան բաղումժողովուրդք. որք և առաջնորդք կոչեցան, և հպարտացեալ զարտուղի [1] անկան. և բազմաց եղէն պատճառք կորստեան, որսացեալք 'ի սատանայէ 'ի նորա կամն ըստ ամենայն ինաստուց։ Զի Ճշմարտութեանն վերակացուք առաքեալք և մարգարէք և քահանայք սուրբք միաբանեալ են ընդ սուրբ զօրս երկնաւորաց 'ի լուսաւորութեան վերնոց և ներքնոց։ Եւ ապստամբեալք 'ի մերոց և ամբարշտեալք 'ի բանէն որ աշակերտեցաք զՃշմարտութենն՝ օտարացան և յետս կացին. որպէս քուրմք և կախարդք և այլ ևս չարք։

Օ՜ի բարի են գործք և արարածք ՝այ. և անիրաւքն նմանապէս յանձնիշխան կամաց եղէն չարք, դևք և մարդիկ։ Որպէս տաճար բարութիւնք է Թագաւորի, սոյնպէս բանդք բանդակալաց։ Բարի մասն ուրախութենն և ամենագեղ զարդուքն մտերմացն և բարեխորհ բարեգործացն է։ Իսկ գանն և խրատն և զանազան տանջանքն՝ անիրաւաց և պղծոց է՝ որ անխտիր են յամբարշտութենէ։ Զի բանդ ասի դժոխքն, որ զպուռնիկս և զկախարդս և զսպանողս և զամենայն անիրաւս 'ի տանջանսն ըմբռնէ, որք արհամարհեցին զբանն ՝տն և ոչ պահեցին զարդարութիւն։

Այլ եթէ իշխանութիւն դժոխոցն սատանայի է, յայտ է՝ եթէ վրէժխնդիր ՝այ է ըստ արդար օրինացն սատանայ։ Այլ մի լիցի այսպէս իմանալ. զի և դըժոխք 'ի ՝տնէ վասն նորա պատրաստեցաւ և նորա արբանեկացն և ոչ վասն մարդկան։ Այլ որք ախորժեն զնոցն խորհել և գործել զչար, ընդ նոսա պարտաւորեալ տանջին զանմահ մահն։ Զօրէնսն ՝այ և զիրաւունսն երևելի արարածովքս իմացեալ՝ տեսանի՝ զի անձրևք պիտանիք և շայեկան ցօղք զխընամոցն ՝այ բացայայտեն առ պէտս արարածոց։ Իսկ որոտմունք և կարկուտք և հրացանութիւք գուշակեն մեզ զահեղ բարկութենն՝ զսպառնալիս ամբարշտաց և մեղաւորաց, զոր յայտնելոց է 'ի վախճանի։

Օ՜ի և ջրհեղեղն համաշխարհական վասն անսրբոցն և պղծոցն 'ի ՝տնէ անօրինաց լինի 'ի ընդուն, 'ի

1 Յերկոսին օրինական ՝ՀՐԹՕՂԻ։

յերկնի և 'ի յերկրի պատուհասից. և զարդարեն պահ ընդ ամենախնամ ողորմութիւն իւրոյ 'ի ձեռն տապանին և զայլ ևս հնչաւորս, թողլով աշխարհի սերմանս։

Լոյս զսոդոմայեցիսն սատակեաց հրով և ծծմբով, զի հրով ցանկութիւն և զազիր գիջութիւն ապականեալք էին. և զարդարն զԼովտա ապրեցոյց 'ի դառն հարուածոց սատակմանն։ Որ հող և ջուր և քար և տունկք և բոլոր բնակչքն հանդերձ տոյսրեալ հրը-դեհեցան։ Եւ այսոքիւք ցուցեալ եղև ամբարշտացն և մեղաւորացն սատակագոյն սատակումն յարդար դատաւորին ՅՀ, և փրկութիւն արդարոց 'ի խնամակալ սիրոյն։ Եւ այժմ տեսանի 'ի Սոդոմ և 'ի Գոմոր բարկութեանն պատիժք 'ի հող և 'ի ջուր և 'ի քար և 'ի տունկս։ Չի տեսեալ զայսոսիկ արհաւիրսն այժմ, և երկիցեն 'ի բարկութենէն որ գալոցն է. որք զմեզս իւրեանց որպէս սոդոմայեցւոցն պատմեցին և յայտ արարին, ասէ մարգարէն։ Դա և այլ ևս գայցեն այժմ յաղագս մեղաց սով և սուր և գերութիւն և տարաժամ մահք և պէսպէս ցաւք և հիւանդութիւք և վատանգք առ 'ի խրատ և յանդիմանութիւն. զի զղջացցին և ապրեսցին 'ի բարկութենէն որ գալոցն է յերկնից։

Բ. Դ. յամենի լեցին որ զատանայ ասեն խրատու պատուհասիցն սեր, և ոչ զամենակալն ՅԾ։ Չի յումմէ օրինադրութիւն է, նոքա և հրամանն պատուհասից և ողորմութիւն ըստ իւր խորին իմաստութեանն և մատակարարութեանն։ Չի բոլք է ամենայն մեղաց. որ զմտերմացն հանդէսս յայտնէ իւրեանց սիրոյն և երկիւղիւն, վկայութիւն բարերար երախտեացն 'ի բարերար կամացն յարդարեալ։ Չի ՅԾ միշտ ցուցանէ զսուրբ սիրոյն իւրոյ զերախտիսն, գտեսցէ թէ հնոր-հայ իւրոց առ հնազանդեալս և ողթախոհս. զի որպէս որդւոց մտերմաց ժառանգութիւն և կեանս պատրաստեաց ամենայն բարեաց։

Իսկ որ ցուցանեն զարհամարհութիւն առ օրէնսն և զանհնազանդութիւն առ կամս նոցա, և գնան խոտորնակս և անխոսք յաղտեղի իրս և յամենայն գործս դալուստիս մեղաց, վասն այսորիկ, ասէ, գայ բարկութիւնայ 'ի վերայ որդւոցն անհաւատութեան, ասէ Ես-

ռաքեալ։ Զի ցուցցէ զիւրոյ արդար իրաւունսն արդարոց և մեղաւորաց. զի արդար դատաստանն յերկրի, և 'ի հանդերձեալսն որ կան և ՚ին եր անուն թիւք և տանջանք։

Զի հարուածք որ դան յաշխարհ, վասն մեղայ է իմանալ. զի զղջացեալ զդաստասցին և դարձցին յապաշխարութիւն փրկութիւն։ Եւ առ այնոսիկ ասէ՝ որ մարգարէին. «Մխիթարեցէք, ասէ, քահանայք՝ զժողովուրդ իմ, զի լի եղև տառապանօք. թողեալ լիցին դմա մեղք իւր, զի ընկալաւ 'ի ձեռանէ ՚ին կրկին զհատուցումն մեղայ իւրոց»։ Զի հարուածք՝ դարձելոցն 'ի թողութիւն մեղայ լինի պատուհասիւքն 'ի վերայ եկելոցն 'ի ՚ինէ։ Զի «Ես եմ, ասէ ՚ին, որ սպանանեմ և կեցուցանեմ. հարկանեմ և բժշկեմ. և ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ 'ի ձեռաց իմոց»։ Զի զամենայն ակնկալութիւն արարածոց դարձուցանէ 'ի Ճշմարիտ կենդանի յոյսն, զի մի մոլորեսցին զկնի սուտ կարծեաց և պատիր խաբեբայ բանից այլանդակաց և աղանդաւորաց. այլ յԾածայնոցն իմացեալք 'ի Ճշմարտութիւն աւանդիցն սուրբ գրոց և յուղիղ հանգամանաց. որոշեալ յամենայն սնոտի կարծեաց, 'ի մշտնջենաւոր երանութիւնն վերացուսցուք զմիտս հանապազ։

Վասն այսորիկ միտք և զգայութիւք յիշխանական կամաց լի են ամենայն շահիւք իմաստութիւն՝ առաջնորդեալ յառաքինասէր վարս յերևելիս և յաներևոյթս։ Զի նովաւ կեամք և շարժիմք, և նովաւ յառաջիկայսս 'ի բարիսն ընթանամք միշտ յաղագս աւետեացն և անսուտ խոստմանցն։ Զի նա է արարիչ մեր, և մեք արարածք նորա. զի մեք կարդասցուք զնա Հայր մեր՝ առնելով զկամս նորա, և նա ասասցէ՝ որդիք իմ էք, և ես ընկալայց զձեզ սիրով, այլ և եղէց ձեզ ՚ած, և դուք եղիջիք ինձ ժողովուրդ ասէ ՚ին ամենակալ։ Եւ զի ասէ մարգարէն. «Եկայք որդիք իմ և լուարուք ինձ, և զերկիւղ ՚ին ուսուցից ձեզ»։ Եւ ետ մեզ Որդին ՚այ Հայր կոչել զընտրութիւն Հայրն իւր և զ՚ած մեր. և ոչ համարեցաւ զմեզ անարգս՝ հաղորդս առնել եղբայրութիւնն և ժառանգորդս իւր արքայութիւն։ Եւ Հայր 'ի վերուստ ասէ

զսիրելութիւն Որդւոյ և առնել զկամս նորա, և զամենայն որ ինչ 'ի Հօրէ ասացաւ։ Եւ վասն Հոգւոյն ասէ. նա եկեալ ուսուսցէ ձեզ զամենայն կամս Հօր և Որդւոյ 'ի փրկութիւն։ Զի 'ի Հօրէ և յՈրդւոյ և 'ի Հոգւոյն սրբոյ ազատեալք առցեն զնորս, և կատարեսցեն զառաքինութիւնս։

Լայց զարմանալ արժան է, զի անուանք արարչին յարարածս խոնարհեցան, Հօր առ Հարս, և Որդւոյ առ որդիս, և Հոգւոյն սրբոյ առ Հոգիս մարդկան. զի այսու իմաստուցէ զառաւելեալսն 'ի մեզ սուրբ սիրոյն իւրոյ զնախախնամութիւնն։ Զայս եթէ զայսքան երախտեաց և առաւելեալս 'ի մեզ սուրբ սիրոյն զանց արասցուք, միթէ անիրաւ ինչ է ՝ն որ ածէ զաբակութիւն իւր 'ի վերայ այնոցիկ՝ որ զբարերարութեանն զեր արհամարհանօք արհամարհին, և թողուն 'ի մտաց գլխաւն առատ պարգևացն և սուրբ սիրոյն զոր եհեղ 'ի մեզ առատաբար։ Եւ որպէս 'ի ձեռն Մովսէսի առնն ՝ն այս է՝ դատաստանն. որ ապականէ բրառնաւոր այր զկին տկար յոչ կամաց, անզօր եղեալ 'ի նորա զօրութիւնէն, այլն մեռցի, և կինն կեցցէ ըստ արդար դատաստանին. նոյնպէս է իմանալի մեզ զատանայի զակամայ 'ի մեզ զսխալանս իրաց ինչ խորհրդոց և կամ չարժմանց անդամոց։ Զի ասէ մարգարէին ՝ն՝ն. անձն հօր իմ է, և անձն որդւոյ իմ է. և անձն որ մեղեսցէ, նոյն և մեռցի։ Զի կամաց է մեղանչել անձինն։ Եւ գարձեալ ասէ ցարդարն. կեսլով կեցցէ, որ զարդարութիւն զհետ երթիցէ. և մեռանելով մեռանիցի, որ զհետ անօրէնութեան։ Զի արդարք է ՝ն՝ն ուղիղ են դատաստանք նորա արդարոց և մեղաւորաց։

Լչ անձնիշխան կամքք կարող եմք զ՝ն՝ 'ի բարի կամս դարձուցանել 'ի ձեռն բարի գործոց. և դարձեալ 'ի պատուհաս ըստ չար գործոց։ Զի 'ի մեր կամս է վայելել 'ի բարին և կամ արտաքսել։ Զի ոչ կամի զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա 'ի չար Հանապարհէն և կեալ ապաշխարութիւն։ «Զի ողորմած եմ ես, ասէ ՝ն՝, և ոչ պահեմ ոխս դարձու-

1 Միսան 'ի լուսանցն ասէ։

ցելոցն յուղղութիւն։ Զի որում արժան է գթալ կամ ողորմել կամ ներել, ոչ անտես առնէ. այլ որպէս մարդասէր բժիշկ բժշկէ զնեղբին և զարտաքին անդամսն, և զանբժշկելին 'ի բաց կտրէ՝ որ յայլսն զվնասն առնէն։ Զի որք ոչ դառնան յապականեալ վարուց, յուշ լիցի նոցա ջրհեղեղին կորուստ և սոդոմայեցւոց հրովտոչորումն և սատակումն, որ աստ դատեցան և անդ դատելոց են ըստ բանին՝ որ յաւետարանսն։

Իսկ որ զղջանան և դառնան յապաշխարութիւն, նմանեն նինուէացւոցն. զսպառնալեաց բարկութիւնն և զեկեալ պատիժս 'ի՝ նոնէ ըստ մարգարէութեանն Յովնանու յողորմութիւն դարձուցանեն. և այցելութիւն՝ նոն կանխէ առ նոսա, և ընդունին զխնամս սուրբ սիրոյն։ Իսկ որ խստացուցանեն զսիրտս իւրեանց նմանութիւն Փարաւոնի, զսոյն հարուածս կրեսցեն. որ ոչ լուան Մովսէսի և Ահարոնի զառ 'ի յայ պատուիրեալս նոցա. որ և անդէն սատակեցաւ իւրովքն, և ժողովուրդն՝ այ ապրեցան։

Զի մի է՝ ածն արարիչ երկնաւորաց և երկրաւորաց, և յանձնիչխան կամն արարեալ զհրեշտակս և զմարդիկ. և 'ի նոցանէ 'ի կամակար մոտաց չարք որոշեցան 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ։ Եւ անմարմնոց և մարմնաւորաց սրբոց փառք և պսակք պատրաստեալ կան 'ի՝ նոնէ։ Եւ պատիժս և տանջանք և դժոխք դիւաց անմարմնոց չարաց, և մարմնաւորաց ամբարշտաց և պղծոց ըստ արժանեաց իւրաքանչիւրոցն յարդար դատաւորէն։ Զի 'ի գործոց չարեաց ունին զանուանս դևք հանդէպ իւրեանց. և մարդիկ չարք կախարդք և պիղծք յառաջ եկեսցեն 'ի չար անդր և միաբանեալ ընդ չար դևսն։

Այլ որ կամիցի 'ի հակառակացն փախչել և հրեշտակ լինել, ածասէր լիցի, և զհաճոյս նորա կատարեսցէ յամենայն սրտէ և յանձնէ և 'ի զօրութէ, և զընկերս սուրբ սիրով երևելեօք և աներևութիւք. ամենայն բարեաց երախտաւոր լինել հեռաւորաց և մերձաւորաց. սուրբ, անբիծ, անարատ, առողջ, միամիտ, հաւան, հլու, հնազանդ, խաղաղարար, ճշմարիտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց. սիրել զբարի և ատել

զչար, և 'ի գործոց բարեաց զբարի անուն առնուլ և 'ի փառս լինել։ Եւ որ 'ի բարւոյն մեկուսանայ, և նմանող լինի ստոյգաչի հակառակ բարւոյ, անհնազանդ, մեղաւսէր, ցանկասէր, հպարտ, ամբարտաւան, խորամանկ, նենգաւոր, սուտ, բանսարկու, խռովարար, չարասէր և ոչ բարեսէր. մեկնեալ 'ի Ճշմարտութենէն, և զչար գործոց զանուն առնու չար, և ըստ հաւուցումն բարկութեան անմահ տանջանացն։ զի ըստ արժանեացն է պարգևք և պատուհասք։

Զոր մտաւորաց և բանաւորաց տուեալ զանձնիշխան կամն 'ի պատիւ և 'ի փառս, զի փառաւորեսցէ զբարեգործն ՅԾ, և առաքինասէր վարուք յանձնիշխան կամաց յօրինեսցէն անձանց պասկս Տրեչտակային կարգաւորութեան։ և Հնորհս ընդունել 'ի ՅՈՒԾ յաղագս հանդիսաւոր և սուրբ վարուց առաքելութեան, մարգարէութեան, քահանայութեան։ Զի Ճշմարտեալք ըստ ամենայնի առցուք զարքայութիւն պատրաստեալ։ Զի որպէս ՅՈՒ սեփական է արքայութիւն, և մեզ կամեցաւ սեփական առնել զարքայութիւն 'ի ձեռն ուղղհաւատոց և Ճշմարիտ վարուց վասն բազում սիրոյն որ սիրեաց զմեզ և եցոյց զերախտիսն։ Եւ որոց վարք անսուրբք և պղերգք են յառաքինութիւն, և մտախաբք և մեղասէրք, նոքա նուազեալ են 'ի փառացն ՅՈՒ։ ազարտին, անարգին, անկանին 'ի Հնորհացն յամենի և 'ի նախանձս ամենեցուն։

Եւ վասն այսորիկ ՅԾ և տէրն զարքայութիւն արդարոցն կամեաց, և մեղաւորացն զպատիժս պատուհասից։ զի Ծանիցեն ամենեքեան զուղիղ դատաստանն, արդարք և ամբարիշտք։ Եւ մի զարմանցի որ ասասցէ. «Զի քաղցրութիւնն ՅՈՒ, ասէ, զնոսա յապաշխարութիւն ածէ»։ Այսպէս է ոչ զղջասցին, առանց ողորմութեան դատեսցին յաւուրն բարկութեան։ Եւ տեսցեն մեղաւորք զփառս արդարոց, և կորացեալ հալեսցին 'ի տրտմանս և յամենին յաւիտենական. որ յերկրի մեծ գոլ զինքեանս քան զարդարսն համարեալ՝ զՀպարտութիւնն ոչ թողացուցանէին տեսանել զինչ արքարքն իցեն և զինչ մեղաւորքն։ Բայց զինի զՀարեալսն երեւի արդարոցն փառք և մեղաւորացն ամենին յաւիտենից։

Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր է առ ՅՀ, այլ առաքինութիւն բարետոհմութիւն։ Զի 'ի Հայս ոչ ինչ մեծագոյն և 'ի Պարս՝ քան զարշակունեաց տոհմ. որ և յԱբրահամ սերեցան ասա, նա և յՅՀ աղգս թագաւորք երկրի ըստ անսուտ բանին տեառն ամենեցուն։ Այլ եթէ ոչ զգաստանայցեն 'ի բարի, աւելի պատուհաս ընկալցին 'ի տեառնէ։ Եւ ծառայք նոցա որ հաճոյ եղեն ՅՀ, թագաւորեալք փառաւորեսցին 'ի տեառնէ. և նոքա պարտաւորեալք յաղագս մեղաց պատժեսցին յարդար իրաւանցն։ Եւ թագաւորք և իշխանք և դատաւորք եթէ արդարախորհք և արդարակշիռք 'ի յիրաւունս ՅՀ, և արդարադատք ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր, որբոյն և այրւոյն տեսուչք և ՅՀ զրկելոց խնամակալք, և ձեռնտու ՅՀ վտանկելոց, նոքա են հիմունք բարեաց, որ հաստատեալ ունին զաշխարհ հնարագիտութիւն իւրեանց 'ի հնարս սիրոյ ամենեցուն արարչին։ Որով աշխարհի բարին յառաջանայ 'ի գովեստ փառաց ընորհացն ՅՀ, և 'ի գովութիւն ամենազօր տերութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում պատիւ իշխանութիւն և փառք վայելեն այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ՎԱՆՍ ՏՐՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ՊԱՐԳԵՒԵՑԱՒ ՍՈՒՂ ԻՆՉ ԲԱՆՍ

ԻԱ

ԳանՐԱՒ են խնամք տեսչութիւն արարչին, և լուսաւորութիւն 'ի յօրինուածս արարածոց իւրոց։ Զի որում շատն տուաւ, բազումն խնդրէ զարմտիս բարեացն ՅԱՇ. և որում սակաւն, յաւելուածս շահիցն ըստ առաւելն առցէ զշահն։ Որպէս յառակս տաղանդացն է իմանալ յաւելուածովն 'ի սակաւուցն, և ընտրողական մտաց, զոր ետ ՅԱՇ հրեշտակաց և մարդկան. զի լիցին արքանեակք բարերարին կամացն և քարոզք շնորհաց նորա, սերմանել զերախտիս նորա ընդ ամենայն արարածս հաւանական կամաք և ընտրողական շնորհիս։ Եւ զի գոն առաւելութիւք խնամատութիւն և գորութիւն և մեծութիւն յերկինս և յերկրի։

Օ այս լաւութիւն կամխագիտութենն ՅՅ կարդեալ է 'ի մեզ. զի որ բազումն առ՝ առաւել սիրեսցէ, և դառաւել բարիսն ընծայէ ՅՅ. իսկ որ սակաւն, և այն յՅՅ խորին գիտութենէն ըստ կարին և զմտերիմ շահիցն զիրաւն խնդրէ։ Եւ դարձեալ որ գծնդակ վարս ունին, և առ նոսա է զանազանութիւն չարի առուաւել և կամ նուազ։ Եւ որք գառնան, ոչ անտես առնէ 'ի խնամից սիրոյն, թէպէտ և արքանեակք երդեն չարին 'ի կամակաբ մտաց. զի այսու ցուցցի բարերարութիւն խնամք։ Զի մի որ կարծիսցէ անհաւութիւն բաշխել զնորՀս յարարածս, այլ ըստ արժանեացս։

Գանե այցելութիւն և անարժանիցն, թէպէտ և ոչ զգան. զի խաւարեալ է առաջնորդական միտքն, և ոչ տեսանեն զլոյսն իւրեանց։ Զի մտահոգանան խորհուրդք երկիսպիրաց՝ ոչ թողացուցանէ տեսանել զպատճառսն [1]. այլ 'ի հոգս ինասակաբս ծփին, յո-

[1] Միւսն դարձուցեալ։

բոց բարի ինչ ոչ, այլ չար։ Եւ վասն այսորիկ արդե-
լեալ է ի նոցանէ հնարէն, զի արդ եղեալ է ի նոցանէ
սուրբ սիրոյն կամք և առաքինութեանցն յօժարու-
թիւն, բազմագարման երախտիքն կատարեալ հանդէպ
սիրելն բազում համբերութիւն և Հշմարիտ հաւատով
որպէս զի արժանի լինէին արքմանեակք Հշմարտու-
թեան ի կեանս, և փառս անձին և այլոց։ Եւ եթէ
արդարոցն միայն էր բազմացուցեալ զմիտս իմաստու-
թեան, երևեալ թէ յաղագս այնորիկ յառաջման աբ-
դարք յառաքինութեան։ այլ ամենեցուն իմացեալ,
զի զարդարան՝ այդ երկիրն յորդորել, և զմեղաւորս
աներկիւղութիւն լքուցանել։ Եւ վասն այսորիկ մեղան
և խառաբեցան ի խորհուրդս իւրեանց և կուրացան
մեղոք անմոռութիւն։ Որք զանձինս իմաստունս համա-
րեցան, և յոյս իւրեանց խորհրդակամք, և զհանա-
պարհս իմաստութեան ոչ ծանեան. զի ոչ է երկիւղ այ
առաջի աչաց նոցա։ Եւ վասն այնորիկ ապականեցան
և պղծեցան, և ընդ ուղիսն ոչ գնացին։

Դ այց ասեսարաց իմաստութեան առաջնորդեալ
յարդարութեան՝ ամ՝ ի լաւն և յառաւելն, զի միշտ
անբակ մնասցէ ի վերին իմաստութենէն ի սուրբ և
ի խաղաղարար և լի պտղովք բարեօք։ Զի ստուգու-
թիւ կարգօքն լուսաւորեալ՝ ի միտ առնու զարդարու-
թեան Հշմարիտ, և ուղղէ զիրաւունսարդարութեան միտ։
Զիմաստութի իսօսիմ առ կատարելու, որ գիտեն
որոշել զմանկենաւորսն յանցաւորացս. զիմաստու-
թեան ոչ զաշխարհիս այսորիկ զիսափանելոց, այլ որ յայ
արդարութիւք են, Հշմարիտ հաւատք և սուրբ սէր,
սրբութեան և խնամարհութեան, հեզութեան և Հշմարտութեան
՝ամ՝ առաքինութիւք յարդարեալ ահիւն՝ այ։ և զդու-
շանալ ամենասպասիր պատրանաց, և որոշել ընդդր-
ղական իմաստիւք զարքին խորհրդոց և բանից և գոր-
ծոց։ Զի դուռն կենաց իմաստութենն բաց է. և հա-
կառակորդք բազում են գործակցաւ բանասարկուին
որ որսայն զորդիս մարդկան ի կորուստ։ Ա՝ յլ՝ ամ՝ ոչ
թողու զյուսացեալս իւր, որ կարդան առ նա՝ ի տուէ
և՝ ի գիշերի, և խնդրեն զոզորմութիւն և զյաղթութիւն
առ՝ ամ՝ փաստակարութեանս դիւաց. զի փառաւորեսցի
ամ՝ այժմ և միտ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ՎԱՍՆ ԱՆՓՈՓՈԽ ԽՈՀՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԻԲ

Ամ տկարութիւն զնե՛ւ ՝ն ճ՚ուութիւնն զօրութիւնն, արտաքոյ Ն՚չմարտութիւն հաւատոց է։ Զի ասեն, երբեմն կարող և երբեմն ոչ։ Այսմիտք. եթէ ՝ն ճ՚ տկարանայ, ապէ զի զօրացուսցէ։ Ի բաց լեցի չար վարդապետին և չար ուսմանէն. զի ՝ն ճ՚ կարող է և կատարեալ. ոչ երբեք նուազէ՝ ի կատարելութիւնն և ՝ի զօրութիւն. այլ զամենեսեան ընու և զօրացուցանէ, և ինքն ոչ յուսմէ՛ ընու և զօրանայ։

Վասն այսորիկ արարչութիւնն անուն հաստատեալ կայ ՝այ միշտ. և ՝ի հրեշտակաց և ՝ի մարդկանէ զառաքեալս և զմարգարէս և զսուրբս ընտրեաց, զի երկնչին վկայք Ն՚չմարտութիւնն ՝ն ճ՚գիտութիւնն և արդարութիւն և սուրբ վարուց. այլ և զօրութիւ՛ն, նշանաց և արուեստիւ, զի նորօք ՝ն ճ՚ փառաւորեսցի։ Եւ ոչ օգնութիւն առնու արարիչն յարարածոց յերկնաւորաց և յերկրաւորաց. այլ նա նոցա է օգնական և զօրացուցիչ։ Զի որպէս մարգարէին ասէր ՝ն ճ՚, թէ «Մինչև ստեղծեալ էի յարարածսն՝ գիտեմ զքեզ. և մինչև եղեալ էիր յարգանդն՝ սրբեցի զքեզ շնորհօք մարգարէ»։ Այսպէս ըստ կանոնս գիտութիւն իւրոյ հրաւիրել և կոչել և արդարացուցանել և փառաւորս առնել սիրով։

Զի ամենայն արարածք յարարչէն միշտ կարօտանան օգնականութիւն, և ոչ արարչին յարարածոցս։ Զի անփոփոխելի է ՝ն ճ՚, և փոփոխումն ունին արարածք. որպէս աղաչս յերիտասարդութիւն, և երիտասարդն՝ ի ծերութիւն, և ծերն յապականութիւն. և որպէս գարուն յամառն, և ամառն յաշուն, և աշուն՝ ի ձմեռն՝ որխափոփոխեցեալ զնմա՛ կենդանեաց յորդորումն և զանկոց և

զբուսոց։ Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակաց ժամանակաց ըստ սահմանելոյն ՝ի զերկայնութեան աւուրց և զպակասութեան։ «Ի ծագաց երկնից են ելք նորա, ասէ. Հմնգիստ նորա՝ի նոյն. և ոչ օր իցէ՝ որ թաքիցէ՝ի լուսոյ տապոյ նորա». և այսպէս կայ՝ի սպասաւորութեան ըստ հրամանի արարչին յարարածս։ Նմանապէս և լուսին զիւրն ունի սպասաւորութեան զժամանակացն զփոփոխումն՝ի մաշելն և՝ի լնուլն. զի նովաւ ծանիցուք զմաշումն երկրաւորացս և զնորոգումն յարութեան։ Այլ և աստեղք սպասաւորեն՝ի գիշերի նաւագնացաց, և ըստ այլ ևս շարժմանց առ՝ի պէտս մարմնաւորաց. այլ ոչ ըստ հեթանոսական բարբանջմանցն, որ բախտս և ծնունդս ասեն։

Օ՛ի ՝ուծ է որ արար զամենայն և յօրինեաց, և սահման եդ և ոչ անցանեն ըստ կարգն։ Եւ ՝ամ արարածք՝ի նմանէ են, և կան ունին՝ի խնամակալ զօրութենէն յօգուտածովք իմաստութեան։ Եւ գիտութիւք հնարից և արուեստք պիտոյից և կարգք յօրինուածոց և չափք կշռոց՝ի նորա տեսչութենէ և՝ի խնամոց յօրինեալ է։ Եւ չիք որ գեր՝ի վերոյ քան զնա և կարող, որ՝ի նմանէ առնու զհնարագիտութիւն կամ զզօրութիւն։ Զի ինքն իսկ է ՝ամ յամի աղբիւր բարեաց, որ լնու զերկինս և զերկիր և որ՝ի նոսա արարածք են։ Որ յոչընչէ արար զ՝ամ, և դարձեալ եղծանէ որպէս և կամի։ Նորա առաջի է գիտութիւն և հանճար և իմաստութիւն և զօրութիւն։ Որպէս և յարարածս է տեսանել. որ զօրութիւն բարձեալ ունի զջուրն երկինք՝ որ՝ի վերոյ քան զնա, և երկիր զծով և զգետս և զլերինս և որ այլ ևս արարածք իցեն։ Եւ ոչ կարօտանայ սեանց և օգնականի և հիմանց երկինք և երկիր. այլ զօրութիւն նորա պահեալ կան, և ոչ ապականին առանց նորա։

Զդ որպիսի պատիժս պատրաստեալ է որ խօսին զ՝այ զՀայհոյութիւն։ Նովաւ տիարք զօրութիւն առնուն. նովաւ արդարք խրախուսեն և յաղթեն հակառակորդաց բռնաւորաց, և հանդիսանան՝ի պահել զպատուիրանս նորա, և իմաստնանան՝ի բարիս։ Ո՞վ է վերակացու և օգնական վտանգելոց՝ի նեղութիւն՝ որ առնէ զփրկութիւն զելս, եթէ ոչ նոյն ՝ուծ։

Բայլ և զայնս յետս հարցուք զայր լեզուն, որ 'ի վերին զօրացն պէտս ունին օգնականութեան. կամ յերկրէս արդարոցաւեն զամենակալն ՅԱ ։ Զի ոչ ինքն 'ի նոցանէ առնու օգնութիւն, այլ սպասաւորսն 'ի վասն այնոցիկ՝ որ Ժառանգելոցն են զփրկութիւն նոքաք ըստ կամաց արարչին ։ Զի նորա իսկ են արարածք վերին զօրք յանգոյիչ արարեալ. և 'ի նորա հնարհացն ընտրեցան սուրբք 'ի մարդկանէ։ Եւ զմտաւորս և զանտեսս զոր հաստատեաց յանձնիչսն կամն, և դարձեալ փառաւորէ զողջախոհն 'ի միասին զերկնաւորս և զերկրաւորս, որք պահեցին զհրամանս նորա և Ժառանգորդք արքայութեան նորա եղեն։ Եւ երևեցին ՅԱ մարդկանն հրեշտակաց և մարդկան անդանօր ։ Զի բանին տեառն երկինք և երկիր հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ։

Եւ յայդպս այնորիկ սուրբ մանկունքն 'ի հնոցին զնամ արարածս 'ի փառաբանութիւն ամենակալ և ամենազօր և ամենապարգև տերութիւնն յորդորեն հանապազ։ Քանզի ասէին. օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր. օրհնեցէք զարարիչն երկնի և երկրի և որ 'ի նոսա արարածք իցեն, որ երևին և որ ոչն երևին։ Զամենեսեան յանուանէ կոչէն 'ի գովեստ օրհնութիւն և փառաբանութեան ամենասուրբ անուանն, զմտաւորս և բանաւորս, զտիւ և զգիշեր, զլոյս և զխաւար, զծով և զցամաք զողջախօք և զեռնօք, զգազանս և զանասունս, զսողունս և զթռչունս, զամպս և զանձրևս, զեղեամն և զձիւն, զցուրտ և զտօթ, զօդս և զերկիր, զտունկս և զբոյսս, զլերինս և զբլուրս, զդաշտս և զանդունդս խորոց, զվիշապս և զկետս, զհուրս և զջուրս ազբերաց և զետոց։ Իվերնամի կարարել կոչէ յօրհնութիւս. յբոց ընտրեալ հարքն և մարգարէքն և առաքեալքն և մնացորդք ընտրութեան հնարհացն երևեցան ծառայք այ բարձրելոյ և քահանայք տեառն, և անձինք և հոգիք արդարոց և սուրբք և խոնարհք սրտիւք։ Ի'ի վերայնն քեանց աւարտեն զօրհնութիւնս առ ՅԱ, զի մի այլ ազգ ինչ հաւիլեն. այլ զի ծանիցեն ամենեքեան թէ և նոքաք արարածք իցեն ամենեցուն արարչին, զոր 'ի փառաբանութիւն կուտեցին հոգեւոր երգովք անուանեալ։

Որ և մեզ աւանդեցան այս հոգեւոր երգ. զի այս-

պիսի հոգևոր երգովք յօրինուածովք խորհրդածու-
թիւն ըստ տօնից, ըստ Քրիստոսի մարգանալոյն, և մերոյ փրկ-
կութեան, և նահատակութեան սրբոց յիշատակաց, և
զղջման ապաշխարողաց, և հանգուցեալոց յայսոսիկ շա-
բաթեալ, օրհնեսցուք գովեսցուք և բարձր արասցուք
զամենասուրբ երրորդութիւն, որ արար զամ արարածս,
և ետ մեզ մխիթարութիւն և զոյս բարի՛ ի փառս իւր։ Զի
որ անսկիզբն է և ամենիմաց և մշտնջենաւոր և աղբիւր
ամ բարութեց վերնոց և ներքնոց, նորա խնամովք
՝ի բարի գործս արարան, և կան՝ ի կամն նորա միշտ։
Զի ամենայն եղեալք՝ որպէս գոյութի բնութեանցն
եկամուտ է, այսպէս և ամ ինչ որ ըստ սոցայն է ըստ
իւրեանց կարգին եկամուտ է. խրատ գիտութեան և
իմաստութեան, և ամ քաջաց և առաքինեաց է զօրա-
վիգ։ Որ ՝ի չգոյէ ՝ի գոյ էած, և երևելիս և փառա-
ւորս արար զսուրբս և զարդարս. և հրաւիրանօք կո-
չեաց յիւր արքայութիւնն և ՝ի փառսն, յանփոփոխ
երանութիւնսն, յանսպառ յուրախութիւնսն, և յան-
եղծ և յանապական կեանսն։ Ուստի հեռի են ամ
տրտմականք և տխրականք, և մերձ յանմատոյց լոյսն.
՝ի փառս և ՝ի գովութի և յօրհնութիւն ամենասուրբ
երրորդութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԽՐԱՏՔ ՀԱՅԵԱՒՈՐԱՑ ԵՒ ՅՈՅՍՔ ՀԱՆԴԻՍԻՑ ՈՐ ՅԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՅՈՐԴՈՐԵՆ

ԻԳ

Ամենայն որք հաւատաբերցուն յաչխարհէս և ընծայեցին ՅՍ զանձինս 'ի հնազանդութիւն Աշխարհաւորութեան սուրբ հարցն ասանգիս՝ կուսութիւն ունկնաւորել յաղագս խոստացեալ աւետեացն, զգոյշ կացցեն խորհրդոց և քանից և գործոց. զի մի խայթեսցէ դարանակալ օձն, և խափանեսցէ ըստ ՅՍ զնացս սրբութեան և արդարութեան առաքինասէր վարուց:

Ամենայն հոգևոր խրատուց անխարդախ կալ. բարկութեան զչեզութիւն միշտ. անզգամութեան զանդաստութիւն. թշնամանաց զարբեբանութիւն. անհնազանդութեան զհնազանդութիւն. ստահակութեան զհաւանութիւն. անհամբերութեան զհամբերութիւն. սրակալութեան զանսրակալութիւն. մախանացն զանմախանութիւն. դառնութեան զքաղցրութիւն. չարութեան զբարեբարութիւն. անգործութեան զգործասիրութիւն. մեղմեսութեան զռոշնութիւն. յարատութեան զհամառութիւն. կատականաց և ծաղեր զարտասուս. ատելութեան զսէրն սուրբ ունել. անյուսութեան զյոյսն առնուլ. տրտմութեան զզուարթութիւն. փարձանաց զերկայմտութիւն. ագահութեան զչափաւորութիւն. ընչասիրութեան զարհամարհանս. պատուասիրութեանն զնուաստութիւն. թերահաւատութեանն զհաւատս Աշխարհաս, և որ այլ ևս են չարին մեքենայք՝ որ ընդդէմ Աշխարհաւորութեան զպատերազմ առնեն ընդ աչս և ընդ լսելիս և ընդ ունչս և ընդ ճաշակելիս և ընդ լեզուս և ընդ ձեռս և ընդ ոտս և ընդ սիրտս՝ որ խորհրդոցն է շտեմարան 'ի լուսն կամ 'ի վատթարսն հակամտել: Ջորս պարտ է վերադոյնս առնել՝ ամ միասակարաց առաքինասէր վարուք ըստ յառաջ ա-

սացելոց հանդամանաց խրատուց, որ ընդ չարեաց ըզ-
պատերազմն առնել զարուցեալսն 'ի վերայ Ճգնաւո-
րացն Ճակատամարտ միշտ։ Յայսոսիկ է մարտ մեծ. և
դարձեալ յաղթութիւն մեծագոյն, որովք հակառակա-
մարտն կործանեսցի՝ որ յայնոսիկ է պանծացեալ, և
հրապուրանօք յուսոյ յաղթելնորամտիցն։

Բայց դու, ով անձն, որ ընձայեցար այ, մի զնա քեզ
խորհրդակից առնուր. այլ մարտիր զբարիոքն մարտն,
և բուռն հար զայսոցիկ խրատուց, անմոռաց ունե-
լով զախոյեանն սուրբ Ճգնաւորաց, որ շաղեն և պա-
տեն զոգիս և զմարմինս։ Ուշ ունելով մաերիմ խոր-
հրդով և արժանաւորապէս ըստ աւետարանին քեզ
կրօնաւորիլ։ Մերկանալ զաշխարհական ցանկութիս
ամ, և զգենուլ զնոր մարդն ամ բարի գործովք զար-
դարեալ ներքոյ և արտաքոյ սուրբ և անարատ կա-
տարեալ արդարութիւն և սրբեալ յամ ցանկութեանց
երկրաւորացս։

Այսպէս զանծսիրութեան զհանգամանս յանձին հաս-
տատել սուրբ սրտիւ և անկեղծաւոր հաւատով. պատ-
բաստ լինել ըստ արժանի իւրոյ ընծայութեն յոր կո-
չեցաւն. յամ բծիլ անարատ և մաքուր և հաճոյ այ
լինել։ Մտաք և ամենայն անդամովք հաստատուն և
անշարժ և անդրդուելի կալ 'ի կարգի Ճգնաւորա-
կան հանդիսիցն։ Մարտնչել 'ի հոգևորական մարտին
ընդդէմ հանապազորդեան թշնամւոյն. որ ընդ ըզ-
գայութիսն և ընդ խորհուրդսն 'ի ներքս պատերազմ
է, և յաղթութիւն 'ի վերին օգնականութենէն. իմաս-
տութեամբ հոգւոյն առաջնորդել յամ արդարութիս,
և 'ի վայր կործանել զհակառակամարտսն բարեձևու-
թեամբ կարգաց և կրօնից։ Զի զէն զինուորութեամբ Ճգնա-
ւորաց չէ մարմնաւոր, այլ հոգևոր յայ առ վանու�
չարին։ Անարբութենն զսրբութիւնն 'ի ներքս ամբա-
րել յամ անդամն. և յանմաքուր խորհուրդսն զողջա-
խոհութի սրբեալ յամի։ Ուրկորստութենն զպարկեշ-
տութին. արբշռութենն զժուժկալութին. շուայտու-
թենն զհամեստութին. ծուլութենն զհանդիսաստ ամ
ջանս։ Թուլութենն զպնդութին. ձանձրութենն զփոյ-
թըն. ամբարտաւանութենն զխոնարհութին. հպար-
տութեանն զնուաստութին. մնափառութեանն զան-

փառութիւն. ստուգութեան զտուգաբանութիւն. երդմնահարութեան զՀշմարտութիւն. խորամանկութեան զկատարեալ սէրն։

Եւ զգուշացեալ ամրացեալ կացցես աղօթիւք և պահովք ՚ի երեսեառնդ արտասուօք, սուրբ սիրով։ Հնարելոց յուսով և բաղձալից գթով առ այ կամն։ Աչիւ և երկիւղիւ ՚ի բարեպաշտութեան ՁՈՒՍ յառաջանալ միշտ, և առաւելուլ ՚ի բարի գործս, և ոչ պակասեցուցանել յառաքինութեան վաստակոց յերեւելեաց կամ յանտեսութեան. և զՀանգամանս չարին խափանցանել Հանդիսաւոր յառաջադիմութեամբ։ Զփառասիրութեան զամենայն ՚ի բաց ընկենուլ և զցանկութեան չարեաց և զմեղս զիւրաշարժս իրաւամբք արգարութեան, առողջութեան անարատութեան։ Աջիծ երախտեաց սուրբ սիրոյն անՀանգիստ կալ ՚ի Հգնաւորական մշակութեանն ըստ բարեբար սիրոյ երախտեացն այ առ ՚ի Հնազանդութեան այ և առ որս Հաղորդութիւն եղև սիրով։

Օ՛ի Հշմարտեալ պահեցէ զմիաբանութիւն յոգիս խաղաղութեան անբարեփոքր մտածութիւնք առ ՚ի կատարեալ Հաւանութեան և ՚ի Հնազանդութեան եղբայրութեան և Հաւատացեալ առաՁնորդին. որով և զխոստովանութեան նովաւ ընծայեաց այ ստուգապէս. որով և զպատուղ ապաշխարութեան առնէ ըստ սխալանաց խորՀրդոց և բանից և գործոց։ Զի զՀոգոյն Հիւանդութեան մեղայն առցէն ՚ի փրկէն վկայութիւնք առաՁնորդին և եղբայրութեան։ և յայտնիցի անշարժ Հաստատուն արմատացեալ կացցեն ՚ի նոսին վանս։ Եւ մի երկմտեսցեն. զի որ երկմիտն է, նման է Հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու։ մի՞ անկն կալցի մանրն այն առնուելիս յայ բարիս։ Այլ Հշմարտեալ Հաւատով և անբիծ վարուք կատարեսցէ զառաքինութիւնն ահիւն այ, ՚ի նՀորՀաց սուրբ Հոգւոյն զօրացեալ Համբերութիւն բազմաւ ըստ Աստուածային խրատուն, ՚ի նեղութիւնս, ՚ի վիշտս, ՚ի չարչարանս, ՚ի գանս, ՚ի բանդս, ՚ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ՚ի Հսկմունս, ՚ի պահս, ՚ի սրբութեան, ՚ի քաղցրութեան, ՚ի բարութեան Հոգւոյն սրբոյ յարդարեալ։

Օ՛ի որ սիրէն զիս, ասէ տէրն, զպատուիրանս իմ

պահեսցէ զոր սուրբ Հոգին աղաչեայ. ապա ես և Հայր իմ եկեսցուք և օթևանս առնմա արասցուք։ Ո՛րքան է մեծութիւն և փառք և շնորհք, որք տաճար լինին ամենասուրբ Երրորդութեան. զի «Բնակեցայց 'ի նոսա, ասէ, և սրբեցից և եղէց նոցա ՚ած, և նոքա եղիցին ինձ 'ի ժողովուրդ, ասէ տէր ամենակալ»։

Ա՛յդ քանզի որ զայս աւետիս ունին Հգնաւորք, կատարեսցուք զսրբութիւն ահիւն ՚այ. անբիծ անարատ սուրբ սիրով հնազանդել ընդ ամենահեշտ լծոյն՝ որ թեթև է առաքինեայ անձանց և ծանր աշխարհասիրաց, զորս և կոչէ քաղցր ձայնիւ. ասէ. Եկայք առ իս ՚ամ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն ըզ հեզութիւն, զխոնարհութիւն և զհնազանդութիւն և զ՚ամ արդարութիւս, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն, և բեռն իմ փոքրոգի յաղագս առաւել վարձուցն հատուցմանց։

Օ ամենայն դժնդակ ապարասանութիւս զբարուց շարժմանց սանձել խաղաղարար աղատութիւնն և անաբատ սրբութիւնն, և մտել 'ի նաւահանգիստն հանդարտութիւն հոգւոյ և մարմնոյ, և յ՚ամ վշտագին հարուածոց չար ցանկութեանց աղատել։ Ունկնդիր լինել առաջնորդաց խրատուց և հպատակ կալ նոցա հրամանացն. և նոքա մի անհոգ լիցին ժողովրդեան ուխտին, զի համարստալոց են վասն նոցա յաւուրն այցելութեան։

Ա՛ղիցի յամենեսեան Հշմարտասիրութիւն. մի բանսարկուս, մի խորամանկս, մի հակառակողս առ հրամանս վերակացուին, մի տրտնջողք 'ի գործ կամ յայլ ինչ իրս, մի խռովարարք և թշնամանողք։ «Զի որ ըզ ձեզ խռովեցուցանէ, կրեսցէ դատաստան ո՞ոք և իցէ» ասէ Առաքեալ։ Ա՚յլ զհետ երթալ խաղաղութեան և զսուրբ սիրոյ. և լինել որդիք ՚այ և ժառանգակիցք Քրի, որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի։ Եւ հնազանդել և հաւանել միմեանց երկիւղիւն տեառն։ Ա՚նխզելի պահել զմիաբանութիւն եղբայրութեանն հաւանական սուրբ սիրոյն, որ 'ի միմեանս կապէ և ոչ թողու քայքայել և անջատել 'ի միմեանց պատՀառանօք, որ զանձին վրէժ խնդրեն և ոչ զմիաբանութիւն սիրոյ։

Ա՚յլ որ վերակացուն, է զգաստ լիցի առ մերձաւորս

և նախատես առ հեռաւորսն. խրատել զեղբարս խորագիտութիւն ըստ ժամանակին, ըստ ընդունելութեան, ըստ բարուց որոշիս։ Չկրեսէին խրատել յայն կիրկիլոյ տեառն և ի հնազանդութիւն եղբարցն։ Եւ հաւատեալ ամենեցուն ի կամս առաջնորդին եղբայրութեան՝ ոչ ինչ ի գործելեացն առանց կամաց նորա եղիցի։ Եւ որ արտաքոյ նորա կամացն խորհի ինչ կամ ասել կամ գործել, պարտաւոր է ապաշխարութեան։ զի զառաջնորդն արհամարհեալ՝ ցնծի արհամարհէ. քանզի ասաց տէրն. «Որ զձեզ անարդէ, զիս անարդէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զրանն ձեր պահեսցէ, զինն պահեսցէ»։

Բայլ խոնարհութիւնք և կամաւոր հնազանդութեամբ նուաստաձեալք առ հասարակաց օգուտն, և հաւանութիւն՝ ոչ պատուիրանին և հաւատացեալ յոյլ առաջնորդին։ «Չի որք են, ասէ, յոյլ կարգեալ են. և որք ընդդիմակացքն են, կրեսցեն զատաստան որք և իցեն»։ Եւ հաւանեալ ի մի վանս և ի մի միաբանութիւն փառաց ամենասուրբ Երրորդութեանն միաշունչք և միախորհուրդք, ոչ ըստ գրգռութիւն իրիք և ոչ ըստ մնապարծութեան, որպէս օրինադրէ Առաքեալ. այլ խոնարհութիւնք զմիմեանս առաւել քան զանձինս։ Նոքա են՝ որ զուսրբ սիրոյն զիւրն միշտ յինքեանս ունին, և պայծառ լապտերքն մնանեն յառագաստսն։ Զորս ամենակալ Հայրն ուրախ առնէ յաւետիս երկնաւոր փեսային յանսպառ ուրախութիւնսն։

Բայց որ որոշին և մեկնին ի միաբանութիւն եղբայրութենն, նոքա նմանեալք են յիմար կուսանացն, և զիւրն սիրոյն ոչ ունին։ որոց փակի առագաստն յաղագս շինանելոյ հարսանեկան՝ Ջահիցն։ Որք լսեն ի ձայնէ փեսային, զի որով ոչ ցուցեալ յեղբարս զսէրն, և զմիաբանութիւն կապն խզեցեալ, երթայք ի խաւարն արտաքին։ Եւ որք զմիաբանութիւն սիրոյն հոգևոր առ եղբայրութիւնն առողջ պահեցին և զմիամտութիւն առ վերակացուն, երանելիք են. և ամ՝ բարեաց հանգամանս և առաքինութեան ցոյցք ի նոսա է տպաւորեալ։

1 Ի լուսանցս օրինակին մեջոյ հոգևոր։

Լ,ղբայր զեղբայր յոլովորելով 'ի բարի գործս 'ի հանդէս բարի նախանձու 'ի սէր ՅԾուԹենն ՅամՀաւատարմուԹիւն զիւրաքանչիւր գործն յառաջացուցանել փուԹասցէ, և անդանդաղ զփառաբանուԹիւնն կատարել 'ի տէր. և որ ըստ օրէ յաւելուած լիցի լաւուԹիւն և պիտանուԹիւն, ՋգաստուԹի և զգուշուԹի եղիցի գործաւորացն որ 'ի նա հաւատացաւն իւրոցն՝ զամենայն ստուգուԹիւն աւարտեսցէն հաՀոյ Յայ և առաջնորդին և եղբայրուԹեանն։

Լ,ու հասարակաց պաշտօնն մի պատՀառանօք ինչ խափանեսցի, բայց եԹէ 'ի պէտս ինչ եկեղեցւոյն ըգբաղեալ հրամմնաւ վերակացուին. սակայն և անդ կատարեսցի աղօԹքն։ Եւ Յամ ուրեք պաշտօն աղօԹիցն հոգևորապէս կատարեսցի անխափան. 'ի նըստել 'ի տան, 'ի գնալ 'ի Յանապարհի, 'ի գործել և 'ի ննջել և 'ի յառնել։ Եւ չԹողուլ 'ի մտաց զյիշատակսն Յայ. այլ և զկամն նորա առնել ըստ Յամարուեստից սրբուԹիւն և արդարուԹիւն. և մտօքն հանապազ դեգերեալ կացցէ 'ի դրունս ողորմուԹենն Յայ անդադար խնդրուածովք եռանդնասէր հոգւով և արտասուօք ջերմեռանդ միշտ, զի ընդունելուԹիւն արժանի լինիցին աղօԹքն. և պարգևատու լինի ամենակալն Յած, որ զամենեցուն կամի զփրկուԹի, և արքայուԹենն արժանաւոր լինել 'ի Քս Յս։

Լ,ու դիւրաւ հաւանուԹիւն Յշմարիտ սիրով առ վերակացուն եղիցի ամենեցուն. և մի ըստ իւր կամացն խնդրեսցէ զգործն 'ի նմանէ, այլ զոր նայն հաւատայ 'ի հասարակաց օգուտն, 'ի մարմնաւոր պէտս և 'ի հոգևոր շահս։ Զի կարասցէն ասել Յամքեան՝ ԹէԹ յորմէ հետէ ընԾայեցաք Յայ, զՅամ կամս մարմնոյ և զմտաց խափանեցաք, և տուաք զանձինս 'ի ԾառայուԹիւն նախ տեառն և ապա առաջնորդաց 'ի հնազանդուԹիւն ըստ պատուիրանին Յայ, որ 'ի սուրբ հարցն մեզ աւանդեցաւ։

Ո,ի որպէս անդամք մարմնոյն մի մարմին են յօդեալ և պատշաՀեալ, սակայն իւրաքանչիւր զիւր ներգործուԹիւն առանձին ունի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, լեզու խօսի և բերան Յաշակէ, ձեռք գործեն, ոտք գնան և միտք իմանան, և

նովաւ շարժին զգայութիւնքն 'ի գործ հոգեւորայ և մարմնաւորայ, այսպէս ժողովուրդ այլ սիրով յոգեալ և միաւորեալ 'ի կամս այլ և առաջնորդական միաբն 'ի վերակացուն՝ որ ղեկչութիւն եղայրութեան ունի միջս. և այլք գնաւանութիւն ըստ իւրաքանչիւր ներգործութեան։ Զի որ թանչին յանդամն եթէ ակարազոյնք են, կարեւորք են այլոցն առ սպասաւորութեան հանդամանս։ Եւ որպէսզի հնար յառաջի անդամոցն հատանել, բայց ապականեալն յանբժշկելեացն 'ի բաց հատանին՝ որ առանց բժշկութեան ունի զվերս. և զի ոչ է հնար յայլոց անդամոց յայլս յարել, նոյնպէս առանց բժշկութեան է որ 'ի միաւորեալ եղբայրութենն հատանի և 'ի վանացն որոշի, և զուխան և զսէր և զդաշինսն որ առաջի այ՝ անարգէ, և լինի պարտաւոր յաւիտենից տանջանացն։

Բայց եթէ 'ի կամաց վերակացուին և 'ի հասարակաց եղբայրութենն բռնադատեսցի յեպիսկոպոսութեան կամ յառաջնորդութեան այլոց և 'ի քահանայութիւն՝ որ զնոյն կարգ ունիցին 'ի տեր, և զայս ոչ յօժար կամաբ ընդունել։ Բայց եթէ յառաջնորդէն և յեղբարցն հարկաւորեալ բռնադատեսցի, բազում աղաչանաւքն յաղագս փրկութեան այլոց հաւանեսցի, եթէ իցէ այնպիսի ոք՝ որ ոչ հայհոյեսցէ անուն տեառն այ մերոյ։ Բայց ոչնմանիտ սուրբ սիրոյն 'ի յեղբայրութենէն և հաւանութի յառաջնորդէն մի հանցի։ այլ որպէս զմիմեանս հոգայցեն 'ի հոգեւոր լրումն։

Այս և ամ ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց՝ որ զուղղափառ հաւատն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովիւք. Եղբայրք ոք, ասէ, մի իշխեսցէ 'ի վանացն երանեալ կալուք և կամեսցի առանց կամաց վերակացուին և եղբայրութեան։ և որ ոք յանդգնեալ զայս առնէ, ընդ նզովիւք կապեսցի 'ի Հոգւոյն։ Զի ամ որ յոր ինչ կոչեցաւն՝ 'ի նոյնն կայցէ ասէ Աւետարանն այ։ Զի ամենեքեան 'ի մի յոյս կոչեցան 'ի Քրիստոս։ զի մի մարմին պատուական 'ի սուրբ մարմնոյ նորա և յարենէ պատարագարեցան 'ի փառատրութիւն։

Այս եթէ ոմանք ինչ պատճառս մեկուսանալոյ,

մի ծածկեսցէ յառաջորդէն և յետդայրութեանն. և բազմացս վկայութիւնքն հաւատարիմ է առաջի այ առնտին։ Զի արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի՝ առանց ողորմութեան առ երկու կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ որչափ տաստիկ պատժոց արժանի համարեսցուք զայնոսիկ՝ որ մարմնով և արեամբ դաշնաւորեալք ի միաբանութիւն ըստ ուխտի և հրաժարման յաշխարհէս սկզբման կարդին ի պահել զանանդն միաբանութիւն մինչև ցվախճան։ Եւ գիտեմք զայն որ ասացն տէր. «Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից ասէ տէր՝ զՆոցն և վրոյն պատիժս»։

Այլ այս ջան ի մտի կոյսք վերակացուին՝ գաղտնի և յայտնի խրատ առ ամենեսեան, զի կարասցէ ուղղել զթիւրեալսն ի Ճանապարհացն արդարութեանն ի Ճշմարտութեան առանդն։ Եւ յիմի ոչ անցոգ լինել ի խոստովանութիւս և յուղղութիւս հոգւով և մարմնով. զի զամ որք նմա հաւատացան՝ կատարեալս կացուսցէ առաջի բեմին Քրիստոսի։ Զի որ արասցէ և ուսուսցէ, մեծ է առաջի այ։

Այլ որ տնտեսն է՝ համարեսցի զինքն այ մատակարար. ահիւ և երկիւղիւ տնտեսեսցէ զՀաւատացեալսն յայ աւանդսն, և զդուշացի անօթոցն. մի ի ծուլութենէ կորուսցէ, և կամ յարհամարհանաց արտաքս ընկեսցէ. և անփոյթ արարեալ աւանդիցն յաՀախ ի ծախս առից ոչ ի Հաճոյս այ, և կրեսցէ դատաստան ի տեառնէ՝ որ ի միտ առնու զամ պիտոյիսդ և զգործս. զի ամ ինչ յայ է նուիրեալ յաղագս պիտոյից եղբայրութեանն։ Մի Հեղգացի ի գործ կամ՝ ի բաշխելն անհաւասար. այլ յիմի զոՀ առաջի ազաց կալցէ, և ահիւն այ ստուգապէս մատակարարեսցէ հրամմնաւ վերակացուին։ Աբթաուն և գաստ լինել առ ամ կամս սպասաւորութեան. ըստ իւրաքանչիւրոցն արժանի ըստ պիտոյիցն զգարմանն առնել։ Ծերոցն հիւանդաց, տկարաց, Ճանապարհորդաց, վաստակաւորաց և որ ի միասուցն կարգի իցեն, ըստ արժանեացն եղիցի մատակարարելն հոգ և օրապէս ըստ այ։ Մի ազատանոք և կամ խեռիւ, զի մի զբիեսցին ի վարձուցն հատուցմանց։ այլ որպէս մայրենի գթովք առ ամենեան լիցի, զի առցէ զվարձն յամենակալ Հօրէն՝

Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն. զի որովհետև արարէք անաւուրթի եղբարց, ինձ արարէք։ Թողում ասել և որք այսպէս ոչ արարին՝ զպատիժ պատուհասիցն, զհուրն անշէջ։

Եւ որք շաբաթաւորքն են, կահուցն զգուշացին, և զգործն մատերմութիւնք կատարեսցեն։

Եւ տեսուչք հիւրացն մի անտես առնել զկարօտեալսն, և զհիւրին գարմանան ըստ իւրաքանչիւրոցն զպէտսն ընելով զուարթամտութեամբ. և մի աղմկել առ ինդիրսն, այլ սիրով և անխռով զամենեսեան յուզարկել բանիւք և իրօք։ Եւ ինքեանք մի լուծցեն պատճառանօք հիւրացն զպահս և զաղօթս, զի մի զբարկեսցին 'ի վարձուցն այ. այլ զգաստասցին ամ գործաւորք 'ի ժամ աղօթիցն, զի մի 'ի հեղգացելոցն 'ի գատաստանս անկանիցին։ Եւ յամ իրս 'ի կամաց վերակացուին եղիցի հրաման. զի ասացեալն 'ի նմանէ ընդունելի եղիցի ամ յամենայնի 'ի կամս տեառն։ Եւ որ ինչ նոքօք մատակարարին, նմա պարտ է գիտել զամենայն որպէս արժանն է։

Այլ և որ տեսուչք են եղանց հողագործաց կամ խաշանց արօտականաց և հօտից կթոց և գրաստուց բեռնակրաց, ամենեքին ուշ կալցին խնամելոյ, և հաւատարմութիւն ցուցանել զարդիւնս շայեկանս ամ Հշմարտութիւն, որպէս այ գործավարք և իմաստուն մշակք արդիւնակատարք՝ ժողովել յշտեմարանս, զի իցէ աննուազ տալ ում պիտոյ իցէ։ Տալ զնոցա աշխատութեանցն պտղաբերութիւն 'ի տուն տեառն այ. և ըստ հատուցումն առցեն յարարչէն ըստ իւրաքանչիւր վաստակոց. որ տեսանէ 'ի ծածուկ և հատուցանէ յայտնապէս յաւուրն այցելութեան զանապառ բարիսն. որ 'ի սակաւուն հաւատարիմ եղեալ՝ 'ի բազում բարիսն վայելեն։

Այնպէս և որոց օգն հաւատացաւ՝ զիւրաքանչիւրոցն զպէտսն կօշկաց կատարեսցեն առանց հակառակութեան և ակնառութեան, և որ այլ ինչ պէտք են օգոյն։ Ամենեցուն հեզութիւն եղիցի նպաստաւոր խնդրողացն և կատարողաց զառ 'ի պէտսն արժանաւոր սիրով և խոնարհ սրտիւ, զի ժառանգեսցէ զօրհնութիւնս։

Այնպէս և ամենայն ոք որոց գործ հաւատացաւ

և հոգք առ 'ի պէտս եղբայրութեն, ահիւ և զգաստութեամբ և առանց խարդախութեան ըստ ամենայնի լցեալ։ Միշտ զնոսա ունել առաջի աչաց, և ոչ իւրեք 'ի Ճշմարտութենն վերջանալ. այլ ստուգապէս որպէս այր մշակ անխարդախ յամի։ Ամենեցուն գործաւորաց և գործակալաց սկիզբն վերատին յերկիւղ տեառն լցցի. և երկիւղիս յարմարելգործն 'ի շահ օգտից հոգեխառն յառաջադիմութեամբ հաւատարիմ 'ի գործ մշակութեան անվեհեր փութով։ Ոչ որպէս մարդկան հաճոյ, այլ որպէս այր՝ որ քննէ զսիրտս և զերիկամունս. 'ի միտ առնուլ զիւրաքանչիւրոցն զյօժարութիւն, զբան և ըզգործ։ Որ հաւատարիմն են յամի հոգևոր շահիւքն և մարմնաւոր ըստ այր պատուիրանին, և շինութեի եղբայրութենն 'ի հաւանութեի ուխտին, ժառանգեն ըզկեանան յաւիտենից։

Իսկ որ զհակառակութեամբ և զանարտաց աւութեամբ և զպղերգութեամբ զմիտս ունիցին, մեկնեալ 'ի Ճշմարտութենն, 'ի հեռ և 'ի խախանձ, 'ի ստահակութիւնն և 'ի տրտունջ, 'ի բամբասանս և 'ի շոգմոգութեամբ բանս արկեալ, բարկութիւնն այր կայ և ինայ 'ի վերայ նոցա. հուրն ահեղ և ամենափորձ՝ որ այրէ զխոտանան, և զսուրբսն լուսաւորէ անշիջանելի լուսովն։

Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխորհ և բարեգործ. օրինակ լինել այմ բարեձևութեամբ կարգաց և կրօնից, աղօթից և պահոց, խոնարհութեամբ և հեզութեամբ, ուղղութեամբ և Ճշմարտութեամբ, տքնութեամբ և արտասուաց, խաղաղութեամբ և հանդարտութեամբ, սիրոյ և երկայնմտութեամբ, իրաւանց և արդարութեամբ, աշխատութեամբ և ժուժկալութեամբ, պարկեշտութեամբ և զգաստութեամբ, անարատութեամբ և անբծութեան. անբամբաս յամենայն 'ի վերագոյնն՝ ըստ օրինաց արդարութեամբ եղեալ յամի. և հաւատացեալ նմա յայ ժողովուրդ խմաստութեամբ և գիտութեամբ խրատել. 'ի սրբութեի և յամենայն առաքինասէր վարս զնոսային սէրն զօրացուցանել յանձինս, և արհամարհել զաշխարհիս սէր։ Եւ երկաքանչիւրոցն հաւատիք երևել առ ամենասեան՝ ինձայնոյ սուրբ սէրն։ «Զի որ սիրէն զիս, ասէ տէրն, զպատուիրանս իմ պահեսցէ. և որ ոչն սիրէ զիս, զպատուիրանս իմ ոչ պահէ»։

Լաւ զի վերակացուն հայր հոգևոր կոչեցաւ, և ծնեալքն առ ի նմանէ հոգևոր որդիք ըստ կարգի Ճգնաւորաց. որ առաւել ունի զհանգամանս բան զմարմնաւոր ծնողաց. որպէս զվերոյ ասէին թէ ունի գնմանութիւն ըստ ոմի։ Եւ այսպէս լինել որդիք լուսոյ և որդիք արդարութեան հրաժարեալք յաշխարհական ի զբաղմանց, որ մեծ ացուցանեն զմիտս և խառնաբերացուցանեն զզգայութիւս, և առնեն որդիք խառնարի և ժառանգք դժոխոց։

Լաւ զի պարտ է հոգևոր ծնողաց հոգևոր վարս ստանալ կատարեալ հնազանդութիւն առ հոգևոր հայրութիւն, նոցա զիստոսվանութիւն այ ընծայել ստուգութիւն, և մի սուաք ի խոստովանութիւն լինել։ Ըստ ոմ պնաղանաց միստուց զգեղ բժշկութիւն դիւրաբնակելոյն։ և առ ոմ հրամանն հաւանն և հպատակք, որպէս յերկնաւոր Հօրէն առեալ հրաման առ գործ պատուիրանին, որ զհասարակաց եղբայրութիւն զհանգամանսն հոգւով և Ճշմարտութիւն։ «Զայն խօրհել և առնել որ և ի Քս էր», որ հնազանդ եղև Հօր մինչև ի մահու խաչի»։ Եւ նա ոչ ամենի համարի զկոչեցեալսն և զհրաւիրեալսն ի կարգ ոնծային կրօնից եղբարս առնուանել զնոսա ինքեան և ասել, «Պատուեցէք զանուն քո եղբարց իմոց։ ի մէջ եկեղեցեաց օրհնեցից զքեզ»։

Լաւ այսպիսի հաւանական մտաք և սուրբ սիրով վերաբերիլ յոմ միասնաբարոյն՝ որ ընդ երկիր թարշէ. վերնոյն զնէտ երթալ երկնայնոյն և անմահից, որ կուսութիւն է նոցա սեպհականութիւն և անարատ վարք և հանապազորդ փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեան։ Զի մաքուր և ամբիծ և անարատ կուսութիւն ընտանութիւն ունի առ վերին զօրս երկնաւորացն Ժողովն. և զփառաբանութիւն նմանապէս առ նոսին առ ոմն։ Զի վարք Ճգնաւորաց՝ երկնայնոյն նմանեցան, և ի նոցանէ ունին զհանգամանս կարգաց արուեստից ըստ ոմ հանգիսից։ Զի երկիրաւոր բանակք Ճգնաւորաց Ճշմարտելոյ սուրբ սիրով և ամբիծ զգայութիւ՝ յարգարելոյ հրեշտակական կարգաւորութիւն զերկնաւոր բանակացն ունին զհանգամութիւն։ Զարդ պէսք և իշխանք զօրացն անմարմնոյ որ ապաստաւորութիւն ըստ իւրաքանչիւր կարգի ունին

առ ՀԱՅ կամաւ, և առ միմեանս և առ ազգս մարդկան, որպէս և կամք ամենեցունց տեառնն սահմանեցին զիւրաքանչիւրոցն զիշխանութիւն և զպատիւ և զպաշտաւորութիւն ըստ նախախնամութեանն։ Իսկ ստամբակեալն 'ի վերին իշխանացն բանակաւն իւրով 'ի բարւոյն 'ի վայր անկեալ՝ մեզ պատերազմողք եղեն, և սատանայ անուանեցան և դեւք. ըստ անուանցն զհակառակ բարւոյ զգործս ունին առ ՀԱՄ մեղասիրութիւն, ինքն և ամենայն չար զօրք իւր։

Եւ իմանալի է զբանակս Ճգնաւորաց՝ որք զհրեշտակային կարգս զգեցեալ ունին 'ի յերկրի, 'ի նոյն կարգս հրեշտակաց վերամբառնան 'ի տեղի անկելոց հրեշտակացն։ Եւ «Ցայի ասէ նոցա մարդարէն, տեղի անուանի առաւել քան զուստերաց և զդստերաց իմոց. և անուն յաւիտենական տայ նոցա, և մի պակասեսցէ փառքն»։ Զայս աւետիս ունին բանակք սուրբ Ժողովոց, միաբանեալք սուրբ սիրով և առաքինասէր վարուք ընդ ՀԱՅՈՒԹԵՆ իսկ կապեալք և ոչ 'ի վայր բերեալք յերկնայնոցն յուսոյն պատրանօք բանսարկուին՝ որ մախացող է Ճգնաւորաց կրօնից, հանապազ թշնամի արդարութեան։ Եւ նա է որ հրապուրէ և օգտէ 'ի Ճշմարիտ աւանդիցն. զոմանս բաժանէ մնափառութիւն յեղբարցն պատճառանօք բարեգործութեան և մնոտի խաբէութիւն 'ի մեղս, և է որ ընդ խորհուրդսն և ընդ զգայութիւնսն 'ի նեբքս մուծանէ զամբարշտութիւն փնասն։

Յոյս այսպիսի ունել կրօնաւորաց՝ բազում զգուշութիւն կայցեն 'ի մշակութեան բարեձեւութիւն վարուց և սրբութիւն երևելեօք և աներևութիւնք. զի մի զրկեսցին յայնքան առաքինութեան պատուոյն 'ի հրեշտակական դասուցն և 'ի փառացն, որ նոցայն աւանդեցաւ յարարչէն։ Ինուլ զպակասութիւն վերնոցն՝ նեբքնովքս առաքինութիւնք. վերաբերեալք 'ի գետնաքարշիցս, և հաղորդակից լինել բարւոյ քաղաքավարութեան, և ընդ նոսա միաձայնեալ՝ ամենասուրբ Երրորդութեանն մատուցանեն զփառս անՃառելի օրհնութիւն։

Այսպէս արդարացեալք Ճշմարիտ հաւատով և անարատ վարուք կրօնաւորեալք և սուրբ սիրով, եղիցի նոցա երկիր նոր 'ի նորոգումն կենաց հաՃոյիցն

ՀԱ, և երկինք նոր պայծառազգեստութիւն. զոր ասին ոչ եղուս և ունին ոչ լուսս և 'ի սիրտս մարդոյ ոչ ամենեւ, զոր պատրաստեաց ՅԾ սրբոց կուսանաց և Ճշմարտասէր կրօնաւորաց։

Լ. Ա յիշատակաւք վերնոցն յուսով հաւք բարեսէրք և բարեգութք և բարեխոսքն լեցին նմանեալք Հօրն երկնաւորի, որ նախախնամական սիրովն իւրոյ ինամեաց զարարածս ՅՀՈՎ և մարմնաւորապէս և երևելի և անեղերգեի գարմանաք, հոգեխառն սիրով և բարեպաշտաւորն երևեալ մարմն 'ի քՏ ՅՏ։ Եւ որդիք բարեհաւանք և սրբասէրք և Ճշմարտասէրք, որոշեալք յամ գՀոգեպաղծն որ երևին և որ ոչն երևին։ Եւ բուռն հարեալ զՏրեշտակական վարուց, սուրբ սրտիւ և անարատ մարմնով, ողջախոհ խորհրդով և անկեղծաւոր տաւտով, իրաւախոհք և հնազանդք առ Հայրն հոգեաց և տեսուչ մարմնոյն։ Ա՛ռ որ միանգամ հանգուցեալ եղեցին հոգւով պարտմամբ հաՃուԹեն, վատահութիւն ընտանութեն հոգեւոր հարազատութեն, անկարծիս միաւորութիւն իրրև անդամք մարմնոյ առ 'ի միմեանս։ Քանզի մի մարմին եմք 'ի քՏ, պինդ կալցուք զխոտովանութիւն անշարժ յուսոյն, և սովին հաւատովք կատարեալք լեցուք, կապեալք միով հոգւով յարմարմամբք յօգիւք, սնդեալք սովին հաւատովք անխզելի կապակցութիւն. և ոչ մի ի-ւիք բարեձեւութիւք խաբեութեք զամբութիւն միաբանութեն եղայրութեն քակել։ Վասն զի այս միայն աւանդ 'ի տեառնէ առաքելոյն անխքեպ մեզ հաւատացաւ, որ ասէր՝ թէ «Ա՛ռ յու ծանիցիք յամենեցունց թէ աշակերտք իմ էք, եթէ սէր ընդ միմեանս անքակ ունիցիք», որ է գլուխ մերոյ կատարման։ Եւ առանց այսր՝ եթէ որ առանձին մնաբերիցէ յառաքինութեն համարի, զոր և գործիցէ իսկ 'ի բաժնագունեցին առանց կամաց առաջնորդին և եղայրութեն, անպտղունն լի է այլ, և 'ի մեզս Համարեսցի։ Իսկ որ զՀամարիտ աւանդութիւնս հաստատուն պահին, տաց նոցա 'ի տան իմում տեղի 'ի միասին բնակելոյ հոգւոյնքս և մարմնաւորաք. և ոչ անջատեալ 'ի միմեանց, այլ սուրբ սիրով առ միմեանս կեալ միաբանութեն։ Վասն զի սա է մայր ամ բարեաց։ Վասն այսորիկ

յաշխարհագոյն ասեմ զանս սիրոյն . վասն զի այս և բարի և ընդունելի ՝այ, և նոյն ինքն հրամանք Նորին։

Զամ մի ոք խորհրդով յածիլ և մարմնով գայթակղիլ . այլ մնալ ՝ի լաւագոյն սովորութենն ՝ի կամս միամիտս և յիշատակս վերին սրգեղութեան Հօրն երկնաւորի և մարդասիրի։ Զանազու զգաւականն հոգեւոր և ուսանել զհանգամանս . և որոշեալ զնոսա և զերևեալսն՝ երկնայնոյն փափագելով զերկրայինս արհամարհել։ Եւ մնկեալ ՝ի զբաղմանց աշխարհիս , մերձ ՝ի հրեշտակայինսն լինել վաղս . ոչ հայելով յերկրաւորս , այլ լինել ընդունակ լուսոյն աստեն , որ ՝ի ձեռն մարմնոյ և արեանն տեառն վերաստեղծու ՝ի զգաստութիւն , հանապազ արժանաւորապէս հաղորդելով ըստ ճշմարիտ մարմնանն և կենդանարար Քրիստոսի ազատութեանն , որ հարցեալ սիրողաց ՝այ և կոչեցելոց սրբոց ՝ի կարգ ՝ածային։ Եւ ՝ի միւսանգամ գալստեանդն իւրոյ հարցէ զանապատ բարիսն ՝ի Հայրէ և յՍրբոյ և ՝ի Հոգին սուրբ . որում փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն։

ԸՂՕԹՔ

ՅՈՐԺԱՄ ՅՈՐՈԳԱՅԹ ԱՆԿԱՆԻՑԻ ՈՔ

ԶՈՐ ԵՍԱՑԵԱԼ Է

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Օրհնեալ է անբաւ մարդասիրութիւն քո, տէր իմ Յն Քս. ընդէր լքանես զիս. եթէ վասն մեղաց, դու միայն ես առանց մեղաց, և անուն քո զանոխակալութի և զմարդասիրութիւն ցուցանէ։ Գթա յիս, վասն զի դու միայն ես մարդասէր։ Ապրեցո զիս զանկեալս 'ի մեղս. վասն զի դու միայն ես առանց մեղաց։ Հան զիս 'ի տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի ընկղմեցայց յաւիտեան։ Փրկեա զիս 'ի թշնամւոյ իմոյ, քանզի ահա իբրև զառիւծ մռնչէ կամելով կլանել զիս։ Արդ տէր իմ, փայլատակեա զփայլատակունս քո և կործանեա զզօրութիւն նորա. երկիցէ և խաւարեսցի յերեսաց քոց, քանզի տկար է և ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո և ոչ առաջի սիրոյլացն զքեզ։ Տես սանէ զզօրութիւն նշանի խաչի քո և զարհուրի, և ամաչելով 'ի բաց հալածի յայնցանէ՝ որ կարդան առ քեզ։ Այժմ տէր, կեցո զիս և ապրեցո, վասն զի 'ի քեզ ապաւինեցայ. հան 'ի նեղութենէ զանձն իմ, զի մի խսպառ կորուսցէ զիս նենգաւորն՝ որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք։ Որ խորհրդոց ես տէր և քննես զսիրտս և զերիկամունս, սրբեա զսիրտ իմ և զխորհուրդս 'ի զազիր և 'ի պիղծ խորհրդոց, զի մի խսպառ կորեայց զյաւիտենական կորուստն։ Որ կարողդ ես յամի, ողորմեա ինձ ՝ած իմ. տուր զշնորհս արտասուաց մեղուցեալոգւոյս, որպէս զի լուացից զբազմութիւն մեղաց, զի ապրեցայց 'ի ձեռաց անողորմ հրեշտակաց՝ որք արկանեն զամբարիշտն 'ի հուր գեհենին։

Երանի թէ լայի հանապազ աղաչելով զքեզ ասէ, զի մի անարժան գտայց ի ժամանն՝ որ գալոց ես։ Մի՛ լուայց զահաւոր գձայնն՝ եթէ երթ ի բաց մշակ անօրէնութեան, ոչ գիտեմ ուստի ես։ Աստուած բարձրեալ՝ միայն առանց մեզաց, հնարէա ինձ մեղաւորիս յաւուրս յայնմիկ զրազում գթութիւն քո. զի մի յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց, մարգարէից, առաքելոց և արդարոց սրբոց։ Աղերսս զիս զամբարիշտս հնարէք ողորմութեան քո. ընկալ զիս ի գրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարսն. ընկալ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութեամբ սրբոցն որք հաճոյ եղեն քեզ, Յե՛ր քո՛ տէր մեր, որ ես օրհնեալ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ